

ԿՈՆՎԵՆՑԻԱ
ՔԻՄԻԱԿԱՆ ՉԵՆՔԻ ՄՇԱԿՈՒՄԸ, ԱՐՏԱԴՐՈՒՄԸ, ԿՈՒՏԱԿՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ԱՐԳԵԼԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(1-ին մաս)

Նախաբան

Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները,
լինելով համընդհանուր եւ լրիվ գինաթափման ուղղությամբ գործելու
վճռականությամբ լի՝ արդյունավետ առաջընթացի հասնելու նպատակով, խիստ եւ
արդյունավետ հսկողության ներքո, ներառյալ զանգվածային ոչնչացման զենքի
բոլոր
տեսակների արգելումը եւ ոչնչացումը,
ցանկանալով կատարել ներդրում Միավորված ազգերի կազմակերպության
Կանոնադրության նպատակների եւ սկզբունքների իրագործման գործում,
հիշեցնելով այն մասին, որ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր
վեհաժողովը բազմիցս դատապարտել է բոլոր այն գործողությունները, որոնք
հակասում
են 1925 թվականի հունիսի 17-ին ժնեւում ստորագրված՝ Պատերազմում խեղդող,
թունավոր կամ այլ նման գազերի եւ բակտերիոլոգիական միջոցների
օգտագործման
արգելման մասին Արձանագրությանը (1925 թվականի Ժնեւյան
Արձանագրություն),
ընդունելով, որ սույն Կոնվենցիան կրկին հաստատում է սկզբունքները եւ
նպատակները, ինչպես նաեւ 1925 թվականի Արձանագրությամբ եւ
Վաշինգտոնում,
Լոնդոնում ու Մոսկվայում 1972 թվականի ապրիլի 10-ին ստորագրված՝
Բակտերիոլոգիական (կենսաբանական) եւ թունավոր զենքի պաշարների
արգելման,
մշակման, արտադրության, կուտակման եւ դրանց ոչնչացման մասին
Կոնվենցիայով
վերցված պարտավորությունները,
նկատի ունենալով Բակտերիոլոգիական (կենսաբանական) եւ թունավոր զենքի
պաշարների արգելման, մշակման, արտադրության, կուտակման եւ դրանց
ոչնչացման
մասին Կոնվենցիայի 9-րդ հոդվածում ամրագրված նպատակը,
լինելով վճռականությամբ լի, ողջ մարդկության շահերից ելնելով, լիովին
բացառել քիմիական զենքի կիրառման հնարավորությունը սույն Կոնվենցիայի
դրույթների իրականացման միջոցով՝ լրացնելով այդպիսով 1925 թվականի
Ժնեւյան
Արձանագրությամբ ընդունված պարտականությունները,
ընդունելով համապատասխան համաձայնագրերում եւ միջազգային իրավունքի
սկզբունքներում ամրագրված գերբիցիդների օգտագործման արգելումը՝ որպես
պատերազմի վարման միջոցի,
համարելով, որ քիմիայի բնագավառում ձեռքբերումները պետք է օգտագործվեն
բացառապես մարդկության բարեկեցության համար,
ցանկանալով խրախուսել քիմիկատների ազատ առեւտուրը, ինչպես նաեւ
միջազգային
համագործակցությունը եւ գիտատեխնիկական տեղեկատվության փոխանակումը
քիմիական

գործունեության ոլորտում՝ սույն Կոնվենցիայով չարգելված նպատակներով, բոլոր մասնակից պետությունների տնտեսական եւ տեխնիկական զարգացումն արագացնելու

համար,

լինելով համոզված, որ քիմիական զենքի մշակման, արտադրության, ձեռքբերման,

կուտակման, պահպանման, փոխանցման եւ կիրառման արգելումը եւ դրա ոչնչացումը

իրենցից ներկայացնում են անհրաժեշտ քայլեր այդ ընդհանուր նպատակներին հասնելու

ճանապարհին,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Ընդհանուր պարտականություններ

1. Սույն Կոնվենցիայի յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է երբեք եւ ոչ մի պարագայում.

ա) չմշակել, չտարածել, ձեռք չբերել այլ կերպ, չկուտակել կամ չպահել քիմիական զենք կամ չփոխանցել ուղղակի կամ անուղղակի քիմիական զենք որեւէ

մեկին,

բ) չկիրառել քիմիական զենք,

գ) չանցկացնել որեւէ ռազմական պատրաստություն քիմիական զենքի կիրառման

համար,

դ) չօգնել, չխրախուսել կամ չդրդել որեւէ ձեռով որեւիցե մեկին ցանկացած գործողության անցկացման, որն արգելվում է մասնակից պետություններին սույն Կոնվենցիայով:

2. Յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է ոչնչացնել քիմիական

զենքը, որը գտնվում է իր սեփականության կամ տնօրինման ներքո, կամ որը տեղակայված է ցանկացած վայրում՝ իր իրավագործության կամ հսկողության ներքո,

սույն Կոնվենցիայի դրույթներին համաձայն:

3. Յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է ոչնչացնել ողջ քիմիական զենքը, որը թողնվել է իր կողմից այլ մասնակից պետության տարածքում՝

սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան:

4. Յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է ոչնչացնել ցանկացած

քիմիական զենքի արտադրության օբյեկտ, որը գտնվում է իր սեփականության կամ

տնօրինման ներքո կամ տեղակայված է ցանկացած վայրում՝ իր իրավագործության կամ

հսկողության ներքո, սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան:

5. Յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է անկարգությունների

դեմ պայքարում, որպես պատերազմի վարման միջոց, չօգտագործել քիմիական միջոցներ:

ՀՈԴՎԱԾ 2
Սահմանումներ եւ չափանիշներ

Սույն Կոնվենցիայի նպատակների համար.

1. Զիմիական գեւք նշանակում է, ամբողջությամբ կամ առանձին վերցրած, հետեւյալը.

ա) թունավոր քիմիկատներ եւ դրանց պրեկուրսորներ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք այն նպատակների համար են, որոնք արգելված չեն սույն Կոնվենցիայով՝ այն պայմանով, որ տեսակները եւ քանակությունը համապատասխանում

են այդպիսի նպատակներին,

բ) ռազմամթերք եւ սարքավորումներ, որոնք հատուկ մահացու ոչնչացման կամ այլ

վնասի պատճառման համար են նախատեսված թունավոր հատկությունների հաշվին, որոնք

նշված են թունավոր քիմիկատների "ա" ենթակետում, եւ որոնք ազատվում են նման

ռազմամթերքի եւ սարքավորումների կիրառման արդյունքում,

գ) ցանկացած սարքավորում՝ հատուկ նախատեսված անմիջականորեն օգտագործման

համար ռազմամթերքի եւ սարքերի կիրառման կապակցությամբ, որոնք նշված են "բ"

ենթակետում:

2. "Թունավոր քիմիկատ" նշանակում է.

ցանկացած քիմիկատ, որը կենսական ընթացքների վրա իր քիմիական ազդեցության

հաշվին կարող է առաջացնել մահացու դեպքեր, ժամանակավոր շարքից հանող ազդեցություն կամ մարդուն կամ կենդանիներին մշտապես վնաս պատճառել:

Դրանց

պատկանում են բոլոր այդպիսի քիմիկատները՝ անկախ իրենց ծագումից կամ արտադրության միջոցից եւ անկախ նրանից՝ արտադրված են դրանք

օբյեկտներում, թե՞

որեւէ այլ տեղ:

(Սույն Կոնվենցիայի իրականացման նպատակով թունավոր քիմիկատները, որոնք

ստացվել են հսկողության միջոցների կիրառման համար, թվարկվում են քիմիկատների

Չավելվածի ցանկերում):

3. "Պրեկուրսոր" նշանակում է.

ցանկացած քիմիական հակազդակ, որը մասնակցում է թունավոր քիմիկատների

արտադրության ցանկացած փուլում, ցանկացած միջոցով: Դրան է վերաբերում ցանկացած

հիմնական բաղադրիչ բինարային կամ բազմաբաղադրիչ քիմիական համակարգի:

(Սույն Կոնվենցիայի իրականացման նպատակով պրեկուրսորները, որոնք ստացվել

են հսկողության միջոցների կիրառման համար, թվարկվում են քիմիկատների Չավելվածում պարունակվող ցուցակներում):

4. "Բինարային կամ բազմաբաղադրիչ քիմիական համակարգերի հիմնական բաղադրիչ"

(այսուհետ՝ հիմնական բաղադրիչ) նշանակում է.

պրեկուրսոր, որը բավականին կարելի է խաղում վերջնական արտադրանքի

քիմիական հատկանիշների որոշման գործում եւ արագ ազդեցության մեջ է մտնում այլ

քիմիկատների հետ քիմարային կամ բազմաբաղադրիչ համակարգում:

5. "Յին քիմիական գենք" նշանակում է.

ա) քիմիական գենք, որը արտադրվել է մինչեւ 1925 թվականը, կամ

բ) քիմիական գենք, որը արտադրվել է 1925 եւ 1946 թվականների ընթացքում, որը վատթարացել է այնքան, որ չի կարող կիրառվել որպես քիմիական գենք:

6. "Թողնված քիմիական գենք" նշանակում է.

քիմիական գենք, ներառյալ հին քիմիական գենքը, որը թողնվել է պետության կողմից 1925 թվականի հունվարի 1-ից հետո այլ պետության տարածքում՝ առանց վերջինիս թույլտվության:

7. "Անկարգությունների դեմ պայքարի քիմիական միջոց" նշանակում է.

ցուցակներում չընդգրկված ցանկացած քիմիկատ, որը ընդունակ է մարդու օրգանիզմում արագ առաջացնել զգայական օրգանների գրգռվածություն կամ ֆիզիկական

խանգարումներ, որոնք վերանում են կարճ ժամանակահատվածում՝ ազդեցության

դադարեցումից հետո:

8. "Քիմիական գենքի արտադրության օբյեկտ" նշանակում է.

ա) ցանկացած սարքավորում, ինչպես նաեւ ցանկացած կառույց, որը ներառում է

այնպիսի սարքավորում, որը նախատեսված է եղել, կառուցված կամ օգտագործված 1946

թվականի հունվարի 1-ից՝ ցանկացած ժամանակ,

i) որպես քիմիկատների արտադրության փուլի մի մաս (վերջին տեխնոլոգիական

փուլ), երբ նյութական հոսքերը կպարունակեին սարքավորման գործողության ժամանակ,

1) ցանկացած քիմիկատ, որը ընդգրկված է քիմիկատների Յավելվածի 1-ին ցուցակում, կամ

2) ցանկացած այլ քիմիկատ, որը կիրառում չի գտնում տարեկան 1 տոննայից ավելի մասնակից պետության տարածքում կամ ցանկացած այլ տեղում՝ մասնակից

պետության իրավագործության կամ հսկողության ներքո, այնպիսի նպատակներով, որոնք

արգելված չեն սույն Կոնվենցիայով, բայց որը կարող է օգտագործվել քիմիական գենքի նպատակների համար, կամ

ii) քիմիական գենքի լիցքավորման համար, ներառյալ այլոց շարքում, 1-ին ցուցակում թվարկված քիմիկատների լիցքավորումը ռազմամթերքի, սարքավորումների

կամ տարողության մեջ՝ պահպանման նպատակով, քիմիկատների լիցքավորումը բեռնարկղերի մեջ, որոնք մտնում են քիմարային ռազմամթերքի, սարքերի կազմի մեջ

հավաքված կամ քիմիական ենթալիցքերում, որոնք մտնում են ունիտար ռազմամթերքի եւ

հավաքված սարքերի կազմի մեջ եւ բեռնարկղերի ու քիմիական ենթալիցքերի տեղադրումը համապատասխան ռազմամթերքի եւ սարքերի մեջ:

բ) չի նշանակում.

i) ցանկացած օբյեկտ, որի արտադրական հզորությունը քիմիկատների, սինթեզի

համար, որոնք նշված են "ա" կետի i ենթակետում, կազմում է 1 տոննայից քիչ,

ii) ցանկացած օբյեկտ, որում "ա" կետի i ենթակետում նշված քիմիկատը արտադրվում է կամ արտադրվել է որպես գործունեության անխուսափելի երկրորդական

արտադրանք՝ սույն Կոնվենցիայով չարգելված նպատակներով, պայմանով, որ նման

քիմիկատի համար պահանջվում է ողջ արտադրության 3%-ից ոչ պակաս, եւ որ օբյեկտը

ենթակա է հայտարարման եւ ստուգման՝ իրականացման եւ ստուգման Չավելվածին

համապատասխան (այսուհետ՝ Ստուգման հավելված), կամ

iii) քիմիկատների արտադրության միակ փոքրածավալ օբյեկտը, որոնք թվարկված

են 1-ին ցուցակում՝ սույն Կոնվենցիայով չարգելված նպատակներով, ինչպես նշված է

Ստուգման հավելվածի 4-րդ մասում:

9. "Սույն Կոնվենցիայով չարգելվող նպատակներ" նշանակում է.

ա) արդյունաբերական, գյուղատնտեսական, հետախուզական, բժշկական, դեղագործական կամ այլ խաղաղ նպատակներ,

բ) պաշտպանական նպատակներ, նպատակներ, որոնք անմիջականորեն կապված են

թունավոր քիմիկատներից պաշտպանության եւ քիմիական զենքից պաշտպանության հետ,

գ) ռազմական նպատակներ, որոնք կապված են քիմիական զենքի կիրառման հետ եւ

կախված չեն քիմիկատների թունավոր հատկանիշների օգտագործումից՝ որպես պատերազմի

վարման միջոցներ,

դ) իրավապահ նպատակներ, ներառյալ երկրում անկարգությունների դեմ պայքարը:

10. "Արտադրական հզորություն" նշանակում է.

տարեկան քանակական ներուժ կոնկրետ քիմիկատի արտադրության համար տեխնոլոգիական գործընթացի հիման վրա, փաստորեն, օգտագործվող կամ դեռեւս

չօգտագործվող գործընթացի դեպքում՝ նախատեսված համապատասխան օբյեկտում

օգտագործման համար: Այն համարվում է նոմինալ հզորությունը հավասար կամ, նոմինալ

հզորության բացակայության դեպքում, նախագծային հզորությունը: Նոմինալ հզորությունը իրենից ներկայացնում է արտադրանքի թողարկում այնպիսի պայմաններում, որոնք օպտիմալ հաշվարկված են արտադրության մաքսիմալ չափի համար՝

կիրառելի մեկ կամ մի քանի փորձնական պտուտակահատի տվյալներով արտադրական

օբյեկտի նկատմամբ: Նախագծային հզորությունը իրենից ներկայացնում է արտադրանքի

համապատասխան թողարկում՝ տեսական հաշվարկների տվյալներով:

11. "Կազմակերպություն" նշանակում է քիմիական զենքի արգելման կազմակերպություն, որը հիմնադրվում է՝ համաձայն սույն Կոնվենցիայի 8-րդ

հողվածի:

12. 6-րդ հողվածի նպատակների համար.

ա) քիմիկատների "արտադրություն" նշանակում է դրանց ստեղծումը քիմիական ներգործության միջոցով,

բ) քիմիկատի "վերամշակում" նշանակում է ֆիզիկական գործընթաց, օրինակ՝ կազմում, էքստրակցիա եւ մաքրում, որի ընթացքում քիմիկատը չի վերածվում այլ քիմիկատի,

գ) քիմիկատի "օգտագործում" նշանակում է դրա վերածումը այլ քիմիկատի քիմիական ներգործության միջոցով:

ՀՈԴՎԱԾ 3

Հայտարարություններ

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան իր համար ուժի մեջ մտնելուց 30 օր հետո, Կազմակերպությանը ներկայացնում է հետևյալ հայտարարությունները, որոնցում.

ա) քիմիական զենքի առնչությամբ.

i) հայտարարում է՝ ունի՞ ինքն արդյոք սեփականության կամ տնօրինման ներքո որեւէ քիմիական զենք, կամ կա՞ր արդյոք որեւէ քիմիական զենք՝ տեղակայված ցանկացած վայրում իր իրավագործության կամ հսկողության ներքո,

ii) նշում է քիմիական զենքի ճշգրիտ տեղը, ընդհանուր քանակությունը եւ գույքի մանրամասն ցանկը, որը գտնվում է իր սեփականության կամ տնօրինման ներքո

կամ տեղակայված է ցանկացած վայրում իր իրավագործության կամ հսկողության ներքո՝

Ստուգման հավելվածի 4-րդ Ա մասի 1-3 կետերին համապատասխան, բացառությամբ այն

քիմիական զենքի, որը նշված է iii ենթակետում,

iii) հայտնում է իր տարածքի ցանկացած քիմիական զենքի մասին, որը գտնվում է

այլ պետության սեփականության կամ տնօրինման ներքո եւ տեղակայված է ցանկացած

վայրում՝ այլ պետության իրավագործության կամ հսկողության ներքո, Ստուգման հավելվածի 4 Ա մասի 4-րդ կետին համապատասխան,

iv) հայտարարում է՝ փոխանցել է արդյոք կամ ստացել ուղղակիորեն կամ անուղղակիորեն որեւէ քիմիական զենք 1946 թվականի հունվարի 1-ից հետո եւ նշում

է նման զենքի փոխանցումը կամ ստացումը՝ Ստուգման հավելվածի 4 Ա մասի 5-րդ

կետին համապատասխան,

v) ներկայացնում է այն քիմիական զենքի ոչնչացման իր ընդհանուր ծրագիրը, որը գտնվում է իր սեփականության կամ տնօրինման ներքո կամ տեղակայված է ցանկացած վայրում՝ իր իրավագործության կամ հսկողության ներքո, Ստուգման հավելվածի 4 Ա մասի 6-րդ կետին համապատասխան:

բ) Հին քիմիական զենքի եւ թողնված քիմիական զենքի առնչությամբ.

i) հայտարարում է՝ ունի՞ արդյոք իր տարածքում հին քիմիական զենք եւ ներկայացնում է առկա ամբողջ տեղեկատվությունը՝ Ստուգման հավելվածի 4 Բ մասի

3-րդ կետին համապատասխան,

ii) հայտարարում է՝ կա՞ր արդյոք իր տարածքում թողնված քիմիական զենք, եւ

ներկայացնում է առկա ամբողջ տեղեկատվությունը՝ Ստուգման հավելվածի 4 Բ մասի

8-րդ կետին համապատասխան,

iii) հայտարարում է՝ արդյո՞ք թողել է քիմիական զենք այլ պետությունների տարածքում եւ ներկայացնում է եղած ամբողջ տեղեկատվությունը՝ Ստուգման հավելվածի 4 Բ մասի 10-րդ կետին համապատասխան:

գ) Քիմիական զենքի արտադրության օբյեկտների առնչությամբ.

i) հայտարարում է՝ ունի՞ր կամ ունեցե՞լ է արդյոք ցանկացած օբյեկտ քիմիական արտադրության, որը գտնվում է իր սեփականության կամ տնօրինման ներքո կամ տեղակայված է կամ տեղակայված է եղել ցանկացած վայրում՝ իր իրավագործության կամ

հսկողության ներքո, ցանկացած ժամանակ՝ 1946 թվականի հունվարի 1-ից հետո,

ii) նշանակում է ցանկացած օբյեկտ քիմիական զենքի արտադրության, որը գտնվում է կամ գտնվել է իր սեփականության կամ տնօրինման ներքո կամ տեղակայված

է կամ տեղակայված է եղել ցանկացած վայրում՝ իր իրավագործության կամ հսկողության

ներքո, ցանկացած ժամանակ՝ 1946 թվականի հունվարի 1-ից հետո՝ Ստուգման հավելվածի 5-րդ մասի 1-ին կետին համապատասխան, բացառությամբ այն օբյեկտների,

որոնք նշված են iii ենթակետում,

iii) հայտնում է իր տարածքում քիմիական զենքի արտադրության ցանկացած օբյեկտի մասին, որը գտնվում է կամ գտնվել է այլ պետության սեփականության կամ

տնօրինման ներքո, եւ որը տեղակայված է կամ տեղակայված է եղել ցանկացած վայրում՝ այդ պետության իրավագործության կամ հսկողության ներքո, ցանկացած ժամանակ՝ 1946 թվականի հունվարի 1-ից հետո, Ստուգման հավելվածի 5-րդ մասի 2-րդ

կետին համապատասխան,

iv) հայտարարում է՝ փոխանցե՞լ է կամ ստացե՞լ է ուղղակիորեն կամ անուղղակիորեն ցանկացած սարքավորում քիմիական զենքի արտադրության համար 1946

թվականի հունվարի 1-ից հետո եւ նշում է այդպիսի սարքավորման փոխանցումը կամ

ստացումը՝ Ստուգման հավելվածի 5-րդ մասի 3-5-րդ կետերին համապատասխան,

v) ներկայացնում է իր ընդհանուր ծրագիրը քիմիական զենքի արտադրության ցանկացած օբյեկտի ոչնչացման, որը գտնվում է իր սեփականության կամ տնօրինման

ներքո, կամ որը տեղակայված է ցանկացած վայրում՝ իր իրավագործության կամ հսկողության ներքո, Ստուգման հավելվածի 5-րդ մասի 1-ին կետի 6-րդ ենթակետին

համապատասխան,

vi) նշում է այն միջոցները, որոնք պետք է կիրառվեն քիմիական զենքի արտադրության ցանկացած օբյեկտի փակման համար, որը գտնվում է իր սեփականության

կամ տնօրինման ներքո, կամ որը տեղակայված է ցանկացած վայրում՝ իր իրավագործության կամ հսկողության ներքո, Ստուգման հավելվածի 5-րդ մասի 1i) կետին համապատասխան,

vii) ներկայացնում է իր ընդհանուր ծրագիրը քիմիական զենքի արտադրության ցանկացած օբյեկտի ժամանակավոր վերասարքավորման, որը գտնվում է իր

սեփականության կամ տնօրինման ներքո կամ տեղակայված է ցանկացած վայրում՝ իր

իրավագործության կամ հսկողության ներքո, քիմիական զենքի ոչնչացման օբյեկտի՝

Ստուգման հավելվածի 5-րդ մասի 7-րդ կետին համապատասխան:

դ) Այլ օբյեկտների առնչությամբ.

Նշում է հստակ տեղը, բնույթը եւ գործունեության ընդհանուր ոլորտը ցանկացած

օբյեկտի կամ հաստատության, որը գտնվում է իր սեփականության կամ տնօրինման

ներքո կամ տեղակայված է ցանկացած վայրում՝ իր իրավագործության կամ հսկողության

ներքո, եւ նախատեսված է, կառուցված կամ օգտագործվում է 1946 թվականի հունվարի

1-ից՝ մեծամասամբ քիմիական զենքի մշակման համար: Նման հայտարարության մեջ

ներառվում են, մնացյալի հետ մեկտեղ, լաբորատորիաները եւ հրաձգարաններն ու

փորձարարական հրապարակներ,

ե) անկարգությունների դեմ պայքարի քիմիական միջոցների առնչությամբ.

Նշում է քիմիական անվանումը, կառուցվածքային բանաձեւը եւ գրանցման համարը

"Քեմիքլ աքստրակտս սերվիս"-ի (ՔԱՍ) գծով, եթե այդպիսին շնորհված է, յուրաքանչյուր քիմիկատի, որը ինքն ունի անկարգությունների դեմ պայքարի համար:

Այդ հայտարարությունը նորացվում է ոչ ուշ, քան ցանկացած փոփոխության ուժի մեջ

մտնելուց 30 օր հետո:

2. Սույն հոդվածի դրույթները եւ Ստուգման հավելվածի 4-րդ մասի համապատասխան դրույթները, մասնակից պետությունների հայեցողությամբ, չեն կիրառվում այն քիմիական զենքի առնչությամբ, որը թաղված է եղել իր տարածքում

մինչեւ 1977 թվականի հունվարի 1-ը եւ մնում է թաղված, կամ որը նետվել է ծովը մինչեւ 1985 թվականի հունվարի 1-ը:

ՀՈԴՎԱԾ 4

Քիմիական զենք

1. Սույն հոդվածի դրույթները եւ դրա իրականացման մանրամասն ընթացակարգերը

կիրառվում են ամբողջ քիմիական զենքի նկատմամբ, որը գտնվում է մասնակից պետության սեփականության կամ տնօրինման ներքո կամ տեղակայված է ցանկացած

վայրում՝ իր իրավագործության կամ հսկողության ներքո, բացառությամբ հին քիմիական

զենքի եւ թողնված քիմիական զենքի, որոնց նկատմամբ կիրառվում է Ստուգման հավելվածի 4 Բ մասը:

2. Սույն հոդվածի իրականացման մանրամասն ընթացակարգերը շարադրված են

Ստուգման հավելվածում:

3. Բոլոր վայրերը, որտեղ պահվում է կամ ոչնչացվում է 1-ին կետում նշված

քիմիական զենքը, ենթակա են պարբերաբար տեղում ստուգման տեսչական ստուգման

միջոցով եւ սարքերով հսկողության միջոցով, որոնք տեղադրվում են տեղերում՝ Ստուգման հավելվածի 4 Ա մասին համապատասխան:

4. Յուրաքանչյուր մասնակից պետություն անմիջապես հայտարարություն ներկայացնելուց հետո, 3-րդ հոդվածի 1) ա) կետին համապատասխան, տրամադրում է

ազատ մուտք դեպի 1-ին կետում նշված քիմիական զենքը տեղում տեսչական ստուգման

միջոցով հայտարարությունը պարբերաբար ստուգելու նպատակով:

Դրանից հետո ոչ ոք չի արտահանի այդպիսի քիմիական զենքը՝ բացի դեպի քիմիական զենքի ոչնչացման օբյեկտ տեղափոխելը: Այն տրամադրում է ազատ մուտք

դեպի այդպիսի քիմիական զենքը՝ տեղում պարբերաբար ստուգելու նպատակով:

5. Յուրաքանչյուր մասնակից պետություն տրամադրում է մատչելիություն քիմիական զենքի ոչնչացման ցանկացած օբյեկտի եւ դրա պահեստային տարածքներին,

որոնք գտնվում են իր սեփականության կամ տնօրինման ներքո կամ տեղակայված են

ցանկացած տեղում՝ իր իրավազորության կամ տնօրինման ներքո, պարբերաբար ստուգման

նպատակով տեղում տեսչական ստուգում անցկացնելու միջոցով եւ սարքերով հսկողությունների միջոցով, որոնք տեղադրվում են տեղում:

6. Յուրաքանչյուր մասնակից պետություն ոչնչացնում է 1-ին կետում նշված ողջ քիմիական զենքը՝ համաձայն Ստուգման հավելվածի եւ ոչնչացման հաջորդականության

եւ համաձայնեցված ընթացքին համապատասխան (այսուհետ՝ ոչնչացման կարգ): Նման

ոչնչացումը սկսվում է ոչ ուշ, քան 2 տարի հետո, երբ սույն Կոնվենցիան իր համար ուժի մեջ կմտնի, եւ ավարտվում է ոչ ուշ, քան սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց 10 տարի անց: Մասնակից պետությանը չի արգելվում ոչնչացնել

այդպիսի

քիմիական զենքը ավելի արագ տեմպերով:

7. Յուրաքանչյուր մասնակից պետություն.

ա) ներկայացնում է 1-ին կետում նշված քիմիական զենքի ոչնչացման մանրամասն

ծրագրերը ոչ ուշ, քան յուրաքանչյուր ոչնչացման տարեկան

ժամանակահատվածից 60 օր

առաջ՝ Ստուգման հավելվածի 4 Ա մասի 29-րդ կետին համապատասխան.

մանրամասն

ծրագրերը ներառում են ոչնչացման ենթակա բոլոր պաշարները ոչնչացման հաջորդ

տարեկան ժամանակահատվածի ընթացքում:

բ) տարեկան ներկայացնում է հայտարարություններ 1-ին կետում նշված քիմիական

զենքի ոչնչացման իր ծրագրերի իրականացման մասին ոչ ուշ, քան ոչնչացման յուրաքանչյուր տարեկան ժամանակահատվածի ավարտից 60 օր հետո, եւ

գ) հավաստում է ոչ ուշ, քան ոչնչացման գործընթացի ավարտից 30 օր հետո, որ 1-ին կետում նշված ողջ քիմիական զենքը ոչնչացված է:

8. Եթե պետությունը վավերացնում է սույն Կոնվենցիան կամ միանում է դրան

6-րդ կետում նշված ոչնչացման տասնամյա ժամանակահատվածից հետո, ապա
նա

ոչնչացնում է 1-ին կետում նշված քիմիական զենքը հնարավորինս արագ:
Ոչնչացման

կարգը եւ գործընթացները խստիվ ստուգման նման մասնակից պետության
համար

որոշվում են Գործադիր խորհրդի կողմից:

9. Ցանկացած քիմիական զենք հայտնաբերած մասնակից պետության կողմից
արված

նախնական հայտարարությունից հետո հաղորդվում, պաշարվում եւ ոչնչացվում է
Ստուգման հավելվածի 4 Ա մասի համապատասխան:

10. Յուրաքանչյուր մասնակից պետություն քիմիական զենքի տեղափոխման,
նմուշի

վերցման, պահպանման կամ ոչնչացման ընթացքում առաջնային ուշադրություն է
դարձնում մարդկանց անվտանգության ապահովմանը եւ շրջակա միջավայրի
պահպանմանը:

Յուրաքանչյուր մասնակից պետություն իրականացնում է քիմիական զենքի
տեղափոխումը, նմուշ վերցնելը, պահելը եւ ոչնչացնելը իր ազգային
չափանիշներին

համապատասխան՝ անվտանգության եւ արտանետվածքի առնչությամբ:

11. Յուրաքանչյուր մասնակից պետություն, որի տարածքում առկա է
քիմիական

զենք, որը գտնվում է այլ պետության սեփականության կամ տնօրինման ներքո
կամ

տեղակայված է այլ տեղ՝ այլ պետության իրավագործության կամ հսկողության
ներքո,

ձեռնարկում է ամեն տեսակի ջանք, որպեսզի ապահովի այդ քիմիական զենքի
հեռացումը

իր տարածքից ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան իր համար ուժի մեջ մտնելուց 1
տարի

հետո: Եթե այն հեռացված չէ 1 տարվա ընթացքում, ապա մասնակից
պետությունը կարող

է խնդրել Կազմակերպությանը եւ այլ մասնակից պետություններին քիմիական
զենքի

ոչնչացման օգնության տրամադրման հարցում:

12. Յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է համագործակցել
այլ

մասնակից պետությունների հետ, որոնք երկկողմանիության հիման վրա կամ
Տեխնիկական խորհրդի միջոցով հայցում են տեղեկատվություն կամ օգնություն
քիմիական զենքի անվտանգ եւ գործնական ոչնչացման միջոցների եւ
տեխնոլոգիաների

առնչությամբ:

13. Ստուգման գործունեության իրականացման ընթացքում, համաձայն սույն
հոդվածի եւ Ստուգման հավելվածի 4 Ա մասի, Կազմակերպությունը
ուսումնասիրում է

միջոցներ թույլ չտալու քիմիական զենքի պահպանման եւ դրա ոչնչացման
ստուգման

մասին մասնակից պետությունների միջեւ երկկողմ կամ բազմակողմ
համաձայնագրերի ոչ

պետքական կրկնօրինակում: Այդ նպատակով Գործադիր խորհուրդը որոշում է

սահմանափակել ստուգումը այն միջոցներով, որոնք լրացնում են այդպիսի երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրի համաձայն ձեռնարկվող միջոցներով, եթե նա համարում է, որ.

ա) ստուգման դրույթները, որոնք պարունակվում են այդպիսի համաձայնագրում, համադրելի են ստուգման դրույթների հետ՝ պարունակվող սույն հոդվածում եւ Ստուգման հավելվածի 4 Ա մասում,

բ) նման համաձայնագրի իրականացումը բավականին երաշխիք է տալիս սույն Կոնվենցիայի համապատասխան դրույթների պահպանման համար, եւ

գ) երկկողմ եւ բազմակողմ համաձայնագրերի մասնակիցները լիովին տեղեկացնում

են Կազմակերպությանը ստուգման իր գործունեության մասին:

14. Եթե Գործադիր քարտուղարությունը որոշում է ընդունում 13-րդ կետին համապատասխան, ապա Կազմակերպությունը իրավունք է ունենում վերահսկելու երկկողմ

կամ բազմակողմ համաձայնագրերի իրականացումը:

15. 13-րդ եւ 14-րդ կետերում ոչինչ չի շոշափում մասնակից պետությունների պարտավորությունը՝ համապատասխան հայտարարություններ ներկայացնել 3-րդ

հոդվածին, սույն հոդվածին եւ Ստուգման հավելվածի 4 Ա մասին համապատասխան:

16. Յուրաքանչյուր մասնակից պետություն ծածկում է այն քիմիական զենքի ոչնչացման ծախսերը, որն ինքը պարտավոր է ոչնչացնել: Նա նաեւ ծածկում է այդ քիմիական զենքի պահպանման եւ ոչնչացման ստուգման ծախսերը. եթե Գործադիր

խորհուրդը որոշում է սահմանափակել Կազմակերպության կողմից ձեռնարկվող միջոցները, ստուգման 13-րդ կետին համապատասխան, ապա ծախսերը լրացուցիչ

ստուգումով եւ հսկողությամբ Կազմակերպության կողմից ծածկվում են Միավորված

ազգերի կազմակերպության վճարների սանդղակին համապատասխան, ինչպես դա նշված է

8-րդ հոդվածի 7-րդ կետում:

17. Սույն հոդվածի դրույթները եւ Ստուգման հավելվածի 4-րդ մասի համապատասխան դրույթները, մասնակից պետության հայեցողությամբ, չեն կիրառվում

այն քիմիական զենքի նկատմամբ, որը թաղված է եղել իր տարածքում մինչեւ 1977

թվականի հունվարի 1-ը եւ մնում է թաղված, կամ որը նետվել է ծով մինչեւ 1985 թվականի հունվարի 1-ը:

ՅՈՒՐԱԿՐԸ 5

Քիմիական զենքի արտադրության օբյեկտներ

1. Սույն հոդվածի դրույթները եւ դրա իրականացման մանրամասն ընթացակարգերը

կիրառվում են քիմիական զենքի արտադրության ցանկացած եւ յուրաքանչյուր օբյեկտների նկատմամբ, որոնք գտնվում են մասնակից պետության սեփականության կամ

տնօրինման ներքո կամ տեղակայված են ցանկացած վայրում՝ նրա իրավագործության եւ հսկողության ներքո:

2. Ստուգման հավելվածի իրականացման մանրամասն ընթացակարգերը շարադրված են

Ստուգման հավելվածում:

3. 1-ին կետում նշված քիմիական զենքի արտադրության բոլոր օբյեկտները ենթակա են պարբերաբար ստուգման տեղում տեսչական ստուգման եւ սարքերի օգնությամբ հսկողության միջոցով, որոնք տեղադրվում են տեղում՝ Ստուգման հավելվածի 5-րդ մասի համապատասխան:

4. Յուրաքանչյուր մասնակից պետություն անմիջապես դադարեցնում է 1-ին կետում նշված քիմիական զենքի արտադրության օբյեկտներում ամբողջ գործունեությունը՝ բացառությամբ փակման համար անհրաժեշտ գործունեության:

5. Ոչ մի մասնակից պետություն չի կառուցում ոչ մի նոր օբյեկտ քիմիական զենքի արտադրության եւ չի փոփոխում ոչ մի գոյություն ունեցող օբյեկտ՝ քիմիական

զենքի արտադրության կամ որեւէ այլ գործունեության համար՝ սույն Կոնվենցիայով

արգելված նպատակներով:

6. Յուրաքանչյուր մասնակից պետություն 3-րդ հոդվածի 1.գ կետին համապատասխան հայտարարություն ներկայացնելուց անմիջապես հետո մատչելիություն է

տրամադրում 1-ին կետում նշված քիմիական զենքի արտադրության օբյեկտների նկատմամբ՝ հայտարարության պարբերաբար ստուգման համար՝ տեղում տեսչական

ստուգում անցկացնելու նպատակով:

7. Յուրաքանչյուր մասնակից պետություն.

ա) ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 90 օր հետո փակում է 1-ին կետում նշված քիմիական զենքի արտադրության բոլոր օբյեկտները, Ստուգման

հավելվածի 5-րդ մասին համապատասխան, եւ ներկայացնում է համապատասխան

ծանուցում, եւ

բ) տրամադրում է 1-ին կետում նշված քիմիական զենքի արտադրության օբյեկտների նկատմամբ մատչելիություն դրանց փակումից հետո պարբերաբար ստուգման

նպատակով տեղում տեսչական ստուգման միջոցով եւ տեղում տեղադրվող սարքերի

օգնությամբ հսկողությունների միջոցով, որպեսզի համոզվի, որ օբյեկտը փակ է եւ հետագայում կոչնչացվի:

8. Յուրաքանչյուր մասնակից պետություն ոչնչացնում է 1-ին կետում նշված քիմիական զենքի արտադրության բոլոր օբյեկտները եւ համապատասխան օբյեկտներն ու

սարքավորումները՝ Ստուգման հավելվածին համապատասխան եւ համաձայն համաձայնեցված

ընթացքների եւ ոչնչացման հաջորդականության (այսուհետ՝ ոչնչացման կարգ): Նման

ոչնչացումը սկսվում է ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 1 տարի հետո: Մասնակից պետությունը չի արգելում ոչնչացնել նման օբյեկտները ավելի արագ

տեմպերով:

9. Յուրաքանչյուր մասնակից պետություն.

ա) ներկայացնում է 1-ին կետում նշված քիմիական զենքի արտադրության օբյեկտների ոչնչացման մանրամասն ծրագրեր ոչ ուշ, քան յուրաքանչյուր օբյեկտի ոչնչացումը սկսելուց 180 օր առաջ,

բ) տարեկան հայտարարություն է ներկայացնում 1-ին կետում նշված քիմիական

զենքի արտադրության բոլոր օբյեկտների ոչնչացման իր ծրագրերի իրականացման մասին

ոչ ուշ, քան ոչնչացման յուրաքանչյուր տարեկան ժամանակահատվածի ավարտից հետո, եւ

գ) հավաստում է ոչ ուշ, քան ոչնչացման գործընթացի ավարտից 30 օր հետո, որ 1-ին կետում նշված քիմիական արտադրության բոլոր օբյեկտները ոչնչացված են:

10. Եթե պետությունը վավերացնում է սույն Կոնվենցիան կամ միանում է դրան 8-րդ կետում նշված ոչնչացման տասնամյա ժամանակահատվածից հետո, ապա նա

ոչնչացնում է 1-ին կետում նշված քիմիական զենքի արտադրության օբյեկտները որքան

հնարավոր է արագ: Այդպիսի մասնակից պետության համար ոչնչացման կարգը եւ խիստ

ստուգման ընթացակարգերը որոշվում են Գործադիր խորհրդի կողմից:

11. Յուրաքանչյուր մասնակից պետություն քիմիական զենքի արտադրության օբյեկտների ոչնչացման ընթացքում առաջնային ուշադրություն է դարձնում մարդկանց

անվտանգության եւ շրջակա միջավայրի պահպանության ապահովմանը:

Յուրաքանչյուր

մասնակից պետություն ոչնչացնում է քիմիական զենքի արտադրության օբյեկտները`

անվտանգության եւ արտանետվածքի առնչությամբ իր ազգային չափանիշներին համապատասխան:

12. 1-ին կետում նշված քիմիական զենքի արտադրության օբյեկտները կարող են

ժամանակավորապես վերասարքավորվել քիմիական զենքի ոչնչացման համար` Ստուգման

հավելվածի 5-րդ մասի 18-25-րդ կետերին համապատասխան: Այդպիսի վերասարքավորված

օբյեկտը պետք է ոչնչացվի հենց որ դադարի գործածվել քիմիական զենքի ոչնչացման

համար, բայց, համեմայն դեպս, ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 10 տարի հետո:

13. Ծայրահեղ անհրաժեշտության բացառիկ դեպքերում մասնակից պետությունը

կարող է թույլտվություն խնդրել 1-ին կետում նշված քիմիական զենքի արտադրության

օբյեկտի օգտագործման համար` սույն Կոնվենցիայով չարգելվող նպատակներով: Գործադիր խորհրդի երաշխավորությամբ` մասնակից պետության Համաժողովը լուծում է

խնդրանքը բավարարելու մասին կամ մերժելու հարցը եւ սահմանում է պայմաններ,

որոնց հիման վրա տրվում է այդպիսի հավանություն` Ստուգման հավելվածի 5-րդ մասի

Դ բաժնին համապատասխան:

14. Քիմիական զենքի արտադրության օբյեկտը կոնվերսացվում է այնպես, որ կոնվերսացված օբյեկտի համար հետվերասարքավորման հնարավորությունը քիմիական

զենքի արտադրության օբյեկտի լինի ոչ ավելի, քան այլ օբյեկտի համար, որը օգտագործվում է արդյունաբերական, գյուղատնտեսական, հետազոտական, բժշկական,

դեղագործական կամ այլ խաղաղ նպատակներով, որոնք չեն առնչվում 1-ին ցուցակում

նշված քիմիկատների հետ:

15. Բոլոր կոնվերսացված օբյեկտները ենթակա են պարբերաբար ստուգման տեղում

տեսչական ստուգման կամ սարքերի օգնությամբ հսկողության միջոցով, որոնք տեղադրվում են Ստուգման հավելվածի 5-րդ մասի Դ բաժնին համապատասխան:

16. Ստուգման գործունեության իրականացման ընթացքում, սույն հոդվածին եւ Ստուգման հավելվածի 5-րդ մասին համապատասխան, Կազմակերպությունը ուսումնասիրում է միջոցառումներ մասնակից պետությունների միջեւ քիմիական զենքի

արտադրության օբյեկտների ստուգման եւ դրանց ոչնչացման մասին երկկողմ կամ

բազմակողմ համաձայնագրերի ոչ պետքական կրկնօրինակում թույլ չտալու հարցով: Այդ

նպատակով Գործադիր խորհուրդը որոշում է սահմանափակվել լրացնող միջոցառումներով, որոնք ընդունվում են՝ համաձայն նման երկկողմ կամ բազմակողմ

համաձայնագրի, եթե նա համարում է, որ.

ա) նման համաձայնագրում պարունակվող ստուգման դրույթները համադրելի են

ստուգման այն դրույթների հետ, որոնք պարունակվում են սույն հոդվածում եւ Ստուգման հավելվածի 5-րդ մասում,

բ) նման համաձայնագրի իրականացումը տալիս է բավարար երաշխիք սույն Կոնվենցիայի դրույթների պահպանման, եւ

գ) երկկողմ եւ բազմակողմ համաձայնագրերի մասնակիցները լիովին տեղեկացնում

են Կազմակերպությանը ստուգման մասին իրենց գործունեության վերաբերյալ:

17. Եթե Գործադիր խորհուրդը որոշում է ընդունում 16-րդ կետին համապատասխան, ապա Կազմակերպությունը իրավունք է ունենում հսկողություն

իրականացնելու երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրի իրականացման վրա:

18. Ոչինչ 16-րդ եւ 17-րդ կետերում չի շոշափում մասնակից պետության պարտավորությունը՝ հայտարարություն ներկայացնել 3-րդ հոդվածին, սույն հոդվածին

եւ Ստուգման հավելվածի 5-րդ մասին համապատասխան:

19. Յուրաքանչյուր մասնակից պետություն ծածկում է այն քիմիական զենքի արտադրության օբյեկտների ոչնչացման ծախսերը, որոնք ինքը պարտավոր է ոչնչացնել:

Նա նաեւ ծածկում է ստուգման ծախսերը սույն հոդվածին համապատասխան, եթե Գերագույն խորհուրդը այլ որոշում չի ընդունում: Եթե Գործադիր խորհուրդը որոշում է սահմանափակել Կազմակերպության կողմից ընդունվող միջոցառումները

16-րդ կետին համապատասխան, ապա լրացուցիչ ստուգման հսկողության ծախսերը կազմակերպության կողմից ծածկվում են Միավորված ազգերի կազմակերպության մուծումների սանդղակին համապատասխան, ինչպես նշված է 8-րդ հոդվածի 7-րդ կետում:

ՀՈԴՎԱԾ 6

Սույն Կոնվենցիայով չարգելվող գործունեություն

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն իրավունք ունի, հաշվի առնելով սույն Կոնվենցիայի դրույթները, մշակել, արտադրել, ձեռք բերել այլ կերպ, պահպանել, փոխանցել եւ օգտագործել թունավոր քիմիկատներ եւ դրանց պրեկուրսորներ սույն

Կոնվենցիայով չարգելված նպատակներով:

2. Յուրաքանչյուր մասնակից պետություն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում՝ ապահովելու, որ թունավոր քիմիկատները եւ դրանց պրեկուրսորները մշակվեն, արտադրվեն, ձեռք բերվեն այլ կերպ, պահպանվեն, փոխանցվեն եւ օգտագործվեն իր

տարածքի սահմաններում կամ այլ տեղ՝ իր իրավագործության կամ հսկողության ներքո,

սույն Կոնվենցիայով չարգելվող նպատակներով: Այդ նպատակով եւ սույն Կոնվենցիայի

պարտավորություններին գործունեության համապատասխանությունը ստուգելու նպատակով

յուրաքանչյուր մասնակից պետություն ենթարկում է թունավոր քիմիկատները եւ դրանց

պրեկուրսորները, թվարկված քիմիկատների Հավելվածի 1-ին, 2-րդ եւ 3-րդ ցուցակներում, օբյեկտները, կապված այդպիսի քիմիկատների հետ, եւ այլ օբյեկտներ,

ինչպես նշված է Ստուգման հավելվածում, որոնք տեղակայված են իր տարածքում կամ

ցանկացած այլ տեղ՝ իր իրավագործության կամ հսկողության ներքո, ստուգման միջոցներին, ինչպես նախատեսված է Ստուգման հավելվածում:

3. Յուրաքանչյուր մասնակից պետություն ենթարկում է 1-ին ցուցակում թվարկված քիմիկատները (այսուհետ՝ 1-ին ցուցակի քիմիկատներ) արգելումներին,

արտադրության, ձեռք բերման, պահպանման, փոխանցման եւ օգտագործման առնչությամբ,

ինչպես դա նշված է Ստուգման հավելվածի 6-րդ մասում: Նա ենթարկում է 1-ին ցուցակում թվարկված քիմիկատները եւ օբյեկտները, նշված Ստուգման հավելվածի 6-րդ

մասում, պարբերաբար ստուգման տեղում տեսչական ստուգման եւ սարքերի միջոցով

հսկողության՝ համաձայն Ստուգման հավելվածի այս մասի:

4. Յուրաքանչյուր մասնակից պետություն ենթարկում է 2-րդ ցուցակում թվարկված քիմիկատները (այսուհետ՝ 2-րդ ցուցակի քիմիկատներ) եւ օբյեկտները, նշված Ստուգման հավելվածի 7-րդ մասում, հսկողության տվյալների առնչությամբ եւ

տեղում ստուգման՝ Ստուգման հավելվածի այս մասին համապատասխան:

5. Յուրաքանչյուր մասնակից պետություն 3-րդ ցուցակում նշված քիմիկատները

Եւ Ստուգման հավելվածի 8-րդ մասում նշված օբյեկտները ենթարկում է հսկողության տվյալների առնչությամբ եւ տեղում ստուգման՝ Ստուգման հավելվածի այս մասին համապատասխան:

6. Յուրաքանչյուր մասնակից պետություն ենթարկում է Ստուգման հավելվածի 9-րդ մասում նշված օբյեկտները տվյալների նկատմամբ հսկողության եւ վերջին հաշվով տեղում ստուգման՝ Ստուգման հավելվածի այս մասին համապատասխան, եթե

մասնակից պետությունների Համաժողովը այլ որոշում չի ընդունում՝ Ստուգման հավելվածի 9-րդ մասի 22-րդ կետին համապատասխան:

7. Յուրաքանչյուր մասնակից պետություն ոչ ուշ, քան իր համար սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 30 օր հետո, նախնական հայտարարություն է անում

համապատասխան քիմիկատների եւ օբյեկտների մասին՝ Ստուգման հավելվածին համապատասխան:

8. Յուրաքանչյուր մասնակից պետություն տարեկան հայտարարություններ է անում

համապատասխան քիմիկատների եւ օբյեկտների առնչությամբ՝ Ստուգման հավելվածի

պահանջներին համապատասխան:

9. Յուրաքանչյուր մասնակից պետություն ստուգման նպատակով տեսուչներին մատչելիություն է տրամադրում դեպի օբյեկտներ՝ Ստուգման հավելվածի պահանջներին

համապատասխան:

10. Ստուգման գործունեության իրականացման ընթացքում Տեխնիկական խորհուրդը

խուսափում է անարդար միջամտությունից մասնակից պետության քիմիական գործունեության մեջ՝ սույն Կոնվենցիայով չարգելվող նպատակներով, եւ, մասնավորապես, պահպանում է գաղտնի տեղեկատվության պաշտպանության հավելվածում

շարադրված դրույթները (այսուհետ՝ Կոնֆիդենցիալ հավելված):

11. Ստուգման հավելվածի դրույթները իրականացնում են այնպես, որ խուսափեն

արգելքների ստեղծումից մասնակից պետության տնտեսական կամ տեխնիկական զարգացման

համար եւ միջազգային համագործակցության քիմիական գործունեության ոլորտում՝

սույն Կոնվենցիայով չարգելվող նպատակներով, ներառյալ գիտատեխնիկական տեղեկատվության, քիմիկատների եւ օբյեկտների միջազգային փոխանակումը՝ քիմիկատների արտադրության, վերամշակման կամ օգտագործման՝ սույն Կոնվենցիայով

չարգելված նպատակներով:

ՀՈՂՎԱԾ 7

Իրականացման ազգային միջոցներ

Ընդհանուր պարտավորություններ

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն, իր սահմանադրական ընթացակարգերին

համապատասխան, անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում սույն Կոնվենցիայով իր

պարտավորությունների կատարման համար: Մասնավորապես, նա.

ա) արգելում է ֆիզիկական եւ իրավաբանական անձանց, որոնք որտեղ էլ գտնվեն՝

իր տարածքում կամ որեւէ այլ տեղ՝ իր իրավագործության ներքո, ինչպես ճանաչված է

միջազգային իրավունքով, իրականացնել ցանկացած գործունեություն՝ սույն Կոնվենցիայով մասնակից պետությանը արգելվող, այդ թվում՝ ընդունում է քրեական

օրենսդրություն այդպիսի գործունեության առնչությամբ,

բ) չի թույլատրում ցանկացած տեղ՝ իր հսկողության ներքո, իրականացնել ցանկացած գործունեություն, որն արգելվում է մասնակից պետությանը սույն Կոնվենցիայով, եւ

գ) տարածում է իր քրեական օրենսդրությունը՝ ընդունված "ա" ենթակետին համապատասխան, ցանկացած գործունեության վերաբերյալ՝ սույն Կոնվենցիայով

մասնակից պետությանը արգելվող, որը իրականացվում է որեւէ տեղ՝ ֆիզիկական այն

անձանց կողմից, որոնք ունեն իր քաղաքացիությունը՝ միջազգային իրավունքին համապատասխան:

2. Յուրաքանչյուր մասնակից պետություն համագործակցում է այլ մասնակից պետությունների հետ եւ համապատասխան ձեւով իրավական օգնություն է տրամադրում,

որպեսզի հեշտացնի 1-ին կետով ստանձնած պարտավորությունների կատարումը:

3. Յուրաքանչյուր մասնակից պետություն սույն Կոնվենցիայով իր պարտավորությունների իրականացման ընթացքում առաջնային ուշադրություն է տրամադրում մարդկանց անվտանգության եւ շրջակա միջավայրի պաշտպանության

ապահովմանը եւ, համապատասխանաբար, համագործակցում է այլ մասնակից պետությունների հետ դրա առնչությամբ:

Մասնակից պետությունների եւ Կազմակերպության հարաբերությունները

4. Սույն Կոնվենցիայով իր պարտավորությունների կատարման համար յուրաքանչյուր մասնակից պետություն նշանակում կամ հիմնում է Ազգային մարմին,

որը հանդես է գալիս ազգային համակարգող կենտրոնի դերում՝ Կազմակերպության եւ

այլ մասնակից պետությունների հետ արդյունավետ կապի համար: Յուրաքանչյուր մասնակից պետություն ծանուցում է Կազմակերպությանը իր Ազգային մարմնի մասին

սույն Կոնվենցիան իր համար ուժի մեջ մտնելու ժամանակ:

5. Յուրաքանչյուր մասնակից պետություն տեղեկացնում է Կազմակերպությանը օրենսդրական եւ վարչական միջոցների մասին՝ սույն Կոնվենցիայի իրականացման

համար ընդունված:

6. Յուրաքանչյուր մասնակից պետություն որպես կոնֆիդենցիալ տեղեկատվություն

դիտում է եւ տվյալները, որոնք ինքն ստանում է Կազմակերպության կողմից կոնֆիդենցիալության հիման վրա սույն Կոնվենցիայի իրականացման կապակցությամբ,

Եւ սահմանում է հատուկ կարգ այդպիսի տեղեկատվության եւ տվյալների հետ գործելու համար:

Նա օգտագործում է այդպիսի տեղեկատվությունը եւ տվյալները բացառապես իր

իրավունքների եւ պարտավորությունների առնչությամբ սույն Կոնվենցիայով եւ համապատասխան գաղտնիության հոդվածում շարադրված դրույթներին:

7. Յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է համագործակցել Կազմակերպության հետ իր բոլոր գործառույթների իրականացման հարցում եւ, մասնավորապես, տրամադրել օգնություն Տեխնիկական քարտուղարությանը:

ՀՈԴՎԱԾ 8 Կազմակերպություն

Ա. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները սույնով հիմնում են քիմիական զենքի արգելման Կազմակերպություն սույն Կոնվենցիայի առարկայի եւ նպատակի իրականացման համար, դրա դրույթների իրականացումը ապահովելու համար՝

ներառյալ դրա պահպանման միջազգային ստուգման մասին դրույթները խորհրդածոլովի

ապահովման համար մասնակից պետությունների միջեւ խորհրդակցությունների եւ

համագործակցության համար:

2. Կազմակերպության անդամներ են համարվում սույն Կոնվենցիայի բոլոր մասնակից պետությունները: Մասնակից պետությունը չի կարող զրկվել Կազմակերպությունում իր անդամակցությունից:

3. Կազմակերպության գլխակայանի գտնվելու վայրն է Հաագան, Նիդերլանդների Թագավորություն:

4. Որպես Կազմակերպության մարմիններ՝ սույնով հիմնվում են՝ մասնակից պետությունների Համաժողովը, Գործադիր խորհուրդը եւ Տեխնիկական քարտուղարությունը:

5. Կազմակերպությունն իրականացնում է սույն Կոնվենցիայով նախատեսված ստուգման իր գործունեությունը որքան հնարավոր է ավելի պակաս ինտրուզիվ ձեւով,

որը համադրելի է իր նպատակներին ժամանակին եւ արդյունավետ հասնելու հետ: Նա

խնդրում է միայն այնպիսի տեղեկություններ եւ տվյալներ, որոնք անհրաժեշտ են սույն Կոնվենցիայով իր պարտավորությունների կատարման համար: Նա ձեռնարկում է

նախազգուշացման բոլոր միջոցները կոնֆիդենցիալ տեղեկատվության պաշտպանության

համար՝ քաղաքական եւ ռազմական գործունեության եւ օբյեկտների մասին, որն իրեն

հայտնի է դառնում սույն Կոնվենցիայի իրականացման ընթացքում եւ, մասնավորապես,

պահպանում է Հավելվածում շարադրված դրույթների կոնֆիդենցիալությունը:

6. Ստուգման իր գործունեությունն իրականացնելու ընթացքում

Կազմակերպությունն ուսումնասիրում է գիտատեխնիկական նվաճումների օգտագործման միջոցները:

7. Կազմակերպության գործունեության հետ կապված ծախսերը ծածկվում են մասնակից պետությունների կողմից՝ Միավորված ազգերի կազմակերպության մուծումների սանդղակին համապատասխան ճշգրտված՝ հաշվի առնելով Միավորված ազգերի

կազմակերպության եւ տվյալ Կազմակերպության անդամակցային կազմում տարբերությունները եւ հաշվի առնելով 4-րդ եւ 5-րդ հոդվածները: Մասնակից պետության ֆինանսական մուծումները նախապատրաստական հանձնաժողովին համապատասխան

ձեւով փոխանցվում են իրենց մուծումներից պարբերաբար բյուջե:

Կազմակերպության

բյուջեն բաղկացած է երկու առանձին բաժիններից. դրանցից մեկը վերաբերում է վարչական եւ այլ ծախսերին, իսկ մյուսը՝ ստուգման ծախսերին:

8. Կազմակերպության անդամը, որը ֆինանսական մուծումների պարտք ունի Կազմակերպությանը, զրկվում է Կազմակերպությունում ձայնի իրավունքից, եթե իր

պարտքի գումարը հավասարվում կամ գերազանցում է մուծումների գումարները, որոնք

պետք է մուծի նախորդ երկու տարիների համար: Մասնակից պետության

Համաժողովը

կարող է, սակայն, թույլատրել այդպիսի անդամին մասնակցել քվեարկությանը, եթե

ճանաչի, որ վճարման ուշացումը տեղի է ունեցել նրանից անկախ պատճառներով:

Բ. Մասնակից պետությունների Համաժողովը

Կազմը, ընթացակարգերը եւ որոշումների ընդունումը

9. Մասնակից պետությունների համաժողովը (այսուհետ՝ Համաժողով) կազմված է

տվյալ Կազմակերպության բոլոր անդամներից: Յուրաքանչյուր անդամ Համաժողովում

ունի մեկ ներկայացուցիչ, որին կարող են ուղեկցել տեղակալները եւ խորհրդականները:

10. Համաժողովի առաջին նիստը գումարվում է ավանդապահի կողմից՝ ոչ ուշ, քան

սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց 30 օր հետո:

11. Համաժողովը հավաքվում է հերթական տարեկան նիստերի, եթե այլ որոշում չի

ընդունվում:

12. Համաժողովի հատուկ նիստերը գումարվում են.

ա) Համաժողովի որոշմամբ,

բ) Գործադիր խորհրդի խնդրանքով,

գ) ցանկացած անդամի խնդրանքով,

դ) 22-րդ կետին համապատասխան՝ սույն Կոնվենցիայի գործողության

ուսումնասիրման համար:

Բացառությամբ դեպքերի, նշված "դ" ենթակետում, հատուկ նիստերը գումարվում

են ոչ ուշ, քան Տեխնիկական քարտուղարության Գլխավոր տնօրենի կողմից խնդրանքը

ստանալուց 30 օր հետո, եթե խնդրանքում այլ բան նշված չէ:

13. Համաժողովը նաեւ գումարվում է որպես ուղղումների ուսումնասիրության Համաժողով՝ 15-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան:

14. Համաժողովի նիստերը անց են կացվում Կազմակերպության նստավայրում, եթե

Համաժողովը այլ որոշում չի ընդունում:

15. Համաժողովը ընդունում է ընթացակարգի իր կանոնները: Յուրաքանչյուր նիստի սկզբում նա ընտրում է իր նախագահին եւ անհրաժեշտ այլ պաշտոնատար անձանց:

Նրանք պաշտոնավարում են մինչեւ նոր նախագահի եւ այլ պաշտոնատար անձանց

ընտրությունը մյուս նիստի ժամանակ:

16. Կազմակերպության անդամների մեծամասնությունը կազմում է Համաժողովի

քվորումը:

17. Կազմակերպության յուրաքանչյուր անդամ Համաժողովում ունի մեկ ձայն:

18. Համաժողովը որոշումներ է ընդունում ընթացակարգային հարցերով անդամների

ձայների պարզ մեծամասնությամբ, որոնք ներկա են եւ մասնակցում են քվեարկությանը: Ըստ էության հարցերը հնարավորության սահմաններում պետք է

ընդունվեն կոնսենսուսով: Եթե որեւէ հարցով որոշում ընդունելիս կոնսենսուսի հասնել հնարավոր չէ, ապա նախագահը 24 ժամվա ընթացքում հետաձգում է յուրաքանչյուր քվեարկություն եւ հետաձգման այդ ժամանակահատվածում տարբեր

միջոցներ է ձեռնարկում, որպեսզի հեշտացնի կոնսենսուսին հասնելը, եւ մինչեւ այդ

ժամանակահատվածի ավարտը ներկայացնում է Համաժողովին զեկույց: Եթե 24 ժամը

լրանալուց հետո կոնսենսուսի հասնել հնարավոր չէ, Համաժողովը որոշում է ընդունում մեծամասնությամբ՝ անդամների ձայների 2/3-ով, որոնք ներկա են եւ մասնակցում են քվեարկությանը, եթե սույն Կոնվենցիայով այլ բան նախատեսված չէ:

Տարածայնություններ առաջանալու ընթացքում այն բանի վերաբերյալ՝ հանդիսանում է

այդ հարցը ըստ էության հարց, թե ոչ, այդ հարցը համարվում է ըստ էության հարց,

եթե Համաժողովը այլ որոշում չի ընդունում ձայների մեծամասնությամբ, որոնք անհրաժեշտ են ըստ էության որոշումների ընդունման համար:

Լիազորություններ եւ գործառույթներ

19. Համաժողովը հանդիսանում է Կազմակերպության գլխավոր մարմինը: Նա ուսումնասիրում է ցանկացած հարց, թեմա կամ խնդիր սույն Կոնվենցիայի ոլորտների

շրջանակներում. ներառյալ նրանք, որոնք վերաբերում են Գործադիր խորհրդի եւ Տեխնիկական քարտուղարության լիազորություններին եւ գործառույթներին: Նա կարող

Է երաշխավորություններ տալ եւ որոշումներ ընդունել ցանկացած հարցով, թեմայով

կամ խնդրով, որը վերաբերում են սույն Կոնվենցիային եւ բարձրացվում է մասնակից

պետությունների կողմից կամ նրա տեղեկությանն են հասցվում Գործադիր խորհրդի

կողմից:

20. Համաժողովը հսկողություն է իրականացնում սույն Կոնվենցիայի իրականացման նկատմամբ եւ միջոցներ է ձեռնարկում դրա առարկայի եւ նպատակի

իրականացմանն աջակցելու ուղղությամբ: Համաժողովը ուսումնասիրում է սույն Կոնվենցիայի պահպանումը: Նա նաեւ հսկողություն է իրականացնում Գործադիր խորհրդի եւ Տեխնիկական քարտուղարության գործունեության նկատմամբ եւ կարող է,

սույն Կոնվենցիային համապատասխան, սահմանել այդ մարմիններից ցանկացածի համար

իրենց գործունեության իրականացման կապակցությամբ:

21. Համաժողովը.

ա) ուսումնասիրում եւ ընդունում է իր հերթական նստաշրջանի ժամանակ զեկույց, Կազմակերպության ծրագիրը եւ բյուջեն, որոնք ներկայացվում են Գործադիր

խորհրդի կողմից, ինչպես նաեւ ուսումնասիրում է այլ զեկույցներ,

բ) որոշում է ընդունում ֆինանսական մուծումների սանդղակի վերաբերյալ, որոնք ենթակա են վճարման մասնակից պետությունների կողմից՝ 7-րդ կետին համապատասխան,

գ) ընտրում է Գործադիր խորհրդի անդամներին,

դ) նշանակում է Տեխնիկական քարտուղարության Գլխավոր տնօրենին (այսուհետ՝

Գլխավոր տնօրեն),

ե) հաստատում է Գործադիր խորհրդի ընթացակարգային կանոնները, որոնք ներկայացվում են վերջինիս կողմից,

զ) հիմնում է այնպիսի օժանդակ մարմիններ, որոնք ինքը համարում է անհրաժեշտ

սույն Կոնվենցիային համապատասխան իր գործառույթների իրականացման համար,

է) աջակցում է միջազգային համագործակցության զարգացմանը խաղաղ նպատակներով

քիմիական գործունեության բնագավառում,

ը) ուսումնասիրում է գիտատեխնիկական նվաճումները, որոնք կարող են ազդել սույն Կոնվենցիայի գործողության վրա, եւ այդ կապակցությամբ հանձնարարում է Գլխավոր տնօրենին հիմնել գիտախորհրդակցական խորհուրդ, որպեսզի տա նրան

հնարավորություն որպես իր գործառույթների իրականացման՝ Համաժողովին, Գործադիր

խորհրդին կամ մասնակից պետություններին ներկայացնելու մասնագիտացված խորհրդակցություններ գիտության եւ տեխնիկայի այն ոլորտներում, որոնք վերաբերում են սույն Կոնվենցիային: Գիտախորհրդակցական խորհրդի կազմի մեջ

մտնում են անկախ փորձագետներ, որոնք նշանակվում են՝ համաձայն վարման շրջանակի՝

Համաժողովի կողմից ընդունված:

թ) ուսումնասիրում եւ հաստատում է իր առանձին նիստի ժամանակ համաձայնագրերի, դրույթների եւ հիմնական սկզբունքների ցանկացած նախագիծ՝

նախապատրաստական հանձնաժողովի կողմից մշակվող,

ժ) իր առաջին նիստի ժամանակ հիմնադրում է օգնության կամավոր հիմնադրամ՝

10-րդ հոդվածին համապատասխան,

ժա) անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում սույն Կոնվենցիայի պահպանումը ապահովելու եւ ցանկացած դրույթի ուղղման եւ շտկման համար, որը հակասում է սույն Կոնվենցիայի դրույթներին՝ 12-րդ հոդվածին համապատասխան:

22. Համաժողովը ոչ ուշ, քան սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու 5-րդ եւ 10-րդ տարիները լրանալուց հետո եւ նման այլ ժամկետներում՝ այդ ժամանակահատվածի

ընթացքում, որոնք կարող են համաձայնեցվել, հավաքվում է հատուկ նիստի սույն Կոնվենցիայի ուսումնասիրման համար: Այդպիսի ուսումնասիրությունների ընթացքում

ուշադրության է առնվում ցանկացած համապատասխան գիտատեխնիկական նվաճում: Դրանից

հետո՝ 10 տարի ընդմիջումով, եթե այլ որոշում չի ընդունվում, գումարվում են Համաժողովի հետագա նիստերը՝ նույն նպատակով:

Գ. Գործադիր խորհուրդ

Կազմը, ընթացակարգը եւ որոշումների ընդունումը

23. Գործադիր խորհուրդը կազմված է 41 անդամից: Յուրաքանչյուր մասնակից պետություն իրավունք ունի, ռոտացիայի սկզբունքին համապատասխան, մտնել Գործադիր

խորհրդի կազմի մեջ: Գործադիր խորհրդի անդամները ընտրվում են Համաժողովի կողմից՝ 2 տարի ժամանակով: Սույն Կոնվենցիայի արդյունավետ գործունեությունն

ապահովելու նպատակով պատշաճ ուշադրությունը հատուկ արտահայտվում է արդարացի

աշխարհագրական բաշխմանը, քիմիական արդյունաբերության

նշանակալիությանը, ինչպես

նաեւ քաղաքական շահերին եւ անվտանգության շահերին. Գործադիր խորհրդի կազմը

ձեւավորվում է հետեւյալ ձեւով.

ա) Աֆրիկայից 9 մասնակից պետություններ, որոնք նշանակվում են մասնակից պետությունների կողմից, որոնք ընկած են այդ տարածաշրջանում: Որպես հիմք այդ

նշանակման համար նկատի է ունեցվում, որ այդ ինը մասնակից պետություններից երեքը, որպես կանոն, հանդիսանում են այն մասնակից պետությունները, որոնք ունեն

առավել նշանակալի ազգային քիմիական արդյունաբերություն տարածաշրջանում, ինչը

որոշվում է՝ ելնելով միջազգային մակարդակով հրապարակվող եւ հայտնվող տվյալներից. բացի դա՝ տարածաշրջանային խումբը համաձայնում է նաեւ այդ երեք

անդամների նշանակման ժամանակ ուշադրության առնել այլ տարածաշրջանային

գործոնները,

բ) Ասիայից 9 մասնակից պետություններ, որոնք նշանակվում են մասնակից պետությունների կողմից, ընկած են այդ տարածաշրջանում: Որպես հիմք այդ նշանակման համար նկատի է առնվում, որ այդ 9 մասնակից պետություններից 4-

ը, որպես կանոն, մասնակից պետություններ են, որոնք ունեն առավել նշանակալի ազգային քիմիական արդյունաբերություն տարածաշրջանում, ինչը որոշվում է՝ ելնելով միջազգային մակարդակով հրապարակվող եւ հայտնվող տվյալներից. բացի դա՝

տարածաշրջանային խումբը համաձայնում է նաեւ այդ չորս անդամների նշանակման

ժամանակ ուշադրության առնել այլ տարածաշրջանային գործոնները,

գ) Արեւելյան Եվրոպայի 5 մասնակից պետություններ, որոնք նշանակվում են մասնակից պետությունների կողմից եւ ընկած են տարածաշրջանում: Որպես հիմք այդ

նշանակման համար նկատի է առնվում, որ այդ 5 մասնակից պետություններից 1-

ը, որպես կանոն, մասնակից պետություն է, որն ունի առավել նշանակալի ազգային քիմիական արդյունաբերություն տարածաշրջանում, ինչը որոշվում է՝ ելնելով միջազգային մակարդակով հրապարակվող եւ հայտնվող տվյալներից. բացի դա՝ տարածաշրջանային խումբը համաձայնում է նաեւ այդ չորս անդամների նշանակման

ժամանակ ուշադրության առնել այլ տարածաշրջանային գործոնները,

դ) Լատինական Ամերիկայի եւ Կարիբյան ավազանից 7 մասնակից պետություններ,

որոնք ներկայացվում են մասնակից պետությունների կողմից եւ ընկած են այդ տարածաշրջանում: Որպես հիմք այդ նշանակման համար ընդունվում է, որ այդ 7 մասնակից պետություններից 3-ը, որպես կանոն, մասնակից պետություններ են, որոնք

ունեն տարածաշրջանում առավել նշանակալի ազգային քիմիական արդյունաբերություն,

ինչը որոշվում է՝ ելնելով միջազգային մակարդակով հրապարակվող եւ հայտնվող տվյալներից. բացի դա՝ տարածաշրջանային խումբը համաձայնում է նաեւ այդ 3 անդամների նշանակման ժամանակ ուշադրության առնել այլ

տարածաշրջանային

գործոնները,

ե) Արեւմտյան Եվրոպայի եւ այլ պետությունների թվից 10 մասնակից պետություններ, որոնք ընկած են այդ տարածաշրջանում: Որպես հիմք այդ նշանակման

համար հաշվի է առնվում, որ այդ 10 մասնակից պետություններից 5-ը, որպես կանոն,

մասնակից պետություններ են, որոնք ունեն տարածաշրջանում առավել նշանակալի

ազգային քիմիական արդյունաբերություն, ինչը որոշվում է՝ ելնելով միջազգային մակարդակով հրապարակվող եւ հայտնվող տվյալներից. բացի դա՝ տարածաշրջանային

խումբը համաձայնում է նաեւ այդ 5 անդամների նշանակման ժամանակ ուշադրության

առնել այլ տարածաշրջանային գործոնները,

զ) մեկ լրացուցիչ մասնակից պետություն, որը հաջորդաբար նշանակվում է մասնակից պետությունների կողմից՝ ընկած Ասիայի, Լատինական Ամերիկայի եւ

Կարիքյան ավագանի տարածաշրջանում: Որպես հիմք այդ նշանակման համար հաշվի է առնվում, որ այդ մասնակից պետությունը հանդիսանում է այդ տարածաշրջանից ռոտացիայի ենթարկված անդամ:

24. Գործադիր խորհրդի կազմում առաջին ընտրությունների ժամանակ 20 անդամ

ընտրվում է 1 տարի ժամկետով, ընդ որում պատշաճ ուշադրություն է դարձվում հաստատված թվային համամասնություններին, ինչպես դա շարադրված է 23-րդ կետում:

25. 4-րդ եւ 5-րդ հոդվածների լրիվ իրականացումից հետո Համաժողովը կարող է,

Գործադիր խորհրդի անդամների մեծամասնության խնդրանքով, ուսումնասիրել Գործադիր

խորհրդի կազմը՝ հաշվի առնելով 23-րդ կետում նշված սկզբունքների փոփոխությունները, որոնք կանոնակարգում են նրա կազմը:

26. Գործադիր խորհուրդը մշակում է ընթացակարգի իր կանոնները եւ ներկայացնում է դրանք Համաժողովի հաստատմանը:

27. Գործադիր խորհուրդը ընտրում է իր նախագահին իր անդամների թվից:

28. Գործադիր խորհուրդը հավաքվում է հերթական նիստերի: Հերթական նիստերի միջեւ ընկած ժամանակահատվածում նա հավաքվում է նիստերի այնքան հաճախ, որքան

կարող է պահանջվել նրա իրավասությունների եւ գործառույթների իրականացման

համար:

29. Գերագույն խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Եթե սույն Կոնվենցիայում նախատեսված չէ այլ բան, ապա Գործադիր խորհուրդը որոշումներ է

ընդունում, ըստ Եւրոպան հարցերով, բոլոր անդամների 2/3 ձայների մեծամասնությամբ: Գործադիր խորհուրդը որոշումներ է ընդունում, ընթացակարգային

հարցերով, բոլոր անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

Տարածայնություններ

առաջանալու դեպքում, թե այս կամ այն հարցը ըստ Եւրոպան հարց է, թե ոչ, այն համարվում է ըստ Եւրոպան, եթե Գործադիր խորհուրդը այլ որոշում չի ընդունում ձայների մեծամասնությամբ՝ ըստ Եւրոպան հարցերով որոշումներ ընդունելու համար

անհրաժեշտ:

Իրավասություններ եւ գործառույթներ

30. Գործադիր խորհուրդը հանդիսանում է Կազմակերպության գործադիր մարմին:

Նա հաշվետու է Համաժողովին: Գործադիր խորհուրդը իրականացնում է իրեն հանձնարարված իրավասությունները եւ գործառույթները, ինչպես նաեւ այն գործառույթները, որոնք պատվիրակվում են իրեն Համաժողովի կողմից՝ սույն Կոնվենցիային համապատասխան: Ընդ որում՝ նա գործում է Համաժողովի երաշխավորություններին, որոշումներին եւ ցուցումներին համապատասխան եւ ապահովում է դրանց պատշաճ եւ անշեղորեն կատարումը:

31. Գործադիր խորհուրդը աջակցում է սույն Կոնվենցիայի արդյունավետ

իրականացմանն ու պահպանմանը: Նա իրականացնում է Տեխնիկական քարտուղարության գործունեության նկատմամբ հսկողություն եւ համագործակցում է յուրաքանչյուր մասնակից պետության Ազգային մարմնի հետ ու աջակցում է մասնակից պետությունների

միջեւ խորհրդակցություններին եւ համագործակցությանը՝ նրանց խնդրանքով:

32. Գործադիր խորհուրդը.

ա) ուսումնասիրում եւ ներկայացնում է Համաժողովին Կազմակերպության ծրագրի

նախագիծը եւ բյուջեն,

բ) Համաժողովին է ներկայացնում եւ ուսումնասիրում սույն Կոնվենցիայի իրականացման մասին գեկույցի նախագիծը, իր սեփական գործունեության իրականացման

մասին գեկույցը եւ այնպիսի հատուկ գեկույցներ, որոնք նա համարում է անհրաժեշտ,

կամ որոնք կարող է խնդրել Համաժողովը:

գ) կազմակերպում է Համաժողովի նիստերը, ներառյալ օրակարգի նախագծի նախապատրաստումը:

33. Գործադիր խորհուրդը կարող է խնդրել Համաժողովի հատուկ նիստի գումարում:

34. Գործադիր խորհուրդը.

ա) Համաժողովի նախնական հավանությամբ Կազմակերպության անունից կնքում է

համաձայնագրեր կամ պայմանավորվածություններ պետությունների եւ միջազգային

կազմակերպությունների հետ,

բ) Կազմակերպության անունից կնքում է համաձայնագրեր մասնակից պետությունների հետ 10-րդ հոդվածի առնչությամբ եւ հսկողություն է իրականացնում

10-րդ հոդվածում նշված կամավոր հիմնադրամի նկատմամբ,

գ) հավանություն է տալիս համաձայնագրերին եւ պայմանավորվածություններին,

որոնք վերաբերում են հսկողության ստուգման գործունեությանը եւ մշակվում Տեխնիկական քարտուղարության կողմից՝ մասնակից պետությունների հետ բանակցությունների հիման վրա:

35. Գործադիր խորհուրդը ուսումնասիրում է ցանկացած խնդիր կամ հարց իր իրավասության շրջանակներում, որը վերաբերում է սույն Կոնվենցիային եւ դրա իրականացմանը, եւ, համապատասխանաբար, տեղեկացնում է մասնակից պետություններին,

եւ հասցնում է այդ հարցը մինչեւ Համաժողովի տեղեկություն:

36. Կասկածների եւ մտահոգությունների ուսումնասիրման ժամանակ ուսումնասիրությունների ու դեպքերի եւ պահպանման վերաբերյալ, ներառյալ, այլոց

շարքում, սույն Կոնվենցիայով նախատեսված իրավունքների չարաշահումը, Գործադիր

խորհուրդը խորհրդակցում է շահագրգիռ մասնակից պետությունների հետ եւ, համապատասխանաբար, առաջարկում է մասնակից պետություններին միջոցառումներ

ձեռնարկել դրությունը ուղղելու ուղղությամբ: Եթե Գործադիր խորհուրդը համարում

է անհրաժեշտ հետագա գործողությունները, նա ձեռնարկում է, այլոց շարքում,

հետեւյալ միջոցառումներից մեկը կամ մի քանիսը.

ա) տեղեկացնում է բոլոր մասնակից պետություններին այդ խնդրի կամ հարցի մասին,

բ) տեղեկացնում է այդ խնդրի կամ հարցի մասին Համաժողովին,

գ) ներկայացնում է Համաժողովին երաշխավորություններ դրությունը ուղղելու եւ պահպանումը ապահովելու ուղղությամբ միջոցների վերաբերյալ:

Հատուկ լուրջ եւ ծայրահեղ դեպքերում Գործադիր խորհուրդը հասցնում է տվյալ

հարցը կամ խնդիրը, ներառյալ համապատասխան տեղեկատվությունը եւ եզրակացությունները, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր վեհաժողովի

տեղեկությանը եւ Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդին:

Միաժամանակ նա տեղեկացնում է այդ քայլի մասին բոլոր մասնակից պետություններին:

ԻՐՏԵԿ - շարունակությունը հաջորդ մասերում

ԿՈՆՎԵՆՑԻԱ
ՔԻՄԻԱԿԱՆ ՉԵՆՔԻ ՄՇԱԿՈՒՄԸ, ԱՐՏԱԴՐՈՒՄԸ, ԿՈՒՏԱԿՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ԱՐԳԵԼԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(2-րդ մաս)

Դ. Տեխնիկական քարտուղարություն

37. Տեխնիկական քարտուղարությունը օգնում է Համաժողովին եւ Գործադիր խորհրդին իր գործառույթներն իրականացնելիս: Տեխնիկական քարտուղարությունը

իրականացնում է սույն Կոնվենցիայով նախատեսված ստուգման միջոցներ: Նա իրականացնում է այլ գործառույթներ, որոնք հանձնարարված են իրեն սույն Կոնվենցիային համապատասխան, ինչպես նաեւ՝ գործառույթներ, որոնք պատվիրակվում

են իրեն Համաժողովի եւ Գործադիր խորհրդի կողմից:

38. Տեխնիկական քարտուղարությունը.

ա) պատրաստում է Գործադիր խորհրդին է ներկայացնում Կազմակերպության ծրագրի եւ բյուջեի նախագիծը,

բ) պատրաստում է Գործադիր խորհրդին է ներկայացնում Կազմակերպության զեկույցի նախագիծը սույն Կոնվենցիայի իրականացման մասին եւ այնպիսի այլ զեկույցներ, ինչպիսիք կարող է պահանջել Համաժողովը կամ Գործադիր խորհուրդը,

գ) Համաժողովին, Գործադիր խորհրդին եւ օժանդակ մարմիններին ցույց է տալիս

վարչական եւ տեխնիկական աջակցություն,

դ) Կազմակերպության անունից մասնակից պետություններին ուղարկում է

նրանցից ստանում է տեղեկություններ սույն Կոնվենցիայի իրականացմանը վերաբերող հարցերով,

ե) տեխնիկական աջակցություն է ցույց տալիս մասնակից պետություններին եւ իրականացնում է նրանց համար տեխնիկական գնահատում սույն Կոնվենցիայի դրույթների իրականացման ընթացքում, ներառյալ ցուցակային եւ ոչ ցուցակային քիմիկատների գնահատումը:

39. Տեխնիկական քարտուղարությունը.

ա) մասնակից պետությունների հետ, Գործադիր խորհրդի հավանությամբ, մշակում

է համաձայնագրեր կամ պայմանավորվածություններ, որոնք վերաբերում են ստուգման

գործունեության իրականացմանը,

բ) ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 180 օր հետո համակարգում է մասնակից պետությունների կողմից մշտական պաշարների ստեղծումը եւ

պահումը արտակարգ եւ մարդասիրական օգնության համար՝ համաձայն 10-րդ հոդվածի

7."բ" եւ "գ" կետերի:

Տեխնիկական քարտուղարությունը կարող է տեսչական ստուգման ենթարկել առկա

առարկաները դրանց օգտագործման ապահովության տեսակետից: Կուտակվող առարկաների

ցանկերը ուսումնասիրվում եւ հաստատվում են Համաժողովի կողմից՝ վերոհիշյալ 21.1

կետի համաձայն:

գ) կառավարում է կամավոր հիմնադրամը՝ նշված 10-րդ հոդվածում, բանաքաղում է

հայտարարությունները մասնակից պետությունների եւ, համապատասխան խնդրանքով,

գրանցում է երկկողմ համաձայնագրերը, որոնք կնքվում են մասնակից պետությունների

միջեւ կամ մասնակից պետությունների եւ Կազմակերպության միջեւ՝ 10-րդ հոդվածի

նպատակների համար:

40. Տեխնիկական խորհուրդը տեղեկացնում է Գործադիր խորհրդին ցանկացած խնդրի

մասին, որն առաջացել է իր գործառույթների իրականացման կապակցությամբ. ներառյալ

այն կասկածները, անորոշությունները, անճշտությունները սույն Կոնվենցիայի պահպանման վերաբերյալ, որոնք իրեն հայտնի են դարձել ստուգման իր գործունեության իրականացման ժամանակ, եւ որոնք ինքը չի կարողացել լուծել կամ

պարզել համապատասխան մասնակից պետությունների հետ խորհրդակցությունների

միջոցով:

41. Տեխնիկական քարտուղարության կազմի մեջ մտնում են Գլխավոր տնօրենը, որը

հանդիսանում է նրա ղեկավարը, եւ գլխավոր վարչական աշխատակիցը, տեսուչների եւ

այնպիսի գիտական, տեխնիկական եւ այլ անձնակազմը, որը կարող է անհրաժեշտ լինել:

42. Տեսչությունը հանդիսանում է Տեխնիկական քարտուղարության ստորաբաժանում

եւ գործում է Գլխավոր տնօրենի հսկողության ներքո:

43. Գլխավոր տնօրենը նշանակվում է Համաժողովի կողմից, Գործադիր խորհրդի

երաշխավորությամբ, չորս տարի ժամկետով, որը կարող է երկարաձգվել ոչ ավելի, քան

եւս մեկ տարով:

44. Գլխավոր տնօրենը հաշվետու է Համաժողովին եւ Գործադիր խորհրդին անձնակազմի նշանակման եւ Տեխնիկական քարտուղարության կազմակերպման ու

գործունեության հարցերում: Ծառայության անցնելիս եւ ծառայության պայմանները

որոշելիս պետք է ղեկավարվել, գլխավորապես, աշխատունակության, արհեստավարժության եւ բարեխղճության բարձր մակարդակը ապահովելու անհրաժեշտությամբ: Գլխավոր տնօրենը, տեսուչները, ինչպես նաեւ մասնագետների

կարգի աշխատակիցները եւ գրասենյակային անձնակազմը նշանակվում են միայն

մասնակից պետությունների քաղաքացիներից: Պատշաճ ուշադրություն պետք է ցուցաբերել անձնակազմի ընտրության կարելիությանը հնարավորինս մեծ աշխարհագրական հիմքով: Աշխատակիցների հավաքագրումը իրականացվում է՝ ելնելով

անձնակազմի մինիմալ քանակություն ապահովելու սկզբունքից, անհրաժեշտ Տեխնիկական

քարտուղարության պարտավորությունների պատշաճ կատարման համար:

45. Գլխավոր տնօրենը պատասխանատու է գիտախորհրդակցական խորհրդի կազմակերպման եւ գործունեության համար՝ նշված 21."ը" կետում: Գլխավոր տնօրենը,

մասնակից պետությունների հետ խորհրդակցելով, նշանակում է գիտախորհրդակցական

խորհրդի անդամներին, որոնք հանդես են գալիս իրենց անձնական հատկանիշներով:

Խորհրդի անդամներին պետք է նշանակել՝ ելնելով նրանց արհեստավարժությունից

կոնկրետ գիտական բնագավառներում, որոնք վերաբերում են սույն Կոնվենցիայի իրականացմանը:

Գլխավոր տնօրենը կարող է նաեւ Խորհրդի անդամների հետ խորհրդակցություններում ստեղծել ժամանակավոր աշխատանքային խմբեր գիտական

փորձագետների կոնկրետ հարցերով երաշխավորություններ ներկայացնելու համար:

Վերոհիշյալի առնչությամբ մասնակից պետությունները կարող են Գլխավոր տնօրենին

ներկայացնել փորձագետների ցուցակներ:

46. Գլխավոր տնօրենը, տեսուչները եւ այլ աշխատակիցներ իրենց պարտականություններն իրականացնելիս չպետք է հայտնեն կամ ստանան ցուցումներ

որելէ կառավարության կողմից կամ որելէ այլ աղբյուրից՝ Կազմակերպությանը օտար:

Նրանք պետք է ձեռնպահ մնան ցանկացած գործողությունից, որը կարող է արտացոլվել իրենց, որպես միջազգային պաշտոնատար անձանց՝ պատասխանատու միայն Համաժողովի եւ

Գործադիր խորհրդի առջեւ դրության վրա:

47. Յուրաքանչյուր մասնակից պետություն հարգում է Գլխավոր տնօրենի, տեսուչների եւ այլ աշխատակիցների պարտականությունների խիստ միջազգային բնույթը

եւ չի փորձում ազդել նրանց վրա իրենց պարտականությունները կատարելիս:

Ե. Արտոնություններ եւ անձեռնմխելիություններ

48. Մասնակից պետությունների տարածքներում եւ ցանկացած այլ վայրում՝ իր իրավագործության կամ հսկողության ներքո, Կազմակերպությունը ունի այնպիսի իրավունակություն եւ օգտվում է այնպիսի արտոնություններից եւ անձեռնմխելիությունից, որոնք անհրաժեշտ են իր գործառույթների իրականացման

համար:

49. Մասնակից պետությունների պատվիրակները, ինչպես նաեւ նրանց տեղակալները

եւ խորհրդականները, Գլխավոր տնօրենը եւ Կազմակերպության անձնակազմը օգտվում են

այնպիսի արտոնություններից եւ անձեռնմխելիություններից, որոնք անհրաժեշտ են

Կազմակերպության հետ կապված իրենց գործառույթների անկախ իրականացման համար:

50. Սույն հոդվածում նշված իրավունակությունը, արտոնություններն ու անձեռնմխելիությունները որոշվում են Կազմակերպության եւ մասնակից պետությունների միջեւ համաձայնագրում, ինչպես նաեւ Կազմակերպության եւ այլ

պետության միջեւ, որտեղ գտնվում է Կազմակերպության գլխակայանը: Այդ համաձայնագրերը ուսումնասիրվում են եւ հավանության արժանանում

Համաժողովի

կողմից՝ 21-ի կետի համաձայն:

51. 48-րդ եւ 49-րդ կետերից անկախ՝ ստուգման գործունեություն իրականացնելիս Գլխավոր տնօրենը եւ Տեխնիկական քարտուղարության անձնակազմը

օգտվում են այնպիսի արտոնություններից եւ անձեռնմխելիություններից, որոնք շարադրված են Ստուգման հավելվածի 2-րդ մասի Բ բաժնում:

ՀՈԴՎԱԾ 9

Խորհրդակցություններ, համագործակցություն եւ փաստերի պարզում

1. Մասնակից պետությունները խորհրդակցում եւ համագործակցում են անմիջականորեն միմյանց հետ կամ Կազմակերպության միջոցով կամ այլ համապատասխան

միջազգային ընթացակարգերի օգտագործմամբ, ներառյալ Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում ընթացակարգերը եւ նրա Կանոնադրությանը

համապատասխան ցանկացած հարցով, որը կարող է բարձրացվել սույն Կոնվենցիայի

դրույթների, առարկայի կամ կատարման կապակցությամբ:

2. Առանց վնասելու ցանկացած մասնակից պետության՝ տեսչական ստուգում անցկացնելու իրավունքը՝ ամեն անգամ, երբ դա հնարավոր է, նախ եւ առաջ ձեռնարկում են տարբեր միջոցներ՝ պարզելու եւ կարգավորելու համար միմյանց միջեւ

տեղեկատվության եւ խորհրդակցությունների միջոցով ցանկացած հարց, որը կարող է

կասկածների տեղիք տալ սույն Կոնվենցիայի պահպանման վերաբերյալ կամ առաջացնում

է մտահոգություններ այդ հարցի կապակցությամբ, ինչը կարող է համարվել ոչ պարզ:

Մասնակից պետությունը, որը ստանում է մյուս մասնակից պետության խնդրանքը ցանկացած հարցի պարզաբանման կապակցությամբ, որը, ինչպես համարում է հարցնող

մասնակից պետությունը, առաջացնում է այդպիսի կասկած կամ մտահոգություն, ներկայացնում է հարցնող մասնակից պետությանը հնարավորինս արագ, բայց ցանկացած

դեպքում ոչ ուշ, քան խնդրանքը ստանալուց 10 օր հետո, տեղեկատվություն, որը բավարար է արտահայտված կասկածին կամ մտահոգությանը պատասխանելու համար,

բացատրության հետ մեկտեղ, թե ինչպես է ներկայացված տեղեկատվությունը լուծում

այդ հարցը: Ոչինչ սույն Կոնվենցիայում չի շոշափում ցանկացած երկու կամ ավելի մասնակից պետությունների իրավունքը տեսչական ստուգումների կազմակերպման վրա՝

փոխադարձ համաձայնությամբ, կամ մտահոգություն է առաջացնում այդ հարցի հետ

կապված, որը կարող է համարվել ոչ պարզ: Այդպիսի միջոցները չեն շոշափում ցանկացած մասնակից պետության իրավունքները եւ պարտականությունները՝ սույն

Կոնվենցիայի այլ դրույթներին համապատասխան:

Պարզաբանումների մասին հարցումների ներկայացման ընթացակարգը

3. Մասնակից պետությունը իրավունք ունի խնդրելու Գործադիր խորհրդին աջակցություն ցուցաբերել ցանկացած իրավիճակ պարզելու գործում, որը կարող է

համարվել ոչ պարզ, կամ որը առաջացնում է մտահոգություն այլ մասնակից պետությունների կողմից սույն Կոնվենցիայի հնարավոր չպահպանման վերաբերյալ:

Գործադիր խորհուրդը ներկայացնում է ունեցած համապատասխան տեղեկատվությունը,

որը կապված է այդպիսի մտահոգության հետ:

4. Մասնակից պետությունը իրավունք ունի Գործադիր խորհրդին խնդրելու մյուս

մասնակից պետություններից ստանալ պարզաբանում ցանկացած իրավիճակի վերաբերյալ,

որը կարող է համարվել ոչ պարզ կամ մտահոգություն է առաջացնում իր կողմից սույն

Կոնվենցիայի հավանական չպահպանման վերաբերյալ: Նման դեպքում կիրառվում է հետեւյալը.

ա) Գործադիր խորհուրդը Գլխավոր տնօրենի միջոցով հարցում է ուղարկում պարզաբանման մասին համապատասխան մասնակից պետություններին ոչ ուշ, քան

հարցումը ստանալուց 24 ժամ հետո,

բ) հարցվող մասնակից պետությունը պարզաբանում է ներկայացնում Գործադիր

խորհրդին որքան հնարավոր է շուտ, բայց յուրաքանչյուր դեպքում ոչ ուշ, քան հարցումը ստանալուց 10 օր հետո,

գ) Գործադիր խորհուրդը ի գիտություն է ընդունում պարզաբանումը եւ այն ուղարկում է հարցնող մասնակից պետությանը ոչ ուշ, քան ստանալուց 24 ժամ հետո,

դ) եթե հարցնող մասնակից պետությունը պարզաբանումը համարում է ոչ բավարար,

ապա նա իրավունք ունի Գործադիր խորհրդին խնդրելու ստանալ հարցնող մասնակից

պետությունից հետագա պարզաբանումներ,

ե) հետագա պարզաբանումները ստանալու համար, որոնք հարցվում են "դ" ենթակետին համապատասխան, Գործադիր խորհուրդը կարող է Գլխավոր տնօրենին

առաջարկել Տեխնիկական քարտուղարությունից ստեղծել փորձագետների խումբ, իսկ եթե

Տեխնիկական քարտուղարությունում բացակայում է համապատասխան անձնակազմը, ապա

այլ աղբյուրներից՝ ամբողջ այն տեղեկատվությունը եւ տվյալները ուսումնասիրելու

համար, որոնք առնչվում են մտահոգության առաջացնող իրավիճակին:

Փորձագետների

խումբը Գործադիր խորհրդին է ներկայացնում փաստաբանական զեկուլյց իր եզրակացությունների մասին,

զ) եթե հարցնող մասնակից պետությունը համարում է, որ պարզաբանումները, որոնք ստացվել են "դ" եւ "ե" ենթակետերին համապատասխան, բավարար չեն, ապա նա

իրավունք ունի խնդրելու Գործադիր խորհրդի հատուկ նիստի գումարում, որին իրավունք ունեն մասնակցելու համապատասխան մասնակից պետությունները, որոնք չեն

հանդիսանում Գործադիր խորհրդի անդամ: Այդպիսի հատուկ նիստին Գործադիր խորհուրդը ուսումնասիրում է այդ հարցը եւ կարող է երաշխավորել ցանկացած միջոց,

որն ինքը համարում է նպատակահարմար՝ իրավիճակի կարգավորման համար:

5. Մասնակից պետությունը նաեւ իրավունք ունի Գործադիր խորհրդին խնդրելու

պարզաբանել ցանկացած իրավիճակ, որը համարվում է ոչ պարզ կամ առաջացնում է

մտահոգություն նրա կողմից Կոնվենցիայի հնարավոր չպահպանման վերաբերյալ:

Գործադիր խորհուրդը բավարարում է այդպիսի խնդրանքը համապատասխան օգնություն

տրամադրելու միջոցով:

6. Գործադիր խորհուրդը տեղեկացնում է մասնակից պետություններին պարզաբանման մասին ցանկացած հարցման վերաբերյալ, որը նախատեսված է սույն հոդվածով:

7. Եթե մասնակից պետությունների կասկածը կամ մտահոգությունը հնարավոր չպահպանման վերաբերյալ դեռևս մնում է 60 օրվա ընթացքում Գործադիր խորհրդի պարզաբանման մասին հարցումը ներկայացնելուց հետո, կամ եթե նա համարում է, որ

իր կասկածները ենթակա են անհետաձգելի քննարկման, ապա նա կարող է, անկախ իր

իրավունքից, տեսչական ստուգման համար հարցում ներկայացնել, խնդրել գումարել

Չամաժողովի հատուկ նիստ՝ 8-րդ հոդվածի 12."գ" կետին համապատասխան: Այդպիսի

հատուկ նիստին Չամաժողովը ուսումնասիրում է տվյալ հարցը եւ կարող է երաշխավորել ցանկացած միջոց, որն ինքը համարում է նպատակահարմար իրավիճակի

կարգավորման համար:

Չարցմամբ տեսչական ստուգումների ընթացակարգեր

8. Յուրաքանչյուր մասնակից պետություն իրավունք ունի խնդրելու հարցմամբ տեսչական ստուգում անցկացնել տեղում՝ ցանկացած օբյեկտի կամ կետի տարածքում կամ

ցանկացած այլ տեղում՝ յուրաքանչյուր այլ մասնակից պետության իրավագործության

կամ հսկողության ներքո, բացառապես սույն Կոնվենցիայի դրույթների հնարավոր չպահպանմանը վերաբերող ցանկացած հարց պարզելու կամ կարգավորելու նպատակով,

ինչպես նաև՝ հասնելու այդ տեսչական ստուգման անհետաձգելի կատարմանը ցանկացած

տեղում՝ տեսչական խմբի կողմից, որը նշանակվում է Գլխավոր տնօրենի կողմից՝ սույն հոդվածին համապատասխան:

9. Յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավոր է սահմանափակել տեսչական

ստուգման հարցումը սույն Կոնվենցիայի շրջանակներով եւ հարցման մեջ ներկայացնել

ամբողջ համապատասխան տեղեկատվությունը, որի հիման վրա մտահոգությունը սույն

Կոնվենցիայի հնարավոր չպահպանման վերաբերյալ առաջացել է, ինչպես դա նախատեսված

է սույն հոդվածում: Յուրաքանչյուր մասնակից պետություն ձեռնպահ է մնում տեսչական ստուգման նպատակով չհիմնավորված հարցումներից՝

չարաշահումներից

խուսափելու համար: Չարցմամբ տեսչական ստուգումը իրականացվում է բացառապես

հնարավոր չպահպանման հետ կապված փաստերը պարզելու նպատակով:

10. Սույն Կոնվենցիայի դրույթները պահպանելու նպատակով յուրաքանչյուր մասնակից պետություն Տեխնիկական քարտուղարությանը թույլատրում է անցկացնել

տեղում տեսչական ստուգում 8-րդ կետին համապատասխան հարցման հիման վրա:

11. Հարցման հիման վրա տեսչական ստուգման առնչությամբ հարցման համաձայն,
օբյեկտում կամ կետում եւ սույն հոդվածում նախատեսված ընթացակարգերին համապատասխան, տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը.

ա) իրավունք ունի եւ պարտավոր է ձեռնարկել բոլոր խելամիտ ջանքերը, որպեսզի ցուցադրի իր կողմից սույն Կոնվենցիայի պահպանումը եւ այդ նպատակով տա տեսչական

ստուգման խմբին հնարավորություն՝ իրականացնելու իր մանդատը,
բ) պարտավոր է մատչելի դարձնել հարցվող վայրի շրջանակներում բացառապես

փաստերի հաստատման նպատակով, որոնք առնչվում են հնարավոր չպահպանման մտահոգության հետ,

գ) իրավունք ունի միջոցներ ձեռնարկելու զգայական սարքերի պաշտպանության

նպատակով, ինչպես նաեւ կոնֆիդենցիալ տեղեկատվության եւ սույն Կոնվենցիայի հետ

առնչություն չունեցող տվյալների հրապարակումը կանխարգելելու համար:

12. Դիտորդի նկատմամբ կիրառվում է հետեւյալը.

ա) հարցնող մասնակից պետությունը կարող է, տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության համաձայնությամբ, ուղարկել ներկայացուցիչ, որը կարող է

լինել կամ հարցնող մասնակից պետության քաղաքացի, կամ երրորդ մասնակից պետության՝ հետեւելու համար հարցման հիման վրա տեսչական ստուգում իրականացնելու գործընթացին,

բ) տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը այդպիսի դեպքում

տրամադրում է մատչելիություն դիտորդին՝ սույն հոդվածին համապատասխան,

գ) տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը, որպես կանոն, ընդունում է առաջարկվող դիտորդին, սակայն, եթե տեսչական ստուգման ենթարկվող

պետությունը մերժում է, ապա այդ փաստը գրանցվում է եզրափակիչ զեկույցում:

13. Հարցնող մասնակից պետությունը հարցում է ներկայացնում Գործադիր խորհրդին, ըստ հարցումի, տեսչական ստուգման առնչությամբ եւ միաժամանակ Գլխավոր

տնօրենին՝ անհապաղ մշակման համար:

14. Գլխավոր տնօրենը անհապաղ համոզվում է, որ տեսչական ստուգման հարցումը

համապատասխանում է Ստուգման հավելվածի 10-րդ մասի 4-րդ կետում նշված պահանջներին եւ, անհրաժեշտության դեպքում, համապատասխանաբար, օգնում է հարցնող

մասնակից պետությանը տեսչական ստուգման հարցումը ներկայացնելու գործում: Եթե

տեսչական ստուգման հարցումը համապատասխանում է պահանջներին, ապա սկսվում է

հարցման հիման վրա տեսչական ստուգման նախապատրաստումը:

15. Գլխավոր տնօրենը ուղարկում է տեսչական ստուգման մասին հարցումը

ստուգման ենթարկվող մասնակից պետությանը ոչ ուշ, քան 12 ժամ առաջ մինչև նախատեսվող տեսչական խմբի ժամանելը մուտքի կետ:

16. Տեսչական ստուգման համար հարցումը ստանալուց հետո Գործադիր խորհուրդը

ի գիտություն է ընդունում Գլխավոր տնօրենի գործողությունները հարցման հետ կապված եւ ուսումնասիրում է այդ դեպքը տեսչական ստուգման ողջ ընթացքում: Սակայն դրա քննարկումները չեն ձգձգում տեսչական ստուգման ընթացքը:

17. Տեսչական ստուգման համար հարցում ստանալուց ոչ ուշ, քան 12 ժամ հետո

Գործադիր խորհուրդը կարող է բոլոր անդամների 3/4-ի մեծամասնությամբ որոշում

ընդունել հարցման հիման վրա տեսչական ստուգում չանցկացնելու մասին, եթե համարում է, որ տեսչական ստուգում անցկացնելու մասին հարցումը մտացածին է, ոչ

բարեխիղճ կամ ակնհայտորեն սույն Կոնվենցիայի շրջանակներից դուրս եկող, ինչպես

դա նշված է 8-րդ կետում:

Այդպիսի որոշում ընդունելու գործում չի մասնակցում ոչ հարցնող, ոչ էլ տեսչական ստուգման ենթարկվող պետությունը: Եթե Գործադիր խորհուրդը որոշում է

ընդունում հարցման հիման վրա ստուգում չանցկացնելու մասին, ապա դրա նախապատրաստական աշխատանքները դադարում են, հարցման հիման վրա հետագա ոչ մի

գործողություն ստուգման համար չի ձեռնարկվում, եւ շահագրգիռ մասնակից պետությունները տեղեկացվում են պատշաճ ձևով:

18. Գլխավոր տնօրենը տալիս է տեսչական ստուգման մանդատ՝ հարցման հիման վրա

տեսչական ստուգում անցկացնելու համար: Տեսչական ստուգման մանդատը իրենից

ներկայացնում է 8-րդ եւ 9-րդ կետերում տեսչական ստուգման հիշատակված հարցումը,

որը շարադրված է աշխատանքային ձեւակերպումներում եւ համապատասխանում է

տեսչական ստուգման այդպիսի հարցմանը:

19. Հարցման հիման վրա տեսչական ստուգումը իրականացվում է 10-րդ մասի համապատասխան կամ, ենթադրվող կիրառման դեպքում, Ստուգման հավելվածի 11-րդ մասի

համապատասխան: Տեսչական խումբը ղեկավարվում է հարցման հիման վրա տեսչական

ստուգում անցկացնելու սկզբունքով, որքան հնարավոր է առավել ինտրուզիվ ձեւով,

որը համադրելի է իր առաքելության արդյունավետ եւ ժամանակին կատարման հետ:

20. Տեսչական ստուգում անցկացնող մասնակից պետությունը հարցման հիման վրա

տեսչական ստուգում անցկացնելու ամբողջ ընթացքում օգնություն է ցույց տալիս տեսչական խմբին եւ հեշտացնում է նրա խնդիրները: Եթե տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը, Ստուգման հավելվածի 10-րդ մասի Գ բաժնի

համաձայն, առաջացնում է միջոցներ սույն Կոնվենցիայի պահպանումը ցուցադրելու

համար՝ որպես այլընտրանք լրիվ եւ համապարփակ մատչելիությունը, ապա նա խորհրդակցությունների միջոցով տեսչական խմբի հետ ձեռնարկում է բոլոր բանական

միջոցները փաստերը հաստատելու ընթացակարգերի վերաբերյալ համաձայնության

հասնելու նպատակով՝ իր պահպանումը ցուցադրելու համար:

21. Եզրափակիչ գեկույցը բովանդակում է փաստաբանական

եզրակացություններ,

ինչպես նաեւ տեսչական խմբի գնահատականը մատչելիության եւ համագործակցության

աստիճանի եւ բնույթի վերաբերյալ, որոնք ներկայացվել են հարցման հիման վրա տեսչական ստուգումը բավարար իրականացնելու նպատակով: Գլխավոր

տնօրենը անհապաղ

ուղարկում է եզրափակիչ գեկույցը տեսչական խմբի՝ հարցնող մասնակից

պետություններին, տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությանը,

Գործադիր

խորհրդին եւ բոլոր մյուս մասնակից պետություններին: Գլխավոր տնօրենը

այնուհետեւ անհապաղ Գործադիր խորհրդին է ուղարկում հարցնող եւ տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետություններին գնահատականներ, ինչպես

նաեւ այլ

մասնակից պետությունների կարծիքները, որոնք կարող են ներկայացնել

Գլխավոր

տնօրենին այդ նպատակով, իսկ այնուհետեւ ներկայացնում է դրանք բոլոր

մասնակից

պետություններին:

22. Գործադիր խորհուրդը իր լիազորություններին եւ գործառույթներին համապատասխան ձեռով ուսումնասիրում է եզրափակիչ տեսչական խմբի

գեկույցը

անմիջապես դա ներկայացնելուց հետո եւ ուսումնասիրում է ցանկացած

մտահոգություն

հետեւյալի վերաբերյալ.

ա) տեղի՞ է ունեցել արդյոք որեւէ չպահպանում,

բ) տեղավորվո՞ւմ է արդյոք հարցումը սույն Կոնվենցիայի շրջանակներում, եւ

գ) տեղի՞ է ունեցել արդյոք հարցման իրավունքի չարաշահում հարցման հիման վրա տեսչական ստուգման վերաբերյալ:

23. Եթե Գործադիր խորհուրդը, իր լիազորություններին եւ գործառույթներին

համապատասխան, գալիս է եզրակացության այն մասին, որ կարող են

անհրաժեշտ լինել

հետագա գործողությունները, 22-րդ կետին համապատասխան, ապա նա

համապատասխան

միջոցներ է ձեռնարկում դրությունը ուղղելու եւ սույն Կոնվենցիայի պահպանումը

ապահովելու գործում, ներառյալ Չամաժողովի համար կոնկրետ

երաշխավորությունները:

Չարաշահման դեպքում Գործադիր խորհուրդը քննարկում է հարցը այն մասին, թե պե՞տք

է արդյոք հարցնող մասնակից պետությունը կրի որեւէ ֆինանսական

հետեւանքներ

հարցման հիման վրա տեսչական ստուգման կապակցությամբ:

24. Հարցնող մասնակից պետությունը եւ տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը իրավունք ունեն մասնակցելու քննարկման ընթացքին:

Գործադիր խորհուրդը տեղեկացնում է մասնակից պետություններին եւ
Համաժողովի

հաջորդ նիստը այդ գործընթացի ելքի մասին:

25. Եթե Գործադիր խորհուրդը Համաժողովին ներկայացրել է կոնկրետ
երաշխավորություններ, ապա Համաժողովը, 12-րդ հոդվածին համապատասխան,
ուսումնասիրում է միջոցներ ձեռնարկելու մասին հարցը:

ՀՈՂՎԱԾ 10

Օգնությունը եւ պաշտպանությունը քիմիական զենքից

1. Սույն հոդվածի նպատակների համար "օգնություն" նշանակում է՝ մասնակից
պետություններին քիմիական զենքից պաշտպանության տրամադրում եւ
համակարգում,

ինչը ներառում է, այլոց շարքում, հետեւյալը. հայտնաբերման միջոցները եւ
ազդանշանի համակարգերը, պաշտպանական սարքավորումը, ապագազացման
սարքավորումը

եւ ապագազացման միջոցները, բժշկական անտիդոտները եւ բուժման միջոցները,
ինչպես

նաեւ խորհրդակցում այդ պաշտպանական միջոցներից մեկի վերաբերյալ:

2. Ոչինչ սույն Կոնվենցիայում չպետք է մեկնաբանվի որպես ցանկացած
մասնակից

պետության հետազոտությունների, մշակումների, արտադրության, ձեռքբերման,
փոխանցման կամ քիմիական զենքից պաշտպանության միջոցների
օգտագործման

իրավունքին խոչընդոտող՝ սույն Կոնվենցիայով չարգելված նպատակներով:

3. Յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավոր է հնարավորինս
հեշտացնել

սարքավորումների, կյութերի եւ քիմիական զենքից պաշտպանության միջոցների
մասին

գիտատեխնիկական տեղեկատվության լայն փոխանակումը եւ իրավունք ունի
մասնակցելու

նման փոխանակմանը:

4. Ազգային ծրագրերի թափանցիկության բարձրացման նպատակներով,
կապված

պաշտպանական միջոցների հետ, յուրաքանչյուր մասնակից պետություն
Տեխնիկական

քարտուղարությանը տարեկան ներկայացնում է տեղեկատվություն իր ծրագրի
մասին՝

8-րդ հոդվածի 21. i կետի համաձայն Համաժողովի կողմից ուսումնասիրվող եւ
հաստատվող ընթացակարգերին համապատասխան:

5. Տեխնիկական քարտուղարությունը ոչ ուշ, քան սույն Կոնվենցիայի ուժի մեջ
մտնելուց 180 օր հետո ստեղծում եւ վարում է օգտագործման համար ցանկացած
հարցնող մասնակից պետության կողմից տվյալների բանկ, որը պարունակում է
ազատ

մատչելի տեղեկատվություն քիմիական զենքից զանազան պաշտպանական
միջոցների

մասին, որը կարող է ներկայացվել մասնակից պետությունների կողմից:

Տեխնիկական քարտուղարությունը իր ունեցած պաշարների շրջանակներում,
մասնակից պետությունների խնդրանքով, նույնպես ապահովում է մասնակից
պետությանը

փորձագիտական խորհրդակցությամբ եւ աջակցում նրա ծրագրերի իրականացման հնարավոր միջոցների որոշման գործում եւ քիմիական զենքից պաշտպանության կարողության

կատարելագործման:

6. Ոչինչ սույն Կոնվենցիայում չպետք է մեկնաբանվի որպես մասնակից պետության երկկողմ հիմքով հարցում կատարելու եւ օգնություն տրամադրելու, այլ

մասնակից պետության հետ առանձին համաձայնագրեր կնքելու՝ արտակարգ օգնություն

տրամադրելու վերաբերյալ իրավունքին խոչընդոտող:

7. Յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է օգնություն տրամադրել Կազմակերպության միջոցով եւ այդ նպատակով ընտրել միջոցներից մեկը

կամ մի քանիսը.

ա) մուծումներ կատարել օգնության կամավոր հիմնադրամին, որը պետք է ստեղծվի

Համաժողովի կողմից՝ նրա առաջին նիստի ժամանակ,

բ) կնքել, ըստ հնարավորության, ոչ ուշ, քան իր համար սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց 180 օր հետո, համաձայնագիր Կազմակերպության հետ համապատասխան խնդրանքի առկայության դեպքում օգնության տրամադրման մասին,

գ) հայտարարել ոչ ուշ, քան իր համար սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց 180 օր հետո, թե ինչ կարգի օգնություն այն կարող է տրամադրել Կազմակերպության

կոչի դեպքում: Իսկ եթե հետագայում մասնակից պետությունը ի վիճակի չի լինի օգնություն տրամադրել՝ իր հայտարարության մեջ նշված, ապա նա, միեւնույնն է, պարտավորություն է կրում օգնության տրամադրման հարցում՝ սույն կետին համապատասխան:

8. Յուրաքանչյուր մասնակից պետություն իրավունք ունի հարցում կատարելու եւ, 9-րդ, 10-րդ եւ 11-րդ կետերում նշված ընթացակարգերին համապատասխան, օգնություն եւ պաշտպանության ստանալու քիմիական զենքի կիրառումից կամ կիրառման

վտանգից, եթե նա գտնի, որ.

ա) իր դեմ քիմիական զենք է կիրառվել,

բ) իր դեմ կիրառվել են քիմիական միջոցներ անկարգությունների դեմ պայքարում, որպես պատերազմի վարման միջոց, կամ

գ) իրեն սպառնում են ցանկացած պետության գործողությունները կամ գործունեությունները, որոնք արգելված են մասնակից պետություններին 1-ին հոդվածով:

9. Այդպիսի խնդրանքը, հաստատված համապատասխան տեղեկատվությամբ, ներկայացվում է Գլխավոր տնօրենին, որը անհապաղ փոխանցում է այն Գործադիր

խորհրդին եւ բոլոր մասնակից պետություններին: Գլխավոր տնօրենը անհապաղ փոխանցում է խնդրանքը մասնակից պետություններին, որոնք պատրաստակամություն են

հայտնել, 7-րդ "բ" եւ "գ" կետերին համապատասխան, արտակարգ օգնություն տրամադրել քիմիական զենքի կիրառման դեպքում կամ անկարգությունների դեմ պայքարում քիմիական միջոցների կիրառման դեպքում, որպես պատերազմի վարման

միջոցների, կամ մարդասիրական օգնություն՝ քիմիական զենքի կիրառման լուրջ

վտանգի կամ անկարգությունների դեմ պայքարում քիմիական միջոցների կիրառման լուրջ վտանգի դեպքում, որպես պատերազմի վարման միջոց, համապատասխան մասնակից պետություններին ոչ ուշ, քան խնդրանքը ստանալուց 12 ժամ հետո: Գլխավոր տնօրենը ոչ ուշ, քան խնդրանքը ստանալուց 24 ժամ հետո քննություն է սկսում, որպեսզի հիմք դնի հետագա գործողությունների համար: Նա ավարտում է քննությունը 72 ժամվա ընթացքում եւ Գործադիր խորհրդին է ներկայացնում զեկույց: Եթե քննության ավարտի համար պահանջվում է լրացուցիչ ժամանակ, նույն ժամկետում ներկայացվում է միջանկյալ զեկույց: Քննության համար պահանջվող լրացուցիչ ժամկետը չի գերազանցում 72 ժամը: Սակայն այն կարող է երկարաձգվել էլի նույնքան ժամկետով: Յուրաքանչյուր լրացուցիչ ժամկետի վերջում Գործադիր խորհրդին ներկայացնում են զեկույցներ: Քննության ընթացքում, պատշաճորեն եւ խնդրանքին ու նման խնդրանքը ուղեկցող տեղեկատվությանը համապատասխան, սահմանվում են համապատասխան փաստեր, որոնք առնչություն ունեն խնդրանքին, ինչպես նաեւ որոշվում են անհրաժեշտ լրացուցիչ օգնության եւ պաշտպանության ձեւեր եւ չափերը:

10. Ոչ ուշ, քան քննության մասին զեկույցը ստանալուց 24 ժամ հետո, Գործադիր խորհուրդը հավաքվում է իրավիճակի ուսումնասիրության համար եւ հետագա 24 ժամվա ընթացքում ձայների մեծամասնությամբ որոշում է ընդունում՝ տա՞լ Տեխնիկական քարտուղարությանը ցուցում լրացուցիչ օգնություն տրամադրելու վերաբերյալ: Տեխնիկական քարտուղարությունը անմիջապես բոլոր մասնակից պետություններին եւ միջազգային կազմակերպություններին է ուղարկում զեկույցը եւ Գործադիր խորհրդի կողմից ընդունված որոշումը: Գործադիր խորհրդի համապատասխան որոշմամբ՝ Գլխավոր տնօրենը անմիջապես օգնություն է տրամադրում: Այդ նպատակով Գլխավոր տնօրենը կարող է համագործակցել հայցող մասնակից պետության հետ, այլ մասնակից պետությունների եւ համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ: Մասնակից պետությունները նախաձեռնում են բոլոր հնարավոր ջանքերը օգնություն տրամադրելու համար:

11. Եթե ընթացիկ քննության ժամանակ կամ վստահելի այլ աղբյուրից ստացված տեղեկատվությունը բավարար չափով վկայում է զոհերի, քիմիական զենքի կիրառման եւ անհետաձգելի միջոցների անհրաժեշտության մասին, ապա Գլխավոր տնօրենը ծանուցում է բոլոր մասնակից պետություններին եւ արտակարգ միջոցներ է ձեռնարկում օգնության տրամադրման գործում պաշարների օգտագործմամբ, որոնք Յամաժողովի

կողմից տրամադրվել են նրա տնօրինմանը այդպիսի արտակարգ դեպքերի համար: Գլխավոր տնօրենը տեղեկացնում է Գործադիր խորհրդին սույն կետին համապատասխան ձեռնարկված միջոցների մասին:

ՀՈՂՎԱԾ 11

Տնտեսական եւ տեխնիկական զարգացում

1. Սույն Կոնվենցիայի դրույթները իրականացվում են այնպես, որ զերծ մասն մասնակից պետությունների տնտեսական կամ տեխնիկական զարգացման համար

խոչընդոտների խուսափումից եւ միջազգային համագործակցության համար քիմիական

գործունեության ոլորտում՝ սույն Կոնվենցիայով չարգելված նպատակներով, ներառյալ՝ գիտատեխնիկական տեղեկատվության, քիմիկատների եւ սարքավորումների

փոխանակումների, արտադրության, վերամշակման եւ օգտագործման համար՝ սույն

Կոնվենցիայով չարգելված նպատակներով:

2. Հաշվի առնելով սույն Կոնվենցիայի դրույթները եւ առանց վնասելու միջազգային իրավունքի սկզբունքները եւ կիրառելի նորմերը՝ մասնակից պետությունները.

ա) իրավունք ունեն անհատական կամ կոլեկտիվ հիմքով հետազոտություններ իրականացնել, մշակել, արտադրել, ձեռք բերել, պահպանել, փոխանցել եւ օգտագործել

քիմիկատներ,

բ) պարտավորվում են աջակցել քիմիկատների հնարավորինս լրիվ փոխանակմանը,

սարքավորումներով եւ գիտատեխնիկական տեղեկատվությամբ քիմիայի զարգացման եւ

կիրառման առնչությամբ՝ սույն Կոնվենցիայով չարգելված նպատակներով, ինչպես նաեւ

իրավունք ունեն մասնակցելու այդպիսի փոխանակմանը,

գ) միմյանց միջեւ հարաբերություններում չեն պահպանում ոչ մի սահմանափակում, ներառյալ սահմանափակումները ցանկացած միջազգային համաձայնագրերի շրջանակներում, որոնք համատեղելի չեն սույն Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների հետ, որոնք կարող են սահմանափակել կամ դժվարացնել առեւտուրը, ինչպես նաեւ գիտատեխնիկական գիտելիքների զարգացումը եւ

տարածումը քիմիայի ոլորտում՝ արդյունաբերական, գյուղատնտեսական, հետազոտական,

բժշկական, դեղագործական կամ այլ խաղաղ նպատակներով,

դ) չեն օգտագործում սույն Կոնվենցիան որպես հիմք ցանկացած միջոցի կիրառման

համար, բացառությամբ սույն Կոնվենցիայով նախատեսված կամ թույլատրված միջոցների, եւ չեն օգտագործում ոչ մի այլ միջազգային համաձայնագիր որեւէ նպատակի հասնելու համար, որը համատեղելի չէ սույն Կոնվենցիայի հետ,

ե) պարտավորվում են վերանայել իրենց՝ գոյություն ունեցող ազգային կանոնները քիմիկատների առեւտրի բնագավառում, որպեսզի բերեն դրանք

համապատասխանության սույն Կոնվենցիայի նպատակների եւ առարկայի հետ:

ՀՈԴՎԱԾ 12

Դրությունը ուղղելու եւ պահպանումը ապահովելու ուղղությամբ միջոցառումները, ներառյալ սանկցիաները

1. Համաժողովը անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կետերում նախատեսված եւ սույն Կոնվենցիայի պահպանումը ապահովելու գործով եւ

յուրաքանչյուր դրույթի ուղղման եւ ճշգրտման ուղղությամբ, որը հակասում է սույն Կոնվենցիայի դրույթներին: Միջոցները ուսումնասիրելիս, սույն կետին համապատասխան, Համաժողովը ուշադրության է առնում ողջ տեղեկատվությունը եւ

երաշխավորությունները Գործադիր խորհրդի կողմից ներկայացված հարցերով:

2. Այն դեպքերում, երբ Գործադիր խորհուրդը առաջարկում է մասնակից պետություններին միջոցներ ձեռնարկել դրությունը շտկելու ուղղությամբ, որը կապված է իր կողմից իր պարտավորությունների պահպանման առնչությամբ խնդիրների

առաջացման հետ, եւ երբ մասնակից պետությունը չի կատարում այդ խնդրանքը սահմանված ժամկետում, Համաժողովը կարող է, այլոց շարքում, Գործադիր խորհրդի

երաշխավորությամբ սահմանափակել կամ դադարեցնել տվյալ մասնակից պետության՝

սույն Կոնվենցիայով նախատեսված իրավունքները եւ արտոնությունները, մինչեւ որ

նա ընդունի անհրաժեշտ միջոցներ սույն Կոնվենցիայով իր պարտավորությունների

կատարման համար:

3. Այն դեպքերում, երբ սույն Կոնվենցիայով արգելվող գործունեության արդյունքում եւ, մասնավորապես, 1-ին հոդվածով կարող է լուրջ վնաս պատճառվել

սույն Կոնվենցիայի առարկային եւ նպատակին, Համաժողովը կարող է երաշխավորել

մասնակից պետություններին ընդունել կոլեկտիվ միջոցներ՝ միջազգային իրավունքին

համապատասխան:

4. Առանձնապես լուրջ դեպքերում Համաժողովը հասցնում է տվյալ խնդիրը, ներառյալ համապատասխան տեղեկատվությունը եւ եզրակացությունները, մինչեւ

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր վեհաժողովի գիտությունը եւ Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի

գիտությունը:

ՀՈԴՎԱԾ 13

Կապը այլ միջազգային համաձայնագրերի հետ

Ոչինչ սույն Կոնվենցիայում չպետք է մեկնաբանվի որպես որեւէ ձեռով սահմանափակող կամ պարտավորությունները նվազեցնող, որոնք իր վրա է վերցրել

որեւէ պետություն՝ Պատերազմում խեղդող, թունավոր կամ այլ նման գազերի եւ բակտերիոլոգիական (կենսաբանական) միջոցների կիրառումը արգելելու մասին

Արձանագրությամբ, որը ստորագրվել է 1925 թվականի հունիսի 17-ին՝ ժնեում, եւ Բակտերիոլոգիական (կենսաբանական) եւ թունավոր գենքի մշակման, արտադրության եւ պաշարների կուտակման, արգելման եւ դրանց ոչնչացման մասին Կոնվենցիայով, որը ստորագրվել է Վաշինգտոնում, Լոնդոնում եւ Մոսկվայում՝ 1972 թվականի ապրիլի 10-ին:

ՅՈՒՆԵՍԿՕ 14 Վեճերի կարգավորում

1. Կարգավորումը այն վեճերի, որոնք կարող են առաջանալ սույն Կոնվենցիայի կիրառման կամ մեկնաբանության կապակցությամբ, իրականացվում է՝ համաձայն սույն Կոնվենցիայի համապատասխան դրույթների եւ Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության դրույթների:
2. Երկու կամ ավելի մասնակից պետությունների կամ մեկ կամ ավելի մասնակից պետությունների եւ Կազմակերպության միջեւ վեճեր առաջանալու ժամանակ սույն Կոնվենցիայի մեկնաբանության կամ կիրառման կապակցությամբ համապատասխան մասնակիցները անց են կացնում համատեղ խորհրդակցություններ վեճի շուտափույթ կարգավորման նպատակով՝ բանակցությունների միջոցով եւ այլ խաղաղ միջոցներով՝ ըստ մասնակիցների հայեցողության, ներառյալ համապատասխան մարմիններ եւ, փոխադարձ համաձայնությամբ, դատարանի կարգավիճակին համապատասխան միջազգային դատարան դիմելը: Համապատասխան մասնակից պետությունները տեղեկացնում են Գործադիր խորհրդին նախաձեռնող գործողությունների մասին:
3. Գործադիր խորհուրդը կարող է աջակցել վեճի կարգավորմանը ցանկացած միջոցով, որն ինքը կհամարի հարմար, ներառյալ իր բարի ծառայությունների առաջարկը, վեճի մասնակից պետություններին ուղղված կոչը՝ սկսել կարգավորման գործընթացը՝ ըստ իրենց ընտրության եւ ցանկացած համաձայնեցված գործընթացի համար ժամկետների երաշխավորության հարցով:
4. Համաժողովը ուսումնասիրում է հարցեր, որոնք վերաբերում են վեճերին, հարուցվում են մասնակից պետությունների կողմից կամ հասցվում նրա տեղեկությանը Գործադիր խորհրդի կողմից: Համաժողովը, եթե անհրաժեշտ է համարում, ստեղծում կամ մասնակից է դարձնում մարմինները խնդիրների կարգավորման համար, որոնք կապված են այդ վեճերի կարգավորման հետ՝ 8-րդ հոդվածի 21."գ" կետին համապատասխան:
5. Համաժողովը եւ Գործադիր խորհուրդը, Միավորված ազգերի կազմակերպության

Գլխավոր վեհաժողովի թույլտվությամբ, ինքնուրույն օժտվում են իրավունքով՝
խնդրել Միջազգային դատարանին տալ խորհրդակցական եզրակացություն
ցանկացած ծագող
իրավական հարցով՝ Կազմակերպության գործունեության շրջանակներում: Այդ
նպատակով
Կազմակերպության եւ Միավորված ազգերի կազմակերպության միջեւ կնքվում է
համաձայնագիր՝ համաձայն 8-րդ հոդվածի 34."ա" կետի:
6. Սույն հոդվածը չի վնասում 9-րդ հոդվածի դրույթներին կամ դրույթի
ուղղումը եւ պահպանումը ապահովելու վերաբերյալ միջոցներին, ներառյալ
սանկցիաներին, դրույթներին:

ՀՈԴՎԱԾ 15 ՈՒՂՈՒՄՆԵՐ

1. Ցանկացած մասնակից պետություն կարող է սույն Կոնվենցիայում
առաջարկել
ուղղումներ: Ցանկացած մասնակից պետություն կարող է նաեւ առաջարկել
փոփոխություններ, ինչպես նշված է 4-րդ կետում, սույն Կոնվենցիայի
հավելվածներում: Ուղղումների մասին առաջարկները կարգավորվում են 2-րդ եւ
3-րդ
կետերում շարադրված ընթացակարգերով: Փոփոխությունների մասին
առաջարկությունները, ինչպես նշված է 4-րդ կետում, կարգավորվում են 5-րդ
կետում
շարադրված ընթացակարգերով:
2. Առաջարկվող ուղղման տեքստը ներկայացվում է Գլխավոր տնօրենին՝ բոլոր
մասնակից պետություններին եւ ավանդապահին ուղարկելու նպատակով:
Առաջարկվող
ուղղումը քննարկվում է միայն ուղղումների ուսումնասիրման Համաժողովի
կողմից:
Ուղղումների ուսումնասիրման նման Համաժողովը գումարվում է միայն այն
դեպքում,
եթե ոչ ուշ, քան առաջարկը տարածելուց 30 օր հետո մասնակից պետությունների
մեկ
երրորդը կամ ավելին Գլխավոր տնօրենին հայտնում են իրենց համաձայնությունը
այդ
առաջարկի հետագա քննարկման: Ուղղումների ուսումնասիրման Համաժողովը
անց է
կացվում Համաժողովի հերթական նիստից անմիջապես հետո, եթե հարցնող
մասնակից
պետությունները չեն խնդրում նման նիստը ավելի վաղ: Ուղղումների
ուսումնասիրման
Համաժողովը ոչ մի դեպքում չի իրականացվում ոչ պակաս, քան առաջարկվող
ուղղումը
տարածելուց 30 օր հետո:
3. Ուղղումներն ուժի մեջ են մտնում բոլոր մասնակից պետությունների համար
վավերագրերը կամ բոլոր մասնակից պետությունների կողմից ստորել՝ "բ"
ենթակետում
նշված ընդունման մասին փաստաթղթերը ի պահ հանձնվելուց 30 օր հետո.
ա) երբ դրանք ընդունվում են ուղղումների ուսումնասիրման Համաժողովի
կողմից՝ մասնակից պետությունների մեծամասնությամբ՝ պայմանով, որ ոչ մի
մասնակից պետություն դեմ չի քվեարկել, եւ

բ) վավերացված կամ ընդունված են բոլոր մասնակից պետությունների կողմից, որոնք քվեարկել են ուղղումների ուսումնասիրման Համաժողովում դրանց ընդունման կողմ:

4. Սույն Կոնվենցիայի կենսունակության եւ արդյունավետության ապահովման համար Հավելվածների դրույթները կարող են փոփոխությունների ենթարկվել 5-րդ կետին համապատասխան, եթե առաջարկվող փոփոխությունները վերաբերում են միայն

վարչական կամ տեխնիկական բնույթի հարցերին: Քիմիկատների Հավելվածում բոլոր

փոփոխությունները կատարվում են 5-րդ կետին համապատասխան:

Կոնֆիդենցիալության

Հավելվածի Ա եւ Գ բաժինները, Ստուգման հավելվածի 10-րդ մասը եւ Ստուգման հավելվածի 1-ին մասի այն սահմանումները, որոնք վերաբերում են բացառապես հարցման հիման վրա տեսչական ստուգումներին, ենթակա չեն 5-րդ կետին համապատասխան փոփոխությունների:

5. 4-րդ կետում նշված՝ առաջարկվող փոփոխությունները կատարվում են հետեւյալ

ընթացակարգերին համապատասխան.

ա) առաջարկվող փոփոխությունների տեքստը անհրաժեշտ տեղեկատվության հետ

միասին ուղարկվում է Գլխավոր տնօրենին: Ցանկացած մասնակից պետության եւ Գլխավոր տնօրենի կողմից կարող է լրացուցիչ տեղեկություն տրամադրվել առաջարկի

գնահատման նպատակով: Գլխավոր տնօրենը անհապաղ ուղարկում է ցանկացած նման

առաջարկություն եւ տեղեկություն բոլոր մասնակից պետություններին, Գործադիր խորհրդին եւ ավանդապահին,

բ) ոչ ուշ, քան դա ստանալուց 60 օր հետո Գլխավոր տնօրենը գնահատում է առաջարկությունը, որպեսզի որոշի դրա հնարավոր բոլոր հետեւանքները սույն Կոնվենցիայի դրույթների եւ դրա իրականացման համար, եւ այդպիսի տեղեկությունը

ուղարկում է բոլոր մասնակից պետություններին եւ Գործադիր խորհրդին,

գ) Գործադիր խորհուրդը ուսումնասիրում է առաջարկությունը իր մոտ եղած ամբողջ տեղեկատվության լույսի ներքո, ներառյալ հարցը այն մասին, թե արդյո՞ք այդ առաջարկությունը համապատասխանում է 4-րդ կետի պահանջներին: Ոչ ուշ, քան դա

ստանալուց 90 օր հետո Գործադիր խորհուրդը պատշաճ բացատրությունների հետ միասին

ծանուցում է ուղարկում իր երաշխավորության մասին բոլոր մասնակից պետություններին՝ քննարկելու համար: Մասնակից պետությունները հաստատում են

ստացումը 10 օրվա ընթացքում,

դ) եթե Գործադիր խորհուրդը առաջարկում է բոլոր մասնակից պետություններին

ընդունել այդ առաջարկությունը, ապա դա համարվում է հավանության արժանացած, եթե

առաջարկը ստանալուց 90 օրվա ընթացքում ոչ մի մասնակից պետություն չի առարկում

դրա դեմ: Եթե Գործադիր խորհուրդը առաջարկում է մերժել առաջարկությունը, ապա դա

համարվում է մերժված, եթե առաջարկը ստանալուց 90 օր հետո ոչ մի մասնակից պետություն չի առարկում այդպիսի մերժման դեմ,

ե) եթե Գործադիր խորհրդի առաջարկը չի համապատասխանում "դ" ենթակետում

նշված ընդունման պայմաններին, ապա առաջարկության վերաբերյալ որոշումը, ներառյալ այն հարցը, թե համապատասխանո՞ւմ է արդյոք այն 4-րդ կետի պահանջներին,

ընդունվում է Համաժողովի կողմից՝ որպես ըստ էության հարց, նրա հաջորդ նիստի ժամանակ,

զ) Գլխավոր տնօրենը ծանուցում է բոլոր մասնակից պետություններին եւ ավանդապահին ցանկացած որոշման մասին՝ սույն կետին համապատասխան,

է) փոփոխությունները, որոնք հավանության են արժանացել այդ ընթացակարգին

համապատասխան, ուժի մեջ են մտնում բոլոր մասնակից պետությունների համար

Գլխավոր տնօրենի կողմից դրանց հավանության արժանանալու մասին ծանուցելուց 180

օր հետո, եթե Գործադիր խորհուրդը չի առաջարկում, կամ եթե Համաժողովը չի որոշում սահմանել այլ ժամկետ:

ՀՈԴՎԱԾ 16

Կոնվենցիայի գործողության ժամկետը եւ դրանից դուրս գալը

1. Սույն Կոնվենցիան անժամկետ է:

2. Յուրաքանչյուր մասնակից պետություն, որպես իր ազգային ինքնիշխանության

իրականացում, կարող է դուրս գալ սույն Կոնվենցիայից, եթե նա որոշի, որ արտակարգ իրադարձությունները, որոնք վերաբերում են սույն Կոնվենցիայի առարկային, վտանգի տակ են դրել իր երկրի բարձրագույն շահերը: Նա ծանուցում է

այդպիսի դուրս գալու մասին բոլոր մասնակից պետություններին, Գործադիր խորհրդին, ավանդապահին եւ Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության

խորհրդին դուրս գալուց 90 օր առաջ: Նման ծանուցումը ներառում է արտակարգ իրադրությունների շարադրումը, որոնք նա դիտում է որպես իր բարձրագույն շահերը

վտանգի տակ դրած:

3. Սույն Կոնվենցիայից մասնակից պետության դուրս գալը ոչ մի կերպ չի շոշափում պետության պարտավորությունները՝ շարունակել միջազգային իրավունքի

ցանկացած համապատասխան նորմով եւ, մասնավորապես, 1925 թվականի ժնեյան

Արձանագրության համապատասխան վերցրած պարտավորությունների կատարումը:

ՀՈԴՎԱԾ 17

Հավելվածների կարգավիճակը

Հավելվածները կազմում են սույն Կոնվենցիայի անբաժանելի մասը: Ցանկացած հղում սույն Կոնվենցիային ներառում է նաեւ Հավելվածները:

ՀՈԴՎԱԾ 18
Ստորագրում

Սույն Կոնվենցիան բաց է բոլոր պետությունների ստորագրման համար մինչև ուժի մեջ մտնելը:

ՀՈԴՎԱԾ 19
Վավերացում

Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման ստորագրած պետությունների կողմից՝ համաձայն նրանց համապատասխան սահմանադրական ընթացակարգերի:

ՀՈԴՎԱԾ 20
Միացում

Սույն Կոնվենցիան չստորագրած ցանկացած պետություն մինչև դրա ուժի մեջ մտնելը կարող է միանալ դրան հետագայում՝ ցանկացած ժամանակ:

ՀՈԴՎԱԾ 21
Ուժի մեջ մտնելը

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում 65-րդ վավերագիրը ի պահ հանձնելու ամսաթվից 180 օր հետո, բայց ոչ մի դեպքում ոչ շուտ, քան ստորագրման համար բացվելուց երկու տարի հետո:

2. Այն պետությունների համար, որոնց վավերագրերը կամ միանալու մասին փաստաթղթերը ի պահ են հանձնված սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո, այն ուժի մեջ է մտնում նրանց վավերագրերը կամ միանալու մասին փաստաթղթերը ի պահ հանձնելու ամսաթվից հետո՝ 30-րդ օրը:

ՀՈԴՎԱԾ 22
Վերապահումներ

Սույն Կոնվենցիայի հոդվածները ենթակա չեն վերապահման: Սույն Կոնվենցիայի Հավելվածները ենթակա չեն վերապահման՝ նրա նպատակի եւ առարկայի հետ անհամատեղելի:

ՀՈԴՎԱԾ 23
Ավանդապահ

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույնով նշանակվում

է որպես սույն Կոնվենցիայի Ավանդապահ, եւ նա, բացի այլոց.

ա) անհապաղ տեղեկացնում է բոլոր ստորագրած եւ միացած պետություններին յուրաքանչյուր ստորագրման ամսաթվի, յուրաքանչյուր վավերագիր կամ միանալու

փաստաթուղթ ի պահ հանձնելու եւ սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու ամսաթվի

մասին, ինչպես նաեւ այլ ծանուցումներ ստանալու մասին,

բ) պատշաճորեն ուղարկում է սույն Կոնվենցիայի հաստատված պատճենները ստորագրած եւ միացած պետությունների կառավարություններին, եւ

գ) գրանցում է սույն Կոնվենցիան՝ Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության 102-րդ հոդվածին համապատասխան:

ՀՈՂՎԱԾ 24

Հավասարազոր տեքստեր

Սույն Կոնվենցիան, որի տեքստերը անգլերեն, արաբերեն, իսպաներեն, չինարեն,

ռուսերեն եւ ֆրանսերեն լեզուներով հավասարազոր են, հանձնվում է ի պահ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

Ի հավաստումն որի՝ ներքոստորագրյալները, լինելով պատշաճորեն դրա համար

լիազորված, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Փարիզում 1993 թվականի հունվարի 13-ին:

ՀԱՎԵԼՎԱԾ ԔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ա. Քիմիկատների ցուցակների համար հիմնական սկզբունքները

1-ին ցուցակի համար անհրաժեշտ սկզբունքները

1. Քննարկելիս այն հարցը, թե արդյո՞ք թունավոր քիմիկատը կամ պրեկուրսորը պետք է ընդգրկվի 1-ին ցուցակում, անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ չափանիշները.

ա) այն մշակվել, արտադրվել, կուտակվել կամ կիրառվել է որպես քիմիական զենք, ինչպես սահմանված է 2-րդ հոդվածում,

բ) այն այլ կերպ է ներկայացնում բարձր ռիսկը սույն Կոնվենցիայի առարկայի եւ նպատակի համար, քանի որ ունի մեծ ներուժ սույն Կոնվենցիայով արգելվող գործունեության շրջանակներում՝ հետևյալ մեկ կամ մի քանի պայմանների պահպանման դեպքում.

i) նրա քիմիական կառուցվածքը սերտորեն կապված է այլ թունավոր քիմիկատների

կառուցվածքի հետ՝ ներառված 1-ին ցուցակում, եւ այն ունի կամ կարող է ունենալ համեմատելի հատկանիշներ,

ii) այն ունի այնպիսի մահացու կամ շարքից դուրս հանելու թունավորություն, ինչպես նաեւ այլ նման հատկանիշներ, որ կարող է օգտագործվել որպես քիմիական զենք,

iii) այն կարող է օգտագործվել որպես պրեկուրսոր 1-ին ցուցակում ներառված թունավոր քիմիկատի արտադրության վերջնական եզակի տեխնոլոգիական փուլում՝ անկախ

այն բանից, թե ունի՞ այդ փուլը տեղ օբյեկտներում, ռազմամթերքում կամ որեւէ այլ

տեղ,

գ) այն քիչ է օգտագործվում կամ չի օգտագործվում սույն Կոնվենցիայով

չարգելվող նպատակներով:

2-րդ ցուցակի համար հիմնական սկզբունքներ

2. Քննարկելիս այն, թե արդյո՞ք թունավոր քիմիկատը, 1-ին ցուցակում չներառված, կամ 1-ին ցուցակի քիմիկատի պրեկուրսորը՝ ներառված 2-րդ ցուցակի Ա

մասում, անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ չափանիշները.

ա) այն բավական ռիսկ է ներկայացնում սույն Կոնվենցիայի առարկայի եւ նպատակի համար, քանի որ ունի այնպիսի մահացու կամ շարքից դուրս հանելու թունավորություն, ինչպես նաեւ այլ հատկանիշներ, ինչը թույլ է տալիս օգտագործել

այն որպես քիմիական զենք,

բ) այն կարող է օգտագործվել որպես պրեկուրսոր քիմիական ռեակցիայում 1-ին ցուցակում կամ 2-րդ ցուցակի Ա մասում ներառված քիմիկատի առաջացման վերջնական

փուլում,

գ) այն բավականին ռիսկ է ներկայացնում սույն Կոնվենցիայի առարկայի եւ նպատակի համար, քանի որ կարելու է նշանակություն ունի քիմիկատի արտադրության

ժամանակ՝ ներառված 1-ին ցուցակում կամ 2-րդ ցուցակի Ա մասում,

դ) այն չի արտադրվում մեծ առելտրային քանակով սույն Կոնվենցիայով չարգելվող նպատակների համար:

3-րդ ցուցակի համար հիմնական սկզբունքները

3. Քննարկելիս հարցը այն մասին, թե արդյո՞ք թունավոր քիմիկատը կամ պրեկուրսորը՝ չներառված այլ ցուցակներում, պետք է ընդգրկվի 3-րդ ցուցակում, անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ չափանիշները.

ա) այն արտադրվել, կուտակվել կամ կիրառվել է որպես քիմիական զենք,

բ) այն ներկայացնում է այլ կերպ սույն Կոնվենցիայի առարկայի եւ նպատակի համար ռիսկ, քանի որ ունի այնպիսի մահացու կամ շարքից հանող թունավորություն,

ինչպես նաեւ այլ հատկանիշներ, որ կարող էր օգտագործվել որպես քիմիական զենք,

գ) այն ռիսկ է ներկայացնում սույն Կոնվենցիայի առարկայի եւ նպատակի համար,

քանի որ կարելու է նշանակություն ունի մեկ կամ մի քանի քիմիկատների արտադրության

ժամանակ, որոնք ներառված են 1-ին ցուցակում կամ 2-րդ ցուցակի Բ մասում,

դ) այն կարող է արտադրվել մեծ առելտրային քանակով սույն Կոնվենցիայով չարգելվող նպատակների համար:

Բ. Քիմիկատների ցուցակները

Ներքոհիշյալ ցուցակները ներառում են թունավոր քիմիկատներն ու դրանց պրեկուրսորները: Սույն Կոնվենցիայի իրականացման նպատակով այդ ցուցակներում

սահմանվում են քիմիկատները ստուգման միջոցների իրականացման համար՝ համաձայն

Ստուգման հավելվածի դրույթների: Համաձայն 2-րդ հոդվածի 1.ա կետի՝ այդ

ցուցակները չեն կազմում քիմիական զենքի սահմանումը:
 (Ամեն անգամ, երբ հղում է արվում դիալկիլացած քիմիկատների խմբերին, որոնցից հետո փակագծերում տրվում է ալկիլացած խմբերի ցանկը, համարվում է, որ ուղղակի առգրավումների բացակայության ժամանակ համապատասխան ցուցակում թվարկված են հնարավոր բոլոր քիմիկատները ալկիլային խմբերի բոլոր հնարավոր համակցությունների հիման վրա: "*" նշանով նշված քիմիկատների նկատմամբ 2-րդ ցուցակի Ա մասում կիրառվում են հատուկ սյամեր հայտարարության եւ ստուգման համար, ինչպես դա նշված է Ստուգման հավելվածի 7-րդ մասում):

Ցուցակ 1

(Գրանցման համարը՝ ըստ ՔԱՍ-ի)

Ա. Թունավոր քիմիկատներ.

1. Օ-ալկիլ (*C 10, ներառյալ ցիկլոալկիլը) ալկիլ (Me, Et, n-Pr կամ i-Pr)-
ֆտորֆոսֆոնատներ
 օրինակ՝ զարին. Օ-իզոպրոպիլմեթիլֆտորֆոսֆոնատ (107-44-8)
 զոման. Օ-պինակոլիլմեթիլֆտորֆոսֆոնատ (96-64-0)
2. Օ-ալկիլ (*C 10, ներառյալ ցիկլոալկիլը) -N, N-դիալկիլ
(Me, Et, n-Pr կամ i-Pr)- ամիդոցիանֆոսֆատներ,
 օրինակ՝ տաբուն. Օ-էթիլ-N, N-
 դիմետիլամիդոցիանֆոսֆատ (77-81-6)
3. Օ-ալկիլ (H կամ *C 10, ներառյալ ցիկլոալկիլը)-S-2-դիալկիլ
(Me, Et, n-Pr կամ i-Pr)-ամինտեթիլալկիլ (Me, Et, n-Pr կամ i-Pr)
 տիոֆոսֆոնատներ եւ համապատասխան ալկիլացված
 կամ պրոտոնացված աղեր
 օրինակ՝ VX.
 Օ-էթիլ-S-2-դիիզոպրոպիլամինտեթիլմեթիլտիոֆոսֆոնատ (50782-69-9)
4. Ծծմբային իպրիտներ.
 2-քլորէթիլքլորմեթիլսուլֆիդ (2625-76-5)
 իպրիտ. bis (2-քլորէթիլ) սուլֆիդ (505-60-2)
 bis (2-քլորէթիլթիո) մեթան (63869-13-6)
 սեսկվիպրիտ. 1,2-bis (2-քլորէթիլթիո) էթան (3563-36-8)
 1,3-bis (2-քլորէթիլթիո)-n-պրոպան (63905-10-2)
 1,4-bis (2-քլորէթիլթիո)-n-բութան (142868-93-7)
 1,5-bis (2-քլորէթիլթիո)-n-պենթան (142868-94-8)
 bis (2-քլորէթիլթիոմեթիլ) էթեր (63918-90-1)
 Օ-իպրիտ. bis (2-քլորէթիլթիոէթիլ) էթեր (63918-89-8)
5. Լյուիզիտներ
 Լյուիզիտ 1. 2-քլորվինիլդիքլորարսին (541-25-3)
 Լյուիզիտ 2. Bis (2-քլորվինիլ) քլորարսին (40334-69-8)
 Լյուիզիտ 3. Երեք (2-քլորվինիլ) արսին (40334-70-1)
6. Ազոտական իպրիտներ
 HN1. Bis (2-քլորէթիլ) էթիլամին (538-07-8)
 HN2. Bis (2-քլորէթիլ) մեթիլամին (51-75-2)
 HN3. Երեք (2-քլորէթիլ) ամին (555-77-1)

7. Սաքսիտոքսին (35523-89-8)
8. Ռիցին (9009-86-3)

Բ. Պրեկուրսորներ.

9. Ալկիլ (Me, Et, n-Pr կամ i-Pr) ֆոսֆոնիլդիֆտորիդ, օրինակ՝ DF. մեթիլֆոսֆոնիլդիֆտորիդ (676-99-3)
10. Օ-ալկիլ (H կամ *C 10, ներառյալ ցիկլոալկիլ)-Օ-2-դիալկիլ (Me, Et, n-Pr կամ i-Pr)-ամինտեթիլալկիլ (Me, Et, n-Pr կամ i-Pr) ֆոսֆոնիտներ եւ համապատասխան ալկիլացված կամ պրոտոնացված աղեր
օրինակ՝ QL. Օ-եթիլ-Օ-2-դիզոպրոպիլամինտեթիլ մեթիլֆոսֆոնիտ (57856-11-8)
11. Զլորզարին. Օ-իզոպրոպիլմեթիլքլորֆոսֆոնատ (1445-76-7)
12. Զլորզոման. Օ-պինակոլիլմեթիլքլոր ֆոսֆոնատ (7040-57-5)

Ցուցակ 2

Ա. Թունավոր քիմիկատներ

1. Ամիտոն. Օ,Օ-դիեթիլ-S-[2-(դիեթիլամինո)եթիլ]տրիֆոսֆատ եւ համապատասխան ալկիլացված կամ պրոտոնացված աղեր (78-53-5)
2. PFIB. 1,1,3,3,3-պենտաֆտոր-2-(տրիֆտորմեթիլ)-1-պրոպեն (382-21-8)
3. BZ. 3-խինոլիլդիֆոսֆորիլաթ (*) (6581-06-2)

Բ. Պրեկուրսորներ.

4. Քիմիկատներ, բացառությամբ 1-ին ցուցակում ներառված քիմիկատների, որոնք պարունակում են ֆոսֆորի ատոմ, որի հետ կապված է մեկ մեթիլային, եթիլային կամ պրոպիլային (սորմալ կամ իզո-) խումբ, բայց ոչ ածխածնի մյուս ատոմները,

- օրինակ. մեթիլֆոսֆոնիլդիքլորիդ (676-97-1)
դիմեթիլմեթիլֆոսֆոնատ (756-79-6)
բացառություն. Նոնոֆոս. Օ-եթիլ S-ֆենիլեթիլֆոսֆոնթիոլտրինաթ (944-22-9)
5. N,N-դիալկիլ (Me, Et, n-Pr կամ i-Pr) ամիդոդիզալոիդֆոսֆատներ
6. Դիալկիլ լկիլ (Me, Et, n-Pr կամ i-Pr)-N,N-դիալկիլ (Me, Et, n-Pr կամ i-Pr)-ամիդոֆոսֆատներ
7. Եռաքլոր գառիկ (7784-34-1)
8. 2,2-դիֆենիլ-2-օքսիքացախային թթու (76-93-7)
9. Խինոլիլդիֆոսֆորիլ (1619-34-7)
10. N,N-դիալկիլ (Me, Et, n-Pr կամ i-Pr) ամինտեթիլ-2-քլորիդներ եւ համապատասխան պրոտոնացված աղեր
11. N,N-դիալկիլ (Me, Et, n-Pr կամ i-Pr) ամինտեթան-2-օլեր եւ համապատասխան պրոտոնացված աղեր
բացառություն. N,N-դիմեթիլամինտեթանոլ (108-01-0)
եւ համապատասխան պրոտոնացված աղեր
N,N-դիեթիլամինտեթանոլ

- Եւ համապատասխան պրոտոնացված աղեր (100-37-8)
 12. N,N-դիալկիլ (Me, Et, n-Pr կամ i-Pr)
 ամինութեան-2-տիոլներ եւ համապատասխան պրոտոնացված աղեր
 13. Տիոդիզլիկոլ. bis(2-հիդրոքսիէթիլ)սուլֆիդ (111-48-8)
 14. Պիոնակոլային սպիրտ. 3,3-դիմէթիլբութան-2-օլ (464-07-3)

Ցուցակ 3

Ա. Թունավոր քիմիկատներ

1. Ֆոսգեն. ածխային թթվի դիքլորանհիդրիդ (75-44-5)
 2. Զլորցիան (506-77-4)
 3. Ցիանաջրածին (74-90-8)
 4. Զլորպիկրին. կրիքլորնիտրոմէթան (76-06-2)

Բ. Պրեկուրսորներ.

5. Ֆոսֆորի քլորօքիդ (10025-87-3)
 6. Եռաքլոր ֆոսֆոր (7719-12-2)
 7. Յնգաքլոր ֆոսֆոր (10026-13-8)
 8. Տրիմէթիլֆոսֆիտ (121-45-9)
 9. Տրիէթիլֆոսֆիտ (122-52-1)
 10. Դիմէթիլֆոսֆիտ (868-85-9)
 11. Դիէթիլֆոսֆիտ (762-04-9)
 12. Մոնօքլորային ծծումբ (10025-67-9)
 13. Երկքլորային ծծումբ (10545-99-0)
 14. Զլորային տիոնիլ (7719-09-7)
 15. Էթիլդիէթանոլամին (139-87-7)
 16. Մէթիլդիէթանոլամին (105-59-9)
 17. Տրիէթանոլամին (102-71-6)

 ԻՐՏԵԿ - շարունակությունը հաջորդ մասերում

ԿՈՆՎԵՆՑԻԱ
 ԸԻՄԻԱԿԱՆ ՉԵՆՔԻ ՄՇԱԿՈՒՄԸ, ԱՐՏԱԴՐՈՒՄԸ, ԿՈՒՏԱԿՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ
 ԱՐԳԵԼԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՎԵՐԱՏՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
 (3-րդ մաս)

Մաս 1
 Սահմանումներ

1. "Յաստատված սարքավորում" նշանակում է՝ սարքեր եւ սարքավորումներ,
 որոնք

անհրաժեշտ են տեսչական խմբի պարտավորությունների իրականացման համար, որոնք

ատեստավորվել են Տեխնիկական քարտուղարության կողմից՝ համաձայն կանոնների,

մշակվող Տեխնիկական քարտուղարության կողմից՝ համաձայն սույն Հավելվածի 27-րդ

կետի 2-րդ մասի: Այդպիսի սարքավորումը կարող է նշանակել գրասենյակային պիտույքներ կամ գրանցման կյուբեր, որոնք կարող էր օգտագործել տեսչական խումբը:

2. "Շենք"-ը, որը հիշատակվում է քիմիական զենքի արտադրության օբյեկտի սահմանման մեջ՝ 2-րդ հոդվածում, ներառում է մասնագիտացված շենքերն ու ստանդարտ

շենքերը:

ա) "Մասնագիտացված շենք" նշանակում է.

i) ցանկացած շենք, ներառյալ ստորգետնյա սարքավորումները, որն ունի մասնագիտացված սարքավորում արտադրության կամ զինման համար,

ii) ցանկացած շենք, ներառյալ ստորգետնյա սարքավորումները, որն ունի հատուկ

հատկանիշներ, որը սովորաբար տարբերում է նրան քիմիկատների արտադրության կամ

զինման՝ սույն Կոնվենցիայով չարգելվող գործունեության համար օգտագործվող շենքերից:

բ) "Ստանդարտ շենք" նշանակում է՝ ցանկացած շենք, ներառյալ ստորգետնյա սարքավորումները, կառուցված արդյունաբերությունում տարածված այն օբյեկտների

չափանիշներին համապատասխան, որոնք չեն արտադրում ցանկացած քիմիկատ, նշված 2-րդ

հոդվածի 8.ա i կետում, կամ կոռոզիոն ակտիվ քիմիկատներ:

3. "Չարցման հիման վրա տեսչական ստուգում" նշանակում է՝ ցանկացած օբյեկտի

կամ տեղի տեսչական ստուգում մասնակից պետության տարածքում կամ ցանկացած տեղ՝

նրա իրավագործության կամ հսկողության ներքո, որը հարցվում է այլ մասնակից պետության կողմից՝ համաձայն 9-րդ հոդվածի 8-25-րդ կետերի:

4. "Կոնկրետ օրգանական քիմիկատ" նշանակում է՝ ցանկացած քիմիկատ, որը վերաբերում է քիմիական միացումների դասին եւ ներառում է ածխածնի բոլոր միացումները՝ բացառությամբ նրա օքսիդների, սուլֆիդների եւ մետաղակարբոնատների,

որոնք նույնականացվում են քիմիական անվանմանը, կառուցվածքային բանաձեւի

օգնությամբ, եթե այն հայտնի է "Քեմիքլ աբստրակտս սերվիս"-ի գրանցման համարով,

եթե այդպիսին տրված է:

5. "Սարքավորում"-ը, որը հիշատակվում է 2-րդ հոդվածում քիմիական զենքի արտադրության օբյեկտի սահմանման մեջ, ներառում է մասնագիտացված սարքավորումը

եւ ստանդարտ սարքավորումը:

ա) "Մասնագիտացված սարքավորում" նշանակում է.

i) հիմնական տեխնոլոգիական ուղղությունը, ներառյալ ցանկացած ռեակտոր կամ

սարքավորում արտադրանքի սինթեզի, արտադրման կամ մաքրման համար, ցանկացած

սարքավորում, որն օգտագործվում է անմիջապես տաքության մատակարարման համար

վերջին տեխնոլոգիական փուլում, օրինակ՝ ռեակտորներում կամ արտադրանքի արտադրության ժամանակ, ինչպես նաեւ ցանկացած այլ սարքավորում, որը շփման մեջ է

գտնվել 2-րդ հոդվածի 8.ա i կետում նշված ցանկացած քիմիկատի հետ, կամ որը կգտնվեր այդպիսի քիմիկատի հետ շփման մեջ, եթե օբյեկտը գործեր,

ii) քիմիական զենքի պատրաստման համար ցանկացած մեխանիզմներ,

iii) ցանկացած այլ սարքավորում, հատուկ հորինված, կառուցված կամ հիմնադրված օբյեկտի գործունեության համար որպես քիմիական զենքի արտադրության

օբյեկտ՝ ի տարբերություն օբյեկտի, որը կառուցվել է 8-րդ հոդվածի "ա" i կետում նշված ցանկացած քիմիկատ չարտադրող օբյեկտների համար առետրային արդյունաբերությունում տարածված չափանիշներին համապատասխան.

այնպիսիք,

ինչպիսիք են՝ սարքավորումը, որը պատրաստվել է նիկելի կամ հատուկ հակակոռոզիոն

նյութերի բարձր պարունակություն ունեցող ձուլվածքից, հատուկ սարքավորումը արտանետվածքի, արտանետվածքի մաքրման, օդի ֆիլտրացման կամ լուծող նյութի

վերականգնման նկատմամբ հսկողության համար հատուկ սարքավորումը, հատուկ

առանձնացված տամբուրները եւ պաշտպանական միջնապատերը, ոչ ստանդարտ լաբորատոր

սարքավորումը, որն օգտագործվում է թունավոր քիմիկատների անալիզի համար քիմիական զենքի նպատակներով, տեխնոլոգիական հսկողության հատուկ հորինված

պուլտերը կամ մասնագիտացված պահեստամասերը մասնագիտացված սարքավորումների

համար:

բ) "Ստանդարտ սարքավորում" նշանակում է.

i) արտադրական սարքավորում, որը լայնորեն օգտագործվում է քիմիական արդյունաբերությունում եւ չի վերաբերում մասնագիտացված սարքավորման տեսակին,

ii) այլ սարքավորում, որը սովորաբար օգտագործվում է քիմիական արդյունաբերությունում, ինչպիսիք են հակահրդեհային սարքավորումը, պահակային/պաշտպանահսկողական սարքավորումը, բժշկական միջոցները, լաբորատոր

սարքավորումը կամ կապի միջոցները:

6. "Օբյեկտ" 4-րդ հոդվածի համատեքստում նշանակում է՝ ստորեւ սահմանված արտադրական գոտիներից ցանկացածը (արտադրական գոտի, ձեռնարկություն եւ սարք):

ա) "Արտադրական գոտի" (գործարան, ֆաբրիկա) նշանակում է՝ մեկ կամ մի քանի

ձեռնարկությունների տեղային ինտեգրացում ցանկացած միջանկյալ վարչական օղակի

հետ, որը գտնվում է միասնական օպերատիվ հսկողության ներքո եւ ունի ընդհանուր

կառուցվածք, հատկապես.

i) վարչական եւ այլ ծառայություններ,
ii) վերանորոգման եւ տեխնիկական սպասարկման արտադրամասեր,
iii) բժշկական կետ,
iv) հաղորդակցման ուղիներ,
v) կենտրոնական հետազոտական լաբորատորիա,
vi) փորձարարահետազոտական լաբորատորիաներ,
vii) արտանետվածքների եւ հոսքերի կենտրոնացված մաքրման տարածք, եւ
viii) պահեստային պահոց:
բ) "Ձեռնարկություն" (արտադրական օբյեկտ, արտադրամաս) նշանակում է՝
համեմատաբար ինքնավար տարածք, կառուցվածք կամ սարքավորում, որոնք
պարունակում
են մեկ կամ մի քանի օժանդակ սարք՝ կապված ենթակառուցվածքով, օրինակ.
i) ոչ մեծ արտադրական բաժին,
ii) հումքի եւ արտադրանքի պահման/մշակման համար տարածքներ,
iii) հոսքերի/արտանետվածքի մշակման/մաքրման տարածք,
iv) հսկողական/հետազոտական լաբորատորիա,
v) առաջին բժշկական օգնության ծառայություն/ համապատասխան բժշկական
ենթաբաժին, եւ
vi) հաշվառման փաստաթղթեր հայտարարված քիմիկատները եւ դրանց
նախնական
հումքը կամ դրանից արտադրված պատրաստի քիմիկատները համապատասխան
գոտի
հասցնելու, գոտիով տեղաշարժելու եւ գոտիից դուրս բերելու մասին,
գ) "Սարք" (արտադրական սարք, տեխնոլոգիական սարք) նշանակում է՝
սարքավորման առարկաների համակցություն, ներառյալ ռեակցիոն ամանները եւ
դրանց
համակարգերը, որոնք անհրաժեշտ են քիմիկատի արտադրության,
վերամշակման կամ
օգտագործման համար:
7. "Օբյեկտի վերաբերյալ համաձայնություն" նշանակում է՝ համաձայնություն
կամ պայմանավորվածություն մասնակից պետության եւ Կազմակերպության
միջեւ՝ 4-րդ,
5-րդ եւ 6-րդ կետերի համաձայն տեղում ստուգման ենթակա կոնկրետ օբյեկտի
վերաբերյալ:
8. "Ընդունող պետություն" նշանակում է՝ պետություն, որի տարածքում գտնվում
են սույն Կոնվենցիայի այլ մասնակից պետության օբյեկտներ կամ տարածքներ,
որոնք
ենթակա են տեսչական ստուգման՝ սույն Կոնվենցիայի համաձայն:
9. "Անձինք, որոնք ուղեկցում են երկրի ներսում" նշանակում է՝ անձինք,
որոնք առանձնացված են տեսչական ստուգման ենթարկվող մասնակից
պետության կողմից
եւ, համապատասխան դեպքերում, ընդունող պետության կողմից, եթե նրանք դա
կամենան, տեսչական խումբն ուղեկցելու համար եւ նրան օգնություն
տրամադրելու
նպատակով երկրում գտնվելու ընթացքում:
10. "Երկրում գտնվելու ժամանակաշրջան" նշանակում է՝ ժամանակահատված
տեսչական խմբի՝ մուտքի կետ ժամանելու պահից մինչեւ նրա մուտքի կետից
հեռանալը:
11. "Նախնական տեսչական ստուգում" նշանակում է՝ տեղում օբյեկտների
տեսչական ստուգում՝ 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ եւ սույն Հավելվածին
համապատասխան

ներկայացվող հայտարարությունների ստուգման համար:

12. "Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետություն" նշանակում է՝ մասնակից պետություն, որի տարածքում կամ նրա իրավագործության կամ հսկողության

ներքո՝ ցանկացած տեղ, իրականացվում է տեսչական ստուգում՝ համաձայն սույն Կոնվենցիայի, կամ մասնակից պետություն, որի օբյեկտը կամ տարածքը ընդունող պետության տարածքում ենթակա են նման տեսչական ստուգման, սակայն այստեղ չի

ներառվում մասնակից պետությունը, որը նշված է սույն Հավելվածի 2-րդ մասի 21-րդ

կետում:

13. "Տեսուչի օգնական" նշանակում է՝ Տեխնիկական քարտուղարության կողմից նշանակված անձ, ինչպես նախատեսված է սույն Հավելվածի 2-րդ մասի Ա բաժնում,

տեսուչներին տեսչական ստուգման կամ այցելության ընթացքում օգնության տրամադրման նպատակով, օրինակ՝ բժշկական անձնակազմը, պահպանման աշխատակիցները,

վարչական անձնակազմը եւ բանավոր թարգմանիչները:

14. "Տեսչական ստուգման մանդատ" նշանակում է՝ ցուցումներ, որոնք տրված են

Գլխավոր տնօրենի կողմից տեսչական խմբին կոնկրետ տեսչական ստուգման իրականացման

առնչությամբ:

15. "Տեսչական ստուգում անցկացնելու ուղեցույց" նշանակում է՝ տեսչական ստուգում անցկացնելու լրացուցիչ ընթացակարգերի ժողովածու, որը մշակվում է Տեխնիկական քարտուղարության կողմից:

16. "Տեսչական ստուգման տեղ" նշանակում է՝ ցանկացած օբյեկտ կամ տարածք,

որտեղ իրականացվում է տեսչական ստուգում, եւ որը կոնկրետ որոշված է օբյեկտի

վերաբերյալ կոնկրետ համաձայնության կամ տեսչական ստուգման հարցման կամ

տեսչական ստուգման մանդատի կամ հարցման մեջ, լայնացված ալտերնատիվ կամ

վերջնական պարագծով:

17. "Տեսչական խումբ" նշանակում է՝ կոնկրետ տեսչական ստուգում անցկացնելու

նպատակով Գլխավոր տնօրենի կողմից նշանակված տեսուչների եւ տեսուչների օգնականների խումբ:

18. "Տեսուչ" նշանակում է՝ անձ, որը նշանակված է Տեխնիկական քարտուղարության կողմից, համաձայն սույն Հավելվածի 2-րդ մասի Ա բաժնում շարադրված ընթացակարգերի, սույն Կոնվենցիայի համաձայն՝ տեսչական ստուգում կամ

այցելություն անցկացնելու համար:

19. "Տիպային համաձայնագիր" նշանակում է՝ փաստաթուղթ, որը կոնկրետացնում է

մասնակից պետության եւ Կազմակերպության միջեւ կնքվող համաձայնագրի ընդհանուր

ձեւն ու բովանդակությունը սույն Հավելվածում նշված ստուգման դրույթների իրականացման նպատակով:

20. "Դիտորդ" նշանակում է՝ հարցնող մասնակից պետության կամ երրորդ

մասնակից պետության ներկայացուցիչ՝ հարցման հիման վրա տեսչական ստուգման

նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով:

21. "Պարագիծ" հարցման հիման վրա տեսչական ստուգման դեպքում նշանակում է՝

տեսչական ստուգման տեղի արտաքին սահմանը, որը որոշված է կամ աշխարհագրական

կոորդինատներով, կամ քարտեզի վրայի նկարագրությամբ:

ա) "Յարցվող պարագիծ" նշանակում է՝ տեսչական ստուգման տեղի պարագիծը, որը

նշված է սույն Հավելվածի 10-րդ մասի 8-րդ կետի համաձայն,

բ) "Ալտերնատիվ պարագիծ" նշանակում է՝ տեսչական ստուգման տեղի պարագիծ,

որը նշված է ստուգման ենթարկվող մասնակից պետության կողմից՝ որպես հարցվող

պարագծի ալտերնատիվ տարբերակ. այն համապատասխանում է սույն Հավելվածի 10-րդ

մասի 17-րդ կետում նշված պահանջներին,

գ) "Վերջնական պարագիծ" նշանակում է՝ տեսչական ստուգման տեղի վերջնական

պարագիծ, ինչպես համաձայնեցված է տեսչական խմբի եւ տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության միջեւ բանակցությունների ընթացքում՝ սույն Հավելվածի 10-րդ մասի 16-21-րդ կետերին համապատասխան,

դ) "Հայտարարված պարագիծ" նշանակում է՝ 3-րդ, 4-րդ, 5-րդ եւ 6-րդ հոդվածների համաձայն հայտարարվող օբյեկտի արտաքին սահման:

22. "Տեսչական ստուգման ժամանակահատված" 9-րդ հոդվածի նպատակների համար

նշանակում է՝ ժամանակահատված տեսչական խմբին դեպի տեսչական ստուգում անցկացնելու՝ տեղի թույլտվություն տրամադրելու պահից մինչեւ նրա՝ այդ տեղից մեկնումը. ներառյալ ժամանակը՝ ծախսված հրահանգման վրա ստուգման գործունեությունից առաջ եւ հետո:

23. "Տեսչական ստուգման ժամանակահատված" 4-րդ, 5-րդ եւ 6-րդ հոդվածների նպատակների համար նշանակում է՝ տեսչական խմբի՝ տեսչական ստուգում անցկացնելու

տեղ ժամանելու պահից մինչեւ նրա՝ այդ տեղից մեկնումը. ներառյալ ժամանակը՝ ծախսված հրահանգման վրա ստուգման գործունեությունից առաջ եւ հետո:

24. "Մուտքի կետ"/"Ելքի կետ" նշանակում է՝ վայր, որը նշված է տեսչական խմբերի՝ երկիր ժամանման համար՝ սույն Կոնվենցիայի համաձայն տեսչական ստուգում

իրականացնելու նպատակով կամ նրանց առաքելության ավարտին՝ նրանց մեկնման համար:

25. "Հարցնող մասնակից պետություն" նշանակում է՝ 9-րդ հոդվածին համապատասխան հարցման հիման վրա տեսչական ստուգում խնդրող մասնակից

պետություն:

26. "Տոննա" նշանակում է՝ մետրիկ տոննա, այսինքն՝ 1000 կգ:

Մաս 2

Ստուգման ընդհանուր կանոնները

Ա. Տեսուչների եւ տեսուչների օգնականների նշանակումը

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 30 օր հետո Տեխնիկական քարտուղարությունը բոլոր մասնակից պետություններին գրավոր հայտնում է Նշանակման համար առաջարկվող տեսուչների եւ տեսուչների օգնականների ազգանունները, քաղաքացիությունը եւ աստիճանը, ինչպես նաեւ նրանց որակավորման

եւ մասնագիտական փորձի մասին տեղեկություններ:

2. Յուրաքանչյուր մասնակից պետություն անհապաղ հաստատում է առաջարկվող

տեսուչների եւ տեսուչների օգնականների՝ իրեն փոխանցված ցանկը: Մասնակից պետությունը գրավոր տեղեկացնում է Տեխնիկական քարտուղարությանը յուրաքանչյուր

տեսուչի կամ տեսուչի օգնականի ընդունման մասին ոչ ուշ, քան ցանկը ստանալուց 30

օր հետո: Յուրաքանչյուր տեսուչ եւ տեսուչի օգնական, ներառված այդ ցուցակի մեջ,

համարվում է նշանակված, եթե ոչ ուշ, քան ցանկը ստանալուց 30 օր հետո մասնակից

պետությունը գրավոր չի հայտնում իր անհամաձայնության մասին: Մասնակից պետությունը կարող է բերել այդպիսի հրաժարման դրդապատճառը:

Անհամաձայնության դեպքում առաջարկվող տեսուչը կամ տեսուչի օգնականը չի

անցնում ստուգման գործունեության եւ չի մասնակցում դրան ցանկացած վայրում եւ

ցանկացած որեւէ տեղ՝ այն մասնակից պետության իրավագործության կամ հսկողության

տակ գտնվող, որը հայտնել է իր անհամաձայնությունը: Տեխնիկական քարտուղարությունը, եթե դա անհրաժեշտ է, առաջարկում է նոր թեկնածություններ՝ ի

լրումն նախնական ցուցակի:

3. Սույն Կոնվենցիայի շրջանակներում ստուգման գործունեությունն իրականացվում է միայն նշանակված տեսուչների եւ տեսուչների օգնականների կողմից:

4. Հաշվի առնելով 5-րդ կետի դրույթները՝ մասնակից պետությունը իրավունք ունի ցանկացած ժամանակ մերժել արդեն նշանակված տեսուչին կամ տեսուչի օգնականին: Նա գրավոր տեղեկացնում է Տեխնիկական քարտուղարությանը մերժելու

մասին եւ կարող է նշել այդպիսի մերժման պատճառը: Այդպիսի մերժումը ուժի մեջ է

մտնում Տեխնիկական քարտուղարության կողմից այն ստանալուց 30 օր հետո: Տեխնիկական քարտուղարությունը անհապաղ տեղեկացնում է համապատասխան մասնակից

պետությանը տեսուչի կամ տեսուչի օգնականի մերժման մասին:

5. Մասնակից պետությունը, որը ծանուցված է եղել տեսչական ստուգման մասին,

չի հասնում տեսչական խմբի ցանկում հիշատակված ցանկացած նշանակված տեսուչի կամ

տեսուչի օգնականի հեռացմանը տեսչական խմբից այդ տեսչական ստուգումն անցկացնելու համար:

6. Տեսուչների եւ տեսուչների օգնականների թիվը, որոնք հավանության են

արժանացել մասնակից պետության կողմից եւ նշանակվել նրա համար, պետք է լինի

բավարար, որպեսզի հնարավոր լինի ապահովելու տեսուչների եւ տեսուչների օգնականների համապատասխան թվի առկայությունը եւ ռոտացիան:

7. Եթե, Գլխավոր տնօրենի կարծիքով, անհամաձայնությունը առաջարկված տեսուչների կամ տեսուչների օգնականների թեկնածությունների հետ խոչընդոտում է

տեսուչների եւ տեսուչների օգնականների բավարար թվի նշանակմանը կամ որեւէ այլ

ձեւով դժվարացնում է Տեխնիկական քարտուղարության խնդիրների արդյունավետ

իրականացումը, ապա Գլխավոր տնօրենը փոխանցում է այդ խնդիրը Գործադիր խորհրդին:

8. Տեսուչների եւ տեսուչների օգնականների՝ վերոհիշյալ ցանկերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն առաջանալու կամ խնդրանք ստանալու

դեպքում նրանց փոխարինող տեսուչները եւ տեսուչների օգնականները նշանակվում են

սույն կարգով, ինչ նախնական ցանկի առնչությամբ:

9. Այլ մասնակից պետության տարածքում տեղակայված մասնակից պետության

օբյեկտի տեսչական ստուգում անցկացնող տեսչական խմբի անդամները, որոնք նշանակվում են սույն Յավելվածում շարադրված ընթացակարգերին համապատասխան,

որոնք կիրառելի են ինչպես տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության,

այնպես էլ ընդունող մասնակից պետության նկատմամբ:

Բ. Արտոնություններն ու անձեռնմխելիությունները

10. Յուրաքանչյուր մասնակից պետություն ոչ ուշ, քան տեսուչների եւ տեսուչների օգնականների ցանկը կամ դրանում փոփոխությունները ստանալու մասին

հաստատումը ստանալուց 30 օր հետո տրամադրում է բազմակի մուտքի/ելքի եւ/կամ

տարանցիկ մուտքի արտոնագրեր եւ այլ նման փաստաթղթեր, որոնք թույլ են տալիս

յուրաքանչյուր տեսուչի կամ տեսուչի օգնականի մուտք գործել այդ պետության տարածք եւ այնտեղ մնալ տեսչական ստուգման գործունեություն

իրականացնելու

Նպատակով: Այդ փաստաթղթերը պետք է գործեն ամենաքիչը 2 տարվա ընթացքում՝ դրանք

Տեխնիկական քարտուղարությանը ներկայացնելուց հետո:

11. Տեսուչներին եւ տեսուչների օգնականներին իրենց գործառույթներն արդյունավետ իրականացնելու նպատակով տրամադրվում են "ա" i ենթակետում շարադրված արտոնություններն ու անձեռնմխելիությունները: Արտոնություններն ու

անձեռնմխելիությունները տրամադրվում են տեսչական խմբի անդամներին սույն Կոնվենցիայի շահերից ելնելով, այլ ոչ թե անձնական նպատակներով: Այդպիսի

արտոնություններն ու անձեռնմխելիությունները նրանց տրամադրվում են տեսչական

ստուգման ենթարկվող մասնակից պետության տարածքում գտնվելու ամբողջ ժամանակահատվածում՝ սկսած ժամանման պահից մինչև այդ տարածքից մեկնումը եւ

դրանից հետո՝ նախկին գործողությունների առնչությամբ, որոնք կատարվել են նրանց

կողմից ծառայողական պարտականություններն իրականացնելիս:

ա) Տեսչական խմբի անդամները օժտված են անձեռնմխելիությամբ, որը տրամադրվում է դիվանագիտական գործակալներին՝ համաձայն 1961 թվականի ապրիլի

18-ի՝ Վիեննայի Դիվանագիտական հարաբերությունների մասին Կոնվենցիայի 29-րդ

հոդվածի:

բ) Սույն Կոնվենցիայի համաձայն տեսչական գործունեություն իրականացնող տեսչական խմբի կողմից զբաղեցված բնակելի եւ ծառայողական տարածքները օգտվում են

նույն անձեռնմխելիությունից, ինչ դիվանագիտական գործակալների տարածքները՝

համաձայն Վիեննայի Դիվանագիտական հարաբերությունների մասին Կոնվենցիայի 30-րդ

հոդվածի 1-ին կետի:

գ) Փաստաթղթերը եւ թղթակցությունը, այդ թվում տեսչական խմբի գրառումները

օգտվում են նույն անձեռնմխելիությունից, ինչ դիվանագիտական գործակալների բոլոր

փաստաթղթերը եւ թղթակցությունը՝ համաձայն Վիեննայի Դիվանագիտական հարաբերությունների մասին Կոնվենցիայի 30-րդ հոդվածի 2-րդ կետի: Տեսչական խումբը իրավունք ունի օգտվելու ծածկագրերից Տեխնիկական քարտուղարության հետ

հարաբերություններում:

դ) Տեսչական խմբի անդամների կողմից փոխադրվող նմուշները եւ հաստատված

սարքավորումը, օգտվում են անձեռնմխելիությունից, հաշվի առնելով սույն Կոնվենցիայում պարունակվող դրույթները, եւ ազատվում են բոլոր մաքսային տուրքերից: Վտանգավոր նմուշների փոխադրումը իրականացվում է համաձայն պատշաճ

կանոնների:

ե) Տեսչական խմբի անդամներին տրվում են նույն անձեռնմխելիությունները, ինչ

դիվանագիտական գործակալներին՝ համաձայն Վիեննայի Դիվանագիտական հարաբերությունների մասին Կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերի:

զ) Սույն Կոնվենցիայի համաձայն՝ նախանշված գործունեությունն իրականացնող

տեսչական խմբի անդամները ազատվում են հարկերից եւ տուրքերից, ինչպես դիվանագիտական գործակալները՝ համաձայն Վիեննայի Դիվանագիտական հարաբերությունների մասին Կոնվենցիայի 34-րդ հոդվածի:

է) Տեսչական խմբի անդամներին, առանց մաքսային տուրքերի կամ դրա հետ կապված

վճարների վճարման, թույլատրվում է տեսչական ստուգման ենթարկվող պետության կամ

ընդունող պետության տարածք ներմուծել անձնական օգտագործման իրեր՝ բացառությամբ այն առարկաների, որոնց ներմուծումը կամ արտահանումը արգելված է օրենքով կամ

կարգավորվում է կարանտինային կանոններով:

ը) Տեսչական խմբի անդամներին դրամների եւ արտարժույթի փոխանակման ժամանակ

տրամադրվում են նույն առավելությունները, ինչ ժամանակավոր գործուղումներում

գտնվող օտարերկրյա կառավարությունների ներկայացուցիչներին:

ի) Տեսչական խմբի անդամները տեսչական ստուգման ենթարկվող պետության կամ

ընդունող մասնակից պետության տարածքում չպետք է զբաղվեն ոչ մի մասնագիտական

կամ առետրային գործունեությամբ՝ անձնական շահերից ելնելով:

12. Տեսչական ստուգման չենթարկվող պետությունների տարածքով տարանցման

ժամանակ տեսչական խմբի անդամներին տրամադրվում են նույն արտոնություններն ու

անձեռնմխելիությունները, ինչ դիվանագիտական գործակալներին՝ համաձայն Վիեննայի

Դիվանագիտական հարաբերությունների մասին Կոնվենցիայի 40-րդ հոդվածի 1-ին կետի:

Փաստաթղթերը եւ թղթակցությունը, այդ թվում՝ գրառումները, ինչպես նաեւ նրանց

կողմից տեղափոխվող նմուշները եւ հաստատված սարքավորումը օգտվում են 11-րդ կետի

"գ" եւ "դ" ենթակետերում շարադրված նույն արտոնություններից եւ անձեռնմխելիություններից:

13. Առանց վնասելու իրենց արտոնությունները եւ անձեռնմխելիությունները՝ տեսչական խմբի անդամները պարտավոր են հարգել տեսչական ստուգման ենթարկվող

մասնակից պետության կամ ընդունող մասնակից պետության օրենքներն ու որոշումները

այնքանով, որքանով դա համադրելի է տեսչական ստուգման մանդատի հետ, պարտավոր են

չմիջամտել այդ պետության ներքին գործերին: Եթե տեսչական ստուգման ենթարկվող

մասնակից պետությունը կամ ընդունող պետությունը համարում է, որ տեղի է ունեցել

սույն Հավելվածում շարադրված արտոնությունների եւ անձեռնմխելիությունների չարաշահում, ապա այդ մասնակից պետության եւ Գլխավոր տնօրենի միջեւ անց են

կացվում խորհրդակցություններ՝ պարզելու՝ տեղի ունեցե՞լ է նման չարաշահում եւ,

նման փաստը հաստատվելու դեպքում, կանխելու այդպիսի չարաշահման կրկնությունը:

14. Գլխավոր տնօրենը կարող է հրաժարվել տեսչական խմբի իրավագործության անձեռնմխելիությունից այն դեպքերում, երբ, իր կարծիքով, անձեռնմխելիությունը խոչընդոտում է արդարադատության իրականացմանը, եւ դրանից կարելի է հրաժարվել՝

առանց վնասելու սույն Կոնվենցիայի դրույթների իրականացմանը: Հրաժարումը բոլոր

դեպքերում պետք է ունենա որոշակիորեն արտահայտված բնույթ:

15. Դիտորդներին տրամադրվում են սույն արտոնությունները ու անձեռնմխելիությունները, ինչ տեսուչներին՝ համաձայն սույն բաժնի, բացառությամբ

11-րդ կետի "դ" ենթակետով տրամադրվող արտոնությունների եւ անձեռնմխելիությունների:

Գ. Մշտական ընթացակարգեր

Մուտքի կետեր

16. Յուրաքանչյուր մասնակից պետություն նշանակում է մուտքի կետեր եւ ներկայացնում է պահանջվող տեղեկատվությունը Տեխնիկական քարտուղարությանը ոչ

ուշ, քան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 30 օր հետո: Մուտքի այդ կետերը նշանակվում են այնպես, որ տեսչական խումբը կարողանա հասնել տեսչական ստուգման

ենթարկվող վայր ամենաքիչը մուտքի մի կետից 12 ժամվա ընթացքում: Տեխնիկական

քարտուղարությունը հայտնում է բոլոր մասնակից պետություններին մուտքի կետերի տեղի մասին:

17. Յուրաքանչյուր մասնակից պետություն կարող է փոփոխել մուտքի կետերը Տեխնիկական քարտուղարությանը այդ մասին ծանուցելու միջոցով:

Փոփոխությունները

ուժի մեջ են մտնում այդպիսի ծանուցումը Տեխնիկական քարտուղարության ստանալուց

30 օր հետո, որպեսզի կարելի լինի ապահովել բոլոր մասնակից պետությունների համապատասխան ծանուցումը:

18. Եթե Տեխնիկական քարտուղարությունը համարում է, որ ժամանակին տեսչական

ստուգումների անցկացման համար մուտքի կետերը բավարար չեն, կամ որ մուտքի

կետերի փոփոխությունները, որոնք նախատեսվում են մասնակից պետության կողմից,

կխոչընդոտեն ժամանակին տեսչական ստուգումների անցկացմանը, նա

խորհրդակցություններ է անցկացնում համապատասխան մասնակից պետության հետ այդ

խնդրի կարգավորման նպատակով:

19. Այն դեպքերում, երբ տեսչական ստուգման ենթակա օբյեկտները կամ տարածքները գտնվում են ընդունող մասնակից պետության տարածքում, կամ երբ մուտքի

կետից տեսչական ստուգման օբյեկտներ կամ տարածքներ հասնելու համար պահանջվում է

այլ մասնակից պետության տարածքով տարանցում, տեսչական ստուգման ենթարկվող

մասնակից պետությունը իրականացնում է իր իրավունքներն ու կատարում է

պարտավորությունները այդպիսի տեսչական ստուգումների առնչությամբ՝ սույն

Հավելվածի համաձայն: Ընդունող մասնակից պետությունը աջակցում է այդ օբյեկտների կամ տարածքների տեսչական ստուգմանը եւ տրամադրում է անհրաժեշտ օգնություն, որպեսզի տեսչական խմբին թույլ տա ժամանակին եւ արդյունավետ իրականացնել իր խնդիրները: Մասնակից պետությունները, որոնց տարածքով պահանջվում է իրականացնել տարանցում տեսչական ստուգման ենթակա մասնակից պետության օբյեկտների կամ տարածքների տեսչական ստուգման համար, աջակցում են այդպիսի տարանցմանը:

20. Այն դեպքերում, երբ տեսչական ստուգման ենթակա մասնակից պետության օբյեկտները կամ տարածքները տեղակայված են այն պետության տարածքում, որը չի հանդիսանում սույն Կոնվենցիայի մասնակից, տեսչական ստուգման ենթակա մասնակից պետությունը ընդունում է բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի ապահովի այդ օբյեկտների կամ տարածքների տեսչական ստուգման անցկացման հնարավորությունը՝ սույն Հավելվածի դրույթների համաձայն: Մասնակից պետությունը, որն ունի մեկ կամ մի քանի օբյեկտներ կամ տարածքներ այն պետության տարածքում, որը չի հանդիսանում սույն Կոնվենցիայի մասնակից, անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում՝ ապահովելու ընդունող պետության կողմից այդ մասնակից պետության համար նշանակված տեսուչներին եւ տեսուչների օգնականներին: Եթե տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը ի վիճակի չէ ապահովելու մատչելիություն, ապա նա ցուցադրում է, որ ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները մատչելիության ապահովման համար:

21. Այն դեպքերում, երբ տեսչական ստուգման համար պահանջվող օբյեկտները կամ տարածքները տեղակայված են մասնակից պետության տարածքում, բայց գտնվում են այնպիսի վայրում, որը գտնվում է սույն Կոնվենցիայի անդամ չհանդիսացող պետության իրավագործության կամ հսկողության ներքո, մասնակից պետությունը ձեռնարկում է անհրաժեշտ բոլոր միջոցները, որոնք կպահանջվեն տեսչական ստուգման ենթակա մասնակից պետությունից կամ ընդունող մասնակից պետությունից, ապահովելու այդպիսի օբյեկտների տեսչական ստուգման անցկացման հնարավորությունը՝ սույն Հավելվածի դրույթների համաձայն: Եթե մասնակից պետությունը ի վիճակի չէ ապահովելու մատչելիությունը դեպի այդպիսի օբյեկտներ կամ տարածքներ, ապա նա ցուցադրում է, որ ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները մատչելիության ապահովման համար: Այս կետը չի կիրառվում այն դեպքերում, երբ տեսչական ստուգման

համար պահանջվող օբյեկտները կամ տարածքները պատկանում են մասնակից պետությանը:

Ոչ չվերթային ինքնաթիռների օգտագործման ընթացակարգերը

22. 9-րդ հոդվածի համաձայն՝ տեսչական ստուգումների համար եւ այլ տեսչական ստուգումների համար, որոնց դեպքում անհնարին է ապահովել ժամանակին ուղեւորությունը չվերթային առեւտրային տրանսպորտով, տեսչական խմբին կարող է անհրաժեշտ լինել օգտագործել ինքնաթիռ, որը պատկանում է Տեխնիկական քարտուղարությանը կամ վարձված է նրա կողմից: Ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան իր համար ուժի մեջ մտնելուց 30 օր հետո, յուրաքանչյուր մասնակից պետություն հայտնում է Տեխնիկական քարտուղարությանը ոչ չվերթային ինքնաթիռի համար դիվանագիտական թույլտվության մշտական համարը, որը փոխադրում է տեսչական խմբեր տեսչական ստուգման վայրում գտնվող տարածք կամ այդ տարածքից: Օդային երթուղիները դեպի մուտքի նշանակված կետեր եւ այնտեղից հետ պետք է ընկած լինեն հաստատված միջազգային օդային ուղիներով՝ համաձայնեցված մասնակից պետությունների եւ տեխնիկական քարտուղարության կողմից՝ որպես այդպիսի դիվանագիտական թույլտվության տրամադրման հիմք:

23. Ոչ չվերթային ինքնաթիռի օգտագործման ժամանակ Տեխնիկական քարտուղարությունը Ազգային մարմնի միջոցով տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությանը ներկայացնում է թռիչքային պլանը ինքնաթիռի թռիչքի համար վերջին օդակայանից նախքան այն պետության օդային տարածք մուտք գործելը, որտեղ գտնվում է տեսչական ստուգման վայրը, մինչեւ մուտքի կետ ոչ պակաս, քան այդ օդակայանից թռիչքի նախատեսված ժամանակից վեց ժամ առաջ: Այդպիսի չվերթային պլանը տրվում է Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության ընթացակարգերին համապատասխան: Իր սեփական կամ չարտերային չվերթերի համար Տեխնիկական քարտուղարությունը մտցնում է յուրաքանչյուր թռիչքային պլանի նշումների բաժնում դիվանագիտական թույլտվության մշտական համարը եւ համապատասխան նշում, որը վկայում է այն մասին, որ տվյալ ինքնաթիռը հանդիսանում է տեսչական ինքնաթիռ:

24. Ոչ պակաս, քան վերջին օդակայանից տեսչական խմբի նախատեսված թռիչքից 3 ժամ առաջ, այն պետության օդային տարածք մուտք գործելուց առաջ, որտեղ պետք է իրականացվի տեսչական ստուգումը, տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը կամ ընդունող մասնակից պետությունը ապահովում է թռիչքային պլանի հաստատումը՝ տրված 23-րդ կետին համապատասխան, որպեսզի տեսչական խումբը

կարողանա մուտքի կետ հասնել ժամանման հաշվարկային ժամանակին:
25. Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը ապահովում է Տեխնիկական քարտուղարության կողմից պահանջվող՝ տեսչական խմբի ինքնաթիռի կանգառը, պաշտպանական պահպանությունը, սպասարկումը եւ լիցքավորումը մուտքի կետում այն դեպքում, երբ այդպիսի ինքնաթիռը պատկանում է Տեխնիկական քարտուղարությանը կամ վարձված է նրա կողմից: Այդպիսի ինքնաթիռը ազատվում է վայրէջքային, թռիչքային եւ այլ նմանօրինակ վճարներից: Այդպիսի լիցքավորման, պաշտպանական պահպանության եւ սպասարկման ծախսերը կրում է Տեխնիկական քարտուղարությունը:

Վարչական ընթացակարգեր

26. Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը տեսչական խմբին տրամադրում եւ ապահովում է այնպիսի անհրաժեշտ հարմարություններ, ինչպիսիք են կապի միջոցները, թարգմանիչների ծառայությունները՝ այն չափով, որ չափով դա անհրաժեշտ է հարցումների կատարման եւ այլ խնդիրների իրականացման համար, ինչպես նաեւ փոխադրամիջոցներ, աշխատանքային տարածքներ, բնակության վայր, սնունդ եւ բժշկական ծառայություն: Այդ կապակցությամբ Կազմակերպությունը փոխհատուցում է տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությանը տեսչական խմբի՝ այդ ժամանման հետ կապված ծախսերը:

Հաստատված սարքավորում

27. 29-րդ կետին համապատասխան՝ տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը չի կիրառում տեսչական խմբի նկատմամբ որեւէ սահմանափակում իր կողմից տեսչական ստուգման վայր 28-րդ կետին համապատասխան հաստատված այնպիսի սարքավորման ներմուծման առկայությամբ, որը Տեխնիկական քարտուղարությունը անհրաժեշտ է համարում տեսչական ստուգման կարիքների բավարարման համար: Տեխնիկական քարտուղարությունը կազմում եւ համապատասխանաբար թարմացնում է հաստատված սարքավորման ցանկը, որը կարող է անհրաժեշտ լինել վերոհիշյալ նպատակների համար, ինչպես նաեւ այդպիսի սարքավորմանը վերաբերող կանոններ, որոնք պետք է համապատասխանեն սույն Հավելվածին: Հաստատված սարքավորման ցանկի եւ այդպիսի կանոնների մշակման ժամանակ Տեխնիկական քարտուղարությունը ապահովում

Է անվտանգության գործոնների ամբողջական հաշվառումը օբյեկտների բոլոր կատեգորիաներով, որոնցում կարող է օգտագործվել այդպիսի սարքավորումը: Հաստատված սարքավորման ցանկը քննարկվում եւ հաստատվում է Համաժողովի կողմից՝

8-րդ հոդվածի 21 i կետի համաձայն:

28. Այդ սարքավորումը գտնվում է Տեխնիկական քարտուղարության հսկողության

տակ եւ վերցվում, կալիբրավորվում եւ հաստատվում է Տեխնիկական քարտուղարության

կողմից: Տեխնիկական քարտուղարությունը, ըստ հնարավորության, ընտրում է այդպիսի

սարքավորում, որը նախատեսված է տեսչական ստուգման հենց կոնկրետ տեսակի համար:

Ընտրված եւ հաստատված սարքավորումը ապահովվում է սոցիալական պաշտպանվածությամբ

չսանկցիավորված փոփոխությունից:

29. Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը իրավունք ունի, առանց վնասելու հաստատված ժամկետներ, տեսչական խմբի ներկայությամբ՝ գննել

սարքավորումը մուտքի կետում, այսինքն՝ ստուգել տեսչական ստուգման ենթարկվող

մասնակից պետության կամ ընդունող մասնակից պետության տարածք ներմուծվող եւ

այնտեղից արտահանվող սարքավորման բնույթը: Այդպիսի նույնականացումը հեշտացնելու նպատակով Տեխնիկական քարտուղարությունը կցում է

փաստաթղթեր եւ

սարքեր՝ հավաստող, որ այդ սարքավորումը իր կողմից ընտրված եւ հավանության է

արժանացած: Սարքավորման գնությունը նաեւ հաստատում է տեսչական ստուգման

ենթարկվող պետությունը բավարար ձեւով, որ տվյալ սարքավորումը համապատասխանում

է տեսչական ստուգման կոնկրետ ձեւի համար հաստատված սարքավորման նկարագրին:

Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը կարող է կալանքի տակ

վերցնել այդ նկարագրին չհամապատասխանող սարքավորումը կամ վերոհիշյալ հավաստող

փաստաթղթերը եւ սարքերը չունեցող սարքավորումը: Սարքավորման գնության ընթացակարգերը ուսումնասիրվում եւ հաստատվում են Համաժողովի կողմից՝ 8-րդ

հոդվածի 21 i կետին համապատասխան:

30. Այն դեպքերում, երբ տեսչական խումբը անհրաժեշտ է համարում օգտագործել

Տեխնիկական քարտուղարությանը չպատկանող տեղում առկա սարքավորումը եւ խնդրում է

տեսչական ստուգման ենթարկվող պետությանը տեսչական խմբին տալ հնարավորություն

օգտագործել այդպիսի սարքավորումը, տեսչական ստուգման ենթարկվող մասնակից

պետությունը, հնարավորության սահմաններում, բավարարում է այդպիսի խնդրանքը:

Դ. Նախատեսչական գործունեություն

Ծանուցում

31. Գլխավոր տնօրենը ծանուցում է մասնակից պետությանը մինչև տեսչական խմբի նախատեսված ժամանումը մուտքի կետ եւ սահմանված ժամկետների շրջանակում,

եթե այդպիսիք նախատեսված են, տեսչական ստուգում անցկացնելու իր մտադրության

մասին:

32. Գլխավոր տնօրենի կողմից ուղարկվող ծանուցումները ներառում են հետևյալ

տեղեկությունը.

ա) տեսչական ստուգման ձեւը,

բ) մուտքի կետը,

գ) մուտքի կետ ժամանելու ամսաթիվը եւ նախատեսվող ժամանակը,

դ) մուտքի կետ ժամանելու միջոցը,

ե) տեսչական ստուգման ենթակա վայրը,

զ) տեսուչների եւ տեսուչների օգնականների ազգանունները,

է) համապատասխան դեպքերում՝ հատուկ չվերթերի համար ինքնաթիռի

օգտագործման

թույլտվություն:

33. Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը հաստատում է Տեխնիկական քարտուղարության ծանուցման ստացումը տեսչական ստուգում անցկացնելու

մասին ոչ ուշ, քան այդ ծանուցումը ստանալուց մեկ ժամ հետո:

34. Մեկ այլ մասնակից պետության տարածքում տեղակայված՝ մասնակից պետության

օբյեկտի տեսչական ստուգման դեպքում երկու մասնակից պետություններն էլ ծանուցվում են միաժամանակ՝ 31-րդ եւ 32-րդ կետերին համապատասխան:

Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության կամ ընդունող մասնակից պետության տարածք մուտք գործելը եւ ուղեւորությունը դեպի տեսչական ստուգման վայր

35. Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը կամ ընդունող մասնակից պետությունը, որը ծանուցվել է տեսչական խմբի ժամանման մասին, ապահովում է նրա անհապաղ մուտքը տարածք եւ երկրի ներսում ուղեկցելու միջոցով

կամ այլ միջոցներով իրենից կախված ամեն ինչ տեսչական խմբին եւ նրա սարքավորումը եւ նյութերը անվտանգ տեղ հասցնելու համար իր մուտքի կետից մինչև

տեսչական ստուգման վայր եւ ելքի կետ:

36. Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը կամ ընդունող մասնակից պետությունը, ըստ անհրաժեշտության, օգնում է տեսչական խմբին ժամանել

տեսչական ստուգման վայր ոչ ուշ, քան մուտքի կետ հասնելուց 12 ժամ հետո:

Նախատեսչական հրահանգում

37. Տեսչական ստուգման վայր ժամանման պահից եւ մինչեւ տեսչական ստուգման սկիզբը տեսչական խումբը հրահանգավորվում է օբյեկտի ներկայացուցիչների կողմից օբյեկտի, դրանում իրականացվող գործունեության, անվտանգության միջոցների, վարչական միջոցների եւ նյութատեխնիկական ապահովման միջոցների մասին՝ քարտեզների օգտագործմամբ եւ այլ համապատասխան փաստաթղթերով: Հրահանգավորման օգտագործվող ժամանակը սահմանափակվում է նվազագույնով եւ ցանկացած դեպքում չի գերազանցում երեք ժամը:

Ե. Տեսչական ստուգման անցկացումը

Ընդհանուր կանոններ

38. Տեսչական խմբի անդամները իրականացնում են իրենց գործառույթները սույն Կոնվենցիայի դրույթներին, օբյեկտի առնչությամբ Գլխավոր տնօրենի կողմից սահմանված կանոններին, ինչպես նաեւ Կազմակերպության եւ մասնակից պետության միջեւ կնքվող համաձայնագրերին համապատասխան:

39. Տեսչական խումբը խստիվ պահպանում է Գլխավոր տնօրենի կողմից տրված տեսչական ստուգման մանդատը: Նա ձեռնպահ է մնում այդ մանդատի շրջանակներից դուրս եկող գործունեությունից:

40. Տեսչական խմբի գործունեությունը կազմակերպվում է այնպես, որ ապահովվի նրա կողմից իր գործառույթների ժամանակին եւ արդյունավետ իրականացումը եւ տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությանը կամ ընդունող մասնակից պետությանը հասցվեն հնարավորինս քիչ անհարմարություն եւ խոչընդոտներ տեսչական ստուգման ենթարկվող օբյեկտին կամ տարածքին: Տեսչական խումբը խուսափում է անտեղի խոչընդոտների ստեղծումից եւ օբյեկտի գործունեության ձգձգումներից եւ խուսափում է նրա անվտանգությունը շոշափող գործողություններից: Մասնավորապես, տեսչական խումբը չի շահագործում ոչ մի օբյեկտ: Եթե տեսուչները համարում են, որ իրենց մանդատի իրականացման համար անհրաժեշտ է իրականացնել օբյեկտում կոնկրետ գործողություններ, նրանք այդ գործողությունների անցկացման մասին խնդրում են

տեսչական ստուգման ենթարկվող օբյեկտի նշանակված ներկայացուցչին: Ըստ հնարավորության, ներկայացուցիչը կատարում է այդ խնդրանքը:

41. Կատարելով իր պարտականությունները տեսչական ստուգման ենթարկվող

պետության կամ ընդունող մասնակից պետության տարածքում՝ տեսչական խմբի անդամները, եթե այդ մասին խնդրում է տեսչական ստուգման ենթարկվող մասնակից

պետությունը, ուղեկցվում են տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության

ներկայացուցիչների կողմից, սակայն դա տեսչական խմբի համար իր գործառույթներն

իրականացնելիս չպետք է ստեղծի ձգձգումներ կամ խոչընդոտներ:

42. Տեսչական ստուգումներ անցկացնելու մանրամասն ընթացակարգերը մշակվում

են Տեխնիկական քարտուղարության կողմից՝ "Տեսչական ստուգումներ անցկացնելու

Ուղեցույց"-ում ընդգրկելու նպատակով, հաշվի առնելով Համաժողովի կողմից քննարկման եւ հաստատման ենթակա հիմնական սկզբունքները՝ 8-րդ հոդվածի 21 i

կետին համապատասխան:

Անվտանգություն

43. Իրենց գործունեությունն իրականացնելիս տեսուչները եւ տեսուչների օգնականները պահպանում են տեսչական ստուգման վայրում սահմանված անվտանգության

կանոնները, այդ թվում՝ վերահսկվող գոտիների պահպանության վերաբերյալ կանոնները

օբյեկտի ներսում եւ անձնական անվտանգության կանոնները:

Կապը

44. Տեսուչները իրավունք ունեն երկրում գտնվելու ողջ ժամանակահատվածի ընթացքում պահպանել կապ Տեխնիկական քարտուղարության գլխակայանի հետ: Այդ

նպատակով նրանք կարող են օգտագործել իրենց սեփական, պատշաճորեն ատեստավորված,

հաստատված սարքավորումը եւ կարող են խնդրել տեսչական ստուգման ենթարկվող

մասնակից պետությանը կամ ընդունող մասնակից պետությանը իրենց տրամադրել

մատչելիություն հեռավոր կապի այլ միջոցների նկատմամբ: Տեսչական խումբը իրավունք ունի օգտագործելու երկկողմ ռադիոկապի իր սեփական համակարգը պարագիծը

պահող անձնակազմի եւ տեսչական խմբի այլ անդամների միջեւ:

Տեսչական խմբի եւ տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության իրավունքները

45. Տեսչական խումբը, համաձայն սույն Կոնվենցիայի համապատասխան դրույթների

եւ հավելվածների, ինչպես նաեւ օբյեկտների առնչությամբ համաձայնագրերի եւ ընթացակարգերի, որոնք շարադրված են Տեսչական ստուգումներ անցկացնելու

Ուղեցույցում, իրավունք ունի անխափան մուտք գործել տեսչական ստուգման վայր:

Տեսչական ստուգման ենթարկվող առարկաները ընտրվում են տեսուչների կողմից:

46. Տեսուչները իրավունք ունեն օբյեկտի ցանկացած անձնակազմի կարծիքը հարցնել տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության ներկայացուցիչների

ներկայությամբ համապատասխան փաստերը պարզելու նպատակով: Տեսուչները հարցում են

միայն այնպիսի տեղեկություններ եւ տվյալներ, որոնք անհրաժեշտ են տեսչական ստուգման իրականացման համար, եւ տեսչական ստուգման ենթարկվող մասնակից

պետությունը ներկայացնում է այդպիսի տեղեկատվությունը համապատասխան խնդրանքի

առկայության դեպքում: Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը

իրավունք ունի մերժելու օբյեկտի անձնակազմին տրվող հարցերը, եթե այդ հարցերը

գնահատվում են որպես տեսչական ստուգմանը չառնչվող հարցեր: Եթե տեսչական խմբի

ղեկավարը մերժում եւ հայտարարում է դրանց տեղին լինելու մասին, ապա այդ հարցերը գրավոր ներկայացվում են տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությանը՝ պատասխանի համար: Տեսչական խումբը կարող է ամրագրել հարցում

կատարելու համար թույլտվություն տալու առնչությամբ ցանկացած մերժում կամ թույլատրել պատասխաններ հարցերին եւ ցանկացած բացատրության ներկայացում

տեսչական ստուգման մասին զեկույցի այն մասով, որը վերաբերում է տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության համագործակցությանը:

47. Տեսուչները իրավունք ունեն հետազոտել փաստաթղթերը եւ գրությունները, որոնք իրենք համարում են իրենց խնդիրների իրականացմանը վերաբերող:

48. Տեսուչները իրավունք ունեն լուսանկարների արտադրության, որոնք իրենց խնդրանքով կատարվում են տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության կամ

տեսչական ստուգման ենթարկվող օբյեկտի ներկայացուցիչների կողմից: Ապահովվում է

վայրկենական լուսանկարների արտադրության համար հնարավորությունը: Տեսչական

խումբը որոշում է՝ համապատասխանո՞ւմ են լուսանկարները իր խնդրանքին, թե ոչ,

ապա կատարվում են կրկնակի լուսանկարներ: Տեսչական խումբը եւ տեսչական ստուգման

ենթարկվող մասնակից պետությունը պահպանում են յուրաքանչյուր լուսանկարի մեկական պատճեն:

49. Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության ներկայացուցիչները

իրավունք ունեն հետեւելու այն ստուգմանը, որն իրականացվում է տեսչական խմբի

կողմից:

50. Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը ստանում է, իր խնդրանքով, Տեխնիկական քարտուղարության կողմից նրա օբյեկտի

(օբյեկտների) մասին

տեղեկությունների եւ տվյալների հավաքված պատճենները:

51. Տեսուչները իրավունք ունեն խնդրելու պարզաբանումներ անճշտությունների վերաբերյալ, որոնք առաջացել են տեսչական ստուգման ընթացքում: Այդպիսի հարցումները կատարվում են անմիջապես տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության ներկայացուցչի միջոցով: Տեսչական ստուգման ընթացքում տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության ներկայացուցիչը անճշտությունը վերացնելու նպատակով տեսչական խմբին պարզաբանումներ է տալիս: Այն դեպքում, երբ հարցերը տեսչական ստուգման վայրի շրջանակներում գտնվող առարկայի կամ շենքի վերաբերյալ մնում են չլուծված, ապա առարկան կամ շենքը համապատասխան խնդրանքի վերաբերյալ լուսանկարվում է՝ նրա բնույթը եւ ինչի համար նախատեսված լինելը պարզելու նպատակով: Եթե տեսչական ստուգման ընթացքում անճշտությունը վերացնել չի հաջողվում, ապա տեսուչները անհապաղ ծանուցում են Տեխնիկական քարտուղարությանը: Տեսչական ստուգման մասին գեկույցում տեսուչները արտահայտում են ցանկացած այդպիսի չլուծված հարց, շարադրում են համապատասխան պարզաբանումները եւ ներկայացնում ցանկացած լուսանկարի պատճենները:

Նմուշների ընտրություն, վերամշակում եւ անալիզ

52. Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության կամ տեսչական ստուգման ենթարկվող օբյեկտի ներկայացուցիչները, տեսչական խմբի խնդրանքով, իրականացնում են տեղում նմուշների ընտրություն տեսուչների ներկայությամբ: Այն դեպքում, երբ դա նախօրոք համաձայնեցված է տեսչական ստուգման ենթարկվող պետության կամ տեսչական ստուգման ենթարկվող օբյեկտի ներկայացուցիչների հետ, տեսչական խումբը կարող է ընտրել նմուշները ինքնուրույն:

53. Ըստ հնարավորության՝ նմուշների անալիզը կատարվում է տեղում: Տեսչական

խումբը իրավունք ունի նմուշների անալիզ իրականացնել տեղում՝ իր կողմից տեղ հասցված հաստատված սարքավորումը օգտագործելու միջոցով: Տեսչական խմբի խնդրանքով՝ տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը, համաձայնեցված ընթացակարգերին համաձայն, օգնություն է ցուցաբերում տեղում նմուշների անալիզի հարցում:

54. Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը իրավունք ունի պահպանելու բոլոր ընտրված նմուշների մասերը կամ ստանալ նմուշների կրկնօրինակներ եւ ներկա գտնվել տեղում նմուշների անալիզի ժամանակ:

55. Տեսչական խումբը, եթե անհրաժեշտ է համարում, փոխանցում է նմուշները անալիզի համար օբյեկտի սահմաններից դուրս՝ Կազմակերպության կողմից նշանակված

լաբորատորիաներին:

56. Գլխավոր տնօրենը հիմնական պատասխանատվությունն է կրում նմուշների

անվտանգության, ամբողջականության եւ պահպանության, ինչպես նաեւ
սմուշների

կոնֆիդենցիալության համար, որոնք փոխանցվում են անալիզի օբյեկտի
սահմաններից

դուրս: Գլխավոր տնօրենը իրականացնում է դա՝ համաձայն Համաժողովի կողմից
քննարկման եւ հաստատման ենթակա ընթացակարգերի, համաձայն 8-րդ
հոդվածի 21 i)

կետի, Տեսչական ստուգում անցկացնելու Ուղեցույցում ներառելու նպատակով:
Գլխավոր տնօրենը.

ա) սահմանում է խիստ ռեժիմ, որը կարգավորում է սմուշների ընտրությունը,
մշակումը, փոխադրումը եւ անալիզը,

բ) ատեստավորում է տարբեր տեսակի անալիզներ անցկացնելու համար
նշանակված

լաբորատորիաները,

գ) վերահսկողություն է իրականացնում սարքավորման եւ ընթացակարգերի
ստանդարտացման նկատմամբ այդ նշանակված լաբորատորիաներում, ինչպես
նաեւ մոբիլ

հետազոտական սարքավորման եւ ընթացակարգերի նկատմամբ եւ հսկում է
որակի

հսկողության չափանիշները եւ ընդհանուր չափանիշները այդ

լաբորատորիաների՝ մոբիլ

սարքավորման եւ ընթացակարգերի ատեստավորման կապակցությամբ, եւ

դ) նշանակված լաբորատորիաներից ընտրում է լաբորատորիաներ, որոնք
կկատարեն

փորձագիտական կամ այլ գործառույթներ՝ կոնկրետ ուսումնասիրություններ
անցկացնելու առնչությամբ:

57. Օբյեկտի սահմաններից դուրս անալիզի անցկացման ժամանակ սմուշները
անալիզի են ենթարկվում ամենաքիչը երկու նշանակված լաբորատորիայում:

Տեխնիկական

քարտուղարությունը ապահովում է անալիզի օպերատիվ մշակում: Տեխնիկական
քարտուղարությունը վարում է սմուշների հաշվառում, եւ ցանկացած

չօգտագործված

սմուշ կամ դրա մասերը վերադարձվում են Տեխնիկական քարտուղարությանը:

58. Տեխնիկական քարտուղարությունը ամփոփում է սմուշների լաբորատոր
անալիզի

արդյունքները, որոնք առնչություն ունեն սույն Կոնվենցիայի պահպանմանը, եւ
ներառում է դրանք իրենց տեսչական ստուգման վերջնական զեկույցի մեջ:

Տեխնիկական

քարտուղարությունը զեկույցի մեջ ներառում է մանրամասն տեղեկատվություն
նշանակված լաբորատորիաների կողմից օգտագործվող սարքավորման եւ

մեթոդիկայի

վերաբերյալ:

Տեսչական ստուգման տեւողության երկարաձգում

59. Տեսչական ստուգման ժամկետները կարող են երկարաձգվել՝ ըստ
տեսչական

ստուգման ենթարկվող մասնակից պետության ներկայացուցչի հետ
պայմանավորվածության:

Եզրափակիչ խորհրդակցություն

60. Տեսչական ստուգման ավարտին տեսչական խումբը հանդիպում է տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության ներկայացուցիչների եւ տեսչական ստուգման վայրի համար պատասխանատու անձնակազմի հետ՝ տեսչական խմբի նախնական եզրակացությունների քննարկման եւ ցանկացած անճշտության վերացման նպատակով:

Տեսչական խումբը փոխանցում է տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության ներկայացուցիչներին իր նախնական եզրակացությունները՝ շարադրված ստանդարտ ձեւաչափով, գրավոր, ինչպես նաեւ բոլոր նմուշների ցանկը եւ հավաքված գրավոր տեղեկությունների եւ տվյալների պատճեններն ու այլ նյութեր, որոնք ենթակա են արտահանման օբյեկտի սահմաններից դուրս: Այդ փաստաթուղթը ստորագրվում է տեսչական խմբի ղեկավարի կողմից: Ի նշան փաստաթղթի բովանդակությանը ծանոթանալուն՝ տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության ներկայացուցիչը նույնպես ստորագրում է այդ փաստաթուղթը: Այդ խորհրդակցությունը ավարտվում է ոչ ուշ, քան տեսչական ստուգումն ավարտելուց 24 ժամ հետո:

2. Մեկնում

61. Հետտեսչական ստուգումների ավարտից հետո տեսչական ստուգման խումբը, որքան հնարավոր է արագ, մեկնում է տեսչական ստուգման ենթարկվող պետության տարածքից:

Ե. Չեկույցներ

62. Տեսչական ստուգումից ոչ ուշ, քան 10 օր հետո տեսուչները նախապատրաստում են վերջնական փաստագրական գեկույցի իրենց անցկացրած գործունեության եւ իրենց եզրակացությունների մասին: Նրանում շարադրված են միայն այն փաստերը, որոնք առնչություն ունեն սույն Կոնվենցիայի պահպանմանը, ինչպես դա նախատեսված է տեսչական ստուգման մանդատով: Չեկույցում նաեւ բերվում է տեղեկատվություն այն մասին, թե ինչպես է տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը համագործակցել տեսչական խմբի հետ: Չեկույցին կարող են կցվել տեսուչների հատուկ կարծիքները: Չեկույցը համարվում է կոնֆիդենցիալ:

63. Վերջնական գեկույցը անհապաղ ներկայացվում է տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությանը: Չեկույցին կցվում են բոլոր գրավոր դիտողությունները, որոնք կարող են անմիջապես կատարվել մասնակից պետության կողմից՝ նրանում պարունակվող եզրակացությունների կապակցությամբ: Վերջնական

գեկույցը, տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության կողմից արված, իրեն

կից դիտողություններով ներկայացվում է Գլխավոր տնօրենին ոչ ուշ, քան տեսչական

ստուգումից 30 օր հետո:

64. Չեկույցում անճշտությունների առկայության կամ Ազգային մարմնի եւ տեսուչների միջեւ համագործակցության՝ պահանջվող մակարդակին անհամապատասխանության դեպքում Գլխավոր տնօրենը դիմում է մասնակից պետությանը՝

պարզաբանման նպատակով:

65. Եթե չի հաջողվում վերացնել անճշտությունները, կամ եթե հաստատված փաստերը իրենց բնույթով թույլ են տալիս ենթադրել սույն Կոնվենցիայով պարտավորությունների չկատարման մասին, Գլխավոր տնօրենը անհապաղ տեղեկացնում է

Գործադիր խորհրդին:

Ը. Ընդհանուր դրույթների կիրառում

66. Սույն Մասի դրույթները կիրառվում են բոլոր տեսչական ստուգումների ժամանակ, որոնք անց են կացվում սույն Կոնվենցիայի համաձայն, բացառությամբ այն

դեպքերի, երբ սույն Մասի դրույթները տարբերվում են այն դրույթներից, որոնք շարադրված են յուրահատուկ տեսչական ստուգումների տեսակների համար՝ սույն

Չավելվածի 3-11-րդ Մասերում, ընդ որում՝ այդ դեպքում գերակայում են վերջին դրույթները:

Մաս 3

4-րդ, 5-րդ հոդվածների եւ 6-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ստուգման միջոցներին վերաբերող ընդհանուր դրույթները

Ա. Նախնական տեսչական ստուգումներ եւ օբյեկտի վերաբերյալ համաձայնություններ

1. 4-րդ, 5-րդ հոդվածների եւ 6-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ տեղում տեսչական ստուգման ենթակա յուրաքանչյուր հայտարարված օբյեկտ ընդունում է

Նախնական տեսչական ստուգումը օբյեկտի հայտարարումից անմիջապես հետո: Այդ

տեսչական ստուգման նպատակը կայանում է ներկայացված տեղեկատվության ստուգման,

ցանկացած լրացուցիչ տեղեկատվության ստացման մեջ, որն անհրաժեշտ է օբյեկտում

ստուգման հետագա գործունեության ծրագրման համար, ներառյալ տեղում տեսչական

ստուգումները եւ անընդհատ ուսումնասիրությունը տեղում տեղադրվող սարքերի միջոցով եւ օբյեկտի վերաբերյալ համաձայնագրերի շուրջ աշխատանքների կատարման

մեջ:

2. Մասնակից պետությունները ապահովում են, որ սույն Կոնվենցիան իրենց համար ուժի մեջ մտնելուց հետո՝ սահմանված ժամկետներում, Տեխնիկական

քարտուղարությունը կարողանա անցկացնել բոլոր օբյեկտներում հայտարարությունների

ստուգում եւ սկսի պարբերաբար ստուգումների միջոցառումների իրականացում:

3. Յուրաքանչյուր մասնակից պետություն Կազմակերպության հետ կնքում է օբյեկտի վերաբերյալ համաձայնագիր յուրաքանչյուր հայտարարված եւ, 4-րդ, 5-րդ

հոդվածների եւ 6-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, տեղում տեսչական ստուգման

ենթարկվող օբյեկտի համար:

4. Օբյեկտի վերաբերյալ համաձայնագրերը կազմվում են ոչ ուշ, քան մասնակից պետության համար սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց կամ օբյեկտի առաջին հայտարարությունից 180 օր հետո՝ բացառությամբ քիմիական գեների ոչնչացման օբյեկտների, որոնց նկատմամբ կիրառվում են 5-7-րդ կետերը:

5. Քիմիական գեների ոչնչացման օբյեկտի դեպքում, որը սկսում է գործել մասնակից պետության համար սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո ոչ ավելի,

քան մեկ տարի հետո, օբյեկտի առնչությամբ համաձայնագիրը կազմվում է ոչ ավելի,

քան այդ օբյեկտի գործողությունից 180 օր առաջ:

6. Քիմիական գեների ոչնչացման օբյեկտի դեպքում, որը գործում է սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու ժամանակ, կամ որը սկսում է գործել ոչ ուշ, քան դրանից մեկ տարի հետո, օբյեկտի վերաբերյալ համաձայնագիրը կազմվում է սույն

Համաձայնագիրը մասնակից պետության համար ուժի մեջ մտնելուց 210 օր հետո՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Գործադիր խորհուրդը կարող է որոշել, որ բավարար

են ստուգման անցումային միջոցառումները, որոնք հաստատվում են սույն

Հավելվածի

4-րդ Ա մասի 51-րդ կետին համապատասխան եւ ներառում են օբյեկտի

վերաբերյալ

անցումային համաձայնագիր, ստուգման մասին դրույթները տեղում տեսչական ստուգման

եւ տեղում տեղադրվող սարքերով ուսումնասիրության միջոցով, ինչպես նաեւ այդ միջոցառումների իրականացման ժամկետները:

7. 6-րդ կետում նշված օբյեկտի դեպքում, որը կդադարեցնի իր գործունեությունը ոչ ուշ, քան մասնակից պետության համար սույն Կոնվենցիան ուժի

մեջ մտնելուց 2 տարի հետո, Գործադիր խորհուրդը կարող է որոշել, որ բավարար են

ստուգման անցումային միջոցառումները, որոնք հաստատվում են սույն

Հավելվածի

4-րդ Ա մասի 51-րդ կետին համապատասխան եւ ներառում են օբյեկտի

վերաբերյալ

անցումային համաձայնագիր, ստուգման մասին դրույթներ տեղում տեսչական ստուգման

եւ տեղում տեղադրվող սարքերով ուսումնասիրության միջոցով, ինչպես նաեւ այդ միջոցառումների իրականացման ժամկետները:

8. Օբյեկտի վերաբերյալ համաձայնագրերը կազմվում են այդպիսի

համաձայնագրերի

նմուշների հիման վրա եւ պարունակում են մանրամասն դրույթներ, որոնք

կարգավորում են տեսչական ստուգումների անցկացումը յուրաքանչյուր օբյեկտում:

Տիպային համաձայնագրերը պարունակում են դրույթներ, որոնք թույլ են տալիս հաշվի

առնել հետագա տեխնիկական ձեռքբերումները եւ ուսումնասիրվում եւ հաստատվում են

Համաժողովի կողմից՝ համաձայն 8-րդ հոդվածի 21 i կետի:

9. Տեխնիկական քարտուղարությունը կարող է լուսանկարների, ծրագրերի եւ այլ

տեղեկատվության համար կնքված բեռնարկը պահել ցանկացած տեղ, որոնց նա կցանկանա

դիմել հետագա տեսչական ստուգումների ժամանակ:

Բ. Մշտական ընթացակարգեր

10. Այն դեպքերում, երբ դա կիրառելի է, Տեխնիկական քարտուղարությունը ունի

սարքերի եւ անընդհատ ուսումնասիրության համակարգերի ու կապարակնիքների տեղադրման եւ օգտագործման իրավունք՝ համաձայն սույն Կոնվենցիայի համապատասխան

դրույթների եւ օբյեկտի վերաբերյալ մասնակից պետությունների եւ Կազմակերպության

միջեւ համաձայնագրերի:

11. Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը, համաձայնեցված

ընթացակարգերի համաձայն, իրավունք ունի հետազոտել ցանկացած սարք, որն օգտագործվում կամ տեղադրվում է տեսչական խմբի կողմից, եւ ապահովել դրա ապրոբացումը տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության ներկայացուցիչների ներկայությամբ: Տեսչական խումբը իրավունք ունի օգտագործել

քիմիական զենքի ոչնչացման տեխնոլոգիական գործընթացի նկատմամբ սեփական

ուսումնասիրության համար մասնակից պետության կողմից տեղադրված սարքեր: Այդ

նպատակով տեսչական խումբը իրավունք ունի հետազոտել այն սարքերը, որոնք ինքը

մտադիր է օգտագործել քիմիական զենքի ոչնչացման ստուգման նպատակների համար, եւ

ապահովել դրանց ապրոբացումը իր ներկայությամբ:

12. Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը իրականացնում է

անհրաժեշտ նախապատրաստումը եւ աջակցությունը սարքերի եւ անընդհատ դիտարկման

համակարգերի տեղադրման համար:

13. 11-րդ եւ 12-րդ կետերի իրականացման նպատակով Համաժողովը ուսումնասիրում եւ հաստատում է, 8-րդ հոդվածի 21 i կետի համաձայն, համապատասխան մանրամասն ընթացակարգերը:

14. Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը անհապաղ Տեխնիկական

քարտուղարությանը տեղեկացնում է այն դեպքում, եթե հսկողական սարքեր տեղադրված

օբյեկտում տեղի է ունենում կամ կարող է տեղի ունենալ որեւէ իրադարձություն, որը կարող է անդրադառնալ դիտարկման համակարգի վրա: Տեսչական ստուգման

ենթարկվող մասնակից պետությունը համակարգում է Տեխնիկական քարտուղարության հետ

հետագա գործողությունները, որպեսզի վերականգնի դիտարկման համակարգի գործունեությունը եւ, անհրաժեշտության դեպքում, որքան հնարավոր է արագ, ընդունի միջանկյալ միջոցառումներ:

15. Յուրաքանչյուր տեսչական ստուգման ընթացքում տեսչական խումբը ստուգում

է դիտարկման համակարգի գործունեության ճիշտ լինելը եւ տեղադրված կապարակնիքների ամբողջականությունը: Բացի դա, կարող են պահանջվել տեսակցություններ դիտարկման համակարգի սպասարկման համար ցանկացած անհրաժեշտ

սպասարկման իրականացման կամ սարքավորման փոխարինման կամ հսկողության համակարգի

ընդգրկման պահանջվող շտկման նպատակներով:

16. Եթե դիտարկման համակարգը վկայում է ցանկացած շեղման մասին, Տեխնիկական

քարտուղարությունը անմիջապես նախաձեռնում է միջոցներ, որպեսզի պարզի՝ հանդիսանում է դա տեխնիկական անսարքության արդյո՞ւնք, թե օբյեկտում գործունեության: Եթե այդպիսի ուսումնասիրությունից հետո խնդիրը մնում է չլուծված, Տեխնիկական քարտուղարությունը անմիջապես հաստատում է փաստացի

իրավիճակ, այդ թվում, անհրաժեշտության դեպքում, տեսչական ստուգման կամ տեղում

օբյեկտի այցելության իրականացման: Տեխնիկական քարտուղարությունը հայտնում է

ցանկացած այդպիսի խնդրի մասին անմիջապես դրա հայտնաբերումից հետո տեսչական

ստուգման ենթարկվող մասնակից պետությանը, որը օգնություն է ցուցաբերում դրա

որոշման գործում:

Գ. Նախատեսչական գործունեություն

17. Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը, բացառությամբ 18-րդ կետում նշված դեպքերի, ծանուցվում է տեսչական ստուգումների մասին ոչ պակաս, քան տեսչական խմբի՝ մուտքի կետ նախատեսվող ժամանումից 24 ժամ առաջ:

18. Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը ծանուցվում է նախնական տեսչական ստուգումների մասին ոչ ուշ, քան տեսչական խմբի՝ մուտքի կետ հաշվարկված ժամանակից ժամանելուց 72 ժամ առաջ:

Մաս 4

Քիմիական զենքի ոչնչացումը եւ դրա ստուգումը՝ 4-րդ հոդվածի համաձայն

Ա. Հայտարարություններ

Քիմիական զենք

1. Քիմիական գեների հայտարարությունը մասնակից պետության կողմից, 3-րդ հոդվածի 1.ա ii կետի համաձայն, ներառում է հետևյալը.

ա) յուրաքանչյուր հայտարարվող քիմիկատի միասնական քանակությունը,
բ) քիմիական գեների պահպանման յուրաքանչյուր օբյեկտի ճշգրիտ տեղը՝ հետևյալ նշումներով.

i) անվանման,
ii) աշխարհագրական կոորդինատները, եւ
iii) տեղի մանրամասն գծագիրը, ներառյալ քարտեզ-պլանը՝ օբյեկտի ներսում պահպանման բունկերների/հրապարակների սահմանների եւ տեղակայման վայրի նշումով,

գ) ըստ քիմիական գեների պահպանման յուրաքանչյուր օբյեկտի մանրամասն գույքագրային ցանկը՝ հետևյալ նշումներով՝

i) քիմիկատների, որոնք սահմանվում են որպես քիմիական գեներ՝ 2-րդ հոդվածի համաձայն,
ii) չլիցքավորված ռազմամթերքի, ենթալիցքերի, սարքերի եւ սարքավորումների, որոնք սահմանվում են որպես քիմիական գեներ,
iii) սարքավորումների, որոնք նախատեսված են անմիջապես օգտագործվելու ii ենթակետում նշված ռազմամթերքի, ենթալիցքերի, սարքերի եւ սարքավորումների կիրառման առնչությամբ,
iv) քիմիկատների, որոնք հատուկ նախատեսված են անմիջապես

օգտագործվելու ii ենթակետում նշված ռազմամթերքի, ենթալիցքերի, սարքերի եւ սարքավորումների կիրառման առնչությամբ:

2.1. գ i կետում նշված քիմիկատների հայտարարության նկատմամբ կիրառվում է հետևյալը.

ա) քիմիկատները հայտարարվում են՝ քիմիկատների Հավելվածում բերված ցուցակների համաձայն,

բ) քիմիկատների Հավելվածում պարունակվող ցուցակներում չներառված քիմիկատների համար ներկայացվում է տեղեկատվություն քիմիկատը համապատասխան

ցուցակին վերաբերելու նպատակով, ներառյալ մաքուր միացման թունավորությունը:

Պրեկուրսորների համար նշվում է ռեակցիայի հիմնական վերջնական արտադրանքի

(արտադրանքների) բնույթը,

գ) քիմիկատները նույնականացվում են՝ ըստ քիմիական անվանման, համաձայն մաքուր եւ կիրառական քիմիայի գործող նոմենկլատուրայի, կառուցվածքային բանաձեւի

եւ "Քեմիքլ աբստրակտս սերվիս"-ի գրանցման համարի, եթե այդպիսին կա:

Պրեկուրսորների համար նշվում են ռեակցիայի հիմնական վերջնական արտադրանքի

(արտադրանքների) թունավորությունը եւ բնույթը,

դ) երկու եւ ավելի քիմիկատներից կազմված լուծույթների դեպքում նույնականացվում է յուրաքանչյուր քիմիկատը, եւ նշվում է յուրաքանչյուր քիմիկատի տոկոսային չափը, ընդ որում՝ այդպիսի լուծույթները հայտարարվում են՝

ըստ առավել թունավոր քիմիկատի կատեգորիայի: Եթե բիևարային քիմիական գեների

կոմպոնենտը կազմված է երկու կամ ավելի քիմիկատների լուծույթից, ապա նույնականացվում է յուրաքանչյուր քիմիկատը, եւ բերվում է յուրաքանչյուր քիմիկատի տոկոսային չափը,

ե) բինարային քիմիական զենքը հայտարարվում է՝ ելնելով համապատասխան վերջնական արտադրանքից՝ 16-րդ կետում նշված քիմիական զենքի կատեգորիայի

սահմաններում: Յուրաքանչյուր բինարային քիմիական ռազմամթերքի/սարքի տեսակի

համար ներկայացվում է հետեւյալ լրացուցիչ տեղեկատվությունը.

- i) վերջնական թունավոր արտադրանքի քիմիական անվանումը,
- ii) յուրաքանչյուր բաղադրիչի քիմիական կազմը եւ քանակությունը,
- iii) բաղադրիչների միջեւ փաստացի կշռային հարաբերակցությունը,
- iv) որ բաղադրիչն է դիտվում որպես հիմնական բաղադրիչ,
- v) ստեխիոմետրիկ հիմքի վրա հաշվարկված թունավոր վերջնական

արտադրանքի

նախատեսվող քանակությունը՝ ելնելով հիմնական բաղադրիչից՝ հարյուր տոկոսանոց

ելքի պայմանով: Հիմնական բաղադրիչի հայտարարված քանակությունը (տոննաներով),

որը նախատեսված է կոնկրետ թունավոր վերջնական արտադրանքի համար, դիտվում է

որպես այդ թունավոր վերջնական արտադրանքի քանակության համարժեք (տոննաներում),

որը հաշվարկվում է ստեխիոմետրիկ հիմքի վրա՝ հարյուր տոկոսանոց ելքի պայմանով,

զ) բազմաբաղադրիչ քիմիական զենքի համար հայտարարությունը համապատասխանում

է բինարային քիմիայի համար նախատեսված հայտարարությանը,

ե) յուրաքանչյուր քիմիկատով հայտարարվում է պահպանման ձեւը, այսինքն՝ ռազմամթերքը, ենթալիցքերը, սարքերը, սարքավորումները կամ տարողունակությունները եւ այլ բեռնարկերը: Պահպանման յուրաքանչյուր ձեւով նշվում է հետեւյալը.

- i) տեսակը,
- ii) չափսը կամ տրամաչափը,
- iii) միավորների թիվը,
- iv) քիմիական հանդերձանքի նոմինալ քաշը մեկ միավորի համար,
- v) յուրաքանչյուր քիմիկատի համար հայտարարվում է պահպանման օբյեկտում

առկա

ընդհանուր քաշը,

vi) բացի դա՝ տարողունակություններում պահվող քիմիկատների համար հայտարարվում է մաքրությունը տոկոսներով, եթե հայտնի է:

3. Չլիցքավորված ռազմամթերքի, ենթալիցքերի, սարքերի կամ սարքավորման յուրաքանչյուր տեսակով, որոնք նշված են 1.գ ii կետում, ներառում է հետեւյալը.

- ա) միավորների քանակը,
- բ) հանդերձավորման նոմինալ չափը մեկ միավորի համար,
- գ) ենթադրվող քիմիական հանդերձանքը:

3-րդ հոդվածի 1.ա iii կետի համաձայն՝ քիմիական զենքի հայտարարությունները

4. 3-րդ հոդվածի 1.ա iii կետի համաձայն՝ քիմիական զենքի հայտարարությունները ներառում են վերոհիշյալ 1-3-րդ կետերում նշված ամբողջ

տեղեկատվությունը: Մասնակից պետությունը, որի տարածքում գտնվում է քիմիական զենքը, կրում է պատասխանատվություն այլ պետության հետ համապատասխան պայմանավորվածությունների ձեռքբերման համար, որպեսզի ապահովվի հայտարարությունների ներկայացումը: Եթե մասնակից պետությունը, որի տարածքում գտնվում է քիմիական զենքը, ի վիճակի չէ կատարելու իր պարտավորությունները տվյալ կետով, ապա նշում է համապատասխան պատճառները:

ԻՐՏԵԿ - շարունակությունը հաջորդ մասերում

ԿՈՆՎԵՆՑԻԱ
ՔԻՄԻԱԿԱՆ ՉԵՆՔԻ ՄՇԱԿՈՒՄԸ, ԱՐՏԱԴՐՈՒՄԸ, ԿՈՒՏԱԿՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ԱՐԳԵԼԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(4-րդ մաս)

Նախկին փոխանցումների եւ ստացումների հայտարարությունը

5. 1946 թվականի հունվարի 1-ից քիմիական զենք փոխանցած կամ ստացած մասնակից պետությունը հայտարարում է այդ փոխանցումները կամ ստացումները՝ համաձայն 3-րդ հոդվածի 1.ա iv կետի, եթե փոխանցված կամ ստացված քանակությունը կազմում է տարողունակություններով եւ/կամ ռազմամթերքի տեսքով տարեկան քիմիկատի 1 տոննայից ավելի: Այդպիսի հայտարարությունը արվում է գույքագրային գծագրին համապատասխան՝ նշված 1-ին եւ 2-րդ կետերում: Այդ հայտարարության մեջ նաեւ նշվում են մատակարարող երկրները եւ ստացող երկրները, ստացումների կան փոխանցումների ժամկետները, որքան հնարավոր է հստակ, փոխանցված առարկաների ներկայիս գտնվելու վայրը: Եթե առկա է քիմիական զենքի փոխանցումների կամ ստացումների մասին ոչ նախատեսված ամբողջական տեղեկատվություն 1946 թվականի հունվարի 1-ից 1970 թվականի հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածի համար, մասնակից պետությունը հայտարարում է իր մոտ եղած ցանկացած տեղեկատվություն եւ ներկայացնում է բացատրություններ, թե ինչու ինքը չի կարող ներկայացնել առավել լրիվ հայտարարություն:

Քիմիական զենքի ոչնչացման ընդհանուր ծրագրի ներկայացում

6. 3-րդ հոդվածի "ա" v կետի համաձայն ներկայացվող՝ քիմիական զենքի ոչնչացման ընդհանուր տեսակետում տրվում է մասնակից պետության քիմիական զենքի

ոչնչացման ամբողջ ազգային ծրագրի ակնարկը, եւ բերվում է տեղեկատվություն մասնակից պետության ջանքերի մասին սույն Կոնվենցիայում պարունակվող ոչնչացման

պահանջների կատարման վերաբերյալ: Այդ տեսակետից նշվում է.

ա) ոչնչացման ընդհանուր ծրագիրը՝ քիմիական զենքի տեսակների եւ օրինակելի

քանակությունների նշումով, որոնք նախատեսված են ոչնչացման համար ոչնչացման

յուրաքանչյուր տարեկան ժամանակահատվածի ընթացքում՝ ըստ քիմիական զենքի

ոչնչացման յուրաքանչյուր օբյեկտի եւ, ըստ հնարավորության, քիմիական զենքի ոչնչացման յուրաքանչյուր նախատեսվող օբյեկտով,

բ) քիմիական զենքի ոչնչացման առկա եւ նախատեսվող օբյեկտների քանակությունը, որոնք կարող են գործել ոչնչացման ժամանակահատվածում,

գ) քիմիական զենքի ոչնչացման յուրաքանչյուր գոյություն ունեցող կամ նախատեսվող օբյեկտի առնչությամբ,

i) անվանումը եւ տեղակայումը, եւ

ii) քիմիական զենքի տեսակները եւ օրինակելի քանակությունները, ինչպես նաեւ

(օրինակ՝ ՍՍ նյարդապարալիտիկ գործողության կամ ՍՍ մաշկաթարախահարույց

գործողության) ոչնչացման ենթակա քիմիական հանդերձանքի օրինակելի քանակություն,

դ) ոչնչացման օբյեկտների շահագործման համար անձնակազմի նախապատրաստման

ծրագրերը եւ նախագծերը,

ե) անվտանգության եւ արտանետվածքների առնչությամբ ազգային ստանդարտները,

որոնց պետք է համապատասխանեն ոչնչացման օբյեկտները,

զ) տեղեկատվություն քիմիական զենքի ոչնչացման նոր մեթոդների մշակման եւ գոյություն ունեցող մեթոդների կատարելագործման մասին,

է) քիմիական զենքի ոչնչացման ծախսերի նախահաշիվ, եւ

ը) ցանկացած խնդիր, որը կարող էր անբարենպաստ ազդեցություն ունենալ ոչնչացման ազգային ծրագրի վրա:

Բ. Պահպանման օբյեկտի պաշարման միջոցները եւ պահպանման օբյեկտի նախապատրաստումը

7. Ոչ ուշ, քան քիմիական զենքի իր հայտարարությունը ներկայացնելիս մասնակից պետությունը ձեռնարկում է այնպիսի միջոցառումներ, որոնք ինքը նպատակահարմար է գտնում պահպանման իր օբյեկտների պաշարման համար եւ կանխում է

իր քիմիական զենքի տեղափոխումը օբյեկտներից՝ բացառությամբ ոչնչացման նպատակով

արտահանումը:

8. Մասնակից պետությունը ապահովում է քիմիական զենքի տեղադրման այնպիսի

ընդհանուր ուրվագիծը, որն ապահովում է անխոչընդոտ մուտքը ստուգման

նպատակներով՝ 37-49-րդ կետերի համաձայն:

9. Քանի դեռ պահպանման օբյեկտը մնում է փակ օբյեկտից քիմիական զենքի ցանկացած տեղափոխման համար, բացառությամբ ոչնչացման համար դրա արտահանումը,

մասնակից պետությունը կարող է շարունակել օբյեկտում սպասարկման ստանդարտ

գործունեությունը, ներառյալ քիմիական զենքի ստանդարտ սպասարկումը, անվտանգության նկատմամբ հսկողությունը եւ ֆիզիկական պաշտպանության առնչությամբ

գործունեությունը, ինչպես նաեւ քիմիական զենքի նախապատրաստումը ոչնչացման

համար:

10. Քիմիական զենքի սպասարկման միջոցառումների թվին չի պատկանում հետեւյալը.

ա) թունավոր նյութի կամ ռազմամթերքի կորպուսների փոխարինումը,

բ) ռազմամթերքի կամ նրա մասերի կամ բաղադրիչների նախնական

բնութագրերի

փոփոխությունը:

11. Սպասարկման բոլոր միջոցառումները ենթակա են հսկողության Տեխնիկական

քարտուղարության կողմից:

Գ. Ոչնչացում

Քիմիական զենքի ոչնչացման սկզբունքները եւ մեթոդները

12. "Քիմիական զենքի ոչնչացում" նշանակում է՝ գործընթաց ըստ եռույթյան քիմիկատների անդամնալի վերածեւավորման քիմիական զենքի արտադրության համար ոչ

պիտանի վիճակի, որը անդամնալիորեն ոչ պիտանի է դարձնում օգտագործման համար

ռազմամթերքը եւ այլ սարքերը, եթե այդպիսիք կան:

13. Յուրաքանչյուր մասնակից պետություն որոշում է, թե ինչ միջոցով ինքը պետք է ոչնչացնի քիմիական զենքը, սակայն դրա համար չեն կարող կիրառվել հետեւյալ միջոցները. որեւէ ջրամբարում ջրածածկ անելը, թաղելը հողում կամ բաց

օդում վառելը: Նա ոչնչացնում է քիմիական զենքը միայն հատուկ նախատեսված եւ

համապատասխան ձեւով կառուցված ու սարքավորված օբյեկտներում:

14. Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որ քիմիական զենքի ոչնչացման իր օբյեկտները կառուցվեն եւ շահագործվեն այնպես, որ ապահովվի քիմիական զենքի ոչնչացումը, ինչպես նաեւ՝ որպեսզի ապահովի ոչնչացման ընթացքի

ստուգման հնարավորությունը՝ սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան:

Ոչնչացման կարգը

15. Քիմիական զենքի ոչնչացման կարգը հիմնվում է 1-ին եւ այլ հոդվածներում նշված պարտավորությունների վրա, ներառյալ տեղում պարբերաբար ստուգման

վերաբերյալ պարտավորությունները: Այն հաշվի է առնում մասնակից պետությունների շահագրգռվածությունը ոչնչացման ընթացքում անվտանգության չնվազեցման մեջ, ոչնչացման նախնական փուլում վստահության ամրապնդման մեջ, քիմիական զենքի ոչնչացման եւ կիրառելիության ընթացքում փորձի աստիճանաբար կուտակման մեջ՝ պաշարների փաստացի կազմից եւ քիմիական զենքի ոչնչացման ընտրված մեթոդներից

անկախ: Ոչնչացման կարգը հիմնվում է հավասարեցման սկզբունքի վրա:

16. Յուրաքանչյուր մասնակից պետության կողմից ոչնչացման նպատակի համար հայտարարվող քիմիական զենքը բաժանվում է 3 տեսակի.

Տեսակ 1. Քիմիական զենք Քիմիկատների 1-ին ցուցակի հիման վրա եւ նրա մասերն

ու բաղադրիչները,

Տեսակ 2. Մնացած բոլոր քիմիկատների հիման վրա եւ նրա մասերն ու բաղադրիչները,

Տեսակ 3. Չլիցքավորված ռազմամթերք եւ սարքավորումներ, ինչպես նաեւ քիմիական զենքի անմիջական կիրառման հետ կապված հատուկ նախատեսված սարքավորում:

17. Մասնակից պետությունը.

ա) սկսում է քիմիական զենքի 1-ին տեսակի ոչնչացումը ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան իր համար ուժի մեջ մտնելուց 2 տարի հետո եւ ավարտում է ոչնչացումը

ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց տասը տարի հետո: Մասնակից պետությունը ոչնչացնում է քիմիական զենքը ոչնչացման հետեւյալ ժամկետներին համապատասխան.

i) 1-ին փուլ. ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց երկու տարի հետո ավարտվում է ոչնչացման իր առաջին օբյեկտի ապրոբացումը: Սույն Կոնվենցիան

ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 3 տարի հետո ոչնչացվում է 1-ին տեսակի քիմիական

զենքի մեկ տոկոսից ոչ պակաս,

ii) երկրորդ փուլ. ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հինգ տարի հետո ոչնչացվում է 1-ին տեսակի քիմիական զենքի ոչ պակաս, քան 20 տոկոսը,

iii) երրորդ փուլ. ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց յոթ տարի հետո ոչնչացվում է 1-ին տեսակի քիմիական զենքի ոչ պակաս, քան 45 տոկոսը,

iv) չորրորդ փուլ. ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 10 տարի հետո ոչնչացվում է 1-ին տեսակի ամբողջ քիմիական զենքը,

բ) սկսում է 2-րդ տեսակի քիմիական զենքի ոչնչացումը ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց մեկ տարի հետո եւ ավարտում է ոչնչացումը ոչ ուշ,

քան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 5 տարի հետո: 2-րդ տեսակի քիմիական

զենքը ոչնչացվում է հավասար տարեկան աճող քանակություններով՝ ոչնչացման ողջ

Ժամանակահատվածում: Այդպիսի զենքի համեմատման հիմք է հանդիսանում քիմիկատների քաշը 2-րդ տեսակի շրջանակներում, եւ
գ) սկսում է 3-րդ տեսակի քիմիական զենքի ոչնչացումը ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց մեկ տարի հետո եւ ավարտում է ոչնչացումը ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 5 տարի հետո: 3-րդ տեսակի քիմիական զենքը ոչնչացվում է հավասար տարեկան աճող քանակություններով՝ ոչնչացման ողջ

Ժամանակահատվածում: Չլիցքավորված ռազմամթերքի եւ սարքերի համար համեմատման հիմքը արտահայտվում է հանդերձանքի նոմինալ ծավալով (m3), իսկ սարքավորման

համար՝ միավորների քանակով:

18. Բինարային քիմիական զենքի ոչնչացման առնչությամբ կիրառվում է հետևյալը.

ա) ոչնչացման կարգի նպատակների համար հիմնական բաղադրիչի հայտարարված

քանակությունը (տոննաներով), որը նախատեսված է կոնկրետ թունավոր վերջնական

արտադրանքի համար՝ հաշվարկվող ստեխիոմետրիկ հիմքով՝ ելնելով 100 տոկոսանոց

ելքից,

բ) հիմնական բաղադրիչի տվյալ քանակության ոչնչացման մասին պահանջը առաջացնում է պահանջ այլ բաղադրիչի համապատասխան քանակության ոչնչացման մասին,

որը հաշվարկվում է բինարային քիմիական ռազմամթերքի/սարքավորման համապատասխան

տեսակի բաղադրիչների փաստացի քաշային հարաբերակցության հիման վրա,

գ) եթե փաստացի քաշային հարաբերակցության հիման վրա բաղադրիչների միջեւ

հայտարարվում է այլ բաղադրիչի քանակությունը առավել, քան անհրաժեշտ է, ապա

ավելցուկի ոչնչացումը իրականացվում է ոչնչացման գործողությունների սկզբից ոչ

ուշ, քան առաջին երկու տարիների ընթացքում,

դ) աշխատանքի յուրաքանչյուր հաջորդ տարվա ավարտին մասնակից պետությունը

կարող է պահպանել մյուս հայտարարված բաղադրիչը բինարային քիմիական ռազմամթերքի/սարքավորման համապատասխան տեսակի բաղադրիչների

փաստացի քաշային

հարաբերակցության հիման վրա որոշվող քանակությամբ:

19. Բազմաբաղադրիչ քիմիական զենքի համար ոչնչացման կարգը համապատասխանում

է բինարային քիմիական զենքի համար նախատեսված ոչնչացման կարգին:

Ոչնչացման միջանկյալ ժամկետների փոփոխություն

20. Գործադիր խորհուրդը քննարկում է քիմիական զենքի ոչնչացման ընդհանուր

ծրագրերը, որոնք ներկայացվում են 3-րդ հոդվածի 1.ա v կետի եւ 6-րդ կետի համաձայն, ի թիվս այլոց, դրանց ոչնչացման կարգին համապատասխանության գնահատման

համար՝ շարադրված 15-19-րդ կետերում: Գործադիր խորհուրդը անց է կացնում խորհրդակցություններ ցանկացած մասնակից պետության հետ, որի ծրագիրը չի համապատասխանում այդպիսի կարգին, այդ ծրագիրը այդպիսի համապատասխանեցման

բերելու նպատակով:

21. Եթե մասնակից պետությունը իրենից անկախ բացառիկ հանգամանքներով համարում է, որ ինքը չի կարող դուրս գալ 1-ին տեսակի քիմիական զենքի ոչնչացման

կարգի 1-ին, 2-րդ եւ 3-րդ փուլերի համար նախատեսված ոչնչացման

մակարդակի, ապա

կարող է առաջարկել փոփոխություններ այդ մակարդակների առնչությամբ:

Այդպիսի

առաջարկը պետք է ներկայացվի ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 120 օր հետո, եւ դրանում տրվում է այդպիսի առաջարկի համար մանրամասն բացատրություն:

22. Յուրաքանչյուր մասնակից պետություն ընդունում է անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի ապահովի 1-ին տեսակի քիմիական զենքի ոչնչացումը 17.ա կետում նախատեսված ոչնչացման ժամկետներին համապատասխան՝ փոփոխված 21-րդ կետին

համապատասխան: Սակայն եթե մասնակից պետությունը համարում է, որ ինքն ի վիճակի

չի լինի ապահովելու 1-ին տեսակի քիմիական զենքի տոկոսային մասի ոչնչացումը,

որը պահանջվում է ոչնչացման միջանկյալ ժամկետի համար, կարող է խնդրել Գործադիր

խորհրդին՝ առաջարկել Համաժողովին ներկայացնել տարկետում իր պարտավորությունների կապակցությամբ այդ ժամկետի պահպանման վերաբերյալ: Այդպիսի

խնդրանքը պետք է ներկայացվի ոչ ուշ, քան ոչնչացման միջանկյալ ժամկետից 180 օր

առաջ եւ բովանդակի այդպիսի խնդրանքի համար հիմքերի մանրամասն բացատրություն եւ

մասնակից պետության ծրագրերը, որպեսզի երաշխավորի, որ ինքը ի վիճակի կլինի

կատարելու իր պարտավորությունները ոչնչացման հաջորդ միջանկյալ ժամկետի պահպանման առնչությամբ:

23. Տարկետում տրամադրելու դեպքում մասնակից պետությունը կրում է ոչնչացման միասնական պահանջները պահպանելու պարտավորություն՝ նախատեսված

ոչնչացման հաջորդ ժամկետի համար: Սույն բաժնին համապատասխան ներկայացվող

տարկետումները ոչ մի կերպ չեն փոփոխում մասնակից պետության պարտավորությունը՝

ոչնչացնել 1-ին տեսակի ողջ քիմիական զենքը ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 10 տարի հետո:

Ոչնչացման ավարտի համար ժամկետի երկարաձգում

24. Եթե մասնակից պետությունը համարում է, որ ինքը ի վիճակի չի լինի ապահովելու 1-ին տեսակի ամբողջ քիմիական զենքի ոչնչացումը ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 10 տարի հետո, կարող է Գործադիր խորհուրդ ներկայացնել խնդրանք այդպիսի քիմիական զենքի ոչնչացման ավարտի համար ժամկետի

երկարաձգման մասին: Այդպիսի խնդրանքը պետք է ներկայացվի ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 9 տարի հետո:

25. Այդ խնդրանքում շարադրվում է հետևյալը.

ա) առաջարկվող տարկետման երկարատևությունը,

բ) առաջարկվող տարկետման համար պատճառների մանրամասն բացատրությունը,

գ) ոչնչացման մանրամասն ծրագիրը առաջարկվող տարկետման ժամանակահատվածի

համար:

26. Ըստ խնդրանքի՝ որոշումը ընդունվում է Համաժողովի կողմից՝ նրա հաջորդ նիստում, Գործադիր խորհրդի առաջարկությամբ: Ցանկացած տարկետում բերվում է

անհրաժեշտ մինիմումի, սակայն մասնակից պետության կողմից ողջ քիմիական զենքի՝

իր ոչնչացման ավարտի ժամկետը ոչ մի դեպքում չի գերազանցում սույն Կոնվենցիան

ուժի մեջ մտնելուց հետո 15 տարին: Գործադիր խորհուրդը որոշում է տարկետման ներկայացման պայմանները, ներառյալ ստուգման կոնկրետ միջոցները, որոնք ինքը

համարում է անհրաժեշտ, ինչպես նաև ստուգման կոնկրետ գործողությունները, որոնք

պետք է ձեռք առնվեն մասնակից պետության կողմից՝ ոչնչացման իր ծրագրի հետ կապված խնդիրները լուծելու համար: Ստուգման ծախսերը տարկետման ժամանակահատվածում բաշխվում են 4-րդ հոդվածի 16-րդ կետին

համապատասխան:

27. Տարկետում տրամադրելիս մասնակից պետությունը համապատասխան միջոցներ է

ձեռնարկում հետագա բոլոր ժամկետների պահպանման նպատակով:

28. Մասնակից պետությունը շարունակում է ներկայացնել ոչնչացման մանրամասն

տարեկան ծրագրեր՝ 29-րդ կետին համապատասխան, եւ տարեկան զեկույցներ՝ 1-ին

տեսակի քիմիական զենքի ոչնչացման մասին 36-րդ կետին համապատասխան, մինչեւ 1-ին

տեսակի ամբողջ քիմիական զենքի ոչնչացումը: Բացի դա՝ ոչ ուշ, քան տարկետման

ժամկետի յուրաքանչյուր 90 օրվա ավարտին մասնակից պետությունը Գործադիր խորհրդին է ներկայացնում ոչնչացման իր գործունեության մասին հաշվետվություն:

Գործադիր խորհուրդը քննարկում է ոչնչացման ավարտի առաջընթացը եւ ընդունում է

անհրաժեշտ միջոցներ այդ առաջընթացի փաստաթղթավորման ուղղությամբ: Տարկետման

ժամանակահատվածում ոչնչացման գործունեությանը վերաբերող ամբողջ տեղեկատվությունը համապատասխան խնդրանքի առկայության դեպքում

մասնակից

պետություններին ներկայացվում է Գործադիր խորհրդի կողմից:

Ոչնչացման տարեկան մանրամասն ծրագրեր

29. Ոչնչացման տարեկան մանրամասն ծրագրերը ներկայացվում են Տեխնիկական քարտուղարությանը ոչ ուշ, քան ոչնչացման յուրաքանչյուր ժամանակահատվածի սկզբից

60 օր առաջ՝ համաձայն 4-րդ հոդվածի 7.ա կետի, եւ դրանցում նշվում են.

ա) ոչնչացման յուրաքանչյուր օբյեկտում ոչնչացման ենթակա յուրաքանչյուր քիմիական զենքի կոնկրետ տեսակի քանակությունը եւ քիմիական զենքի յուրաքանչյուր

տեսակի ոչնչացման վերջնական ժամկետները,

բ) ոչնչացման յուրաքանչյուր օբյեկտի առնչությամբ տեղի մանրամասն գծագիրը

եւ դրանից շուտ ներկայացված գծագրերում ցանկացած փոփոխություն, եւ

գ) ըստ քիմիական զենքի ոչնչացման յուրաքանչյուր օբյեկտի գործունեության՝ մանրամասն աղյուսակ հաջորդ տարվա համար՝ նշելով այն ժամկետը, որն անհրաժեշտ է

օբյեկտի նախագծման, կառուցման կամ վերափոխման համար, սարքավորման մոնտաժի,

ստուգման համար եւ օպերատորների պատրաստման, քիմիական զենքի յուրաքանչյուր

տեսակի ոչնչացման գործողությունների, ինչպես նաեւ պարապուրդի նախատեսված

ժամանակահատվածների համար:

30. Մասնակից պետությունը ներկայացնում է քիմիական զենքի ոչնչացման իր օբյեկտներից յուրաքանչյուրի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն օբյեկտի

մասին՝ Տեխնիկական քարտուղարությանը օբյեկտում օգտագործման համար տեսչական

ստուգումների նախնական ընթացակարգերի մշակման գործում աջակցելու նպատակով:

31. Մանրամասն տեղեկատվությունը օբյեկտի մասին, ըստ քիմիական զենքի ոչնչացման յուրաքանչյուր օբյեկտի, ներառում է հետեւյալը.

ա) անվանումը, հասցեն եւ տեղը,

բ) օբյեկտի մանրամասն գծագրերը՝ բացատրություններով,

գ) օբյեկտի աշխատանքային գծագրերը, տեխնոլոգիական գծագրերը եւ խողովակաշարային կապի ու սարքային զինման աշխատանքային գծագրերը,

դ) մանրամասն տեխնիկական նկարագրերը, ներառյալ սարքերի աշխատանքային

գծագրերը եւ առանձնահատկությունները, սարքավորումների առնչությամբ, որոնք

պահանջվում են՝ ռազմամթերքից, սարքերից եւ բեռնարկղերից քիմիական լիցքը հանելու համար, էվակուացված քիմիական հանդերձանքի ժամանակավոր պահպանման

համար, թունավոր նյութի ոչնչացման համար, ռազմամթերքի, սարքերի եւ բեռնարկղերի

ոչնչացման համար,

ե) ոչնչացման ընթացքի մանրամասն տեխնիկական նկարագրությունները, ներառյալ

սյուրթերի շարժման արագությունը, ջերմությունը եւ ճնշումը, ինչպես նաեւ ոչնչացման հաշվարկային արդյունավետությունը,

գ) ըստ քիմիական գեւքի յուրաքանչյուր տեսակի՝ հաշվարկային հզորությունը,

է) ոչնչացման արտադրանքի եւ դրանց վերջնական հեռացման մեթոդի մանրամասն

նկարագրությունը,

ը) սույն Կոնվենցիային համապատասխան տեսչական ստուգումների հեշտացման

միջոցների մանրամասն տեխնիկական նկարագրերը,

թ) ոչնչացման օբյեկտում պահպանման յուրաքանչյուր ժամանակավոր տարածքի

մանրամասն նկարագրությունը, որը կօգտագործվի քիմիական գեւքը

անմիջապես

ոչնչացման օբյեկտ հասցնելու համար, ներառյալ օբյեկտի եւ տեղի գծագրերը, ինչպես

նաեւ պահեստային տարողունակության մասին տեղեկատվությունը՝ ըստ քիմիական գեւքի

կոնկրետ տեսակի, որը ենթակա է ոչնչացման օբյեկտում,

ժ) օբյեկտում գործող անվտանգության միջոցների եւ բժշկասանիտարական միջոցների մանրամասն նկարագրությունը,

ժա) տեսուչների համար բնակելի եւ աշխատանքային վայրերի մանրամասն նկարագրությունը, եւ

ժբ) միջազգային ստուգման առաջարկվող միջոցները:

32. Ըստ քիմիական գեւքի ոչնչացման՝ յուրաքանչյուր իր օբյեկտի վերաբերյալ մասնակից պետությունը ներկայացնում է ձեռնարկության շահագործման հրահանգները,

անվտանգության տեխնիկայի կանոնները եւ բժշկասանիտարական սպասարկման ծրագրերը,

լաբորատորիաների շահագործման հրահանգները եւ որակի ապահովման ու հսկողության

հրահանգները, ինչպես նաեւ ստացված էկոլոգիական լիցենզիաներ՝ պայմանով, որ

դրանք չեն մտնում ավելի վաղ ներկայացված սյուրթերի կազմի մեջ:

33. Մասնակից պետությունը անհապաղ տեղեկացնում է Տեխնիկական քարտուղարությանը յուրաքանչյուր միջոցառման մասին, որը կարող է անդրադառնալ

ոչնչացման օբյեկտներում տեսչական ստուգումների գործունեության վրա:

34. Տեղեկատվության տրամադրման ժամկետները, նշված 30-32-րդ կետերում, քննարկվում եւ հաստատվում են Համաժողովի կողմից՝ 8-րդ հոդվածի 21 i կետի համաձայն:

35. Ըստ օբյեկտի մանրամասն տեղեկատվությունը ուսումնասիրելուց հետո ոչնչացման յուրաքանչյուր օբյեկտի առնչությամբ Տեխնիկական քարտուղարությունը

անհրաժեշտության դեպքում խորհրդակցություններ է անցկացնում համապատասխան

մասնակից պետության հետ, որպեսզի քիմիական գեւքի ոչնչացման նրա օբյեկտների

կառուցվածքը երաշխավորի քիմիական գեւքի ոչնչացումը, որպեսզի նախօրոք հնարավոր

լինի նախատեսել ստուգման միջոցառումների հնարավոր կիրառման միջոցները եւ

ապահովել ստուգման միջոցառումների կիրառման համատեղելիությունը օբյեկտի պատշաճ շահագործման հետ, եւ որպեսզի օբյեկտի շահագործումը թույլատրի համապատասխան ստուգում:

Ոչնչացման մասին տարեկան զեկույցներ

36. Քիմիական զեկույցի ոչնչացման ծրագրերի իրականացման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է Տեխնիկական քարտուղարությանը 4-րդ հոդվածի 7.բ կետի համաձայն՝ ոչ ուշ, քան ոչնչացման տարեկան ժամանակահատվածի ավարտից 60 օր հետո, եւ դրանում նշվում է քիմիական զեկույցի փաստացի քանակությունը, որը ոչնչացվել է ոչնչացման յուրաքանչյուր օբյեկտում նախորդ տարվա ընթացքում: Համապատասխան դեպքերում անհրաժեշտ է նշել այն պատճառները, որոնք թույլ չեն տվել հասնել ոչնչացման նպատակներին:

Դ. Ստուգում

Տեղում տեսչական ստուգման միջոցով քիմիական զեկույցի հայտարարությունների ստուգում

37. Քիմիական զեկույցի հայտարարությունների ստուգման նպատակը այն է, որ տեղում տեսչական ստուգման միջոցով հաստատվի համապատասխան հայտարարությունների

ճշգրտությունը, որոնք ներկայացված են 3-րդ հոդվածին համապատասխան:

38. Տեսուչները անց են կացնում այդպիսի ստուգում անմիջապես հայտարարությունը ներկայացնելուց հետո: Նրանք, ի թիվս այլոց, ստուգում են քիմիկատների քանակությունը եւ բնույթը, ռազմամթերքի, սարքերի եւ այլ սարքավորումների տեսակներն ու քանակությունը:

39. Պահպանման յուրաքանչյուր օբյեկտում քիմիական զեկույցի գույքագրման հստակությունը հեշտացնելու համար տեսուչները օգտագործում են համապատասխան

համաձայնեցված կապարակնիքներ, պիտակավորում եւ գույքագրման հսկողության այլ

ընթացակարգեր:

40. Գույքագրման ընթացքում տեսուչները սահմանում են այնպիսի համաձայնեցված

կապարակնիքներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել որեւէ պաշարի արտահանման

փաստերը հստակորեն ամրագրելու համար, ինչպես նաեւ ապահովել պահպանման օբյեկտի

պաշարումը գույքագրման ընթացքում: Գույքագրման ավարտից հետո այդպիսի կապարակնիքները հանվում են, եթե այլ պայմանավորվածություն չկա:

Պահպանման օբյեկտների պարբերաբար ստուգում

41. Պահպանման օբյեկտների պարբերաբար ստուգման նպատակը այն է, որ ապահովվի այդպիսի օբյեկտից քիմիական զենքի որեւէ չհայտնաբերված դուրս հանման անհնարիությունը:

42. Պարբերաբար ստուգումը սկսվում է քիմիական զենքի հայտարարությունը ներկայացնելուց հետո որքան հնարավոր է շուտ եւ տեւում է մինչեւ պահպանման օբյեկտից ամբողջ քիմիական զենքի լրիվ դուրս հանումը: Այն իրականացվում է օբյեկտի վերաբերյալ համաձայնագրին համապատասխան՝ համադրված տեղում տեսչական

ստուգման եւ տեղում տեղադրվող սարքերի միջոցով դիտարկումների հետ:

43. Պահպանման օբյեկտից քիմիական զենքը դուրս հանելուց հետո Տեխնիկական

քարտուղարությունը հաստատում է մասնակից պետության համապատասխան հայտարարությունը: Այդպիսի հաստատումից հետո Տեխնիկական

քարտուղարությունը

դադարեցնում է պահպանման օբյեկտի պարբերաբար ստուգումները եւ անհապաղ հանում է

տեսուչների կողմից տեղադրված ցանկացած հսկողական սարք:

Տեսչական ստուգում եւ այցելություններ

44. Պահպանման կոնկրետ օբյեկտը, որը ենթակա է տեսչական ստուգման, ընտրվում

է Տեխնիկական քարտուղարության կողմից այնպես, որ բացառվի օբյեկտի տեսչական

ստուգման ճշգրիտ ժամանակը: Տեղում պարբերաբար տեսչական ստուգումների հաճախականության որոշման հիմնական սկզբունքները մշակվում են

Տեխնիկական

քարտուղարության կողմից՝ հաշվի առնելով 8-րդ հոդվածի 21 i կետի համաձայն Յամաժողովի կողմից քննարկման եւ հաստատման ենթակա բանաձեւերը:

45. Տեխնիկական քարտուղարությունը ծանուցում է տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությանը տեսչական ստուգում անցկացնելու կամ պահպանման

օբյեկտ այցելելու իր որոշման մասին տեսչական ստուգման կամ այցելության նպատակով տեսչական խմբի օբյեկտ նախատեսվող ժամանումից 48 ժամ առաջ:

Հրատապ

խնդիրները կարգավորելու համար տեսչական ստուգումների կամ այցելությունների

դեպքում այդ ժամկետը կարող է կրճատվել: Տեխնիկական քարտուղարությունը նշում է

տեսչական ստուգման կամ այցելության նպատակը:

46. Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը իրականացնում է

ցանկացած անհրաժեշտ նախապատրաստում տեսուչների ժամանման համար եւ ապահովում է

նրանց անհապաղ տեղափոխումը մուտքի կետից դեպի պահպանման օբյեկտ:

Օբյեկտի

վերաբերյալ համաձայնագրում նշվում են տեսուչների համար վարչական ընթացակարգերը:

47. Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը տեսչական խմբին

տեսչական ստուգում անցկացնելու նպատակով քիմիական զենքի պահպանման օբյեկտ

ժամանելուն պես ներկայացնում է օբյեկտի մասին հետեւյալ տվյալները.

ա) պահեստային շենքերի եւ պահպանման տարածքների քանակությունը,

բ) ըստ յուրաքանչյուր պահեստային շենքի եւ պահպանման տարածքի՝ տեսակը եւ

նույնացման համարը կամ նշումը տեղի գծագրի վրա նշումով, եւ

գ) ըստ յուրաքանչյուր պահեստային շենքի եւ օբյեկտում պահպանման տարածքի՝

քիմիական զենքի յուրաքանչյուր կոնկրետ տեսակի միավորների քանակը, իսկ բեռնարկղերի առնչությամբ, որոնք չեն հանդիսանում բինարային ռազմամթերքի բաղադրիչներ՝ յուրաքանչյուր բեռնարկղում քիմիական հանդերձանքի փաստացի քանակությունը:

48. Հատկացված ժամանակահատվածի շրջանակներում գույքագրում անցկացնելիս

տեսուչները իրավունք ունեն.

ա) օգտագործել տեսչության հետեւյալ մեթոդներից յուրաքանչյուրը.

i) օբյեկտում պահվող ամբողջ քիմիական զենքի գույքագրային ստուգում,

ii) կոնկրետ շենքերում կամ օբյեկտի կոնկրետ տարածքներում պահվող ամբողջ քիմիական զենքի գույքագրային ստուգում՝ ըստ տեսուչների ընտրության, կամ

iii) օբյեկտում պահվող ամբողջ քիմիական զենքի մեկ կամ մի քանի տեսակների գույքագրային ստուգում՝ ըստ տեսուչների ընտրության, եւ

բ) համեմատել գույքագրվող բոլոր առարկաները համաձայնեցված հաշվառման փաստաթղթերով:

49. Օբյեկտի վերաբերյալ համաձայնագրերին համապատասխան՝ տեսուչները.

ա) ունեն անարգել մուտք դեպի պահպանման օբյեկտների բոլոր մասերը, ներառյալ

դրանցում եղած ցանկացած ռազմամթերքը, սարքերը, տարողությունները կամ այլ բեռնարկղերը: Իրենց գործունեության իրականացման ժամանակ տեսուչները պահպանում

են օբյեկտում անվտանգության կանոնները:

Տեսչական ստուգման ենթակա առարկաները

ընտրվում են տեսուչների կողմից, եւ

բ) իրավունք ունեն քիմիական զենքի պահպանման օբյեկտի առաջին եւ յուրաքանչյուր հաջորդ տեսչական ստուգման ժամանակ նշել այն ռազմամթերքը, սարքերը եւ բեռնարկղերը, որոնցից պետք է ընտրվեն նմուշներ, պիտակավորել այդպիսի ռազմամթերքը, սարքերը եւ բեռնարկղերը հատուկ պիտակով, որը թույլ կտա

հայտնաբերել այդ պիտակը պոկելու կամ փոփոխելու յուրաքանչյուր փորձ:

Նմուշների

ընտրությունը պիտակավորված առարկայից իրականացվում է քիմիական զենքի պահպանման

օբյեկտում կամ քիմիական զենքի ոչնչացման օբյեկտում՝ հնարավորինս կարճ ժամկետներում՝ համաձայն ոչնչացման համապատասխան ծրագրերի եւ յուրաքանչյուր

դեպքում ոչ ուշ, քան ոչնչացման գործողությունների ավարտից առաջ:

Քիմիական զենքի ոչնչացման պարբերաբար ստուգում

50. Քիմիական զենքի ոչնչացման ստուգման նպատակը հետեւյալն է.

ա) հաստատել ոչնչացման ենթակա քիմիական զենքի քանակությունը եւ

ընույթը, եւ

բ) հաստատել, որ այդ պաշարները ոչնչացված են:

51. Սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո՝ առաջին 390 օրվա ընթացքում, քիմիական զենքի ոչնչացման գործողությունները կարգավորվում են ստուգման անցումային միջոցառումներով: Այդպիսի միջոցառումները, ներառյալ օբյեկտի վերաբերյալ անցումային համաձայնագիրը, տեղում տեսչական ստուգման եւ տեղում

տեղադրվող սարքերի օգնությամբ դիտարկման միջոցով ստուգման մասին դրույթները,

ինչպես նաեւ այդ միջոցառումների իրականացման ժամկետները

համաձայնեցվում են

Կազմակերպության եւ տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության միջեւ:

Այդ միջոցառումները հաստատվում են Գործադիր խորհրդի կողմից ոչ ուշ, քան մասնակից պետության համար սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 60 օր հետո՝ հաշվի առնելով Տեխնիկական քարտուղարության առաջարկությունները, որոնք նախապատրաստվել են օբյեկտի մասին մանրամասն տեղեկատվության գնահատման հիման

վրա, որը ներկայացվում է 31-րդ կետին համապատասխան, ինչպես նաեւ օբյեկտի այցելության հիման վրա: Գործադիր խորհուրդը իր առաջին նիստի ժամանակ որոշում է

ստուգման այդպիսի անցումային միջոցառումների համար հիմնական

սկզբունքները

առաջարկությունների հիման վրա, որոնք ենթակա են Յամաժոդովի կողմից

քննարկման

եւ հաստատման՝ համաձայն 8-րդ հոդվածի 21 i կետի: Ստուգման անցումային միջոցառումները հաշվարկված են ողջ անցումային շրջանի ընթացքում քիմիական զենքի

ոչնչացման իրականացման ստուգման 50-րդ կետում շարադրված նպատակներին համապատասխան եւ ոչնչացման ընթացիկ գործողությունների համար

խոչընդոտների

ստեղծման անթույլատրելիության համար:

52. 53-61-րդ կետերի դրույթները կիրառվում են քիմիական զենքի ոչնչացման գործողությունների նկատմամբ, որոնք պետք է սկսվեն ոչ շուտ, քան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 390 օր հետո:

53. Սույն Կոնվենցիայի եւ ոչնչացման օբյեկտի մասին մանրամասն տեղեկատվության հիման վրա, ինչպես նաեւ, կախված կոնկրետ դեպքից, ելնելով նախկին տեսչական ստուգումներից, Տեխնիկական քարտուղարությունը նախապատրաստում

է ոչնչացման յուրաքանչյուր օբյեկտում քիմիական զենքի ոչնչացման տեսչական ստուգման ծրագրի նախագիծը: Այդ նախագիծը կազմվում է տրամադրվում է արձանագրություն տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությանը ոչ պակաս,

քան 270 օր առաջ այն բանից, երբ այդ օբյեկտը անցնում է ոչնչացման գործողությունների՝ համաձայն սույն Կոնվենցիայի: Ցանկացած

տարածայնություն

Տեխնիկական քարտուղարության եւ տեսչական ստուգման ենթարկվող մասնակից

պետության միջեւ պետք է կարգավորվի խորհրդակցությունների միջոցով:

Ցանկացած

չլուծված հարց փոխանցվում է Գործադիր խորհրդին համապատասխան միջոցառումների

նախաձեռնման համար՝ սույն Կոնվենցիայի լրիվ իրականացման նպատակով:

54. Տեխնիկական քարտուղարությունը իրականացնում է քիմիական գենքի ոչնչացման յուրաքանչյուր օբյեկտի նախնական այցելություն ոչ պակաս, քան 240 օր

առաջ այն բանից, երբ յուրաքանչյուր օբյեկտ անցնում է, սույն Կոնվենցիայի համաձայն, ոչնչացման գործողությունների, որպեսզի ստանա հնարավորություն՝ ծանոթանալու օբյեկտին եւ գնահատելու տեսչական ստուգման ծրագրի համապատասխանությունը:

55. Գոյություն ունեցող օբյեկտի դեպքում, որտեղ արդեն սկսվել են քիմիական գենքի ոչնչացման գործողությունները, տեսչական ստուգման ենթարկվող մասնակից

պետությունից չի պահանջվում օբյեկտի ապագագացում մինչեւ Տեխնիկական քարտուղարության կողմից նախնական այցելությունը: Այցելության տեւողությունը չի

գերազանցում 5 օրը, իսկ այցելուների թիվը չի գերազանցում 15 հոգին:

56. Ստուգման համաձայնեցված մանրամասն ծրագրերը Տեխնիկական քարտուղարության համապատասխան առաջարկությամբ ուղարկվում են Գործադիր խորհրդի

քննարկմանը: Գործադիր խորհուրդը քննարկում է իրենց համաձայնության առարկայի

վերաբերյալ ծրագրերը ստուգման նպատակներին եւ սույն Կոնվենցիայով վերցված

պարտավորությունների համապատասխան: Այդպիսի քննարկումը նույնպես պետք է

հաստատի ոչնչացման ստուգման ծրագրերի համապատասխանությունը ստուգման

նպատակներին, ինչպես նաեւ դրանց արդյունավետությունը եւ պրակտիկ իրականացումը:

Քննարկումը պետք է ավարտվի ոչ պակաս, քան ոչնչացման ժամանակահատվածի սկզբից

180 օր առաջ:

57. Գործադիր խորհրդի յուրաքանչյուր անդամ կարող է խորհրդակցել Տեխնիկական

քարտուղարության հետ ցանկացած հարցով, որը վերաբերում է ստուգման ծրագրի

համապատասխանությանը: Եթե Գործադիր խորհրդի անդամներից ոչ մեկն առարկություն

չունի, ապա այդ ծրագիրը կյանքի է կոչվում:

58. Ցանկացած դժվարության առաջացման դեպքում Գործադիր խորհուրդը խորհրդակցությունների մեջ է մտնում մասնակից պետության հետ՝ դրանց վերացման

կապակցությամբ: Եթե որեւէ դժվարություն մտնում է չհաղթահարված, ապա դա փոխանցվում է Համաժողովին:

59. Օբյեկտի վերաբերյալ մանրամասն համաձայնագրերում քիմիական գենքի ոչնչացման օբյեկտների համար, հաշվի առնելով ոչնչացման օբյեկտի կոնկրետ առանձնահատկությունները եւ դրա շահագործման ռեժիմը, նշվում է հետեւյալը.

ա) տեղում տեսչական ստուգումների մանրամասն ընթացակարգերը, եւ

բ) ստուգման մասին դրույթները տեղում տեղադրվող սարքերի օգնությամբ դիտարկումների եւ տեսուչների ֆիզիկական ներկայության միջոցով:

60. Տեսուչներին տրվում է հնարավորություն քիմիական զենքի ոչնչացման յուրաքանչյուր օբյեկտ գնալ ոչ պակաս, քան օբյեկտում ոչնչացման սկզբից 60 օր առաջ՝ սույն Կոնվենցիային համաձայն: Այդպիսի հնարավորությունը տրվում է տեսչական ստուգման սարքավորման սարքերի նկատմամբ հսկողության, այդ սարքավորման ստուգման, դրա գործունեության փորձարկման, ինչպես նաեւ օբյեկտի վերջնական ինժեներական ուսումնասիրության նպատակներով: Գոյություն ունեցող օբյեկտի դեպքում, որտեղ արդեն սկսված են քիմիական զենքի ոչնչացման գործողությունները, ոչնչացման գործողությունները դադարում են պահանջվող մինիմալ ժամանակահատվածի համար, որը չի գերազանցում 60 օրը՝ տեսչական ստուգման սարքավորման փորձարկման եւ տեղադրման նպատակով: Կախված փորձարկումների արդյունքներից եւ ուսումնասիրությունից՝ մասնակից պետությունը եւ Տեխնիկական քարտուղարությունը կարող են համաձայնեցնել օբյեկտի վերաբերյալ մանրամասն համաձայնագրի փոփոխությունները եւ լրացումները այդպիսի օբյեկտի վերաբերյալ:

61. Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը գրավոր ծանուցում է տեսչական խմբի ղեկավարին քիմիական զենքի ոչնչացման օբյեկտից քիմիական զենքի յուրաքանչյուր խմբաքանակի ոչնչացման այդպիսի օբյեկտ դուրս բերելու մասին ոչ պակաս, քան 4 ժամ առաջ: Այդ ծանուցման մեջ նշվում են պահպանման օբյեկտի անվանումը, դուրս բերման եւ ժամանման նախատեսվող ժամանակը, տեղափոխվող քիմիական զենքի կոնկրետ տեսակները եւ քանակը, որեւէ պիտակավորված առարկայի դուրս բերման փաստը, ինչպես նաեւ տեղափոխման միջոցը: Այդ ծանուցման մեջ կարող է ներառվել ծանուցում ավելի քան մեկ տեղափոխման մասին: Տեսչական խմբի ղեկավարը գրավոր անհապաղ ծանուցվում է այդ տեղեկատվության մեջ ցանկացած փոփոխության մասին:

Քիմիական զենքի պահպանման օբյեկտները քիմիական զենքի ոչնչացման օբյեկտներում

62. Տեսուչները ստուգում են քիմիական զենք բերելը ոչնչացման օբյեկտ եւ այդ քիմիական զենքի պահպանումը: Տեսուչները ստուգում են յուրաքանչյուր խմբաքանակի գույքագրային կազմը՝ համաձայնեցված միջոցառումների օգտագործմամբ, որոնք համապատասխանում են օբյեկտում գործող անվտանգության տեխնիկայի կանոններին, մինչեւ քիմիական զենքի ոչնչացումը: Նրանք օգտագործում են համապատասխան համաձայնեցված կապարակնիքներ, պիտակավորում եւ գույքագրային հսկողության այլ ընթացակարգեր՝ մինչեւ ոչնչացումը քիմիական զենքի ճշգրիտ գույքագրումը

հեշտացնելու համար:

63. Հենց որ քիմիական զենքը հասնում է, եւ քանի դեռ այն գտնվում է քիմիական զենքի պահպանման օբյեկտում, որը տեղադրված է քիմիական զենքի ոչնչացման օբյեկտներում, պահպանման այդ օբյեկտները ենթակա են պարբերաբար

ստուգման՝ համաձայն օբյեկտի վերաբերյալ համապատասխան համաձայնագրերի:

64. Ոչնչացման ակտիվ փուլի վերջում տեսուչները կազմում են այն քիմիական զենքի գույքագրման ցանկը, որը դուրս է բերվել պահպանման օբյեկտից՝ ոչնչացման

համար: Նրանք ստուգում են մնացած քիմիական զենքի գույքագրային կազմի ճշգրտությունը՝ օգտագործելով գույքագրման հսկողության ընթացակարգերը, որոնք

նշված են 62-րդ կետում:

Քիմիական զենքի ոչնչացման օբյեկտներում տեղում պարբերաբար ստուգման միջոցները

65. Տեսուչներին հնարավորություն է տրվում այդպիսի օբյեկտներում տեղակայված քիմիական զենքի ոչնչացման օբյեկտներում եւ քիմիական զենքի պահպանման օբյեկտներում իրենց գործունեությունն իրականացնել ոչնչացման ամբողջ

ակտիվ փուլի ընթացքում:

66. Քիմիական զենքի ոչնչացման յուրաքանչյուր օբյեկտում, ստանալու համար վստահություն քիմիական զենքի ուղղվածությունը չփոխելու մեջ եւ ոչնչացման գործընթացի ավարտի մեջ, տեսուչները իրավունք ունեն իրենց ֆիզիկական ներկայության եւ տեղում տեղադրվող սարքերի օգնությամբ դիտարկումների միջոցով

ստուգել.

ա) օբյեկտում քիմիական զենքի ընդունումը,

բ) քիմիական զենքի ժամանակավոր տարածքը եւ այդ տարածքում պահվող քիմիական

զենքի կոնկրետ տեսակը եւ քանակությունը,

գ) ոչնչացող քիմիական զենքի կոնկրետ տեսակը եւ քանակը,

դ) ոչնչացման գործընթացը,

ե) ոչնչացման վերջնական արտադրանքը,

զ) մետաղական մասերի դեֆորմացումը, եւ

է) ոչնչացման գործընթացի եւ օբյեկտի ամբողջականությունը՝ ընդհանուր առմամբ:

67. Տեսուչները իրավունք ունեն նմուշների ընտրության նպատակների համար պիտակավորել ռազմամթերքը, սարքերը եւ բեռնարկերը, որոնք գտնվում են քիմիական

զենքի ոչնչացման օբյեկտների պահպանման ժամանակավոր տարածքներում:

68. Այն չափով, որ չափով այն համապատասխանում է տեսչական ստուգման պահանջներին, տեսչական ստուգման նպատակների համար օգտագործվում է օբյեկտի

նորմալ շահագործման ժամանակ ստացված տեղեկատվությունը՝ տվյալների իսկության

համապատասխան որոշմամբ:

69. Ոչնչացման յուրաքանչյուր փուլի ավարտից հետո Տեխնիկական

քարտուղարությունը հաստատում է մասնակից պետության հայտարարությունը սահմանված

քանակության քիմիական զենքի ոչնչացման ավարտի մասին:

70. Օբյեկտի վերաբերյալ համաձայնագրերին համապատասխան՝ տեսուչները.

ա) ունեն անարգել մուտք դեպի քիմիական զենքի ոչնչացման օբյեկտների եւ քիմիական զենքի պահպանման օբյեկտների բոլոր մասերը, որոնք տեղակայված են

այդպիսի օբյեկտներում, ներառյալ ցանկացած ռազմամթերք, սարք եւ տարողունակություն կամ դրանցում գտնվող այլ բեռնարկ: Տեսչական ստուգման ենթակա

առարկաները ընտրվում են տեսուչների կողմից՝ ստուգման ծրագրին համապատասխան՝

համաձայնեցված մասնակից պետության հետ եւ համաձայնեցված Գործադիր խորհրդի հետ,

բ) ոչնչացման գործընթացի ընթացքում հսկողություն են իրականացնում նմուշների պարբերաբար անալիզի նկատմամբ, եւ

գ) անհրաժեշտության դեպքում ստանում են նմուշներ, որոնք ընտրվել են ըստ իրենց ցանկության՝ ոչնչացման օբյեկտում կամ դրան կից պահպանման օբյեկտում

ցանկացած սարքից, տարողունակությունից եւ այլ բեռնարկից:

Մաս 4 (Բ)

Հին քիմիական զենքը եւ թողնված քիմիական զենքը

Ա. Ընդհանուր դրույթներ

1. Հին քիմիական զենքը ոչնչացվում է, ինչպես նախատեսված է Բ բաժնում:
2. Թողնված քիմիական զենքը, այդ թվում նաեւ այն, որը համապատասխանում է

2-րդ հոդվածի 5.բ կետում պարունակվող սահմանմանը, ոչնչացվում է ինչպես նախատեսված է Գ բաժնում:

Բ. Ռեժիմ հին քիմիական զենքի համար

3. Մասնակից պետությունը, որն իր տարածքում ունի հին քիմիական զենք, ինչպես սահմանված է 2-րդ հոդվածի 5.ա կետում, ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան իր

համար ուժի մեջ մտնելուց 30 օր հետո Տեխնիկական քարտուղարությանն է ներկայացնում ամբողջ եղած տեղեկատվությունը, ներառյալ, ըստ հնարավորության,

այդ հին քիմիական զենքի գտնվելու վայրը, տեսակը, քանակը եւ ներկայիս վիճակը:

Հին քիմիական զենքի դեպքում, ինչպես սահմանված է 2-րդ հոդվածի 5.բ կետում,

մասնակից պետությունը Տեխնիկական քարտուղարությանն է ներկայացնում հայտարարություն՝ համաձայն 3-րդ հոդվածի 1.բ i կետի, ըստ հնարավորության, տեղեկատվություն՝ նշված սույն Հավելվածի 4 Ա մասի 1-3-րդ կետերում:

4. Մասնակից պետությունը, որը իր համար սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո հայտնաբերել է հին քիմիական զենք, Տեխնիկական քարտուղարությանն

է ներկայացնում 3-րդ կետում նշված տեղեկատվություն հին քիմիական զենքը

հայտնաբերելուց ոչ ուշ, քան 180 օր հետո:

5. Տեխնիկական քարտուղարությունը անց է կացնում նախնական տեսչական ստուգում եւ հետագա բոլոր տեսչական ստուգումները, որոնք կարող են անհրաժեշտ

լինել տեղեկատվության ստուգման համար, որը ներկայացվում է 3-րդ եւ 4-րդ կետերի

համաձայն, եւ, մասնավորապես, քիմիական գենքի համապատասխանության հաստատման

համար հին քիմիական գենքին, ինչպես նշված է 2-րդ հոդվածի 5-րդ կետում: 1925 եւ

1946 թվականների ժամանակահատվածում արտադրված քիմիական գենքի պիտանության

աստիճանի որոշման հիմնական սկզբունքները քննարկվում եւ հաստատվում են Յամաժոդովի կողմից՝ համաձայն 8-րդ հոդվածի 21 i կետի:

6. Մասնակից պետությունը դիտում է հին քիմիական գենքը, որը, ինչպես հաստատվել է Տեխնիկական քարտուղարության կողմից, համապատասխանում է 2-րդ

հոդվածի 5.ա կետում պարունակվող սահմանմանը, որպես թունավոր արտանետվածք: Նա

տեղեկացնում է Տեխնիկական քարտուղարությանը այդպիսի քիմիական գենքի այլ կերպ

ոչնչացման կամ հեռացման ձեռնարկվող քայլերի մասին՝ որպես թունավոր արտանետվածքի, իր ազգային օրենսդրության համաձայն:

7. Հաշվի առնելով 3-5-րդ կետերը՝ մասնակից պետությունը ոչնչացնում է հին քիմիական գենքը, ինչպես հաստատվել է Տեխնիկական քարտուղարության կողմից,

համապատասխան 2-րդ հոդվածի 5.բ կետում նշված սահմանմանը, 4-րդ հոդվածին եւ

սույն Հավելվածի 4 Ա մասին համապատասխան: Սակայն, մասնակից պետության խնդրանքով, Գործադիր խորհուրդը կարող է փոփոխություններ կատարել այդ քիմիական

գենքի ոչնչացման առավելագույն ժամկետների վերաբերյալ դրույթներում, եթե պարզի,

որ զուգորդված չէր լինի սույն Կոնվենցիայի առարկայի եւ նպատակի համար ռիսկի

հետ:

Գ. Ռեժիմ՝ թողնված քիմիական գենքի համար

8. Մասնակից պետությունը, որի տարածքում կա թողնված քիմիական գենք (այսուհետ՝ տարածքային մասնակից պետություն), ոչ ուշ, քան իր համար սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 30 օր հետո Տեխնիկական քարտուղարությանն է ներկայացնում ամբողջ եղած համապատասխան տեղեկատվությունը, որը վերաբերում է

թողնված քիմիական գենքին: Այդ տեղեկատվությունը, ըստ հնարավորության, ներառում

է թողնված քիմիական գենքի գտնվելու վայրը, տեսակը, քանակը եւ ներկայիս վիճակը,

ինչպես նաեւ տեղեկություններ թողնելու վերաբերյալ:

9. Սույն Կոնվենցիան իր համար ուժի մեջ մտնելուց հետո քիմիական գենքը

հայտնաբերած մասնակից պետությունը ոչ ուշ, քան այդպիսի հայտնաբերումից 180 օր

հետո Տեխնիկական քարտուղարությանն է ներկայացնում եղած ամբողջ տեղեկատվությունը, որը վերաբերում է թողնված քիմիական զենքին: Այդ տեղեկատվությունը, ըստ հնարավորության, իր մեջ ներառում է թողնված քիմիական

զենքի գտնվելու վայրը, տեսակը, քանակը եւ ներկայիս վիճակը, ինչպես նաեւ թողնելու վերաբերյալ տեղեկություններ:

10. Այլ մասնակից պետության տարածքում քիմիական զենք թողած մասնակից պետությունը (այսուհետ՝ թողած մասնակից պետություն) ոչ ուշ, քան իր համար սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 30 օր հետո Տեխնիկական քարտուղարությանն է

ներկայացնում թողնված քիմիական զենքին վերաբերող ամբողջ տեղեկատվությունը: Այդ

տեղեկատվությունը ներառում է քիմիական զենքի գտնվելու վայրը, տեսակը, քանակը,

ինչպես նաեւ թողնելու եւ վիճակի վերաբերյալ տեղեկություններ:

11. Տեխնիկական քարտուղարությունը նախնական տեսչական ստուգում եւ հետագա

տեսչական ստուգումներ է անցկացնում, որոնք կարող են անհրաժեշտ լինել 8-ից 10-րդ կետերին համապատասխան ներկայացված ամբողջ տեղեկատվության ստուգման համար

եւ պարբերաբար ստուգման պահանջմունքի որոշման համար՝ սույն Հավելվածի 4 Ա մասի

41-43-րդ կետերի համաձայն: Անհրաժեշտության դեպքում նա ստուգում է թողնված

քիմիական զենքի ծագումը եւ հայտնաբերում է վկայություններ, որոնք վերաբերում

են թողնելուն եւ թույլ են տալիս պարզել թողած պետությանը:

12. Տեխնիկական քարտուղարության զեկույցը ներկայացվում է Գործադիր խորհրդին, տարածքային մասնակից պետությանը եւ թողած մասնակից պետությանը կամ

տարածքային մասնակից պետություն հայտարարված մասնակից պետությանը կամ

Տեխնիկական քարտուղարության կողմից որպես քիմիական զենք թողած ճանաչված

պետությանը: Եթե անմիջականորեն շահագրգռված մասնակից պետություններից մեկը

բավարարված չէ այդ զեկույցով, նա իրավունք ունի կարգավորելու այդ հարցը սույն

Կոնվենցիայի դրույթներին համապատասխան կամ փոխանցել այն Գործադիր խորհրդին՝

դրա անհապաղ կարգավորման նպատակով:

13. 1-ին հոդվածի 3-րդ կետին համաձայն՝ մասնակից պետությունը իրավունք ունի, 8-12-րդ կետերի համաձայն, որպես թողած մասնակից պետություն ճանաչված

մասնակից պետությանը առաջարկել բանակցությունների մեջ մտնել թողնված քիմիական

զենքի ոչնչացման նպատակով՝ տարածքային մասնակից պետության հետ համագործակցելով: Նա անհապաղ տեղեկացնում է Տեխնիկական

քարտուղարությանը

այդպիսի խնդրանքի մասին:

14. Տարածքային մասնակից պետության եւ թողած մասնակից պետության միջեւ

խորհրդակցությունները, ոչնչացման համաձայնեցված ծրագրի մշակման նպատակով,

սկսվում են ոչ ուշ, քան 13-րդ կետում նշված խնդրանքի մասին Տեխնիկական քարտուղարությանը ծանուցելուց 30 օր հետո: Ոչնչացման փոխադարձ համաձայնեցված

ծրագիրը ներկայացվում է Տեխնիկական քարտուղարությանը ոչ ուշ, քան Տեխնիկական

քարտուղարությանը 13-րդ կետում նշված խնդրանքի մասին ծանուցելուց 180 օր հետո:

Թողած մասնակից պետության եւ տարածքային մասնակից պետության խնդրանքով`

Գործադիր խորհուրդը կարող է երկարաձգել ոչնչացման փոխադարձ համաձայնեցված

ծրագրի ներկայացման ժամկետը:

15. Թողած քիմիական զենքի ոչնչացման նպատակի համար թողած մասնակից պետությունը ապահովում է բոլոր անհրաժեշտ ֆինանսական, տեխնիկական, փորձագիտական, արտադրական, ինչպես նաեւ այլ ռեսուրսները: Տարածքային մասնակից

պետությունը ապահովում է համապատասխան համագործակցությունը:

16. Եթե թողած մասնակից պետությունը չի կարող նույնացվել կամ մասնակից պետություն չի հանդիսանում, ապա տարածքային մասնակից պետությունը այդ թողնված

քիմիական զենքի ոչնչացման ապահովման նպատակներով կարող է խնդրել

Կազմակերպությանը եւ այլ մասնակից պետություններին օգնություն տրամադրել այդ

թողնված քիմիական զենքի ոչնչացման գործում:

17. Հաշվի առնելով 8-16-րդ կետերը` 4-րդ հոդվածը եւ սույն Հավելվածի 4 Ա մասը կիրառվում են նաեւ թողնված քիմիական զենքի ոչնչացման վերաբերյալ:

Թողնված

քիմիական զենքի դեպքում, որը նաեւ համապատասխանում է 2-րդ հոդվածի 5.բ կետում

պարունակվող հին քիմիական զենքի սահմանմանը, Գործադիր խորհուրդը, տարածքային

մասնակից պետության խնդրանքով, ինքնուրույն կամ թողած մասնակից պետության հետ

համատեղ կարող է փոփոխել կամ, բացառիկ դեպքերում, դադարեցնել ոչնչացման մասին

դրույթների կիրառումը, եթե պարզի, որ դա զուգորդված կլիներ սույն Կոնվենցիայի

առարկայի եւ նպատակի համար ռիսկի հետ: Թողնված քիմիական զենքի դեպքում, որը չի

համապատասխանում 2-րդ հոդվածի 5.բ կետում պարունակվող հին քիմիական զենքի

սահմանմանը, Գործադիր խորհուրդը, տարածքային մասնակից պետության խնդրանքով,

ինքնուրույն կամ թողած մասնակից պետության հետ համատեղ կարող է բացառիկ

դեպքերում փոփոխություններ մտցնել դրույթներում ոչնչացման առավելագույն

ժամկետների եւ կարգի վերաբերյալ, եթե պարզի, որ դա զուգորդված չէր լինի սույն

Կոնվենցիայի առարկայի եւ նպատակի համար ռիսկի հետ: Սույն կետում նշված ցանկացած խնդրանք պարունակում է դրույթների վերաբերյալ կոնկրետ առաջարկներ եւ

առաջարկվող փոփոխության համար հիմքերի մանրամասն բացատրություն:

18. Մասնակից պետությունները միմյանց հետ կարող են կնքել համաձայնագրեր

կամ պայմանավորվածություններ թողած քիմիական զենքի ոչնչացման վերաբերյալ:

Գործադիր խորհուրդը կարող է, տարածքային մասնակից պետության խնդրանքով,

ինքնուրույն կամ թողած մասնակից պետության հետ համատեղ որոշում ընդունել այդպիսի համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների սահմանված դրույթների

սույն բաժնի դրույթների նկատմամբ գերակայության մասին, եթե պարզի, որ այդպիսի

համաձայնագիրը կամ պայմանավորվածությունը ապահովում են թողնված քիմիական զենքի

ոչնչացումը՝ 17-րդ կետին համապատասխան:

Մաս 5

Քիմիական զենքի արտադրության օբյեկտների ոչնչացումը եւ դրանց ստուգումը՝ 5-րդ հոդվածին համապատասխան

Ա. Հայտարարություններ

Քիմիական զենքի արտադրության օբյեկտների հայտարարություններ

1. Մասնակից պետության կողմից ներկայացվող քիմիական զենքի արտադրության

օբյեկտների հայտարարության մեջ, համաձայն 3-րդ հոդվածի 1.գ ii կետի, յուրաքանչյուր օբյեկտի առնչությամբ բերվում է.

ա) օբյեկտի անվանումը, ընկերությունների կամ ձեռնարկությունների անվանումները եւ սեփականատերերի անունները, որոնք շահագործում են օբյեկտը 1946

թվականի հունվարի 1-ից,

բ) օբյեկտի գտնվելու ճշգրիտ տեղը, ներառյալ համալիրի հասցեն, գտնվելու վայրը, համալիրի սահմաններում օբյեկտի գտնվելու վայրը, ներառյալ շենքի եւ շինության կոնկրետ համարը, եթե այդպիսիք կան,

գ) հայտարարություն այն մասին, թե հանդիսանո՞ւմ է արդյոք այն քիմիկատների

արտադրության օբյեկտ, որոնք սահմանված են որպես քիմիական զենք կամ քիմիական

զենքի լիցքավորման օբյեկտ կամ եւ մեկը եւ մյուսը,

դ) օբյեկտի շինարարության ավարտի ժամկետը եւ ժամանակահատվածները, որոնց

ընթացքում կատարվել է օբյեկտի ցանկացած փոփոխություն, ներառյալ նոր կամ փոփոխված սարքավորման տեղադրումը, որոնք էականորեն փոփոխել են

օբյեկտի

արտադրական գործընթացի բնույթները,

ե) օբյեկտում արտադրված քիմիկատների մասին տեղեկատվություն, որոնք սահմանված են որպես քիմիական զենք, օբյեկտում լիցքավորված ռազմամթերքի, սարքերի եւ բեռնարկղերի մասին, ինչպես նաեւ այդպիսի արտադրության կամ լիցքավորման սկզբի եւ ավարտի ամսաթվերը.

i) որպես քիմիական զենք սահմանված օբյեկտում արտադրված քիմիկատների համար

այդպիսի տեղեկատվությունը արտահայտվում է արտադրված քիմիկատների կոնկրետ

տեսակների տեսքով, քիմիական անվանման նշումով՝ համաձայն մաքուր եւ կիրառական

քիմիայի միջազգային միության գործող անվանացանկի, ըստ "Քեմիքլ աբստրակտս

սերվիս"-ի կառուցվածքային բանաձեւի եւ գրանցման համարի, եթե այդպիսին չկան

է, որպես յուրաքանչյուր քիմիկատի քանակություն, որն արտահայտվում է քիմիկատի

քաշով՝ տոննաներով,

ii) օբյեկտներում լիցքավորված ռազմամթերքի, սարքերի եւ բեռնարկղերի համար

այդպիսի տեղեկատվությունը արտահայտվում է լիցքավորված քիմիական զենքի կոնկրետ

տեսակի ձեւով եւ միավորին քիմիական զենքի քաշով,

գ) քիմիական զենքի արտադրության օբյեկտի արտադրական հզորությունը.

i) այն օբյեկտի համար, որտեղ արտադրվել է քիմիական զենքը, արտադրական հզորությունը արտահայտվում է տարեկան քանակական ներուժի տեսքով կոնկրետ նյութի

արտադրության համար՝ ելնելով փաստացիորեն օգտագործվող տեխնոլոգիական գործընթացից կամ, դեռ չօգտագործված գործընթացների դեպքում, ելնելով այդ գործընթացից, որը նախատեսվում է օգտագործել օբյեկտում,

ii) օբյեկտում, որտեղ լիցքավորվել է քիմիական զենքը, արտադրական հզորությունը արտահայտվում է քիմիկատի քանակության տեսքով, որով օբյեկտը կարող

է տարեկան լիցքավորել քիմիական զենքի յուրաքանչյուր կոնկրետ տեսակը,

է) քիմիական զենքի արտադրության յուրաքանչյուր ոչնչացված օբյեկտի վերաբերյալ օբյեկտի նկարագրությունը՝ նշելով.

i) տեղի գծագիրը,

ii) օբյեկտի տեխնոլոգիական բլոկ-գծագիրը, եւ

iii) օբյեկտում շենքերի գույքագրային ցանկը, ինչպես նաեւ օբյեկտում մասնագիտացված սարքավորման եւ այդպիսի սարքավորման համար ցանկացած պահեստամասը,

ը) օբյեկտի ներկայիս վիճակը՝ նշելով.

i) ամսաթվերը, երբ օբյեկտում վերջին անգամ արտադրվել է քիմիական զենքը,

ii) եղե՞լ է արդյոք օբյեկտը ոչնչացված, ներառյալ դրա ոչնչացման ամսաթիվն ու միջոցը, եւ

iii) օգտագործվե՞լ է արդյոք օբյեկտը կամ փոփոխվել մինչեւ սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելը քիմիական զենքի արտադրության հետ կապ չունեցող գործունեության

համար, եւ, եթե եղել է, ապա ներկայացվում է տեղեկատվություն այն մասին, թե ինչ

փոփոխություններ են կատարվել, բերվում է այդպիսի գործունեության սկզբի

ամսաթիվը, որը կապված է քիմիական զենքի հետ, եւ այդպիսի գործունեության

բնույթը՝ նշելով, համապատասխան դեպքերում, արտադրանքի տեսակը,
թ) օբյեկտի փակման վերաբերյալ միջոցառումների բնույթը, որոնք ձեռնարկվել են մասնակից պետության կողմից, ինչպես նաև շահագործումից օբյեկտը հանելու

միջոցառումների նկարագրությունը, որոնք ընդունվել կամ կընդունվեն մասնակից պետության կողմից,

ժ) շահագործումից դուրս եկած օբյեկտում աշխատանքի պահպանության եւ անվտանգության ապահովման ստանդարտ ռեժիմի նկարագրությունը, եւ

ժա) հայտարարություն այն բանի վերաբերյալ, թե օբյեկտը կվերասարքավորվի՞ քիմիական զենքի ոչնչացման համար, եւ, եթե այո, ապա այդպիսի վերասարքավորման ժամկետները:

3-րդ հոդվածի 1.գ iii կետի համաձայն՝ քիմիական զենքի արտադրության օբյեկտների հայտարարություններ

2. 3-րդ հոդվածի 1.գ iii կետի համաձայն՝ քիմիական զենքի արտադրության օբյեկտների հայտարարության մեջ բերվում է վերոհիշյալ 1-ին կետում նշված տեղեկատվությունը: Մասնակից պետությունը, որի տարածքում գտնվում կամ գտնվել է

օբյեկտը, պատասխանատվություն է կրում այլ պետության հետ համապատասխան

պայմանավորվածությունների ձեռքբերման համար, որպեսզի ապահովվի հայտարարությունների ներկայացումը: Եթե մասնակից պետությունը, որի տարածքում

գտնվում կամ գտնվել է օբյեկտը, ի վիճակի չէ կատարելու այդ պարտավորությունը,

ապա նա նշում է համապատասխան պատճառները:

Նախկին փոխանցումների եւ ստացումների հայտարարություններ

3. 1946 թվականի հունվարի 1-ից քիմիական զենքի արտադրության համար սարքավորում փոխանցած կամ ստացած մասնակից պետությունը հայտարարում է այդ

փոխանցումները եւ ստացումները՝ համաձայն 3-րդ հոդվածի 1.գ iv կետի եւ ներքոհիշյալ 5-րդ կետի: Այն դեպքերում, երբ 1946 թվականի հունվարի 1-ի եւ 1970 թվականի հունվարի 1-ի միջև ընկած ժամանակահատվածի համար առկա չէ այդպիսի

սարքավորման փոխանցման եւ ստացման վերաբերյալ ամբողջ եղած տեղեկատվությունը,

մասնակից պետությունը հայտարարում է իր մոտ եղած ցանկացած տեղեկատվությունը եւ

ներկայացնում է հայտարարություն, թե ինչու ինքը չի կարող ներկայացնել ամբողջական հայտարարություն:

4. Քիմիական զենքի արտադրության համար սարքավորում, որը նշված է 3-րդ կետում, նշանակում է.

ա) մասնագիտացված սարքավորում,

բ) սարքավորում, որն անմիջապես նախատեսված է քիմիական զենքի կիրառման հետ

կապված օգտագործման համար հատուկ սարքավորման արտադրության համար, եւ

գ) սարքավորում, որը նախատեսված է կամ օգտագործվում է բացառապես քիմիական

ռազմամթերքի ոչ քիմիական մասերի արտադրության համար:

5. Քիմիական զենքի արտադրության համար սարքավորման փոխանցման կամ ստացման

հայտարարությունում նշվում է.

ա) ով է ստացել/փոխանցել քիմիական զենքի արտադրության սարքավորումը,

բ) այդպիսի սարքավորման բնույթը,

գ) փոխանցման եւ ստացման ամսաթիվը,

դ) ոչնչացված է եղել արդյոք սարքավորումը, եթե դա հայտնի է, եւ

ե) ներկայիս գտնվելու վայրը, եթե դա հայտնի է:

Ոչնչացման ընդհանուր ծրագրերի ներկայացումը

6. Քիմիական զենքի արտադրության յուրաքանչյուր օբյեկտի վերաբերյալ մասնակից պետությունը ներկայացնում է հետեւյալ տեղեկատվությունը.

ա) կիրառվող միջոցառումների նախատեսվող ժամկետները, եւ

բ) ոչնչացման մեթոդները:

7. Քիմիական զենքի արտադրության յուրաքանչյուր օբյեկտի վերաբերյալ, որը մասնակից պետությունը մտադիր է ժամանակավորապես վերասարքավորել քիմիական զենքի

ոչնչացման օբյեկտի, մասնակից պետությունը ներկայացնում է հետեւյալ տեղեկատվությունը.

ա) ոչնչացման օբյեկտ վերասարքավորելու նախատեսվող ժամկետները,

բ) օբյեկտի օգտագործման նախատեսվող ժամկետները որպես քիմիական

զենքի

ոչնչացման օբյեկտ,

գ) նոր օբյեկտի նկարագրությունը,

դ) հատուկ սարքավորման ոչնչացման մեթոդը,

ե) վերասարքավորված օբյեկտի ոչնչացման ժամկետները դրա՝ քիմիական

զենքի

ոչնչացման համար օգտագործելուց հետո, եւ

զ) վերասարքավորված օբյեկտի ոչնչացման մեթոդը:

Ոչնչացման տարեկան ծրագրերի եւ ոչնչացման մասին տարեկան զեկույցների ներկայացում

8. Մասնակից պետությունը ներկայացնում է ոչնչացման տարեկան ծրագիրը ոչ պակաս, քան ոչնչացման հաջորդ տարվա սկզբից 90 օր առաջ: Տարեկան ծրագրում

նշվում է հետեւյալը.

ա) ոչնչացման ենթակա հզորությունները,

բ) օբյեկտների անվանումները եւ գտնվելու վայրը, որտեղ կիրականացվի

ոչնչացումը,

գ) շենքերի եւ սարքավորման ցանկը, որոնք ոչնչացվելու են յուրաքանչյուր օբյեկտում, եւ

դ) ոչնչացման նախատեսվող մեթոդը (մեթոդները):

9. Մասնակից պետությունը ներկայացնում է տարեկան զեկույց ոչնչացման մասին

ոչ ուշ, քան ոչնչացման նախորդ տարվա ավարտից 90 օր հետո: Տարեկան զեկույցում

նշվում է հետեւյալը.

- ա) ոչնչացված հզորությունները,
- բ) յուրաքանչյուր օբյեկտի, որտեղ իրականացվել է ոչնչացումը, անվանումը եւ գտնվելու վայրը,
- գ) շենքերի եւ սարքերի ցանկը, որոնք ոչնչացվել են յուրաքանչյուր օբյեկտում,
- դ) ոչնչացման մեթոդները:

10. Զինիական զենքի արտադրության օբյեկտի դեպքում, որը հայտարարվում է 3-րդ հոդվածի 1.գ iii կետի համաձայն, մասնակից պետությունը, որի տարածքում գտնվում է կամ գտնվել է այդ օբյեկտը, պատասխանատվություն է կրում համապատասխան

պայմանավորվածությունների ձեռքբերման համար, որպեսզի ապահովի վերոհիշյալ 6-9

կետերում նշված հայտարարությունների ներկայացումը: Եթե մասնակից պետությունը,

որի տարածքում գտնվում է կամ գտնվել է օբյեկտը, ի վիճակի չէ կատարելու այդ պարտավորությունը, ապա նա նշում է համապատասխան պատճառները:

Բ. Ոչնչացում

Զինիական զենքի արտադրության օբյեկտների ոչնչացման ընդհանուր կանոնները

11. Յուրաքանչյուր մասնակից պետություն որոշում է այն մեթոդները, որոնք պետք է կիրառի ջինիական զենքի արտադրության օբյեկտների ոչնչացման համար՝ 5-րդ հոդվածում եւ սույն մասում շարադրված սկզբունքների համաձայն:

Զինիական զենքի արտադրության օբյեկտի փակման սկզբունքները եւ մեթոդները

12. Զինիական զենքի արտադրության օբյեկտի փակման նպատակը այն է, որ դուրս հանի այն շահագործումից:

13. Փակման առնչությամբ համաձայնեցված միջոցառումները կիրառվում են՝ պատշաճորեն հաշվի առնելով յուրաքանչյուր օբյեկտի կոնկրետ առանձնահատկությունները: Այդպիսի միջոցառումները ներառում են, այլոց շարքում.

ա) օբյեկտի մասնագիտացված շենքերի եւ ստանդարտ շենքերի զբաղեցնելը արգելելը՝ բացառությամբ գործունեության համաձայնեցված ձեւերի,

բ) սարքավորման անջատումը, անմիջականորեն ջինիական զենքի արտադրության հետ

կապված, ներառյալ, այլոց շարքում, հսկողական-տեխնոլոգիական սարքավորումը եւ

հաղորդակցությունները,

գ) շահագործումից պաշտպանական սարքերը եւ սարքավորումները հանելը, որոնք

օգտագործվում են բացառապես ջինիական զենքի արտադրության օբյեկտի անվտանգ

շահագործման ապահովման համար,

դ) փականների եւ այլ սարքերի տեղադրում ջինիկատների ավելացման

կանխարգելման համար ցանկացած մասնագիտացված տեխնոլոգիական սարքավորման մեջ՝ սինթեզի նպատակով, քիմիկատների դուրս հանման կամ մաքրման համար, որոնք որակված են որպես քիմիական զենք, պահպանման ցանկացած տարողունակություն կամ քիմիական զենքի լիցքավորման համար ցանկացած մեխանիզմ կամ այդպիսի քիմիկատներից հանումները խափանելու համար, ինչպես նաեւ կանխարգելելու ջերմամատակարարումը, սառեցումը կամ էլեկտրա- եւ այլ էներգամատակարարումը այդպիսի սարքավորման, պահպանման տարողունակությունների կամ մեխանիզմների համար, եւ ե) երկաթուղային, ավտոմոբիլային եւ այլ մերձատար ուղիների պաշարում ծանր տրանսպորտը քիմիական զենքի արտադրության օբյեկտ հասցնելու համար՝ բացառությամբ կրանց, որոնք պահանջվում են գործունեության համաձայնեցված ձեւերի համար:

14. Քանի դեռ քիմիական զենքի արտադրության օբյեկտը փակ է, մասնակից պետությունը կարող է շարունակել օբյեկտում գործունեությունը անվտանգության եւ ֆիզիկական պաշտպանության ապահովման վերաբերյալ:

Քիմիական զենքի արտադրության օբյեկտների տեխնիկական սպասարկումը մինչեւ դրանց ոչնչացումը

15. Մասնակից պետությունը կարող է իրականացնել քիմիական զենքի արտադրության օբյեկտներում սպասարկման ստանդարտ գործունեություն բացառապես անվտանգության գաղափարներից ելնելով, ներառյալ տեսողական ուսումնասիրությունները, պրոֆիլակտիկ սպասարկումը եւ ընթացիկ վերանորոգումը:

16. Սպասարկման ողջ նախատեսված գործունեությունը նշվում է ոչնչացման ընդհանուր եւ մանրամասն ծրագրում: Սպասարկման գործունեությունը չի ներառում.

- ա) ցանկացած տեխնոլոգիական սարքավորման փոխարինումը,
- բ) քիմիատեխնոլոգիական սարքավորման բնութագրերի փոփոխությունը,
- գ) ցանկացած տեսակի քիմիկատի արտադրությունը:

17. Սպասարկման ողջ գործունեությունը ենթակա է հսկողության Տեխնիկական քարտուղարության կողմից:

Քիմիական զենքի արտադրության օբյեկտները քիմիական զենքի ոչնչացման օբյեկտների ժամանակավոր վերասարքավորման սկզբունքները եւ մեթոդները

18. Քիմիական զենքի արտադրության օբյեկտները քիմիական զենքի ոչնչացման օբյեկտների ժամանակավոր վերասարքավորմանը վերաբերող միջոցառումները ապահովում են, որ ժամանակավորապես վերասարքավորված օբյեկտների համար ռեժիմը լինի,

ծայրահեղ դեպքում, այնքան խիստ, ինչքան չվերասարքավորված քիմիական գեների

արտադրության օբյեկտների համար ռեժիմն է:

19. Քիմիական գեների արտադրության օբյեկտները, որոնք վերասարքավորվել են

քիմիական գեների ոչնչացման օբյեկտների մինչեւ սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը, հայտարարվում են ըստ քիմիական գեների արտադրության օբյեկտների տեսակների:

Դրանք ենթակա են տեսուչների կողմից նախնական այցելության, որոնք հաստատում

են այդ օբյեկտների վերաբերյալ տեղեկատվության ճշտությունը: Պահանջվում է նաեւ

ստուգել այն, որ այդ օբյեկտների վերասարքավորումը իրականացվել է այնպես, որ

դրանք բերվեն ոչ աշխատանքային վիճակի՝ որպես քիմիական գեների արտադրության

օբյեկտներ. ընդ որում, այդպիսի ստուգումը իրականացվում է այն միջոցառումների

շրջանակում, որոնք նախատեսված են այն օբյեկտների համար, որոնք պետք է բերվեն

ոչ աշխատանքային վիճակի ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 90 օր

հետո:

20. Մասնակից պետությունը, որը մտադիր է իրականացնել քիմիական գեների արտադրության օբյեկտների վերասարքավորում, ոչ ուշ, քան իր համար սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 30 օր հետո կամ ոչ ուշ, քան ժամանակավոր վերասարքավորման մասին որոշում ընդունելուց 30 օր հետո Տեխնիկական քարտուղարությանն է ներկայացնում օբյեկտի վերասարքավորման ընդհանուր ծրագիրը,

իսկ հետագայում ներկայացնում է տարեկան ծրագրեր:

21. Եթե մասնակից պետությունը անհրաժեշտություն է զգում վերասարքավորել եւս մեկ օբյեկտ քիմիական գեների ոչնչացման օբյեկտի, որը փակ է եղել սույն Կոնվենցիան իր համար ուժի մեջ մտնելուց հետո, նա տեղեկացնում է այդ մասին Տեխնիկական քարտուղարությանը ոչ պակաս, քան վերասարքավորումից 150 օր առաջ:

Տեխնիկական քարտուղարությունը մասնակից պետության հետ համատեղ հավաստիանում է

անհրաժեշտ միջոցառումների ընդունման մեջ, որպեսզի օբյեկտի վերասարքավորումից

հետո օբյեկտը բերվի ոչ աշխատանքային վիճակի՝ որպես քիմիական գեների արտադրության օբյեկտ:

22. Օբյեկտը, որը փակ է եղել, վերասարքավորվել է քիմիական գեների ոչնչացման

օբյեկտի, չպետք է ավելի մեծ չափով պիտանի լինի քիմիական գեների արտադրության

վերսկսման համար, գտնվում է սպասարկման մեջ: Դրա գործունեության վերսկսման

համար պետք է պահանջվի ոչ պակաս ժամանակ, քան փակ կամ սպասարկման մեջ գտնվող

քիմիական գեների արտադրության օբյեկտի դեպքում:

23. Քիմիական զենքի արտադրության վերասարքավորված օբյեկտները ոչնչացվում

են ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 10 տարի հետո:

24. Քիմիական զենքի արտադրության ցանկացած օբյեկտի վերասարքավորման

ցանկացած միջոցառում կապվում է կոնկրետ օբյեկտի հետ եւ կախված է նրա անհատական

առանձնահատկություններից:

25. Քիմիական զենքի արտադրության օբյեկտը քիմիական զենքի ոչնչացման օբյեկտի վերասարքավորման նպատակով իրականացվող միջոցառումների համալիրը ոչ

ավելի լայն է, քան միջոցառումների համալիրը, որոնք նախատեսված են քիմիական

զենքի արտադրության այլ օբյեկտները շահագործումից հանելու համար, որոնք ենթակա

են իրականացման ոչ ուշ, քան մասնակից պետության համար սույն Կոնվենցիան ուժի

մեջ մտնելուց 90 օր հետո:

ԻՐՏԵԿ - շարունակությունը հաջորդ մասերում

ԿՈՆՎԵՆՑԻԱ

ՔԻՄԻԱԿԱՆ ՉԵՆՔԻ ՄՇԱԿՈՒՄԸ, ԱՐՏԱԴՐՈՒՄԸ, ԿՈՒՏԱԿՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ԱՐԳԵԼԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(5-րդ մաս)

Քիմիական զենքի արտադրության օբյեկտի ոչնչացմանը վերաբերող սկզբունքները եւ մեթոդները

26. Մասնակից պետությունը ոչնչացնում է այն սարքավորումը եւ շենքերը, որոնք ներառվում են քիմիական զենքի արտադրության օբյեկտի սահմանման մեջ, հետեւյալ կերպ.

ա) ողջ մասնագիտացված սարքավորումը եւ ստանդարտ շենքերը ենթարկվում են

ֆիզիկական ոչնչացման,

բ) բոլոր մասնագիտացված շենքերը եւ ստանդարտ շենքերը ենթարկվում են ֆիզիկական ոչնչացման:

27. Մասնակից պետությունը ոչնչացնում է չլիցքավորված քիմիական ռազմամթերքի

եւ սարքավորման արտադրության օբյեկտները քիմիական զենքը հետեւյալ ձեւով կիրառելու համար.

ա) օբյեկտները, որոնք օգտագործվում են բացառապես քիմիական ռազմամթերքի կամ

սարքավորման ոչ քիմիական մասերի արտադրության համար, որոնք հատուկ նախատեսված

են անմիջապես քիմիական զենքի կիրառման կապակցությամբ օգտագործման համար,

հայտարարվում եւ ոչնչացվում են: Ոչնչացման գործընթացը եւ դրա ստուգումը իրականացվում են 5-րդ հոդվածի եւ սույն Հավելվածի սույն մասի դրույթներին համապատասխան, որոնք կարգավորում են քիմիական զենքի արտադրության օբյեկտների ոչնչացումը,

բ) ամբողջ սարքավորումը, որը նախատեսված է կամ օգտագործվում է բացառապես

քիմիական ռազմամթերքի համար ոչ քիմիական մասերի արտադրության համար, ենթարկվում է ֆիզիկական ոչնչացման: Այդպիսի սարքավորումը, որը ներառում է հատուկ հևարված մուլդեր եւ մետաղ առաջացնող պրես-ծեւեր, կարող է հասցվել հատուկ վայր ոչնչացման համար,

գ) բոլոր շենքերը եւ ստանդարտ սարքավորումը, որոնք օգտագործվել են այդպիսի

արտադրական գործունեության համար, ոչնչացվում կամ վերասարքավորվում են սույն

Կոնվենցիայով չարգելվող նպատակների համար՝ հաստատումով, անհրաժեշտության

դեպքում, խորհրդակցությունների եւ տեսչական ստուգումների միջոցով, ինչպես դա

նախատեսված է 9-րդ հոդվածում,

դ) սույն Կոնվենցիայով չարգելվող նպատակներով գործունեությունը կարող է շարունակվել ոչնչացման կամ վերասարքավորման ընթացքում:

Ոչնչացման կարգը

28. Քիմիական զենքի արտադրության օբյեկտների ոչնչացման կարգի հիմքում ընկած են պարտավորություններ, որոնք շարադրված են 1-ին հոդվածում եւ սույն Կոնվենցիայի այլ հոդվածներում, ներառյալ այն պարտավորությունները, որոնք վերաբերում են տեղում պարբերաբար ստուգմանը: Այն հաշվի է առնում մասնակից

պետությունների շահագրգռվածությունը ոչնչացման ընթացքում անվտանգության

չպակասեցման հարցում, ոչնչացման նախնական փուլում վստահության ամրապնդման

հարցում, քիմիական զենքի արտադրության օբյեկտների ոչնչացման ընթացքում փորձի

աստիճանաբար կուտակման հարցում՝ օբյեկտների փաստացի բնույթներից եւ դրանց

ոչնչացման ընտրված մեթոդներից անկախ: Ոչնչացման կարգի հիմքում ընկած է հավասարեցման սկզբունքը:

29. Ոչնչացման յուրաքանչյուր փուլի համար մասնակից պետությունը որոշում է,

թե քիմիական զենքի արտադրության որ օբյեկտներն են ենթակա ոչնչացման, եւ իրականացնում է ոչնչացումը այնպես, որ ոչնչացման յուրաքանչյուր փուլի վերջում

մնացորդը կազմի ոչ ավելի, քան նշված է 30-րդ եւ 31-րդ կետերում: Մասնակից պետությանը չի արգելվում ոչնչացնել իր օբյեկտները ավելի արագ տեմպերով:

30. Քիմիական զենքի արտադրության օբյեկտների նկատմամբ, որոնք արտադրում են

1-ին ցուցակի քիմիկատները, կիրառվում են հետեւյալ դրույթները.

ա) մասնակից պետությունը սկսում է այդպիսի օբյեկտների ոչնչացումը ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան իր համար ուժի մեջ մտնելուց մեկ տարի հետո եւ ավարտում է

այն ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 10 տարի հետո: Այն պետության համար, որը մասնակից է հանդիսանում սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելիս, այդ ընդհանուր ժամանակահատվածը բաժանվում է ոչնչացման երեք առանձին

ժամանակահատվածների, իսկ կոնկրետ՝ 2-5 տարի, 6-8 տարի եւ 9-10 տարի: Այն պետությունների համար, որոնք մասնակից են դառնում սույն Կոնվենցիան ուժի մեջ

մտնելուց հետո, ոչնչացման ժամանակահատվածները ուղղվում են՝ հաշվի առնելով

28-րդ եւ 29-րդ կետերը,

բ) այդպիսի օբյեկտների համար, որպես հակադրման գործոն, օգտագործվում է արտադրական հզորությունը: Այն արտահայտվում է թունավոր նյութի տոննաներով՝

հաշվի առնելով բինարային քիմիական զենքի համար սահմանված կանոնները,

գ) սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո 8-րդ տարում սահմանվում են արտադրական հզորության համապատասխան համաձայնեցված մակարդակներ: Արտադրական

հզորությունները, որոնք գերազանցում են համապատասխան մակարդակը, ոչնչացվում են

հավասար ավելացող քանակություններով՝ ոչնչացման առաջին երկու

ժամանակահատվածների ընթացքում,

դ) հզորությունների տվյալ ծավալի ոչնչացման առնչությամբ պահանջը առաջացնում է պահանջ քիմիական զենքի արտադրության ցանկացած այլ օբյեկտի

ոչնչացման առնչությամբ, որը իրականացրել է մատակարարումներ 1-ին ցուցակի օբյեկտի համար կամ լիցքավորել է ռազմամթերքը կամ սարքավորումները այդտեղ

արտադրված՝ 1-ին ցուցակի քիմիկատով,

ե) քիմիական զենքի արտադրության օբյեկտները, որոնք ժամանակավորապես վերասարքավորվել են քիմիական զենքի ոչնչացման համար, առաջվա պես ընկնում են

հզորությունների ոչնչացման մասին պարտավորության տակ՝ սույն կետի դրույթներին

համապատասխան:

31. Մասնակից պետությունը սկսում է քիմիական զենքի արտադրության օբյեկտների ոչնչացումը, որոնք ներառված չեն 30-րդ կետում, ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան իր համար ուժի մեջ մտնելուց մեկ տարի հետո եւ ավարտում է այն ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 5 տարի հետո:

Ոչնչացման մանրամասն ծրագրերը

32. Ոչ պակաս, քան քիմիական զենքի արտադրության օբյեկտի ոչնչացման սկզբից

180 օր առաջ մասնակից պետությունը Տեխնիկական քարտուղարությանն է ներկայացնում

օբյեկտի ոչնչացման մանրամասն ծրագրերը, ներառյալ ոչնչացման ստուգման առաջարկվող միջոցառումները, որոնք նշված են 33.գ կետում, այլոց շարքում, հետեւյալի վերաբերյալ.

ա) ոչնչացման ենթակա օբյեկտում տեսուչների ներկայության ժամկետների, եւ
բ) այն միջոցառումների ստուգման գործընթացը, որոնք կիրառելի են հայտարարված գույքային ցանկում՝ յուրաքանչյուր առարկայի նկատմամբ:

33. Քիմիական զենքի արտադրության յուրաքանչյուր օբյեկտի ոչնչացման մանրամասն ծրագրերը ներառում են.

ա) ոչնչացման գործընթացի մանրամասն գծագիրը,
բ) օբյեկտի նախագիծը,
գ) տեխնոլոգիական բլոկ-գծագիրը,
դ) սարքավորման, շենքերի եւ ոչնչացման ենթակա այլ առարկաների մանրամասն

գույքագրային ցանկը,

ե) միջոցառումները, որոնք պետք է կիրառվեն այդ գույքագրային ցանկում՝ յուրաքանչյուր առարկայի նկատմամբ,

զ) ստուգման առաջարկվող միջոցառումներ,

է) անվտանգության/նախագգուշության միջոցառումները, որոնք պետք է պահպանվեն

օբյեկտի ոչնչացման ժամանակ, եւ

ը) աշխատանքային եւ բնակկենցաղային պայմանները, որոնք ենթակա են տեսուչներին ներկայացման:

34. Եթե մասնակից պետությունը մտադիր է իրականացնել քիմիական զենքի արտադրության օբյեկտի ժամանակավոր վերասարքավորում, նա ծանուցում է Տեխնիկական

քարտուղարությանը ոչ պակաս, քան վերասարքավորման ցանկացած գործունեության

իրականացումից 150 օր առաջ: Ծանուցման մեջ՝

ա) նշվում է օբյեկտի անվանումը, հասցեն եւ գտնվելու վայրը,

բ) ներկայացվում է տեղի գծագիրը բոլոր կառույցների եւ տարածքների նշումով, որոնք կօգտագործվեն քիմիական զենքի ոչնչացման ժամանակ, ինչպես նաեւ նշվում են

քիմիական զենքի արտադրության օբյեկտի բոլոր կառույցները, որոնք ենթակա են ժամանակավոր վերասարքավորման,

գ) նշվում են ոչնչացման ենթակա քիմիական զենքի տեսակները եւ քիմիական լիցքերի տեսակը եւ քանակը,

դ) նշվում է ոչնչացման մեթոդը,

ե) ներկայացվում է տեխնոլոգիական բլոկ-գծագիրը արտադրական

գործընթացի եւ

մասնագիտացված սարքավորման այն տարրերի նշումով, որոնք կվերասարքավորվեն

քիմիական զենքի ոչնչացման համար,

զ) համապատասխան դեպքերում նշվում են կապարակնիքները եւ տեսչական սարքավորումը, որոնք պոտենցիալ շոշափվում են վերասարքավորմամբ, եւ

է) ներկայացվում է ժամանակացույցը՝ հետեւյալ նշումներով. նախագծման համար

հատկացված ժամանակը, օբյեկտի ժամանակավոր վերասարքավորման, սարքավորման

մոնտաժը, սարքավորման ստուգումը, ոչնչացման եւ փակման գործառույթները:

35. Օբյեկտի ոչնչացման առնչությամբ, որը ժամանակավորապես վերասարքավորված

Է քիմիական զենքի ոչնչացման համար, տեղեկատվություն է ներկայացվում 32-րդ
ԵԼ

33-րդ կետերի համաձայն:

Մանրամասն ծրագրերի ուսումնասիրություն

36. Մասնակից պետության կողմից ներկայացվող ոչնչացման մանրամասն
ծրագրի ԵԼ
ստուգման նախատեսվող միջոցառումների հիման վրա, ինչպես նաև ԵԼՆԵԼԻՈՎ
ՆԱԽԻԿԻՆ
տեսչական ստուգումների փորձից՝ Տեխնիկական քարտուղարությունը
պատրաստում է
օբյեկտի ոչնչացման ստուգման ծրագիրը՝ սերտորեն խորհրդակցելով մասնակից
պետության հետ: Ցանկացած տարածայնություն Տեխնիկական
քարտուղարության ԵԼ
մասնակից պետության միջև համապատասխան միջոցառումների առնչությամբ
պետք է
կարգավորվի խորհրդակցությունների միջոցով: Ցանկացած չլուծված հարց
փոխանցվում
է Գործադիր խորհրդին համապատասխան միջոցառումների ընդունման համար՝
սույն

Կոնվենցիայի լրիվ իրականացմանը նպաստելու համար:

37. 5-րդ հոդվածի ԵԼ սույն մասի իրականացումն ապահովելու համար
Գործադիր
խորհուրդը ԵԼ մասնակից պետությունը համաձայնեցնում են ոչնչացման ԵԼ
ստուգման
հանրագումարային նախագծերը: Այդպիսի համաձայնեցումը պետք է ավարտվի
ոչ պակաս,
քան նախատեսվող ոչնչացման սկզբից 60 օր առաջ:

38. Գործադիր խորհրդի յուրաքանչյուր անդամ կարող է խորհրդակցել
Տեխնիկական
քարտուղարության հետ ոչնչացման ԵԼ ստուգման հանրագումարային ծրագրի
համարժեքությանը վերաբերող ցանկացած հարցով:
39. Ցանկացած դժվարության առկայության դեպքում Գործադիր խորհուրդը
խորհրդակցություններ է անցկացնում մասնակից պետության հետ դրանց լուծման
համար: Եթե ցանկացած դժվարություն մնում է չլուծված, ապա դա փոխանցվում
են

Չամաժողովին: Ցանկացած տարածայնության կարգավորում ոչնչացման
մեթոդների
վերաբերյալ չի ուշացնում ոչնչացման ծրագրի այլ մասերի իրականացումը, որոնք
ընդունելի են:

40. Այն դեպքում, երբ չի հաջողվում համաձայնություն ձեռք բերել Գործադիր
խորհրդի հետ ստուգման հարցերով կամ ստուգման հաստատված ծրագիրը
գործողության
մեջ դնելու անհնարինության դեպքում ոչնչացման ստուգումը իրականացվում է
տեղում

տեղադրվող սարքերի օգնությամբ անընդհատ դիտարկման ԵԼ տեսուչների
ֆիզիկական

ներկայության միջոցով:

41. Ոչնչացումը ԵԼ ստուգումը իրականացվում են համաձայնեցված ծրագրին

համապատասխան: Ստուգումը չի առաջացնում անիմաստ խոչընդոտներ ոչնչացման գործընթացի համար եւ իրականացվում է տեղում տեսուչների ներկայության միջոցով՝ ոչնչացման գործընթացին հավաստիանալու նպատակով:
42. Եթե ստուգման կամ ոչնչացման պահանջվող միջոցառումները չեն իրականացվում ծրագրին համապատասխան, ապա այդ մասին տեղեկացվում են բոլոր մասնակից պետությունները:

Գ. Ստուգում

Քիմիական զենքի արտադրության օբյեկտների հայտարարությունների ստուգումը տեղում տեսչական ստուգման միջոցով

43. Տեխնիկական քարտուղարությունը անց է կացնում քիմիական զենքի արտադրության յուրաքանչյուր օբյեկտի նախնական տեսչական ստուգում մասնակից պետության համար սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո՝ 90 եւ 120 օրվա միջեւ ընկած ժամանակահատվածում:

44. Նախնական տեսչական ստուգման նպատակները կայանում են հետեւյալում.

ա) հաստատել, որ քիմիական զենքի արտադրությունը արգելված է, եւ որ օբյեկտը

շահագործումից հանվել է սույն Կոնվենցիային համապատասխան,

բ) թույլատրել Տեխնիկական քարտուղարությանը ծանոթանալ օբյեկտում քիմիական

զենքի արտադրության արգելման ձեռնարկված միջոցառումներին,

գ) թույլատրել տեսուչներին տեղադրել ժամանակավոր կապարակնիքներ,

դ) թույլատրել տեսուչներին հաստատել շենքերի եւ մասնագիտացված սարքավորման

գույքագրային ցանկը,

ե) ստանալ տեղեկատվություն, որն անհրաժեշտ է օբյեկտում տեսչական ստուգման

գործունեության ծրագրման համար, ներառյալ կապարակնիքների օգտագործումը, որոնք

նշում են չսանկցիավորած միջամտությունը, եւ այլ համաձայնեցված սարքավորման,

որը տեղադրվում է տվյալ օբյեկտի համար՝ օբյեկտի վերաբերյալ մանրամասն համաձայնագրի համաձայն, եւ

զ) անցկացնել նախնական քննարկումներ օբյեկտում տեսչական ստուգման ընթացակարգերի մասին մանրամասն համաձայնագրի վերաբերյալ:

45. Քիմիական զենքի արտադրության յուրաքանչյուր օբյեկտում հայտարարված

առարկաների գույքագրման հստակության հեշտացման համար տեսուչները օգտագործում

են համապատասխան համաձայնեցված կապարակնիքներ, պիտակավորում եւ գույքագրային

հսկողության այլ ընթացակարգեր:

46. Տեսուչները տեղադրում են այնպիսի համաձայնեցված սարքեր, որոնք կարող

են պահանջվել քիմիական զենքի արտադրության յուրաքանչյուր վերսկսման հայտնաբերման համար կամ ցանկացած հայտարարված առարկայի դուրս հանման համար:

Նրանք նախագգուշության անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում, որպեսզի չխոչընդոտեն

փակման գործունեությանը, որն իրականացվում է տեսչական ստուգման ենթարկվող

մասնակից պետության կողմից: Տեսուչները կարող են վերադառնալ այդպիսի սարքերի

չվնասվածության ստուգման եւ սպասարկման համար:

47. Եթե նախնական տեսչական ստուգման հիման վրա Գլխավոր տնօրենը համարում

է, որ սույն Կոնվենցիային համապատասխան օբյեկտը շահագործումից հանելու համար

անհրաժեշտ են լրացուցիչ միջոցառումներ, ապա Գլխավոր տնօրենը ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան մասնակից պետության համար ուժի մեջ մտնելուց 135 օր հետո կարող է խնդրել այդպիսի միջոցառումների իրականացում տեսչական ստուգում իրականացնող մասնակից պետության կողմից ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան իր համար

ուժի մեջ մտնելուց 180 օր հետո: Իր հայեցողությամբ՝ տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը կարող է բավարարել այդ խնդրանքը: Եթե նա չի

բավարարում խնդրանքը, ապա տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը

եւ Գլխավոր տնօրենը անց են կացնում խորհրդակցություններ տվյալ հարցի կարգավորման նպատակով:

Քիմիական զենքի արտադրության օբյեկտների պարբերաբար ստուգումը եւ դրանց գործունեության դադարեցումը

48. Քիմիական զենքի արտադրության օբյեկտի պարբերաբար ստուգման նպատակը այն

է, որ ապահովվի քիմիական զենքի արտադրության ցանկացած վերսկսման հայտնաբերումը

կամ տվյալ օբյեկտում հայտարարված առարկաների դուրս հանումը:

49. Օբյեկտի մանրամասն համաձայնագրում քիմիական զենքի արտադրության յուրաքանչյուր օբյեկտի համար նշվում են.

ա) տեղում տեսչական ստուգման մանրամասն ընթացակարգերը, որոնք կարող են

ներառել.

i) տեսողական դիտարկումը,

ii) կապարակնիքների եւ այլ համաձայնեցված սարքերի ստուգումն ու սպասարկումը, եւ

iii) նմուշների ընտրությունը եւ անալիզը,

բ) կապարակնիքների օգտագործման ընթացակարգերը, որոնք վկայում են չսանկցիավորած միջամտության մասին, եւ համաձայնեցված այլ սարքավորման օգտագործման ընթացակարգերը օբյեկտի շահագործման վերսկսման չհայտնաբերված

կանխման համար՝ նշելով.

i) սարքի տեսակը, տեղը եւ ընթացակարգը, եւ

ii) այդպիսի կապարակնիքների եւ սարքավորման սպասարկման միջոցառումները, եւ

գ) այլ համաձայնեցված միջոցառումներ:

50. Կապարակնիքները կամ այլ հաստատված սարքավորում, որոնք նախատեսված են տվյալ օբյեկտի համար տեսչական ստուգման անցկացման միջոցառումների մասին

մանրամասն համաձայնագրում, սահմանվում են ոչ ուշ, քան մասնակից պետության

համար սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 240 օր հետո: Տեսուչներին թույլատրվում է հաճախել քիմիական զենքի արտադրության յուրաքանչյուր օբյեկտ

այդպիսի կապարակնիքների կամ սարքավորման տեղադրման համար:

51. Յուրաքանչյուր օրացուցային տարվա ընթացքում Տեխնիկական քարտուղարությանը թույլատրվում է անցկացնել քիմիական զենքի արտադրության

օբյեկտի մինչեւ չորս տեսչական ստուգում:

52. Գլխավոր տնօրենը ծանուցում է տեսչական ստուգման ենթարկվող մասնակից

պետությանը իր որոշման մասին տեսչական ստուգումն անցկացնելու կամ քիմիական

զենքի արտադրության օբյեկտի այցելության վերաբերյալ տեսչական խմբի օբյեկտ

ժամանելուց 48 ժամ առաջ՝ պարբերաբար տեսչական ստուգումների կամ այցելությունների համար: Տեսչական ստուգումների կամ այցելությունների անցկացման դեպքում անհետաձգելի խնդիրների լուծման համար այդ ժամանակաշրջանը

կարող է կրճատվել: Գլխավոր տնօրենը նշում է տեսչության կամ այցելության նպատակը:

53. Օբյեկտի վերաբերյալ համաձայնագրի համաձայն՝ տեսուչները անարգել կարող

են մուտք գործել քիմիական զենքի արտադրության օբյեկտի բոլոր մասերը: Տեսչական

ստուգման ենթարկվող՝ հայտարարված գույքագրային ցանկի առարկաները ընտրվում են

տեսուչների կողմից:

54. Տեղում պարբերաբար տեսչական ստուգումների հաճախականության որոշման

համար հիմնական սկզբունքները քննարկվում եւ հաստատվում են Համաժողովի կողմից՝

համաձայն 8-րդ հոդվածի 21 i կետի: Տեսչական ստուգման ենթակա կոնկրետ արտադրական օբյեկտը ընտրվում է Տեխնիկական քարտուղարության կողմից, որպեսզի

բացառվի օբյեկտի տեսչական ստուգման հստակ որոշելու հնարավորությունը:

Քիմիական զենքի արտադրության օբյեկտների ոչնչացման ստուգումը

55. Քիմիական զենքի արտադրության օբյեկտների ոչնչացման պարբերաբար ստուգումների նպատակը այն է, որ հաստատվի, որ օբյեկտը ոչնչացված է համաձայն

սույն Կոնվենցիայով վերցված պարտավորությունների, եւ որ հայտարարված

գույքագրային ցանկի յուրաքանչյուր առարկա ոչնչացված է ոչնչացման համաձայնեցված

մանրամասն ծրագրին համապատասխան:

56. Հայտարարված գույքագրային ցանկի բոլոր առարկաների ոչնչացման ավարտին

Տեխնիկական քարտուղարությունը հաստատում է մասնակից պետության համապատասխան

հայտարարությունը: Այդպիսի հաստատումից հետո Տեխնիկական քարտուղարությունը

դադարեցնում է քիմիական զենքի արտադրության օբյեկտի պարբերաբար ստուգումը եւ

անմիջապես հանում է բոլոր սարքավորումներն ու հսկողական սարքերը, որոնք տեղադրվել են տեսուչների կողմից:

57. Այդ հաստատումից հետո մասնակից պետությունը հայտարարություն է անում

այն մասին, որ օբյեկտը ոչնչացված է:

Քիմիական զենքի արտադրության օբյեկտը քիմիական զենքի ոչնչացման օբյեկտի ժամանակավոր վերասարքավորման ստուգումը

58. Ոչ ուշ, քան արտադրական օբյեկտի վերասարքավորում կատարելու մտադրության մասին նախնական ծանուցում ստանալուց 90 օր հետո տեսուչները իրավունք ունեն այցելելու օբյեկտ՝ ծանոթանալու նախատեսվող ժամանակավոր վերասարքավորման հետ եւ ուսումնասիրելու հնարավոր տեսչական միջոցառումները,

որոնք կապահանջվեն վերասարքավորման ընթացքում:

59. Այդպիսի այցելությունից ոչ ուշ, քան 60 օր հետո Տեխնիկական քարտուղարությունը եւ տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը

կնքում են անցումային համաձայնագիր, որը նախատեսում է լրացուցիչ տեսչական

միջոցառումներ ժամանակավոր վերասարքավորման ժամանակահատվածի համար: Անցումային

համաձայնագրում նշվում են տեսչական ստուգման ընթացակարգերը, ներառյալ կապարակնիքների, հսկողական սարքավորման եւ տեսչական ստուգումների օգտագործումը, որոնք կապահովեն համոզվածությունը նրանում, որ վերասարքավորման

ընթացքում չի իրականացվում քիմիական զենքի արտադրություն: Այդ համաձայնագիրը

մնում է ուժի մեջ ժամանակավոր վերասարքավորման գործունեության սկզբից մինչեւ

օբյեկտի գործելը որպես քիմիական զենքի ոչնչացման օբյեկտ:

60. Մինչեւ անցումային համաձայնագրի կնքումը տեսչական ստուգման ենթարկվող

մասնակից պետությունը չի իրականացնում դուրս հանում կամ վերասարքավորում

օբյեկտի ցանկացած մասի, ինչպես նաեւ չի հանում եւ չի փոխում ցանկացած կապարակնիք կամ այլ համաձայնեցված տեսչական սարքավորում, որը կարող է սահմանվել սույն Կոնվենցիայի համաձայն:

61. Օբյեկտի գործելու սկզբից, որպես քիմիական զենքի ոչնչացման օբյեկտ, դրա

վրա տարածվում են սույն Հավելվածի 4 Ա մասի դրույթները, որոնք կիրառելի են քիմիական գեների ոչնչացման օբյեկտների նկատմամբ: Մինչեւ շահագործման ժամանակահատվածի միջոցառումները կարգավորվում են անցումային համաձայնագրով:

62. Ոչնչացման գործողությունների ընթացքում տեսուչները կարող են մուտք գործել քիմիական գեների արտադրության ժամանակավոր վերասարքավորված օբյեկտներ,

ներառյալ նրանք, որոնք ուղղակի կապ չունեն քիմիական գեների ոչնչացման հետ:

63. Օբյեկտում մինչեւ ժամանակավոր վերասարքավորման աշխատանքների սկիզբը

քիմիական գեների ոչնչացման նպատակով եւ օբյեկտի գործողությունը դադարելուց հետո

որպես քիմիական գեների ոչնչացման օբյեկտ այդ օբյեկտի վրա տարածվում են սույն

մասի դրույթները, որոնք կիրառելի են քիմիական գեների արտադրության օբյեկտների

նկատմամբ:

Դ. Քիմիական գեների արտադրության օբյեկտների կոնվերսիա, որը չի արգելվում սույն Կոնվենցիայով

Կոնվերսիայի համար հայտ տալու ընթացակարգերը

64. Քիմիական գեների արտադրության օբյեկտի օգտագործման համար դիմումը սույն

Կոնվենցիայով չարգելվող նպատակներով կարող է տրվել ցանկացած օբյեկտի առնչությամբ, որը մասնակից պետությունը արդեն օգտագործում է այդպիսի նպատակներով մինչեւ սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը, կամ որը նա նախատեսում

է օգտագործել այդպիսի նպատակներով:

65. Քիմիական գեների արտադրության օբյեկտի առնչությամբ, որն օգտագործվում է

սույն Կոնվենցիայով չարգելվող նպատակներով, մասնակից պետության համար սույն

Կոնվենցիան ուժի մեջ մտնելու ժամանակ դիմումը ներկայացվում է Գլխավոր տնօրենին

ոչ ուշ, քան մասնակից պետության համար սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 30

օր հետո: Ի լրումն այն տվյալների, որոնք ներկայացվում են 1.ը iii կետի համաձայն, պարունակում է հետեւյալ տեղեկատվությունը.

ա) դիմումի մանրամասն հիմնավորումը,

բ) օբյեկտի կոնվերսիայի ընդհանուր ծրագիրը՝ հետեւյալի նշումով.

i) գործունեության բնույթը, որը պետք է իրականացվի օբյեկտում,

ii) եթե նախատեսվող գործունեությունը կապված է քիմիկատների

արտադրության,

վերամշակման կամ օգտագործման հետ՝ յուրաքանչյուր քիմիկատի անվանումը, օբյեկտի

բլոկ-գծագիրը եւ քանակությունը, որոնք նախատեսվում են տարեկան արտադրության,

վերամշակման կամ օգտագործման համար,

iii) ինչպիսի շենքեր կամ շինություններ են նախատեսվում օգտագործել, եւ

ինչպիսի փոփոխություններ են նախատեսվում, եթե այդպիսիք տեղ կգտնեն,
iv) ինչպիսի շենքեր եւ շինություններ են ոչնչացված կամ նախատեսվում են ոչնչացման համար եւ ոչնչացման ծրագրերը,

v) ինչպիսի սարքավորում է օգտագործվելու օբյեկտում,

vi) ինչպիսի սարքավորում է դուրս հանված եւ ոչնչացված, եւ ինչպիսի սարքավորում է նախատեսվում դուրս հանել եւ ոչնչացնել եւ դրա ոչնչացման ծրագրերը,

vii) կոնվերսիայի նախատեսվող ցուցակը, եթե դա ընդունելի է, եւ

viii) յուրաքանչյուր այլ տեղում գործող օբյեկտի գործունեության բնույթը, եւ

գ) մանրամասն բացատրություն, թե ինչպես "բ" ենթակետում շարադրված միջոցառումները, ինչպես նաեւ ցանկացած այլ միջոցառում, որը նախատեսվում է մասնակից պետության կողմից, կապահովեն օբյեկտում քիմիական զենքի արտադրության

պահեստային ներուժի արգելումը:

66. Քիմիական զենքի արտադրության օբյեկտի համար, որը չի օգտագործվում սույն Կոնվենցիայով չարգելվող նպատակներով, մասնակից պետության համար սույն

Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու ժամանակ դիմումը ներկայացվում է Գլխավոր տնօրենին ոչ ուշ, քան կոնվերսիայի մասին որոշումն ընդունելուց 30 օր հետո, բայց ոչ մի դեպքում ոչ ուշ, քան մասնակից պետության համար սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 4 տարի հետո: Դիմումը պարունակում է հետեւյալ տեղեկատվությունը.

ա) դիմումի մանրամասն հիմնավորումը, ներառյալ նրա տնտեսական պահանջները,

բ) օբյեկտի կոնվերսիայի ընդհանուր նախագիծը՝ հետեւյալի նշումով.

i) օբյեկտում իրականացման համար նախատեսվող գործունեության բնույթը,

ii) եթե նախատեսվող գործունեությունը կապված է քիմիկատների

արտադրության,

վերամշակման կամ օգտագործման հետ՝ յուրաքանչյուր քիմիկատի անվանումը, օբյեկտի

բլոկ-գծագիրը եւ այն քանակությունը, որը նախատեսված է տարեկան արտադրության,

վերամշակման եւ օգտագործման համար,

iii) ինչպիսի շենքեր կամ շինություններ են նախատեսվում օգտագործել, եւ ինչպիսի փոփոխություններ են նախատեսվում, եթե այդպիսիք տեղ կգտնեն,

iv) ինչպիսի շենքեր եւ շինություններ են ոչնչացված կամ նախատեսվում են ոչնչացման համար եւ ոչնչացման ծրագրերը,

v) ինչպիսի սարքավորում է օգտագործվելու օբյեկտում,

vi) ինչպիսի սարքավորում է դուրս հանված եւ ոչնչացված, եւ ինչպիսի սարքավորում է նախատեսվում դուրս հանել եւ ոչնչացնել եւ դրա ոչնչացման ծրագրերը,

vii) կոնվերսիայի նախատեսվող ցուցակը, եթե դա ընդունելի է, եւ

viii) յուրաքանչյուր այլ տեղում գործող օբյեկտի գործունեության բնույթը, եւ

գ) մանրամասն բացատրություն, թե ինչպես "բ" ենթակետում շարադրված միջոցառումները, ինչպես նաեւ ցանկացած այլ միջոցառում, որը նախատեսվում է մասնակից պետության կողմից, կապահովեն օբյեկտում քիմիական զենքի արտադրության

պահեստային ներուժի արգելումը:

67. Մասնակից պետությունը կարող է առաջարկել իր դիմումի մեջ ցանկացած այլ միջոցառում, որն ինքը նպատակահարմար է համարում վստահության ամրապնդման համար:

Գործողություններ մինչև որոշման ընդունումը

68. Մինչև Համաժողովի որոշումը մասնակից պետությունը կարող է շարունակել սույն Կոնվենցիայով չարգելվող նպատակներով օգտագործել օբյեկտը, որը օգտագործվում է այդպիսի նպատակներով մինչև իր համար սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը, բայց միայն այն դեպքում, եթե իր դիմումի մեջ մասնակից պետությունը հավաստում է, որ ոչ մի մասնագիտացված սարքավորում եւ ոչ մի մասնագիտացված շենք չի օգտագործվում, եւ որ մասնագիտացված սարքավորումը եւ մասնագիտացված շենքերը բերված են ոչ աշխատանքային վիճակի՝ 13-րդ կետում նշված մեթոդների օգտագործումով:

69. Եթե օբյեկտը, որի առնչությամբ տրվում է դիմումը, չի օգտագործվում սույն Կոնվենցիայով չարգելվող նպատակներով մինչև սույն Կոնվենցիան մասնակից պետության համար ուժի մեջ մտնելը, կամ եթե չի իրականացվում 68-րդ կետում պահանջվող հավաստիացում, ապա մասնակից պետությունը անմիջապես դադարեցնում է ամբողջ գործունեությունը 5-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն: Մասնակից պետությունը փակում է օբյեկտը, 13-րդ կետին համապատասխան, ոչ ուշ, քան իր համար սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 90 օր հետո:

Կոնվերսիայի պայմանները

70. Որպես քիմիական զենքի արտադրության օբյեկտի կոնվերսիայի պայման սույն Կոնվենցիայով չարգելվող նպատակներով՝ օբյեկտում ամբողջ մասնագիտացված սարքավորումը պետք է ոչնչացվի, եւ շենքերի ու շինությունների բոլոր հատուկ տարրերը, որոնք տարբերում են դրանք շենքերից ու շինություններից, որոնք սովորաբար օգտագործվում են սույն Կոնվենցիայով չարգելվող նպատակներով եւ կապված չեն 1-ին ցուցակի քիմիկատների հետ, պետք է վերացվեն:

71. Կոնվերսավորված օբյեկտը չի օգտագործվում.

ա) յուրաքանչյուր գործունեության համար, որը կապված է 1-ին ցուցակի կամ 2-րդ ցուցակի քիմիկատների արտադրության, վերամշակման կամ օգտագործման հետ, կամ

բ) յուրաքանչյուր բարձր թունավորություն ունեցող քիմիկատի արտադրության համար, ներառյալ ցանկացած բարձր թունավորության օրգանաֆոսֆորային քիմիկատը,

կամ յուրաքանչյուր այլ գործունեության համար, որը կպահանջեր հատուկ սարքավորում բարձր թունավորության կամ բարձր կոռոզիոն քիմիկատների հետ աշխատանքի համար, եթե Գործադիր խորհուրդը չորոշի, որ այդպիսի արտադրությունը

կամ գործունեությունը կապված չեն լինի սույն Կոնվենցիայի առարկայի կամ նպատակի

համար ռիսկի հետ, հաշվի առնելով թունավորության, կոռոզիոն լինելու չափանիշները

եւ, համապատասխան դեպքերում, այլ տեխնիկական գործոնները, որոնք ենթակա են

քննարկման եւ հաստատման Համաժողովի կողմից՝ 8-րդ հոդվածի 21 i կետի համաձայն:

72. Քիմիական գենքի արտադրության օբյեկտի կոնվերսիան ավարտվում է ոչ ուշ,

քան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 6 տարի հետո:

Գործադիր խորհրդի եւ Համաժողովի որոշումները

73. Ոչ ուշ, քան Գլխավոր տնօրենի կողմից դիմումը ստանալուց 90 օր հետո Տեխնիկական քարտուղարությունը անց է կացնում օբյեկտի նախնական տեսչական

ստուգում: Այդ տեսչական ստուգման նպատակը կայանում է նրանում, որ որոշվի դիմումի մեջ ներկայացված տեղեկատվության ճշգրտությունը, ստացվի կոնվերսիայի

նախատեսվող օբյեկտի տեխնիկական բնորոշումների մասին տեղեկատվություն եւ

գնահատվեն այն պայմանները, որոնց հիման վրա կարող է թույլատրվել դրա օգտագործումը սույն Կոնվենցիայով չարգելվող նպատակներով: Գլխավոր տնօրենը

անմիջապես Գործադիր խորհրդին, Համաժողովին եւ մասնակից պետություններին է

ներկայացնում գեկույց, որը պարունակում է իր առաջարկները այն միջոցառումների

առնչությամբ, որոնք անհրաժեշտ են օբյեկտի կոնվերսիան իրականացնելու համար

սույն Կոնվենցիայով չարգելվող նպատակներով եւ ապահովելու համար վստահությունը,

որ կոնվերսիայի ենթարկված օբյեկտը կօգտագործվի բացառապես սույն Կոնվենցիայով

չարգելվող նպատակներով:

74. Եթե օբյեկտը օգտագործվել է սույն Կոնվենցիայով չարգելվող նպատակներով

մինչեւ մասնակից պետության համար ուժի մեջ մտնելը եւ շարունակում է շահագործվել, իսկ 68-րդ կետին համապատասխան հաստատման ենթակա միջոցառումները

չեն ձեռնարկվել, ապա Գլխավոր տնօրենը անմիջապես տեղեկացնում է Գործադիր

խորհրդին, որը կարող է պահանջել այնպիսի միջոցառումների իրականացում, որոնք

ինքը նպատակահարմար է գտնում, ներառյալ, մնացյալի շարքում, օբյեկտի կանգնեցումը եւ մասնագիտացված սարքավորման դուրս հանումը եւ շենքերի ու

շինությունների վերափոխումը: Գործադիր խորհուրդը սահմանում է այդ միջոցառումների իրականացման ժամկետ եւ մինչեւ դրանց բավարար

իրականացումը

կասեցնում է դիմումի քննարկումը: Այդ ժամկետի ավարտից հետո օբյեկտը անմիջապես

ենթարկվում է տեսչական ստուգման, որպեսզի պարզվի, որ այդ միջոցառումները իրականացված են: Եթե այդ միջոցառումները իրականացված չեն, ապա մասնակից

պետությանը կարգադրվում է լրիվ դադարեցնել ամբողջ գործունեությունը օբյեկտում:

75. Գլխավոր տնօրենի գեկույցը ստանալուց հետո՝ հնարավորինս շուտ, Համաժողովը, Գործադիր խորհրդի առաջարկով, գեկույցը եւ ցանկացած կարծիք հաշվի

առնելով, որն արտահայտվել է մասնակից պետությունների կողմից, որոշում է դիմումը ընդունելու մասին հարցը եւ սահմանում է պայմաններ, որոնց հիման վրա տրվում է այդպիսի համաձայնությունը: Եթե ցանկացած մասնակից պետություն առարկում է դիմումի հաստատման եւ համապատասխան պայմանների դեմ, ապա շահագրգիռ

մասնակից պետությունների միջեւ 90 օրից ոչ ավելի ժամկետում անց են կացվում խորհրդակցություններ՝ փոխընդունելի որոշում գտնելու նպատակով: Դիմումի եւ համապատասխան պայմանների առնչությամբ, ինչպես նաեւ դրանց առաջարկվող ցանկացած

շտկման առնչությամբ որոշումը ընդունվում է ինչպես ըստ ելության հարցի դեպքում,

հնարավորինս արագ, խորհրդակցությունների ժամկետի ավարտից հետո:

76. Եթե դիմումը ընդունվում է, ապա ոչ ուշ, քան այդպիսի որոշումը ընդունելուց 90 օր հետո կազմվում է օբյեկտի վերաբերյալ համաձայնագիր: Օբյեկտի

վերաբերյալ համաձայնագիրը պարունակում է պայմաններ, որոնց հիման վրա թույլատրվում է օբյեկտի կոնվերսիան եւ օգտագործումը, ներառյալ ստուգման միջոցները: Մինչեւ օբյեկտի համաձայնագրի կնքումը կոնվերսիան չի սկսվում:

Կոնվերսիայի մանրամասն ծրագրեր

77. Ոչ պակաս, քան քիմիական գեների արտադրության օբյեկտի կոնվերսիայի նախատեսվող սկիզբը մասնակից պետությունը Տեխնիկական քարտուղարությանն է

ներկայացնում օբյեկտի կոնվերսիայի մանրամասն ծրագրերը, ներառյալ կոնվերսիայի

ստուգման համար նախատեսվող միջոցառումները, այլոց շարքում, հետեւյալի վերաբերյալ.

ա) կոնվերսիայի ենթակա օբյեկտում տեսուչների ներկայության ժամկետների, եւ

բ) իրականացման ենթակա միջոցառումների ստուգման ընթացակարգը հայտարարված

գույքագրային ցանկում յուրաքանչյուր առարկայի վերաբերյալ:

78. Քիմիական գեների արտադրության յուրաքանչյուր օբյեկտի կոնվերսիայի մանրամասն ծրագիրը պարունակում է.

ա) կոնվերսիայի գործընթացի մանրամասն գծագիրը,

բ) օբյեկտի նախագիծը մինչեւ եւ կոնվերսիայից հետո,

գ) օբյեկտի տեխնոլոգիական բլոկ-գծագիրը մինչեւ եւ, եթե դա կիրառելի է, կոնվերսիայից հետո,

դ) ոչնչացման ենթակա սարքավորումների, շենքերի եւ շինությունների եւ այլ

առարկաների մանրամասն գույքագրային ցանկը եւ վերափոխման ենթակա շենքերի եւ

շինությունների,

ե) իրականացման ենթակա միջոցառումները գույքագրային ցանկի յուրաքանչյուր

առարկայի առնչությամբ, եթե այդպիսիք տեղ են գտնում,

զ) ստուգման առաջարկվող միջոցները,

է) պաշտպանության/անվտանգության միջոցները, որոնք ենթակա են պահպանման

օբյեկտի կոնվերսիայի ընթացքում, եւ

ը) աշխատանքային եւ բնակկենցաղային պայմանները, որոնք ենթակա են տեսուչների ներկայացմանը:

Մանրամասն ծրագրերի քննարկումը

79. Մասնակից պետության կողմից ներկայացվող կոնվերսիայի մանրամասն ծրագրի

եւ ստուգումների առաջարկվող միջոցառումների հիման վրա, ինչպես նաեւ ելնելով

Նախկին տեսչական ստուգումների փորձից՝ Տեխնիկական քարտուղարությունը մասնակից

պետության հետ սերտ խորհրդակցություններում պատրաստում է օբյեկտի կոնվերսիայի

ստուգման ծրագիրը: Ցանկացած տարածայնություն մասնակից պետության եւ Տեխնիկական

քարտուղարության միջեւ համապատասխան միջոցառումների վերաբերյալ կկարգավորվի

խորհրդակցությունների միջոցով: Ցանկացած չկարգավորված հարց փոխանցվում է

Գործադիր խորհրդին՝ համապատասխան միջոցների ընդունման համար սույն Կոնվենցիայի

լրիվ իրականացումը հեշտացնելու նպատակով:

80. 5-րդ հոդվածի դրույթների եւ սույն մասի դրույթների իրականացումն ապահովելու նպատակով կոնվերսիայի եւ ստուգման ամփոփիչ ծրագրերը համաձայնեցվում

են Գործադիր խորհրդի եւ մասնակից պետության միջեւ: Այդ համաձայնեցումը ավարտվում է ոչ պակաս, քան կոնվերսիայի նախատեսվող սկզբից 60 օր առաջ:

81. Գործադիր խորհրդի յուրաքանչյուր անդամ կարող է խորհրդակցել Տեխնիկական

քարտուղարության հետ ցանկացած հարցով, որը վերաբերում է կոնվերսիայի եւ ստուգման ամփոփիչ ծրագրի համարժեքությանը:

82. Ցանկացած դժվարության առաջացման դեպքում Գործադիր խորհուրդը պետք է

խորհրդակցություններ անցկացնի մասնակից պետության հետ դրանց վերացման նպատակով: Եթե որեւէ դժվարություն մնա չհաղթահարված, ապա դա պետք է փոխանցվի

Չամաժողովին: Ցանկացած տարածայնության կարգավորում կոնվերսիայի մեթոդների

վերաբերյալ չպետք է ձգձգի կոնվերսիայի ծրագրի այլ բաժինների իրականացումը,

որոնք ընդունելի են:

83. Եթե չի հաջողվում համաձայնության գալ Գործադիր խորհրդի հետ ստուգման ասպեկտների առնչությամբ, կամ եթե ստուգման համաձայնեցված ծրագիրը չի կարող

գործողության մեջ դրվել, կոնվերսիայի ստուգումն իրականացվում է տեղում տեղադրվող սարքերի օգնությամբ անընդհատ ուսումնասիրության միջոցով եւ տեսուչների ֆիզիկական ներկայությամբ:

84. Կոնվերսիան եւ ստուգումը իրականացվում են համաձայնեցված ծրագրի համաձայն: Ստուգումը չի ստեղծում անհիմն խոչընդոտներ կոնվերսիայի գործընթացի

համար եւ անց է կացվում տեսուչների ներկայության միջոցով՝ կոնվերսիայի հաստատման համար:

85. 10 տարվա ընթացքում, այն բանից հետո, երբ Գլխավոր տնօրենը կհավաստի

կոնվերսիայի ավարտը, մասնակից պետությունը ցանկացած ժամանակ տեսուչներին

կտրամադրի անարգել մուտք դեպի օբյեկտ: Տեսուչները իրավունք ունեն իրականացնելու բոլոր տարածքների, գործունեության բոլոր տեսակների եւ օբյեկտի

սարքավորումների բոլոր առարկաների ուսումնասիրություն: Տեսուչներն իրավունք

ունեն ստուգելու գործունեության համապատասխանությունը օբյեկտում ցանկացած

պայմանի, որը սահմանվել է սույն բաժնի համաձայն՝ Գործադիր խորհրդի եւ Համաժողովի կողմից: Տեսուչները նաեւ իրավունք ունեն նաեւ, սույն Հավելվածի 2-րդ մասի Ե բաժնի դրույթների համաձայն, ստանալ նմուշներ օբյեկտի ցանկացած

տարածքից եւ դրանք անալիզի ենթարկել 1-ին ցուցակի քիմիկատների, դրանց հաստատուն երկրորդական ապրանքների եւ արտադրանքների քայքայման, ինչպես նաեւ

2-րդ ցուցակի քիմիկատների բացակայության ստուգման համար եւ օբյեկտում գործունեության համապատասխանության ստուգման համար այլ պայմանների հետ

քիմիական գործունեության առնչությամբ, որոնք սահմանված են սույն բաժնի համաձայն՝ Գործադիր խորհրդի եւ Համաժողովի կողմից: Տեսուչները նաեւ իրավունք

ունեն կարգավորվող մատչելիության, համաձայն սույն Հավելվածի 10-րդ մասի Գ բաժնի, դեպի արտադրական գոտի, որտեղ տեղակայված է օբյեկտը: Տասնամյա ժամանակաշրջանի ընթացքում Գործադիր խորհուրդը տարեկան զեկույց է ներկայացնում

գործունեության մասին կոնվերսիոն օբյեկտում: Տասնամյա ժամանակաշրջանի ավարտից

հետո Գործադիր խորհուրդը, հաշվի առնելով Տեխնիկական քարտուղարության առաջարկները, որոշում է ընդունում ստուգման հետագա միջոցառումների բնույթի

մասին:

86. Կոնվերսիայի ենթարկված օբյեկտի ստուգման ծախսերը բաշխվում են 5-րդ հոդվածի 19-րդ կետի համաձայն:

Մաս 6

Սույն Կոնվենցիայով չարգելվող գործունեություն՝ 6-րդ հոդվածին

համապատասխան

1-ին ցուցակի քիմիկատների եւ այդպիսի քիմիկատների հետ կապված օբյեկտների համար ռեժիմը

Ա. Ընդհանուր դրույթներ

1. Մասնակից պետությունը չի արտադրում, ձեռք բերում, պահպանում եւ օգտագործում 1-ին ցուցակի քիմիկատները մասնակից պետությունների տարածքներից դուրս եւ չի փոխանցում այդպիսի քիմիկատները իր տարածքի սահմաններից դուրս՝

բացառությամբ այլ մասնակից պետության:

2. Մասնակից պետությունը չի արտադրում, ձեռք բերում, պահպանում, փոխանցում

եւ օգտագործում 1-ին ցուցակի քիմիկատները՝ բացառությամբ դեպքերի, երբ.

ա) այդ քիմիկատները կիրառվում են հետազոտական, բժշկական, դեղագործական եւ պաշտպանական նպատակներով, եւ
բ) քիմիկատների տեսակները եւ քանակությունները խստորեն սահմանափակվում են այդ տեսակներով եւ քանակություններով, որոնք կարող են արդարացվել այդպիսի նպատակներով, եւ
գ) այդպիսի քիմիկատների հանրագումարային քանակությունը այդ նպատակների

համար նախատեսված ցանկացած որոշված ժամանակ կազմում է 1 տոննա կամ պակաս, եւ

դ) այդպիսի նպատակների համար հանրագումարային քանակությունը, որը ստացվել է մասնակից պետության կողմից ցանկացած տարի՝ արտադրության, քիմիական զենքի

պաշարներից առգրավման եւ փոխանցման միջոցով, կազմում է 1 տոննա կամ պակաս:

Բ. Փոխանցումներ

3. Մասնակից պետությունը կարող է փոխանցել 1-ին ցուցակի քիմիկատները իր տարածքի սահմաններից դուրս միայն այլ մասնակից պետության եւ միայն հետազոտական, դեղագործական եւ պաշտպանական նպատակներով՝ 2-րդ կետի համաձայն:

4. Փոխանցված քիմիկատները ենթակա չեն հետագա փոխանցման երրորդ պետության:

5. Ոչ պակաս, քան այլ մասնակից պետությանը փոխանցելուց 30 օր առաջ երկու

մասնակից պետություններն էլ Տեխնիկական քարտուղարությանը ծանուցում են այդպիսի

փոխանցման մասին:

5 bis. 5 միլիգրամ կամ պակաս քանակության համար 1-ին ցուցակի սաքսիտոքսին

քիմիկատի վրա չի տարածվում 5-րդ կետում նշված ծանուցման ժամանակահատվածը, եթե

փոխանցումը իրականացվում է բժշկական/ախտորոշիչ նպատակներով: Այդպիսի դեպքերում

ծանուցումը ներկայացվում է փոխանցման պահին:

6. Յուրաքանչյուր մասնակից պետություն անում է տարեկան մանրամասն հայտարարություն նախորդ տարում կատարված փոխանցումների մասին:

Այդպիսի

հայտարարությունը ներկայացվում է ոչ պակաս, քան այդ տարվա ավարտից 90 օր հետո

եւ 1-ին ցուցակի յուրաքանչյուր փոխանցված քիմիկատի համար ներառում է հետեւյալ

տեղեկատվությունը.

ա) քիմիական անվանումը, կառուցվածքային ձեւը եւ գրանցման համարը՝ ըստ "Քեմիքլ աբստրակտս սերվիս"-ի, եթե այդպիսին կա,

բ) քանակությունը, որը ստացվել է այլ պետությունների կողմից կամ փոխանցվել

է այլ մասնակից պետությունների: Ըստ յուրաքանչյուր փոխանցման՝ նշվում են քանակությունը, ստացողը եւ նպատակը:

Գ. Արտադրությունը

Արտադրության ընդհանուր սկզբունքները

7. Յուրաքանչյուր մասնակից պետություն արտադրության ընթացքում, 8-12-րդ կետերի համաձայն, առաջնային ուշադրություն է դարձնում մարդկանց անվտանգության

եւ շրջակա միջավայրի պահպանության ապահովմանը: Յուրաքանչյուր մասնակից

պետություն իրականացնում է այդպիսի արտադրություն, իր ազգային օրենսդրության

համապատասխան, անվտանգության եւ արտանետվածքների առնչությամբ:

Միակ փոքրամասշտաբ օբյեկտը

8. Յուրաքանչյուր մասնակից պետություն, որը արտադրում է 1-ին ցուցակի քիմիկատները հետազոտական, բժշկական, դեղագործական կամ պաշտպանական

նպատակներով, արտադրությունն իրականացնում է միակ փոքրամասշտաբ օբյեկտում, որը

հաստատվում է մասնակից պետության կողմից՝ բացառությամբ նրա, որը նախատեսված է

10-րդ, 11-րդ եւ 12-րդ կետերով:

9. Միակ փոքրամասշտաբ օբյեկտում արտադրությունը իրականացվում է ռեակցիոն

տարաներում արտադրական գծերում, որոնց կոնֆիգուրացիան հաշվարկված չէ աշխատանքի

անընդհատ ռեժիմի համար: Այդպիսի ռեակցիոն տարայի ծավալը չի գերազանցում 100

լիտրը, իսկ բոլոր 5 լիտրից ավելի ծավալով ռեակցիոն տարաների ընդհանուր ծավալը

չի գերազանցում 500 լիտրը:

Այլ օբյեկտներ

10. 1-ին ցուցակի քիմիկատների արտադրությունը, հանրագումարային քանակություններով տարեկան 10 կգ-ից ոչ ավելի, կարող է իրականացվել պաշտպանական նպատակներով, մեկ օբյեկտում, միակ փոքրամասշտաբ օբյեկտի

սահմաններից դուրս: Այդ օբյեկտը հաստատվում է մասնակից պետության կողմից:

11. 1-ին ցուցակի քիմիկատների արտադրությունը, տարեկան 100 գրամից ավելի

քանակությամբ, կարող է իրականացվել հետազոտական, բժշկական եւ դեղագործական

նպատակներով, միակ փոքրամասշտաբ օբյեկտի սահմաններից դուրս, հանրագումարային

քանակությամբ ոչ ավելի, քան տարեկան 10 կգ՝ օբյեկտի համար: Այդ օբյեկտները հաստատվում են մասնակից պետության կողմից:

12. 1-ին ցուցակի քիմիկատների սինթեզը հետազոտական, բժշկական կամ դեղագործական նպատակներով, բայց ոչ պաշտպանական, կարող է իրականացվել

լաբորատորիաներում՝ հանրագումարային քանակությամբ օբյեկտի համար տարեկան ոչ

ավելի, քան 100 գ: Այդ օբյեկտների համար չի տարածվում ոչ մի պարտավորություն

հայտարարության եւ ստուգման առնչությամբ, ինչպես նախատեսված է Դ եւ Ե բաժիններում:

Դ. Հայտարարություններ

Միակ փոքրամասշտաբ օբյեկտը

13. Յուրաքանչյուր մասնակից պետություն, որը նախատեսում է շահագործել միակ

փոքրամասշտաբ օբյեկտը, Տեխնիկական քարտուղարությանն է ներկայացնում այդ

օբյեկտի տեղակայման ճշգրիտ վայրը եւ դրա մանրամասն նկարագրությունը, ներառյալ

սարքավորման գույքագրային ցանկը եւ մանրամասն գծագրերը: Ըստ գոյություն ունեցող օբյեկտների՝ այդ նախնական հայտարարությունը ներկայացվում է ոչ ուշ, քան մասնակից պետության համար սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 30 օր հետո:

Նոր օբյեկտների մասին նախնական հայտարարությունները ներկայացվում են ոչ պակաս,

քան շահագործումից 180 օր առաջ:

14. Յուրաքանչյուր մասնակից պետություն նախօրոք Տեխնիկական քարտուղարությանն է ներկայացնում ծանուցում նախատեսվող

փոփոխությունների մասին

նախնական հայտարարության համեմատությամբ: Այդպիսի ծանուցումը ներկայացվում է

ոչ պակաս, քան 180 օր առաջ այն օրվանից, երբ տեղի են ունենում այդ փոփոխությունները:

15. 1-ին ցուցակի քիմիկատները արտադրող մասնակից պետությունը միակ

փոքրամասշտաբ օբյեկտում անում է տարեկան հայտարարություն օբյեկտի նախորդ տարվա գործունեության մասին: Հայտարարությունը ներկայացվում է ոչ ուշ, քան այդ տարվա

ավարտից 90 օր առաջ եւ ներառում է.

ա) օբյեկտի նույնացումը,
բ) օբյեկտում յուրաքանչյուր արտադրված, ձեռք բերված, սպառված կամ պահպանվող՝ 1-ին ցուցակի քիմիկատի վերաբերյալ հետեւյալ տեղեկատվությունը.

ի) քիմիական անվանումը, գրանցման համարը եւ կառուցվածքային բանաձեւը՝ ըստ

"Քեմիքլ արստրակտս սերվիս"-ի, եթե այդպիսին կա,

ii) օգտագործվող մեթոդները եւ արտադրված քանակությունը.

iii) 1-ին, 2-րդ կամ 3-րդ ցուցակներում թվարկված պրեկուրսորների անվանումը եւ այն քանակությունը, որն օգտագործվում է 1-ին ցուցակի քիմիկատների արտադրության համար,

iv) օբյեկտում սպառվող քանակությունը եւ սպառման նպատակը,

v) մասնակից պետությունում այլ օբյեկտներից ստացված քանակությունը կամ վերաբացված այլ օբյեկտներ,

vi) տարվա ընթացքում ցանկացած ժամանակ պահպանման տակ գտնվող առավելագույն

քանակությունը, եւ

vii) տարվա վերջում պահպանման տակ գտնվող քանակությունը, եւ

գ) տեղեկատվություն տարվա ընթացքում օբյեկտում ցանկացած

փոփոխության մասին

դրանից շուտ օբյեկտի՝ ներկայացված տեխնիկական մանրամասն

նկարագրությունների

համեմատությամբ, ներառյալ սարքավորումների գույքագրային ցուցակը եւ

մանրամասն

գծագրերը:

16. 1-ին ցուցակի քիմիկատը արտադրող յուրաքանչյուր մասնակից պետություն միակ փոքրամասշտաբ օբյեկտում անում է տարեկան մանրամասն հայտարարություն

նախատեսվող գործունեության մասին եւ հաջորդող տարում օբյեկտում

նախատեսվող

արտադրության մասին: Հայտարարությունը ներկայացվում է ոչ պակաս, քան այդ տարվա

սկզբից 90 օր առաջ եւ ներառում է.

ա) օբյեկտի նույնացումը,

բ) 1-ին ցուցակի քիմիկատի վերաբերյալ, որը ենթադրվում է օբյեկտում արտադրել, ձեռք բերել, սպառել կամ պահպանել, հետեւյալ տեղեկատվությունը.

ի) քիմիական անվանումը, գրանցման համարը եւ կառուցվածքային բանաձեւը՝ ըստ

"Քեմիքլ արստրակտս սերվիս"-ի, եթե այդպիսին կա,

ii) օգտագործվող մեթոդները եւ արտադրված քանակությունը,

գ) տեղեկատվություն տարվա ընթացքում օբյեկտում ցանկացած

փոփոխության մասին

դրանից շուտ օբյեկտի ներկայացված տեխնիկական մանրամասն

նկարագրությունների

համեմատությամբ, ներառյալ սարքավորումների գույքագրային ցուցակը եւ

մանրամասն

գծագրերը:

Այլ օբյեկտներ, որոնք նշված են 10-րդ եւ 11-րդ կետերում

17. Ըստ յուրաքանչյուր օբյեկտի՝ մասնակից պետությունը Տեխնիկական քարտուղարությանն է ներկայացնում օբյեկտի անվանումը, տեղակայման վայրը եւ

մանրամասն տեխնիկական նկարագրությունը կամ նրա համապատասխան մասը՝ համաձայն

Տեխնիկական քարտուղարության պահանջի: Կոնկրետ նշվում է օբյեկտը, որտեղ արտադրվում են պաշտպանական նպատակներով 1-ին ցուցակի քիմիկատները: Ըստ

գոյություն ունեցող օբյեկտների՝ այդ նախնական հայտարարությունը ներկայացվում է

ոչ ուշ, քան մասնակից պետության համար սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 30

օր առաջ: Ըստ նոր օբյեկտների՝ նախնական հայտարարությունները ներկայացվում են

ոչ պակաս, քան շահագործումից 180 օր առաջ:

18. Յուրաքանչյուր մասնակից պետություն նախօրոք Տեխնիկական քարտուղարությանն է ներկայացնում ծանուցում նախատեսվող փոփոխությունների մասին

նախնական հայտարարության համեմատությամբ: Այդպիսի ծանուցումը ներկայացվում է

ոչ պակաս, քան 180 օր առաջ այն բանից, երբ տեղի են ունենում այդ փոփոխությունները:

19. Յուրաքանչյուր մասնակից պետություն, ըստ յուրաքանչյուր օբյեկտի, անում է տարեկան հայտարարություն նախորդ տարում օբյեկտի գործունեության մասին: Այդ

հայտարարությունը ներկայացվում է ոչ ուշ, քան այդ տարվա ավարտից 90 օր հետո եւ

ներառում է.

ա) օբյեկտի նույնացումը,

բ) 1-ին ցուցակի յուրաքանչյուր քիմիկատի վերաբերյալ հետեւյալ տեղեկատվությունը.

i) քիմիկան անվանումը, գրանցման համարը եւ կառուցվածքային բանաձեւը՝ ըստ

"Քեմիքլ աբստրակտս սերվիս"-ի, եթե այդպիսին կա,

ii) արտադրված քանակությունը եւ, պաշտպանական նպատակներով արտադրության

դեպքում, օգտագործվող մեթոդները,

iii) 1-ին, 2-րդ կամ 3-րդ ցուցակներում թվարկված պրեկուրսորների անվանումը եւ այն քանակությունը, որն օգտագործվում է 1-ին ցուցակի քիմիկատների արտադրության համար,

iv) օբյեկտում սպառվող քանակությունը եւ սպառման նպատակը,

v) այլ օբյեկտներ փոխանցված քանակությունը մասնակից պետության սահմաններում: Ըստ յուրաքանչյուր փոխանցման՝ պետք է նշվեն քանակությունը, ստացողը եւ նպատակը,

vi) տարվա ընթացքում ցանկացած ժամանակ պահպանման տակ գտնվող առավելագույն

քանակությունը, եւ

vii) տարվա վերջում պահպանման տակ գտնվող քանակությունը, եւ
գ) տեղեկատվություն տարվա ընթացքում օբյեկտում ցանկացած
փոփոխության մասին
դրանից շուտ օբյեկտի ներկայացված տեխնիկական մանրամասն
նկարագրությունների
համեմատությամբ:

20. Յուրաքանչյուր մասնակից պետություն անում է տարեկան մանրամասն
հայտարարություն օբյեկտում սախատեսվող գործունեության եւ ենթադրվող
արտադրության մասին հաջորդ տարում: Հայտարարությունը ներկայացվում է ոչ
պակաս,

քան այդ տարվա սկզբից 90 օր առաջ եւ ներառում է.

ա) օբյեկտի նույնացումը,

բ) 1-ին ցուցակի քիմիկատի վերաբերյալ հետեւյալ տեղեկատվությունը.

ի) քիմիկական անվանումը, գրանցման համարը եւ կառուցվածքային բանաձեւը՝

ըստ

"Քեմիքլ արստրակտս սերվիս"-ի, եթե այդպիսին կա,

ii) արտադրության ենթադրվող ծավալը, ժամանակահատվածները, երբ
նախատեսվում

է իրականացնել արտադրությունը, եւ արտադրության նպատակները,

գ) տեղեկատվություն տարվա ընթացքում օբյեկտում ցանկացած
փոփոխության մասին
դրանից շուտ օբյեկտի՝ ներկայացված տեխնիկական մանրամասն
նկարագրությունների
համեմատությամբ:

Ե. Ստուգում

Միակ փոքրամասշտաբ օբյեկտը

21. Միակ փոքրամասշտաբ օբյեկտում ստուգման գործունեության նպատակը
կայանում է այն բանի ստուգման մեջ, որ 1-ին ցուցակի արտադրվող
քիմիկատների

քանակությունը հայտարարվում է ճիշտ եւ, մասնավորապես, որ դրանց
հանրագումարային քանակությունը չի գերազանցում 1 տոննան:

22. Օբյեկտը ենթակա է պարբերաբար ստուգման տեղում տեսչական
ստուգման

միջոցով եւ տեղում տեղադրվող սարքերի օգնությամբ դիտարկման միջոցով:

23. Կոնկրետ օբյեկտում տեսչական ստուգումների թիվը, ինտենսիվությունը,
երկարատեւությունը, ժամկետները եւ ռեժիմը որոշվում են կախված այն
վտանգավորությունից, ինչպիսին ներկայացնում են համապատասխան
քիմիկատները սույն

Կոնվենցիայի առարկայի եւ նպատակի համար, օբյեկտի
առանձնահատկությունները եւ

այնտեղ իրականացվող գործունեության բնույթը: Համապատասխան հիմնական
սկզբունքները ուսումնասիրվում են եւ հաստատվում Համաժողովի կողմից՝
համաձայն

8-րդ հոդվածի 21 i կետի:

24. Նախնական տեսչական ստուգման նպատակը կայանում է օբյեկտի մասին
ներկայացված տեղեկատվության ստուգման մեջ, ներառյալ 9-րդ կետում նշված
ռեակցիոն տարաների առնչությամբ սահմանափակումների ստուգումը:

25. Ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան մասնակից պետության համար ուժի մեջ

մտնելուց 180 օր հետո նա տիպային համաձայնագրի հիման վրա կնքում է Կազմակերպության հետ համաձայնագիր օբյեկտի վերաբերյալ, որը ներառում է օբյեկտի

համար տեսչական ստուգման մանրամասն ընթացակարգերը:

26. Յուրաքանչյուր մասնակից պետություն, որը նախատեսում է ստեղծել միակ փոքրամասշտաբ օբյեկտը սույն Կոնվենցիան իր համար ուժի մեջ մտնելուց հետո, Կազմակերպության հետ կնքում է համաձայնագիր օբյեկտի վերաբերյալ, որը ներառում

է օբյեկտի համար տեսչական ստուգման մանրամասն ընթացակարգերը մինչև էրա

շահագործվելը կամ օգտագործվելը:

27. Համաձայնագրերի օրինակը քննարկվում է հաստատվում է Համաժողովի կողմից՝ համաձայն 8-րդ հոդվածի 21 i կետի:

10-րդ եւ 11-րդ կետերում նշված այլ օբյեկտներ

28. 10-րդ եւ 11-րդ կետերում նշված ցանկացած օբյեկտում ստուգման գործունեության նպատակը կայանում է այն բանի ստուգման մեջ, որ.

ա) օբյեկտը չի օգտագործվում 1-ին ցուցակի ցանկացած քիմիկատի արտադրության

համար՝ բացառությամբ հայտարարված քիմիկատների,

բ) 1-ին ցուցակի քանակությունները, որոնք արտադրվում, վերամշակվում կամ սպառվում են, ճիշտ են հայտարարված եւ համապատասխանում են հայտարարված նպատակի

պահանջներին, եւ

գ) 1-ին ցուցակի քիմիկատը չի վերաուղարկվում կամ օգտագործվում այլ նպատակների համար:

29. Օբյեկտը ենթակա է պարբերաբար ստուգման տեղում տեսչական ստուգման եւ

տեղում տեղադրվող սարքերի օգնությամբ հսկողության միջոցով:

30. Կոնկրետ օբյեկտում տեսչական ստուգումների քանակությունը, ինտենսիվությունը, երկարատևությունը, ժամկետները եւ ռեժիմը կախված են այն վտանգից, որը ներկայացնում են սույն Կոնվենցիայի առարկայի եւ նպատակի համար

արտադրվող քիմիկատների քանակությունը, օբյեկտի առանձնահատկությունները եւ

այդտեղ իրականացվող գործունեության բնույթը: Համապատասխան հիմնական սկզբունքները հաստատվում են Համաժողովի կողմից՝ համաձայն 8-րդ հոդվածի 21 i

կետի:

31. Ոչ ուշ, քան մասնակից պետության համար սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 180 օր հետո նա տիպային համաձայնագրի հիման վրա կնքում է Կազմակերպության հետ, ըստ օբյեկտի, համաձայնագրի, որը ներառում է յուրաքանչյուր օբյեկտի համար տեսչական ստուգման մանրամասն ընթացակարգերը:

32. Յուրաքանչյուր մասնակից պետություն, որը նախատեսում է ստեղծել այդպիսի

օբյեկտ սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո, կնքում է Կազմակերպության հետ համաձայնագիր օբյեկտի վերաբերյալ մինչև էրա շահագործման կամ օգտագործման

սկիզբը:

Մաս 7

Գործունեություն, որը չի արգելվում սույն Կոնվենցիայով՝ 6-րդ հոդվածի համաձայն

2-րդ ցուցակի քիմիկատների եւ օբյեկտների համար ռեժիմը, որոնք կապված են այդպիսի քիմիկատների հետ

Ա. Հայտարարություններ

Հանրագումարային ազգային տվյալների հայտարարություններ

1. Նախնական եւ տարեկան հայտարարությունները, որոնք ներկայացվում են մասնակից պետության կողմից՝ 6-րդ հոդվածի 7-րդ եւ 8-րդ կետերի համաձայն, ներառում են հանրագումարային ազգային տվյալներ 2-րդ ցուցակի՝ արտադրված, վերամշակված, սպառված, ներմուծված եւ արտահանված յուրաքանչյուր քիմիկատի

քանակությունների մասին նախորդ օրացուցային տարվա ընթացքում, ինչպես նաեւ, ըստ

յուրաքանչյուր համապատասխան երկրի, ներմուծման եւ արտահանման քանակական

պարամետրերը:

2. Յուրաքանչյուր մասնակից պետություն ներկայացնում է.

ա) նախնական հայտարարություններ, համաձայն 1-ին կետի, ոչ ուշ, քան իր համար սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 30 օր հետո եւ սկսած հաջորդ օրացուցային տարուց,

բ) տարեկան հայտարարություններ ոչ ուշ, քան նախորդ օրացուցային տարվա ավարտից 90 օր հետո:

Արտադրական գոտիների հայտարարությունները, որոնք արտադրում, վերամշակում կամ սպառում են 2-րդ ցուցակի քիմիկատները

3. Նախնական եւ տարեկան հայտարարությունները պահանջվում են բոլոր արտադրական գոտիների համար, որոնք ներառում են մեկ կամ մի քանի ձեռնարկություններ, որոնցում ցանկացած տարվա ընթացքում նախորդ երեք օրացուցային տարիներից արտադրվել, վերամշակվել կամ սպառվել է կամ նախատեսվում

է արտադրել, վերամշակել կամ սպառել հաջորդ օրացուցային տարում ավելի.

ա) 1 կգ քիմիկատից, որը նշված է "*" նշանով 2-րդ ցուցակի Ա մասում,

բ) 100 կգ ցանկացած այլ քիմիկատի, որը ներառված է 2-րդ ցուցակի Ա մասում, կամ

գ) 1 տոննա քիմիկատի, որը ներառված է 2-րդ ցուցակի Բ մասում:

4. Յուրաքանչյուր մասնակից պետություն ներկայացնում է.

ա) նախնական հայտարարություններ՝ համաձայն 3-րդ կետի, ոչ ուշ, քան իր համար սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 30 օր հետո եւ սկսած հաջորդ օրացուցային տարուց,

բ) տարեկան հայտարարություններ նախորդ գործունեության մասին ոչ ուշ, քան

հաջորդ օրացուցային տարվա ավարտից 90 օր հետո,

գ) տարեկան հայտարարություններ ենթադրվող գործունեության մասին ոչ ուշ, քան հաջորդ օրացուցային տարվա սկզբից 60 օր առաջ: Ցանկացած այդպիսի

գործունեություն, որը նախատեսված է լրացուցիչ տարեկան հայտարարության ներկայացումից հետո, հայտարարվում է ոչ ուշ, քան այդ գործունեության սկզբից 5

օր առաջ:

5. 3-րդ կետի համաձայն՝ հայտարարությունները, որպես կանոն, չեն պահանջվում խառնուրդների համար, որոնք պարունակում են 2-րդ ցուցակի քիմիկատի ցածր կոնցենտրացիա: Համաձայն հիմնական սկզբունքների՝ դրանք պահանջվում են միայն այն դեպքերում, երբ այդպիսի խառնուրդից 2-րդ ցուցակի դուրս հանման հեշտությունը էլ դրա ընդհանուր քաշային քանակությունը համարվում են իրենցից ռիսկ ներկայացնող սույն Կոնվենցիայի առարկայի եւ նպատակի համար: Այդ հիմնական սկզբունքները քննարկվում էլ հաստատվում են Համաժողովի կողմից՝ համաձայն 8-րդ հոդվածի 21 i

կետի:

6. Արտադրական գոտիների հայտարարությունները՝ համաձայն 3-րդ կետի, ներառում են.

ա) արտադրական գոտու անվանումը եւ այն սեփականատիրոջ անվանումը, ընկերության կամ ձեռնարկության, որը այն շահագործում է,

բ) դրա ճիշտ տեղակայման վայրը, ներառյալ հասցեն, եւ

գ) ձեռնարկությունների քանակը արտադրական գոտու սահմաններում, որոնք հայտարարվում են՝ համաձայն սույն Հավելվածի 8-րդ մասի:

7. Արտադրական գոտու հայտարարությունները, համաձայն 3-րդ կետի, ներառում

են ըստ յուրաքանչյուր ձեռնարկության, որը տեղակայված է արտադրական գոտու սահմաններում եւ համապատասխանում է առանձնահատկություններին, նշված 3-րդ

կետում, հետեւյալ տեղեկատվությունը.

ա) ձեռնարկության եւ սեփականատիրոջ, այն շահագործող ընկերության կամ ձեռնարկության անվանումը,

բ) գտնվելու ճշգրիտ վայրը արտադրական գոտու սահմաններում, ներառյալ շենքի

կամ շինության կոնկրետ համարը, եթե այդպիսիք կան,

գ) նրա հիմնական գործունեությունը,

դ) ձեռնարկության առնչությամբ.

i) իրականացնում է արդյոք 2-րդ ցուցակի հայտարարված քիմիկատի(ների) արտադրություն, վերամշակում կամ սպառում,

ii) մասնագիտանում է այն գործունեության այդպիսի տեսակների վրա կամ հանդիսանում է բազմանպատակ, եւ

iii) իրականացնում է այն գործունեության այլ տեսակներ 2-րդ ցուցակի հայտարարված քիմիկատի(ների) նկատմամբ, ներառյալ այդ մյուս

գործունեության

առանձնահատկությունը (օրինակ՝ պահպանումը), եւ

ե) ձեռնարկության արտադրական ներուժը 2-րդ ցուցակի յուրաքանչյուր հայտարարված քիմիկատի առնչությամբ:

8. Արտադրական գոտու հայտարարությունները, համաձայն 3-րդ կետի, նաեւ ներառում են հետեւյալ տեղեկատվությունը 2-րդ ցուցակի յուրաքանչյուր քիմիկատի

առնչությամբ հայտարարության համար.

ա) օբյեկտի կողմից օգտագործվող քիմիական անվանումը, սովորական կամ առեւտրային անվանումը, կառուցվածքային բանաձեւը եւ գրանցման համարը՝ ըստ

"Քեմիքլ աբստրակտս սերվիս"-ի, եթե այդպիսին կա,

բ) նախնական հայտարարության դեպքում՝ արտադրական գոտու արտադրության,

վերամշակման, սպառման, ներմուծման եւ արտահանման ծավալը յուրաքանչյուր տարվա

համար՝ երեք նախորդ օրացուցային տարիներից,

գ) նախկին գործունեության մասին տարեկան հայտարարության դեպքում՝ արտադրական գոտու արտադրության, վերամշակման, սպառման, ներմուծման եւ արտահանման ընդհանուր ծավալը նախորդ օրացուցային տարվա ընթացքում,

դ) տարեկան հայտարարության դեպքում ենթադրվող գործունեության մասին՝ արտադրական գոտու ենթադրվող արտադրության, վերամշակման կամ սպառման ընդհանուր

ծավալը հաջորդ օրացուցային տարվա ընթացքում, ներառյալ արտադրության, վերամշակման կամ սպառման ենթադրվող ժամանակահատվածները,

ե) այն նպատակները, որոնցով իրականացվել են կամ կիրականացվեն արտադրությունը, վերամշակումը կամ քիմիկատի սպառումը.

i) տեղում վերամշակումը եւ սպառումը՝ ապրանքի տեսակների նշումով,

ii) մասնակից պետության տարածքի սահմաններում վաճառքը կամ մատակարարումը

կամ ցանկացած այլ տեղ, որը գտնվում է մասնակից պետության իրավագործության կամ

հսկողության ներքո՝ նշելով այլ ճյուղ, առեւտրային ֆիրման կամ նշանակման այլ վայրը եւ, ըստ հնարավորության, վերջնական արտադրանքի տեսակները,

iii) ուղղակի արտահանումը՝ նշելով համապատասխան պետությունները, կամ

iv) այլ՝ նշելով այդ այլ նպատակները:

Քիմիական գեւքի նպատակների համար 2-րդ ցուցակի քիմիկատների՝ նախորդ արտադրության մասին հայտարարություններ

9. Յուրաքանչյուր մասնակից պետություն ոչ ուշ, քան սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 30 օր հետո հայտարարում է բոլոր արտադրական գոտիները, ներառյալ

ձեռնարկությունները, որոնք արտադրել են 2-րդ ցուցակի քիմիկատը 1946 թվականի

հունվարի 1-ից քիմիական գեւքի նպատակների համար:

10. Արտադրական գոտու հայտարարությունները, 9-րդ կետին համապատասխան, ներառում են.

ա) արտադրական գոտու անվանումը եւ սեփականատիրոջ անվանումը, այն շահագործող ընկերության կամ ձեռնարկության անվանումը,

բ) դրա գտնվելու ճիշտ վայրը, ներառյալ հասցեն,

գ) ըստ յուրաքանչյուր ձեռնարկության, որը տեղակայված է արտադրական գոտու

սահմաններում եւ համապատասխանում է այն առանձնահատկություններին, որոնք

շարադրված են 9-րդ կետում՝ նույն տեղեկատվությունը, ինչը որ համաձայն 7-րդ կետի "ա"-ից "ե" ենթակետերը, եւ

դ) ըստ 2-րդ ցուցակի՝ յուրաքանչյուր քիմիկատի, որն արտադրվում է քիմիական զենքի նպատակների համար.

i) քիմիական անվանումը, սովորական եւ առեւտրային անվանումը, որն օգտագործվում է արտադրական գոտու կողմից քիմիական զենքի արտադրության նպատակների համար, կառուցվածքային բանաձեւը եւ գրանցման համարը՝ ըստ "Քեմիքլ

աբստրակտս սերվիս"-ի, եթե այդպիսին կա,

ii) քիմիկատի արտադրության ամսաթվերը եւ արտադրված քանակությունը, եւ

iii) տեղը, ուր տարվել է քիմիկատը եւ այնտեղ արտադրված վերջնական ապրանքը,

եթե այդպիսին հայտնի է:

Մասնակից պետություններին ներկայացվող տեղեկատվությունը

11. Արտադրական գոտիների ցանկը, որը հայտարարվել է սույն բաժնով, 6-րդ, 7.ա, 7.գ, 7.դ i, 7.դ iii, 8.ա եւ 10-րդ կետերի համաձայն հայտարարված տեղեկատվության հետ մեկտեղ, ըստ համապատասխան խնդրանքի, ուղարկվում է

Տեխնիկական քարտուղարության կողմից մասնակից պետություններին:

ԻՐՏԵԿ - շարունակությունը հաջորդ մասերում

ԿՈՆՎԵՆՑԻԱ

ՔԻՄԻԱԿԱՆ ՉԵՆՔԻ ՄՇԱԿՈՒՄԸ, ԱՐՏԱԴՐՈՒՄԸ, ԿՈՒՏԱԿՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ԱՐԳԵԼԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(6-րդ մաս)

Բ. Ստուգում

Ընդհանուր դրույթներ

12. 6-րդ հոդվածի 4-րդ կետում նախատեսված ստուգումը իրականացվում է տեղում

տեսչական ստուգումների միջոցով այն հայտարարված արտադրական գոտիների, որոնցում

գտնվում է մեկ կամ մի քանի ձեռնարկություն, որոնցում արտադրվել, վերամշակվել

կամ սպառվել է յուրաքանչյուր տարվա ընթացքում նախորդ երեք օրացուցային տարիներից կամ ենթադրվում է արտադրել, վերամշակել կամ սպառել հաջորդ օրացուցային տարում.

ա) 10 կգ քիմիկատից ավելի, որը նշված է "*" նշանով 2-րդ ցուցակի Ա մասում,

բ) ցանկացած քիմիկատի 1 տոննայից ավելի, որը ներառված է 2-րդ ցուցակի Ա մասում, կամ

գ) 10 տոննա քիմիկատից ավելի, որը ներառված է 2-րդ ցուցակի Բ մասում:

13. Կազմակերպության ծրագիրը եւ բյուջեն, որոնք ընդունվում են Համաժողովի

կողմից՝ 8-րդ հոդվածի 21.ա կետի համաձայն, պարունակում են առանձին խորագրով, սույն բաժնի համաձայն, ստուգման ծրագիրը եւ բյուջեն: Ռեսուրսների բաշխման ժամանակ, որոնք առանձնացվում են ստուգման համար, համաձայն 6-րդ հոդվածի, Տեխնիկական քարտուղարությունը առաջին երեք տարիների ընթացքում սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո առաջնային ուշադրություն է դարձնում արտադրական գոտիների առաջնային տեսչական ստուգումներին, որոնք հայտարարվում են համաձայն Ա մասի: Հետագայում այդպիսի բաշխումը ենթարկվում է վերանայման կուտակված փորձի հիման վրա:

14. Տեխնիկական քարտուղարությունը անց է կացնում նախնական տեսչական ստուգումներ եւ հետագա տեսչական ստուգումներ 15-22-րդ կետերի համաձայն:

Տեսչական ստուգումների նպատակները

15. Տեսչական ստուգումների ընդհանուր նպատակը կայանում է այն ստուգման մեջ, որ իրականացվող գործունեությունը համապատասխանում է սույն Կոնվենցիայով պարտավորություններին եւ համաձայնեցվում է տեղեկատվության հետ, որը ներկայացվում է հայտարարություններում: Տեսչական ստուգումների կոնկրետ նպատակները արտադրական գոտիներում, հայտարարվող Ա բաժնում, ներառում են.

ա) 1-ի ցուցակի ցանկացած քիմիկատի բացակայության եւ, հատկապես, դրա արտադրության ստուգումը՝ բացառությամբ արտադրության՝ սույն Հավելվածի 6-րդ

մասի համաձայն,

բ) 2-րդ ցուցակի քիմիկատների արտադրության, վերամշակման կամ սպառման ծավալների հայտարարությունների համապատասխանությունը,

գ) 2-րդ ցուցակի քիմիկատների ուղղությունը չփոխելը սույն Կոնվենցիայով արգելված գործունեության:

Առաջնային տեսչական ստուգումներ

16. Յուրաքանչյուր արտադրական գոտի, որը ենթակա է տեսչական ստուգման՝ համաձայն 12 կետի, առաջնային ստուգումը ընդունում է հնարավորինս շուտ, բայց

գերադասելի է սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան երեք տարի հետո: Արտադրական գոտիները, որոնք հայտարարվում են այդ

ժամանակահատվածից հետո,

ընդունում են նախնական տեսչական ստուգում ոչ ուշ, քան արտադրության, վերամշակման կամ սպառման առաջին հայտարարությունից մեկ տարի հետո:

Արտադրական

գոտիների ընտրությունը առաջնային տեսչական ստուգումների համար իրականացվում է

Տեխնիկական քարտուղարության կողմից այնպես, որ բացառվի արտադրական գոտու

տեսչական ստուգումների հստակ ժամկետների պարզումը:

17. Նախնական տեսչական ստուգման ընթացքում մշակվում է համաձայնագրի նախագիծ օբյեկտի տվյալ արտադրական գոտու համար, եթե տեսչական ստուգման

ենթարկվող մասնակից պետությունը եւ Տեխնիկական քարտուղարությունը ձեռք
չեն

բերում համաձայնություն այն բանի առնչությամբ, որ դրանում
անհրաժեշտություն

չկա:

18. Ինչ վերաբերում է հետագա տեսչական ստուգումների

հաճախականությանը եւ

ինտենսիվությանը, ապա տեսուչները նախնական տեսչական ստուգման
ընթացքում

գնահատում են սույն Կոնվենցիայի առարկայի եւ նպատակի համար
համապատասխան

քիմիկատների ռիսկը, որոնք համապատասխանում են արտադրական գոտու
առանձնահատկությանը, եւ այնտեղ իրականացվող գործունեության բնույթը՝
մնացյալի

շարքում հաշվի առնելով հետեւյալ չափանիշները.

ա) ցանկային քիմիկատների եւ դրանցից արտադրվող վերջնական
արտադրանքների

թունավորությունը, եթե այդպիսիք կան,

բ) ցանկային քիմիկատների քանակությունը, որոնք սովորաբար պահվում են
տեսչական ստուգման վայրում,

գ) սկզբնական քիմիկատների քանակությունը ցանկային քիմիկատների
արտադրության համար, որոնք սովորաբար պահվում են տեսչական ստուգման
վայրում,

դ) 2-րդ ցուցակի ձեռնարկությունների արտադրական ներուժը, եւ

ե) տեսչական ստուգման վայրում թունավոր քիմիկատների արտադրության,
պահպանման եւ լիցքավորման սկզբի համար վերասարքավորման
հնարավորությունը եւ

ներուժը:

Տեսչական ստուգումներ

19. Նախնական տեսչական ստուգումը ընդունելուց հետո յուրաքանչյուր
արտադրական գոտի, որը ենթակա է տեսչական ստուգման, համաձայն 12-րդ
կետի,

ենթակա է հետագա տեսչական ստուգումների:

20. Կոնկրետ արտադրական գոտիների ընտրության ժամանակ տեսչական
ստուգման

համար եւ տեսչական ստուգումների հաճախականությունը եւ ինտենսիվությունը
որոշելու համար Տեխնիկական քարտուղարությունը պատշաճորեն հաշվի է
առնում

համապատասխան քիմիկատի ռիսկը սույն Կոնվենցիայի առարկայի եւ նպատակի
համար,

արտադրական գոտու առանձնահատկությունները եւ այդտեղ իրականացվող
գործունեության բնույթը՝ հաշվի առնելով օբյեկտի վերաբերյալ

համապատասխան

համաձայնագիրը, ինչպես նաեւ առաջնային եւ հետագա տեսչական
ստուգումների

արդյունքները:

21. Տեխնիկական քարտուղարությունը ընտրում է կոնկրետ արտադրական
գոտի

տեսչական ստուգման համար այնպես, որ բացառվեն դրա տեսչական ստուգման կոնկրետ

օրերը:

22. Ոչ մի արտադրական գոտի չի ընդունում օրացուցային տարում երկու տեսչական ստուգումներից ավելի՝ սույն բաժնի դրույթների համաձայն: Սակայն դա չի սահմանափակում տեսչական ստուգումները՝ 9-րդ հոդվածին համապատասխան:

Տեսչական ստուգման ընթացակարգերը

23. Բացի համաձայնեցված հիմնական սկզբունքներից, սույն Հավելվածի այլ համապատասխան դրույթներից եւ Գաղտնիության Հավելվածից՝ կիրառվում են ներքոհիշյալ 24-30-րդ կետերը:

24. Ոչ ուշ, քան տեսչական ստուգման ավարտից 90 օր հետո տեսչական ստուգման

ենթարկվող մասնակից պետության եւ Կազմակերպության միջեւ կնքվում է համաձայնագիր օբյեկտի վերաբերյալ հայտարարված արտադրական գոտու համար, եթե

տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը եւ Տեխնիկական քարտուղարությունը ձեռք չեն բերում համաձայնություն այն բանի շուրջ, որ դրանում անհրաժեշտություն չկա: Օբյեկտի վերաբերյալ համաձայնագիրը կազմվում է

տիպային համաձայնագրի հիման վրա եւ կարգավորում է տեսչական ստուգումների

իրականացումը հայտարարված արտադրական գոտում: Այդ համաձայնագրում նշվում են

տեսչական ստուգումների հաճախականությունը եւ ինտենսիվությունը, ինչպես նաեւ

տեսչական ստուգման մանրամասն ընթացակարգերը, որոնք համատեղելի են 25-29-րդ

կետերի հետ:

25. Տեսչական ստուգման առարկա է 2-րդ ցուցակի հայտարարված ձեռնարկությունը

հայտարարված արտադրական գոտու սահմաններում: Եթե տեսչական խումբը հայցում է

արտադրական գոտու այլ մասերի նկատմամբ ազատ մուտք, ապա այդ մուտքը տրամադրվում

է սույն Հավելվածի 2-րդ մասի 51-րդ կետի համաձայն՝ պարզաբանումների տրման մասին պարտավորության համաձայն եւ համաձայն օբյեկտի վերաբերյալ

համաձայնագրի

կամ, օբյեկտի վերաբերյալ համաձայնագրի բացակայության դեպքում, կարգավորվող

ազատ մուտքի կանոնների համաձայն, որոնք շարադրված են սույն Հավելվածի 10-րդ

մասի Գ բաժնում:

26. Ապահովելու համար համոզմունքը հայտարարված քիմիկատի ուղղությունը փոխելու բացակայության մեջ եւ արտադրության համապատասխանությունը հայտարարություններին, համապատասխանաբար ազատ մուտք է թույլատրվում

դեպի

հաշվառման փաստաթղթերը:

27. Չհայտարարված ցանկային քիմիկատների բացակայության ստուգման նպատակով

իրականացվում է նմուշների ընտրություն եւ անալիզ:

28. Տարածքները, որոնք ենթակա են տեսչական ստուգման, կարող են ներառել.

ա) սկզբնական քիմիկատները (ռեագենտների) տեղ հասցնելու կամ պահպանելու

տարածքներ,

բ) այն տարածքները, որոնցում կատարվում են ռեագենտների հետ աշխատանքներ

մինչեւ դրանց բարձումը ռեակցիոն տարաների մեջ,

գ) հումքի տրամադրման ուղիները "ա" կամ "բ" ենթակետերում համապատասխանաբար

նշված տարածքներից ռեակցիոն տարաների մեջ համապատասխան փականների, ծախսաչափերի

հետ մեկտեղ եւ այլն,

դ) ռեակցիոն տարաների արտաքին մասը եւ օժանդակ սարքավորումը,

ե) այն ուղիները, որոնք տանում են ռեակցիոն տարաներից դեպի

կարճաժամկետ եւ

երկարաժամկետ պահպանման պահեստներ կամ 2-րդ ցուցակի հայտարարված քիմիկատների

հետագա վերամշակման սարքավորումներ,

զ) հսկողական սարքավորում, որը կապված է առարկաներից յուրաքանչյուրի հետ՝

համաձայն "ա"-ից "ե" ենթակետերի,

է) սարքավորում եւ տարածքներ արտանետվածքի եւ հոսքերի վերամշակման համար,

ը) առանձնահատկություններին չհամապատասխանող քիմիկատների հեռացման համար

սարքավորումներ եւ տարածքներ:

29. Տեսչական ստուգման ժամանակահատվածը չի գերազանցում 96 ժամը, սակայն

տեսչական խումբը եւ տեսչական ստուգման ենթարկվող պետությունը կարող են պայմանավորվել դրա երկարաձգումների մասին:

Ծանուցում տեսչական ստուգման մասին

30. Մասնակից պետությունը ծանուցվում է Տեխնիկական քարտուղարության կողմից

տեսչական ստուգման մասին ոչ պակաս, քան տեսչական խմբի՝ տեսչական ստուգման

ենթակա արտադրական գոտի ժամանելուց 48 ժամ առաջ:

Գ. Փոխանցումներ սույն Կոնվենցիայի մասնակից չհանդիսացող պետություններին

31. 2-րդ ցուցակի քիմիկատների փոխանցումը կամ ստացումը իրականացվում է

միայն մասնակից պետությունների միջեւ: Այդ պարտավորությունը ուժի մեջ է մտնում

սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց երեք տարի հետո:

32. Այդ միջանկյալ եռամյա ժամանակահատվածի ընթացքում յուրաքանչյուր

մասնակից պետություն պահանջում է վերջնական սպառողից հավաստում,
ինչպես դա
նշված է ստորել, 2-րդ ցուցակի քիմիկատների՝ սույն Կոնվենցիայի մասնակից
չհանդիսացող պետություններին փոխանցման վերաբերյալ: Այդպիսի
փոխանցումների
կապակցությամբ յուրաքանչյուր մասնակից պետություն ընդունում է անհրաժեշտ
միջոցներ՝ ապահովելու, որ փոխանցվող քիմիկատները օգտագործվեն միայն
սույն
Կոնվենցիայով չարգելվող նպատակներով: Այլոց շարքում մասնակից
պետությունը
պահանջում է ստացող պետությունից հավաստում, որում փոխանցվող
քիմիկատների
կապակցությամբ նշվում է հետևյալը.
ա) դրանք կօգտագործվեն միայն սույն Կոնվենցիայով չարգելվող
նպատակներով,
բ) դրանք չեն ենթարկվի հետագա փոխանցման,
գ) դրանց տեսակները եւ քանակությունը,
դ) դրանց վերջնական օգտագործումը, եւ
ե) վերջնական սպառողի(ների) անվանումը(ները) եւ հասցեն(ները):

Մաս 8

6-րդ հոդվածին համապատասխան՝ սույն Կոնվենցիայով չարգելվող
գործունեություն

Ռեժիմ 3-րդ ցանկի քիմիկատների եւ նման քիմիկատների հետ կապված
օբյեկտների համար

Ա. Հայտարարություններ

Միագումար ազգային տվյալների հայտարարություններ

1. 6-րդ հոդվածի 7-րդ եւ 8-րդ կետերին համապատասխան՝ մասնակից
պետությունների տրամադրած նախնական եւ ամենամյա հայտարարությունները
ներառում

են միագումար ազգային տվյալներ նախորդ օրացուցային տարում 3-րդ ցանկի
յուրաքանչյուր քիմիկատի՝ արտադրված, ներմուծված եւ արտահանված
քանակների

մասին, ինչպես նաեւ յուրաքանչյուր համապատասխան երկրի ներմուծման եւ
արտահանման քանակական չափանիշները:

2. Յուրաքանչյուր մասնակից պետություն տրամադրում է.

ա) 1-ին կետին համապատասխան՝ նախնական հայտարարություններ իր
համար սույն

Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 30 օր հետո եւ սկսած հաջորդ
օրացուցային տարուց,

բ) ամենամյա հայտարարություններ ոչ ուշ, քան նախորդ օրացուցային տարվա
ապարտից 90 օր հետո:

3-րդ ցանկի քիմիկատներ արտադրող արտադրական գոտիների
հայտարարություններ

3. Նախնական եւ ամենամյա հայտարարությունները պահանջվում են բոլոր

արտադրական գոտիների համար, որոնք ներառում են մեկ կամ ավել ձեռնարկություններ, որտեղ նախորդ օրացուցային տարում արտադրվել է կամ հաջորդ օրացուցային տարում ենթադրվում է արտադրել 3-րդ ցանկի 30 տոննայից ավել քիմիկատ:

4. Յուրաքանչյուր մասնակից պետություն ներկայացնում է.

ա) 3-րդ ցանկին համապատասխան՝ նախնական հայտարարություններ իր համար սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ, քան 30 օր հետո եւ սկսած հաջորդ օրացուցային տարուց,

բ) նախորդ գործունեության մասին ամենամյա հայտարարություններ ոչ ուշ, քան

նախորդ օրացուցային տարվա ավարտից 90 օր հետո,

գ) ամենամյա հայտարարություններ ենթադրվող գործունեության մասին հաջորդ

օրացուցային տարվա սկսվելուց ոչ ուշ, քան 60 օր առաջ: Ցանկացած նման գործունեություն, որը լրացուցիչ պլանավորվում է ամենամյա հայտարարության ներկայացումից հետո, հայտարարվում է ոչ ուշ, քան այդ գործունեությունը սկսելուց 5 օր առաջ:

5. 3-րդ կետին համապատասխան հայտարարությունները, որպես կանոն, չեն պահանջվում 3-րդ ցանկի քիմիկատների ցածր կոնցենտրացիա պարունակող խառնուրդների

համար: Հիմնական սկզբունքներին համապատասխան՝ դրանք պահանջվում են միայն այն

դեպքերում, երբ 3-րդ ցանկի քիմիկատի ստացման դյուրությունը այդ խառնուրդից եւ

դրա ընդհանուր կշռային քանակությունը համարվում են իրենցից ռիսկ ներկայացնող

սույն Կոնվենցիայի առարկայի եւ նպատակի համար: Այդ հիմնական սկզբունքները

քննարկվում եւ հաստատում է Համաժողովը՝ 8-րդ հոդվածի 21-րդ կետի i ենթակետին

համապատասխան:

6. 3-րդ կետի համաձայն՝ արտադրական գոտիների հայտարարությունները ներառում են.

ա) արտադրական գոտու եւ այն շահագործող սեփականատիրոջ, ընկերության կամ

ձեռնարկության անվանումը,

բ) դրա ճշգրիտ տեղակայումը, ներառյալ հասցեն, եւ

գ) արտադրական գոտու սահմաններում ձեռնարկությունների քանակը, որոնք հայտարարվում են սույն Հավելվածի 7-րդ մասի համաձայն:

7. Արտադրական գոտու հայտարարությունները, 3-րդ կետի համաձայն, ներառում

են արտադրական գոտու սահմաններում տեղակայված եւ 3-րդ կետում նշված հատկորոշումներին համապատասխանող յուրաքանչյուր ձեռնարկության մասին հետեւյալ

տեղեկությունները.

ա) ձեռնարկության եւ այն շահագործող սեփականատիրոջ, ընկերության կամ ձեռնարկության անվանումը,

բ) արտադրական գոտու սահմաններում դրա ճշգրիտ տեղակայումը, ներառյալ շենքի

կամ շինության կոնկրետ համարը, եթե դրանք առկա են,

գ) նրա հիմնական գործունեությունը:

8. Արտադրական գոտու հայտարարությունները, 3-րդ կետի համաձայն, նաև ներառում են 3-րդ ցանկի յուրաքանչյուր քիմիկատի վերաբերյալ հայտարարված շեմից

ավելի հետեւյալ տեղեկությունները.

ա) քիմիական անվանումը, օբյեկտի կողմից օգտագործվող սովորական կամ առեւտրային անվանումը, կառուցվածքային ձեւաչափը եւ, "Քեմիքլ աբստրակտս սերվիսի"-ի համաձայն, գրանցման համարը, եթե այն շնորհվել է,

բ) նախորդ օրացուցային տարում քիմիկատի արտադրության մոտավոր ծավալը կամ,

ենթադրվող գործունեության մասին հայտարարությունների դեպքում, հաջորդ օրացուցային տարում արտադրության ենթադրվող ծավալը, որն արտահայտվում է

հետեւյալ ծավալներով. 30-200 տոննա, 200-1000 տոննա, 1000-10000 տոննա, 10000-100000 տոննա եւ 100000 տոննայից բարձր, եւ

գ) նպատակները, որոնց համաձայն արտադրվել է կամ կարտադրվի քիմիկատը:

Քիմիական զենքի նպատակների համար 3-րդ ցանկի քիմիկատների նախկին արտադրության մասին հայտարարություններ

9. Յուրաքանչյուր մասնակից պետություն իր համար սույն Կոնվենցիան ուժի մեջ

մտնելուց ոչ ուշ, քան 30 օր հետո հայտարարում է բոլոր այն արտադրական գոտիները, որոնք ներառում են քիմիական զենքի նպատակների համար 1946 թվականի

հունվարի 1-ից ցանկացած ժամանակ 3-րդ ցանկի քիմիկատ արտադրող ձեռնարկություններ:

10. Արտադրական գոտու հայտարարությունները, 9-րդ կետի համաձայն, ներառում են.

ա) արտադրական գոտու եւ այն շահագործող սեփականատիրոջ, ընկերության կամ

ձեռնարկության անվանումը,

բ) դրա ճշգրիտ տեղակայումը, ներառյալ հասցեն,

գ) արտադրական գոտու սահմաններում տեղակայված եւ 9-րդ կետում շարադրված

հատկորոշումներին համապատասխանող յուրաքանչյուր ձեռնարկության մասին այն նույն

տեղեկությունները, ինչ 7-րդ կետի "ա"- "գ" ենթակետերի համաձայն, եւ

դ) քիմիական զենքի նպատակների համար արտադրվող՝ 3-րդ ցանկի յուրաքանչյուր

քիմիկատի համարը,

ի) քիմիական անվանումը, քիմիական զենքի արտադրության նպատակների համար

արտադրական գոտու կողմից օգտագործվող սովորական կամ առեւտրային անվանումը,

կառուցվածքային ձեւաչափը եւ, "Քեմիքլ աբստրակտս սերվիսի"-ի համաձայն, գրանցման

համարը, եթե այն շնորհվել է,

ii) քիմիկատի արտադրության տարեթիվը եւ արտադրված քանակությունը, եւ

iii) վայրը, որտեղ բերվել է քիմիկատը եւ այնտեղ արտադրված վերջնական արտադրանքը, եթե այն հայտնի է:

Մասնակից պետություններին տրամադրվող տեղեկությունները

11. Սույն բաժնի համաձայն հայտարարված արտադրական գոտիների ցանկը 6-րդ, 7.ա, 7.գ, 8.ա եւ 10-րդ կետերի համաձայն ներկայացվող տեղեկությունների հետ, համապատասխան ինդրանքով, Տեխնիկական քարտուղարությունը փոխանցում է մասնակից պետություններին:

Բ. Ստուգում
Ընդհանուր դրույթներ

12. 6-րդ հոդվածի 5-րդ կետում նախատեսված ստուգումը իրականացվում է այն արտադրական գոտիների վայրերում տեսչական ստուգումներ անցկացնելու միջոցով, որտեղ նախորդ օրացուցային տարվա ընթացքում արտադրվել է կամ ենթադրվում է

հաջորդ օրացուցային տարում արտադրել 30 տոննա հայտարարված չափից ավելի,

ընդհանուր առմամբ 3-րդ ցանկի ցանկացած քիմիկատի 200 տոննայից ավելի:

13. 8-րդ հոդվածի 21-րդ կետի "ա" ենթակետի համաձայն՝ Համաժողովի կողմից ընդունվող Կազմակերպության ծրագիրը եւ բյուջեն առանձին բաժնով պարունակում են

ստուգման ծրագիրը եւ բյուջեն՝ հաշվի առնելով սույն Հավելվածի 7-րդ մասի 13-րդ կետը:

14. Սույն բաժնին համաձայն՝ Տեխնիկական քարտուղարությունը տեսչական ստուգում անցկացնելու համար իրականացնում է արտադրական գոտիների կամայական

ընտրություն այնպիսի համապատասխան միջոցների միջոցով, ինչպիսիք են հատուկ

մշակված համակարգչային ծրագրերը՝ հաշվի առնելով հետեւյալ նշանակություն ունեցող գործոնները.

ա) տեսչական ստուգումների արդարացի աշխարհագրական բաշխումը, եւ

բ) Տեխնիկական քարտուղարության տրամադրության տակ եղած՝

հայտարարված

արտադրական գոտիների վերաբերյալ տեղեկությունները վերաբերում են համապատասխան

քիմիկատին, արտադրական գոտու առանձնահատկություններին եւ այնտեղ իրականացվող

գործունեության բնույթին:

15. Ոչ մի արտադրական գոտի, սույն բաժնի դրույթներին համապատասխան, չի

ընդունում տարեկան երկուսից ավելի տեսչական ստուգում: Սակայն դա չի սահմանափակում տեսչական ստուգումները՝ 9-րդ հոդվածին համաձայն:

16. Սույն բաժնին համապատասխան՝ տեսչական ստուգումների համար արտադրական

գոտիների ընտրության դեպքում Տեխնիկական քարտուղարությունը, սույն մասի եւ

սույն Հավելվածի 9-րդ մասի համաձայն, օրացուցային տարում մասնակից պետության կողմից ընդունվող տեսչական ստուգումների ընդհանուր թվի վերաբերյալ պահպանում է հետևյալ սահմանափակումը. տեսչական ստուգումների ընդհանուր թիվը չի գերազանցում երեք գումարած ինչպես սույն մասով, այնպես էլ սույն Հավելվածի 9-րդ մասին համաձայն մասնակից պետության կողմից հայտարարվող արտադրական գոտիների ընդհանուր թվի 5 տոկոսը կամ 20 տեսչական ստուգումներ՝ կախված նրանից, թե այդ թվերից որն է պակաս:

Տեսչական ստուգման նպատակները

17. Ա բաժնին համաձայն հայտարարվող արտադրական գոտիներում տեսչական ստուգումների ընդհանուր նպատակն է կատարվող գործունեության համատեղության՝ հայտարարություններում ներկայացվող տեղեկությունների հետ ստուգումը: Տեսչական ստուգումների կոնկրետ նպատակը կայանում է 1-ին ցանկի ցանկացած քիմիկատի բացակայության եւ հատկապես նրա արտադրության ստուգման մեջ՝ բացառությամբ սույն Հավելվածի 6-րդ մասի համապատասխան արտադրության:

Տեսչական ստուգման ընթացակարգերը

18. Բացի համաձայնեցված հիմնական սկզբունքներից, սույն Հավելվածի այլ համապատասխան դրույթներից եւ Գաղտնիության մասին Հավելվածից՝ կիրառվում են ներքոնշյալ 19-ից 25-րդ կետերը:

19. Օբյեկտի վերաբերյալ համաձայնագիրը չի կնքվում, եթե դրա մասին չի խնդրում տեսչության ենթարկվող մասնակից պետությունը:

20. Հայտարարված արտադրական գոտու սահմաններում տեսչական ստուգումների առարկա է(են) հանդիսանում 3-րդ ցանկի հայտարարված ձեռնարկությունը(ները): Եթե

տեսչական խումբը, սույն Հավելվածի 2-րդ մասի 51-րդ կետին համապատասխան, անորոշությունները վերացնելու նպատակով արտադրական գոտու այլ մասեր մուտք

գործելու թույլտվություն է խնդրում, ապա նման մուտք գործելու աստիճանը համաձայնեցվում է տեսչական խմբի եւ տեսչական ստուգման ենթարկվող մասնակից

պետության միջեւ:

21. Տեսչական խումբը կարող է հաշվառման փաստաթղթերի հետ աշխատելու թույլտվություն ստանալ այն դեպքերում, երբ տեսչական խումբը եւ տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը համարեն, որ նման թույլտվությունը

կնպաստի տեսչական ստուգման նպատակների ձեռքբերմանը:

22. Չհայտարարված ցանկային քիմիկատների բացակայության ստուգման համար տեղում կարող է կատարվել նմուշների ընտրություն եւ հետազոտում: Եթե անորոշությունները վերացնել չի հաջողվում, ապա նմուշները, տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության համաձայնությամբ, կարող են հետազոտման ենթարկվել օբյեկտի սահմաններից դուրս նշանակված լաբորատորիայում:

23. Տեսչական ստուգման ենթակա վայրերը կարող են ներառել.

- ա) սկզբնական քիմիկատների (ռեակտիվների) տեղ հասցնելու կամ պահպանելու վայրերը,
- բ) վայրերը, որտեղ աշխատանքներ են կատարվում ռեակտիվների հետ մինչեւ ռեակտիվային անոթ դրանք բեռնելը,
- գ) համապատասխանաբար, "ա" եւ "բ" ենթակետերում նշված վայրերից ռեակտիվային անոթ հումքի մատակարարման հոսքեր ցանկացած այլ կլայանների, ծախսաչափերի հետ միասին,
- դ) ռեակտիվային անոթների արտաքին մասը եւ օժանդակ սարքավորումները,
- ե) ռեակտիվային անոթներից երկարաժամկետ կամ կարճաժամկետ պահպանման պահեստներ կամ սարքավորումներ տանող հոսքեր՝ 3-րդ ցանկի հայտարարված քիմիկատների հետագա վերամշակման համար,
- զ) "ա"-ից "ե" ենթակետերին համաձայն՝ առարկաներից յուրաքանչյուրի հետ կապված հսկիչ սարքավորումը,
- է) թափոնների եւ ջրհոսքերի վերամշակման համար սարքավորումը եւ վայրերը,
- ը) առանձնահատկություններին չհամապատասխանող քիմիկատների վերացման համար

սարքավորումը եւ վայրերը:

24. Տեսչական ստուգումների ժամանակահատվածը չի գերազանցում 24 ժամը. սակայն տեսչական խումբը եւ տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը կարող են պայմանավորվել այն երկարաձգելու մասին:

25. Տեխնիկական քարտուղարությունը տեսչական ստուգման մասին տեղեկացնում է մասնակից պետությանը՝ տեսչական ստուգման ենթակա արտադրական գոտի տեսչական խմբի ժամանելուց առնվազն 120 ժամ առաջ:

Գ. Սույն Կոնվենցիայի մասնակիցներ չհանդիսացող պետությունների փոխանցումներ

26. Սույն Կոնվենցիայի մասնակիցներ չհանդիսացող պետություններին 3-րդ ցանկի քիմիկատների փոխանցման դեպքում յուրաքանչյուր մասնակից պետություն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում ապահովելու համար, որ փոխանցվող նման քիմիկատները օգտագործվեն սույն Կոնվենցիայով չարգելված նպատակներով: Ի թիվս այլոց, մասնակից պետությունը ստացող մասնակից պետությունից պահանջում է վկայագիր, որտեղ փոխանցվող քիմիկատների հետ կապված նշվում է հետեւյալը.

ա) դրանք կօգտագործվեն միայն սույն Կոնվենցիայով չարգելվող նպատակներով,

բ) դրանք չեն ենթարկվի հետագա փոխանցման,

գ) դրանց տեսակները եւ քանակները,

դ) դրանց վերջնական օգտագործումը, եւ

ե) վերջնական սպառողի անվանումը(ները) եւ հասցեն(ները):

27. Սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց 5 տարի հետո Համաժողովը քննարկում է սույն Կոնվենցիայի մասնակից չհանդիսացող պետություններին 3-րդ ցանկի քիմիկատների փոխանցումների առնչությամբ այլ միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը:

Մաս 9

6-րդ հոդվածին համապատասխան՝ սույն Կոնվենցիայով չարգելվող գործունեություն

Ռեժիմ այլ քիմիական արտադրական օբյեկտների համար

Ա. Հայտարարություններ

Այլ քիմիական արտադրական օբյեկտների ցանկ

1. 6-րդ հոդվածի 7-րդ կետին համաձայն՝ յուրաքանչյուր մասնակից պետության կողմից տրամադրվող նախնական հայտարարությունը ներառում է բոլոր արտադրական գոտիների ցանկը, որոնք.

ա) նախորդ օրացուցային տարվա ընթացքում սինթեզի միջոցով արտադրել են 200

տոննա ոչ ցուցակային կոնկրետ օրգանական քիմիկատներ, կամ

բ) ներառում է մեկ կամ ավել ձեռնարկություններ, որտեղ նախորդ օրացուցային տարվա ընթացքում սինթեզի միջոցով արտադրվել է 30 տոննայից ավելի ոչ ցուցակային

կոնկրետ օրգանական քիմիկատներ, որոնք պարունակում են ֆոսֆոր, ծծումբ կամ ֆտոր

(այսուհետ՝ "ՖՕՖ-ձեռնարկություններ" եւ "ՖՕՖ-քիմիկատներ"):

2. 1-ին կետի համաձայն ներկայացման ենթակա այլ քիմիական արտադրական օբյեկտների ցանկը չի ներառում այն արտադրական գոտիները, որոնք արտադրում են

բացառապես պայթուցիկ նյութեր կամ ածխաջրածիններ:

3. Յուրաքանչյուր մասնակից պետություն, 1-ին կետին համաձայն, որպես իր նախնական հայտարարության մաս՝ ներկայացնում է այլ քիմիական արտադրական

օբյեկտների իր ցանկը սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 30 օր

հետո: Յուրաքանչյուր մասնակից պետություն ոչ ուշ, քան յուրաքանչյուր

օրացուցային տարվա սկսվելուց 90 օր հետո ամեն տարի ներկայացնում է ցանկի նորացման համար անհրաժեշտ տեղեկություններ:

4. 1-ին կետի համաձայն ներկայացման ենթակա այլ քիմիական արտադրական օբյեկտների ցանկը, ըստ յուրաքանչյուր արտադրական գոտու, ներառում է հետեւյալ

տեղեկությունները.

ա) արտադրական գոտու անվանումը եւ այն շահագործող սեփականատիրոջ, ընկերության կամ ձեռնարկության անունը,

բ) արտադրական գոտու ճշգրիտ տեղակայումը, ներառյալ դրա հասցեն,
գ) նրա հիմնական գործունեությունը, եւ
դ) արտադրական գոտու սահմաններում գտնվող՝ 1-ին կետում նշված քիմիկատներ
արտադրող ձեռնարկությունների մոտավոր քանակը:
5. 1-ին կետի "ա" ենթակետի համաձայն՝ ցանկի մեջ ներառված արտադրական գոտիների առնչությամբ նման ցանկը նաեւ ներառում է նախորդ օրացուցային տարում
ոչ ցուցակային կոնկրետ օրգանական քիմիկատների արտադրության մոտավոր հանրագումար ծավալի մասին տեղեկություններ, որոնք արտահայտվում են հետեւյալ
չափանիշների ծավալներով. մինչեւ 1000 տոննա, 1000-10000 տոննա եւ 10000 տոննայից ավել:
6. 1-ին կետի "բ" ենթակետի համաձայն՝ ցանկի մեջ ներառված արտադրական գոտիների առնչությամբ ցանկում նաեւ ներառվում է արտադրական գոտու շրջանակներում ՖՕՖ-ձեռնարկությունների քանակը, եւ տեղեկություններ են հրապարակվում նախորդ օրացուցային տարում յուրաքանչյուր ՖՕՖ ձեռնարկության արտադրած ՖՕՖ քիմիկատների արտադրության մոտավոր հանրագումար ծավալի մասին, որն արտահայտվում է հետեւյալ ծավալներով. մինչեւ 200 տոննա, 200-1000 տոննա, 1000-10000 տոննա եւ 10000 տոննայից ավել:

Օգնություն Տեխնիկական քարտուղարության կողմից

7. Եթե մասնակից պետությունը վարչական բնույթի պատճառներով անհրաժեշտ է համարում դիմել օգնության՝ 1-ին կետին համաձայն քիմիական արտադրության օբյեկտների իր ցանկի կազմելու գործում, նա կարող է խնդրել Տեխնիկական քարտուղարությանը նման օգնություն տրամադրել: Այդ դեպքում ցանկի ամբողջության վերաբերյալ հարցերը կարգավորվում են մասնակից պետության եւ Տեխնիկական քարտուղարության միջեւ՝ խորհրդակցությունների միջոցով:

Մասնակից պետություններին տրամադրվող տեղեկություններ

8. 1-ին կետին համաձայն ներկայացվող այլ քիմիական արտադրական օբյեկտների ցանկերը, ներառյալ 4-րդ կետին համապատասխան ներկայացվող տեղեկությունները, համապատասխան խնդրանքով Տեխնիկական քարտուղարությունը փոխանցում է մասնակից պետություններին:

Բ. Ստուգում
Ընդհանուր դրույթներ

9. Հաշվի առնելով Գ բաժնի դրույթները՝ 6-րդ հոդվածի 6-րդ կետում նախատեսված ստուգումը իրականացվում է տեղում տեսչական ստուգում անցկացնելու միջոցով.

ա) 1-ին կետի "ա" ենթակետին համաձայն՝ ցանկում ներառված արտադրական գոտիներում,

բ) 1-ին կետի "բ" ենթակետին համաձայն՝ ցանկում ներառված արտադրական գոտիներում, որոնք ներառում են մեկ կամ ավելի ՖՃՖ ձեռնարկություններ, որտեղ

Նախորդ օրացուցային տարում արտադրվել են 200 տոննա ՖՃՖ քիմիկատներ:

10. 8-րդ հոդվածի 21-րդ կետի "ա" ենթակետին համապատասխան՝
Չամաժողովի

կողմից ընդունվող Կազմակերպության ծրագիրը եւ բյուջեն առանձին բաժնով պարունակում են սույն բաժնով ստուգման ծրագիրը եւ բյուջեն դրա իրականացումից

հետո:

11. Սույն բաժնին համաձայն՝ Տեխնիկական քարտուղարությունը իրականացնում է

տեսչական ստուգման համար արտադրական գոտիների կամայական ընտրություն այնպիսի

համապատասխան մեխանիզմների միջոցով, ինչպիսիք են հատուկ մշակված համակարգչային

ծրագրերի օգտագործումը՝ հաշվի առնելով նշանակություն ունեցող հետեւյալ գործոնները.

ա) տեսչական ստուգումների արդարացի աշխարհագրական բաշխումը,

բ) ցանկում ներառված արտադրական գոտիների մասին Տեխնիկական քարտուղարության տրամադրության տակ եղած տեղեկությունները, որոնք վերաբերում

են արտադրական գոտու առանձնահատկություններին եւ այնտեղ իրականացվող գործունեությանը, եւ

գ) 25-րդ կետին համապատասխան՝ համաձայնեցման ենթակա հիմքի վերաբերյալ

մասնակից պետությունների առաջարկությունները:

12. Ոչ մի արտադրական գոտի, սույն բաժնի դրույթներին համապատասխան, չի

ընդունում երկուսից ավել տեսչական ստուգումներ: Սակայն դա, 9-րդ հոդվածին համապատասխան, չի սահմանափակում տեսչական ստուգումների անցկացումը:

13. Սույն բաժնին համապատասխան՝ տեսչական ստուգում անցկացնելու համար

արտադրական գոտիներ ընտրելիս Տեխնիկական քարտուղարությունը պահպանում է, սույն

մասին եւ սույն Չավելվածի 8-րդ մասին համաձայն, օրացուցային տարում մասնակից

պետության կողմից ընդունվող տեսչական ստուգումների հանրագումարի վերաբերյալ

հետեւյալ սահմանափակումը. տեսչական ստուգումների հանրագումարը չի գերազանցում

3 գումարած 5 տոկոս արտադրական գոտիների ընդհանուր թիվը, որոնք մասնակից

պետությունը հայտարարում է ինչպես սույն մասին, այնպես էլ սույն Չավելվածի 8-րդ մասին համապատասխան, կամ 20 տեսչական ստուգում՝ կախված նրանից,

թե այդ

թվերից որն է պակաս:

Տեսչական ստուգման նպատակները

14. Ա բաժնին համապատասխան՝ ցանկերում ներառված արտադրական գոտիներում տեսչական ստուգումների ընդհանուր նպատակն է անցկացվող գործունեության համեմատության ստուգումը հայտարարություններում ներկայացվող տեղեկությունների հետ: Տեսչական ստուգումների կոնկրետ նպատակը կայանում է 1-ին ցանկի ցանկացած քիմիկատի եւ հատկապես դրա արտադրության բացակայության ստուգման մեջ՝ բացառությամբ սույն Հավելվածի 6-րդ մասին համապատասխան իրականացվող արտադրության:

Տեսչական ստուգման ընթացակարգերը

15. Բացի համաձայնեցված հիմնական սկզբունքներից, սույն Հավելվածի այլ համապատասխան դրույթներից եւ Գաղտնիության մասին Հավելվածից՝ կիրառվում են ներքոնշյալ 16-20-րդ կետերը:

16. Օբյեկտի վերաբերյալ համաձայնագիր չի կնքվում, եթե դրա մասին չի խնդրում տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը:

17. Տեսչական ստուգման համար ընտրված արտադրական գոտում տեսչական ստուգման

առարկա է/են/ հանդիսանում այն ձեռնարկությունը/ները/, որոնք արտադրում են 1-ին

կետում նշված քիմիկատներ եւ, մասնավորապես, ՖՕՖ ձեռնարկությունները, որոնք

ներառվել են ցանկում՝ 1-ին կետի "բ" ենթակետին համապատասխան: Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը իրավունք ունի կանոնակարգելու այդ

ձեռնարկություններ մուտք գործելը՝ սույն Հավելվածի 10-րդ մասի Գ բաժնում շարադրված՝ կանոնակարգվող մուտք գործելու կանոններին համապատասխան: Եթե

տեսչական խումբը, սույն Հավելվածի 2-րդ մասի 51-րդ կետին համապատասխան, արտադրական գոտու այլ մասեր մուտք գործելու հարցում է կատարում անորոշությունների վերացման նպատակով, ապա նման մուտք գործելու աստիճանը

համաձայնեցվում է տեսչական խմբի եւ տեսչական ստուգման ենթարկվող մասնակից

պետության միջեւ:

18. Տեսչական խումբը կարող է թույլտվություն ստանալ աշխատել հաշվառման փաստաթղթերի հետ այն դեպքերում, երբ տեսչական խումբը եւ տեսչական ստուգման

ենթարկվող մասնակից պետությունը համարում են, որ նման թույլտվությունը կնպաստի

տեսչական ստուգման նպատակների ձեռքբերմանը:

20. Տեսչական ստուգման ժամանակահատվածը չի գերազանցում 24 ժամը. սակայն

տեսչական խումբը եւ տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը կարող

են համաձայնության հասնել այն երկարաձգելու համար:

Ծանուցում տեսչական ստուգման մասին

21. Տեխնիկական քարտուղարությունը տեսչական ստուգման մասին ծանուցում է մասնակից պետությանը տեսչական ստուգման ենթակա արտադրական գոտի տեսչական խմբի ժամանելուց ոչ ուշ, քան 120 ժամ առաջ:

Գ. Բ բաժնի իրականացումը եւ քննարկումը

Իրականացում

22. Բ բաժնի իրականացումը սկսվում է սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո՝ չորրորդ տարվա սկզբում, եթե Համաժողովը այլ որոշում չի ընդունի իր հերթական նիստում սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո՝ երրորդ տարում:

23. Սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո՝ երրորդ տարում, Համաժողովի հերթական նիստի համար Գլխավոր տնօրենը պատրաստում է զեկույց, որը լուսաբանում

է սույն Հավելվածի 7-րդ եւ 8-րդ մասերի, ինչպես նաեւ սույն մասի Ա բաժնի դրույթների կատարման Տեխնիկական քարտուղարության կուտակած փորձը:

24. Սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո՝ երրորդ տարում, Համաժողովը իր հերթական նիստում Գլխավոր տնօրենի զեկույցի հիման վրա կարող է նաեւ որոշում

ընդունել "ՖԾՖ ձեռնարկությունների" եւ այլ քիմիական արտադրական օբյեկտների

միջեւ Բ բաժնին համապատասխան ստուգման համար հատկացվող ռեսուրսների բաշխման

վերաբերյալ: Հակառակ դեպքում նման բաշխումը մնում է Տեխնիկական քարտուղարության փորձագիտական քննարկման վրա եւ ներառվում է 11-րդ կետում

նշված՝ նշանակություն ունեցող գործոնների թվում:

25. Սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո՝ երրորդ տարում, Համաժողովը իր հերթական նիստում, Գործադիր խորհրդի երաշխավորությամբ, որոշում է ընդունում

այն բանի վերաբերյալ, թե ինչ հիմքով (օրինակ՝ տարածաշրջանային) պետք է ներկայացվեն մասնակից պետությունների առաջարկները տեսչական ստուգումների

վերաբերյալ՝ նրա համար, որպեսզի հաշվի առնվեն որպես 11-րդ կետում նշված ընտրության գործընթացում նշանակություն ունեցող գործոններից մեկը:

Քննարկում

26. 8-րդ հոդվածի 22-րդ կետին համապատասխան հրավիրվող Համաժողովի առաջին

հատուկ նիստում կատարվում է Ստուգման հավելվածի սույն մասի դրույթների վերանայում կուտակված փորձի հիման վրա քիմիական արդյունաբերության համար

ստուգման ընդհանուր ռեժիմի համընդգրկուն վերանայման լույսի ներքո (6-րդ հոդված, սույն Հավելվածի 7-ից 9-րդ մասեր): Այնուհետեւ Համաժողովը երաշխավորություններ է տալիս ստուգման ռեժիմի արդյունավետությունը մեծացնելու

համար:

Մաս 10

9-րդ հոդվածի համաձայն՝ հարցման հիման վրա կատարվող տեսչական ստուգումներ

Ա. Տեսուչների եւ տեսուչների օգնականների նշանակումը եւ ընտրությունը

1. 9-րդ հոդվածի համաձայն՝ հարցման հիման վրա կատարվող տեսչական ստուգումները անցկացվում են հատուկ այդ նպատակով նշանակված տեսուչների եւ

տեսուչների օգնականների կողմից: 9-րդ հոդվածին համաձայն՝ հարցման հիման վրա

կատարվող տեսչական ստուգումների համար տեսուչների եւ տեսուչների օգնականների

նշանակման նպատակով Գլխավոր տնօրենը կազմում է նշանակման ենթակա տեսուչների եւ

տեսուչների օգնականների ցուցակը՝ նրանց ընտրելով սովորական տեսչական գործունեության համար նախատեսված տեսուչների եւ տեսուչների օգնականների կազմից: Նման ցուցակը ներառում է անհրաժեշտ որակավորում, փորձ, արհեստավարժություն եւ պատրաստություն ունեցող տեսուչների եւ տեսուչների օգնականների բավական մեծ կազմ՝ այն բանի համար, որ ճկուն մոտեցում ցուցաբերվի

տեսուչների ընտրությանը՝ նրանց առկայության եւ ռոտացիայի անհրաժեշտության

հաշվառմամբ: Պատշաճ ուշադրություն է հատկացվում նաեւ տեսուչների եւ տեսուչների

օգնականների ընտրությանը առավել լայն աշխարհագրական հիմունքներով: Տեսուչների

եւ տեսուչների օգնականների նշանակումը կատարվում է սույն Հավելվածի 2-րդ մասի

Ա բաժնում նախատեսված ընթացակարգերին համապատասխան:

2. Գլխավոր տնօրենը որոշում է տեսչական խմբի կազմը եւ ընտրում խմբի անդամներին՝ հաշվի առնելով կոնկրետ հարցման հանգամանքները: Տեսչական խմբի

կազմը հասցվում է նվազագույնի, որն անհրաժեշտ է տեսչական ստուգման մանդատի

պատշաճ կատարման համար: Տեսչական խմբի անդամ չի կարող լինել հարցնող կամ

տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության քաղաքացին:

Բ. Նախատեսչական գործունեություն

3. Տեսչական ստուգում անցկացնելու համար հարցում ներկայացնելուց առաջ հարցման հիման վրա անցկացվող տեսչական ստուգման առնչությամբ մասնակից պետությունը կարող է Գլխավոր տնօրենից հաստատում խնդրել, թե ի վիճակի՞ է Տեխնիկական քարտուղարությունը, հարցման հետ կապված, ձեռնարկել անհապաղ

գործողություններ: Եթե Գլխավոր տնօրենը չի կարող անհապաղ տալ նման հաստատում,

ապա դա նա անում է առաջին հնարավորության դեպքում՝ հաշվի առնելով հաստատման ենթակա հարցումների հերթականությունը: Գլխավոր տնօրենը նաեւ տեղեկացնում է մասնակից պետությանը այն մասին, թե երբ կարող է հնարավորություն ընձեռվել անհապաղ գործողություններ ձեռնարկելու համար: Եթե Գլխավոր տնօրենը հանգի այն եզրակացության, որ, հարցման հետ կապված, ժամանակին գործողությունները արդեն չեն կարող ձեռնարկվել, ապա նա կարող է խնդրել Գործադիր խորհրդին ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ապագայում իրավիճակը բարելավելու համար:

Ծանուցում

4. Հարցման հիման վրա անցկացվող տեսչական ստուգման առնչությամբ տեսչական ստուգման համար հարցումը, որը ներկայացվում է Գործադիր խորհրդին եւ Գլխավոր տնօրենին, պարունակում է, առնվազն, հետեւյալ տեղեկությունները.

ա) տեսչական ստուգման ենթակա մասնակից պետությունը եւ, եթե դա կիրառելի է, ընդունող պետությունը,

բ) մուտք գործելու օգտագործվող կետը,

գ) տեսչական ստուգման տեղի չափը եւ տեսակը,

դ) սույն Կոնվենցիայի հնարավոր չպահպանման վերաբերյալ մտահոգությունը, ներառյալ սույն Կոնվենցիայի համապատասխան դրույթների նշումը, որոնց հետ կապված ծագում է մտահոգությունը, եւ մտահոգությունը հնարավոր չպահպանման բնույթի եւ հանգամանքների վերաբերյալ, ինչպես նաեւ ողջ համապատասխան տեղեկատվությունը, որից ելնելով՝ ծագում է մտահոգությունը, եւ

ե) հարցնող մասնակից պետության դիտորդի ազգանունը:

Հարցնող մասնակից պետությունը կարող է տրամադրել ցանկացած լրացուցիչ տեղեկություն, որն ինքը անհրաժեշտ է համարում:

5. Գլխավոր տնօրենը մեկ ժամվա ընթացքում հարցնող մասնակից պետությանը հաստատում է նրա հարցումը ստանալու փաստը:

6. Հարցնող մասնակից պետությունը ժամանակին ծանուցում է Գլխավոր տնօրենին տեսչական ստուգման անցկացման վայրի մասին՝ նրա համար, որպեսզի Գլխավոր տնօրենը կարողանա տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությանը ներկայացնել այդ տեղեկությունը ոչ ուշ, քան մուտք գործելու կետ տեսչական խմբի պլանավորված ժամանումից 12 ժամ առաջ:

7. Տեսչության վայրը նշվում է հարցնող մասնակից պետության կողմից առավել ճշգրտորեն՝ վայրի սխեմայի ներկայացման միջոցով՝ կապված հաշվարկի կետին՝ աշխարհագրական կոորդինատների նշումով մոտակա վայրկյանի ճշգրտությամբ, եթե դա

հնարավոր է: Հնարավորության սահմաններում հարցնող մասնակից պետությունը
նաեւ

տրամադրում է քարտեզ՝ տեսչության անցկացման վայրի ընդհանուր նշումով եւ
տեսչության ենթակա վայրի հարցվող պարագծի, ըստ հնարավորության, առավել
ճշգրիտ

նշումով:

8. Հարցվող պարագիծը.

ա) անցնում է ցանկացած շենքի կամ այլ շինությունների արտաքին մասից
առնվազն 10 մետր հեռավորության վրա,

բ) չի հատում գոյություն ունեցող պահպանվող գոտիները, եւ

գ) անցնում է գոյություն ունեցող ցանկացած պահպանվող գոտիների արտաքին
մասից առնվազն 10 մետր հեռավորության վրա, որոնք հարցնող մասնակից
պետությունը

մտադիր է ներառել հարցվող պարագծի սահմանների մեջ:

9. Եթե հարցվող պարագիծը չի համապատասխանում 8-րդ կետում
շարադրված

ընդթափանցիկ, ապա այն վերանայվում է տեսչական խմբի կողմից՝ նրա համար,
որպեսզի համապատասխանեցվի այդ դրույթին:

10. Գլխավոր տնօրենը մուտք գործելու կետ տեսչական խմբի պլանավորված
ժամանումից ոչ ուշ, քան 12 ժամ առաջ տեղեկացնում է Գործադիր խորհրդին
տեսչական

ստուգման ենթարկվող վայրի գտնվելու մասին, ինչպես դա նշված է 7-րդ կետում:

11. 10-րդ կետին համապատասխան՝ Գործադիր խորհրդին տեղեկացնելու հետ
միաժամանակ Գլխավոր տնօրենը տեսչական ստուգում անցկացնելու հարցումը
փոխանցում

է տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությանը, ներառյալ
տեսչական

ստուգման գտնվելու վայրը, ինչպես դա նշված է 7-րդ կետում: Այդ ծանուցումը
նաեւ

ներառում է սույն Հավելվածի 2-րդ մասի 32-րդ կետում նշված տեղեկությունները:

12. Մուտք գործելու կետ տեսչական խմբի ժամանման պես տեսչական
ստուգման

ենթարկվող մասնակից պետությունը տեսչական խմբի կողմից տեղեկացվում է
տեսչական

ստուգում անցկացնելու մանդատի մասին:

Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության կամ ընդունող
պետության տարածք մուտք գործելը

13. 9-րդ հոդվածի 13-ից 18-րդ կետերին համապատասխան՝ տեսչական
ստուգում

անցկացնելու հարցում ստանալուց հետո Գլխավոր տնօրենը, որքան հնարավոր է
շտապ,

ուղարկում է տեսչական խումբ: Տեսչական խումբը, հնարավորինս սեղմ
ժամկետներում,

ժամանում է հարցումում նշված մուտք գործելու կետը՝ 10-րդ եւ 11-րդ կետերի
դրույթներին համապատասխան:

14. Եթե հարցվող պարագիծը ընդունելի է տեսչական ստուգման ենթարկվող
մասնակից պետության համար, ապա այն հնարավորինս շուտ սահմանվում է
որպես

վերջնական պարագիծ, սակայն ոչ ուշ, քան մուտք գործելու կետ տեսչական խմբի

Ժամանումից 24 ժամ հետո: Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը

տեսչական խմբին հասցնում է տեսչական ստուգման վայրի վերջնական պարագծի մոտ:

Եթե տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը համարում է դա անհրաժեշտ, ապա նման տեղ հասցնելը կարող է սկսվել վերջնական պարագծի որոշման

համար սույն կետում սահմանված ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 12 ժամ առաջ: Տեղ

հասցնելը ցանկացած դեպքում ավարտվում է մուտք գործելու կետ տեսչական խմբի

Ժամանումից հետո ոչ ուշ, քան 36 ժամ հետո:

15. Բոլոր հայտարարված օբյեկտների նկատմամբ կիրառվում են "ա" եւ "բ" կետերում շարադրված ընթացակարգերը: (Սույն մասի նպատակների համար "հայտարարված

օբյեկտ" նշանակում է բոլոր օբյեկտները, որոնք հայտարարվում են 3-րդ, 4-րդ եւ 5-րդ հոդվածներին համապատասխան: Ինչ վերաբերում է 6-րդ հոդվածին, ապա "հայտարարված օբյեկտ" նշանակում է միայն այն օբյեկտները, որոնք հայտարարվում

են սույն Հավելվածի 6-րդ մասին համապատասխան, ինչպես նաեւ այն հայտարարվող

ծեռնարկությունները, որոնք նշվում են հայտարարությունում՝ սույն Հավելվածի 7-րդ մասի 7-րդ եւ 10.գ եւ 8-րդ մասի 7-րդ եւ 10.գ կետերին համապատասխան):

ա) Եթե հարցվող պարագիծը տեղավորվում է հայտարարված պարագծում կամ համապատասխանում է դրան, ապա հայտարարված պարագիծը համարվում է վերջնական:

Սակայն տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության համաձայնության

առկայության դեպքում վերջնական պարագիծը կարող է փոքրացվել, որպեսզի համապատասխանեցվի հարցնող մասնակից պետության կողմից հարցվող պարագծին:

բ) Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը տեսչական խմբին

հասցնում է վերջնական պարագծի մոտ հնարավորինս սեղմ ժամկետներում, սակայն

ցանկացած դեպքում նա ապահովում է խմբի ժամանումը պարագծի մոտ մուտք գործելու

կետ տեսչական խմբի ժամանումից ոչ ուշ, քան 24 ժամ հետո:

Վերջնական պարագծի այլընտրանքային որոշումը

16. Մուտք գործելու կետում եթե տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը չի կարող ընդունել հարցվող պարագիծը, ապա նա հնարավորինս շուտ

առաջարկում է այլընտրանքային պարագիծ, սակայն ամեն դեպքում մուտք գործելու կետ

տեսչական խմբի ժամանելուց ոչ ուշ, քան 24 ժամ հետո: Տարակարծությունների դեպքում տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը եւ տեսչական խումբը

բանակցություններ են սկսում՝ վերջնական պարագծի վերաբերյալ համաձայնություն

ձեռք բերելու նպատակով:

17. Այլընտրանքային պարագիծը, 8-րդ կետին համապատասխան, պետք է սահմանվի որքան հնարավոր է կոնկրետ: Այն ներառում է ողջ հարցվող պարագիծը եւ, որպես կանոն, պետք է սերտորեն կապված լինի վերջինիս հետ՝ հաշվի առնելով վայրի բնական ռելիեֆը եւ արհեստական սահմանները: Սովորաբար այն պետք է անցնի շրջապատող պաշտպանական ցանկապատի մոտով, եթե նման ցանկապատ գոյություն ունի: Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը պետք է ձգտի պարագծերի միջեւ փոխկապակցվածության սահմանմանը՝ համակցելով, առնվազն, հետեւյալ միջոցներից երկուսը.

ա) այլընտրանքային պարագիծ, որը չի ներառում հարցվող պարագծի տարածքը

զգալիորեն գերազանցող տարածք,

բ) այլընտրանքային պարագիծ, որը հարցվող պարագծից գտնվում է ոչ մեծ միատեսակ հեռավորության վրա,

գ) հարցվող պարագծի առնվազն մի մասը երեւում է այլընտրանքային պարագծից:

18. Եթե այլընտրանքային պարագիծը ընդունելի է տեսչական խմբի համար, ապա

այն դառնում է վերջնական պարագիծ եւ տեսչական խումբը մուտք գործելու կետից

հասցվում է այդ պարագծի մոտ: Եթե տեսչական ստուգման ենթարկվող մասնակից

պետությունը համարում է դա անհրաժեշտ, ապա նման տեղ հասցնելը կարող է սկսվել

16-րդ կետում սահմանված այլընտրանքային պարագծի առաջարկման համար ժամկետի

ավարտից ոչ ուշ, քան 12 ժամ առաջ: Տեղ հասցնելը ամեն դեպքում ավարտվում է մուտք գործելու կետ տեսչական խմբի ժամանելուց ոչ ուշ, քան 36 ժամ հետո:

19. Եթե վերջնական պարագիծը համաձայնեցված չէ, ապա պարագծի վերաբերյալ

բանակցությունները ավարտվում են հնարավորինս շուտ, սակայն ոչ մի դեպքում չեն

շարունակվում մուտք գործելու կետ տեսչական խմբի ժամանելուց ոչ ուշ, քան 24 ժամ: Եթե համաձայնություն չի կայացվում, ապա տեսչական ստուգման

ենթարկվող

մասնակից պետությունը տեսչական խմբին հասցնում է այլընտրանքային պարագծի մոտ:

Եթե տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը համարում է դա անհրաժեշտ, ապա նման տեղ հասցնելը կարող է սկսվել 16-րդ կետում

սահմանված

այլընտրանքային պարագծի առաջարկման համար ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 12 ժամ

առաջ: Տեղ հասցնելը ամեն դեպքում ավարտվում է մուտք գործելու կետ տեսչական

խմբի ժամանելուց ոչ ուշ, քան 36 ժամ հետո:

20. Տեղ հասնելուն պես տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը տեսչական խմբին այլընտրանքային պարագիծ մուտք գործելու անհապաղ թույլտվություն է տրամադրում, որպեսզի դյուրացնի բանակցությունների անցկացումը եւ վերջնական պարագծի վերաբերյալ համաձայնության ձեռքբերումը եւ վերջնական պարագծի սահմաններ մուտք գործելը:

21. Եթե տեսչական խմբի տեղ ժամանելուց 72 ժամվա ընթացքում համաձայնություն չի կայացվել, ապա այլընտրանքային պարագիծը սահմանվում է որպես վերջնական պարագիծ:

Վայրի ստուգումը

22. Որպեսզի դյուրացվի տեսչական ստուգման վայրի համապատասխանությունը, որտեղ հասցվել է տեսչական խումբը, տեսչական ստուգման վայրին, որը նշված է հարցնող մասնակից պետության կողմից, տեսչական խումբը իրավունք ունի օգտագործելու գտնվելու վայրի որոշման հաստատված սարքավորումը, ինչպես նաև

իրավունք ունի տեղադրելու նման սարքավորումներ՝ նրա ցուցումների համաձայն:

Տեսչական խումբը կարող է ստուգել իր գտնվելու վայրը քարտեզներով սահմանված

տեղի կողմնորոշիչների հետ ստուգելու միջոցով: Տեսչական ստուգման ենթարկվող

մասնակից պետությունը օգնում է խմբի անդամներին այդ խնդիրը իրականացնելու համար:

Տեղի պաշարումը. հսկողություն ելքի նկատմամբ

23. Ոչ ուշ, քան տեսչական խմբի՝ մուտքի կետ ժամանելուց 12 ժամ հետո տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը սկսում է փաստագրական

տեղեկատվության հավաքումը հարցվող պարագծից բոլոր ցամաքային, օդային եւ ջրային

տրանսպորտային միջոցների ելքի բոլոր կետերից ելքի վերաբերյալ ողջ գործունեության մասին: Նա ներկայացնում է այդ տեղեկատվությունը տեսչական խմբին

Նրա՝ այլընտրանքային կամ վերջնական պարագծին հասնելիս՝ կախված նրանից, թե ինչ

տեղի կունենա առաջին հերթին:

24. Այդ պարտավորությունը կարող է կատարվել փաստագրական տեղեկատվություն

հավաքելու միջոցով՝ ճամփորդական թերթերի, լուսանկարների, տեսաերիզների կամ

տվյալների տեսքով, որոնք ստացվել են քիմիախիմիկացիոն սարքավորման օգնությամբ,

որը ներկայացվում է տեսչական խմբին ելքի այդպիսի գործունեության
նկատմամբ
հսկողություն իրականացնելու նպատակով: Որպես այլընտրանք՝ տեսչական
ստուգման
ենթարկվող մասնակից պետությունը կարող է նաեւ այդպիսի պարտավորության
իրականացման կարգով թույլատրել տեսչական խմբի մեկ կամ մի քանի
անդամներին
ինքնուրույն լրացնել ճամփորդական թերթերը, կատարել լուսանկարահանումներ,
դուրս
եկող տրանսպորտային միջոցների տեսաձայնագրություններ կամ օգտագործել
քիմիաինդիկացիոն սարքավորում եւ իրականացնել այլ գործունեություն, որը
կարող է
համաձայնեցվել տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության եւ
տեսչական
խմբի միջեւ:

25. Այլընտրանքային կամ վերջնական պարագծին տեսչական խմբի ժամանման
պահին,
կախված նրանից, թե որը տեղի կունենա առաջին հերթին, սկսվում է տեղի
պաշարումը,
որը նշանակում է տեսչական խմբի կողմից ելքի նկատմամբ ընթացակարգերի
իրականացում:

26. Այդպիսի գործընթացները ներառում են՝ տրանսպորտի ելքերի սահմանում,
ճանապարհային թերթերի լրացում, լուսանկարահանում եւ տեսչական խմբի
կողմից
տրանսպորտի ելքի եւ դուրս եկող տրանսպորտային միջոցների
տեսաձայնագրությունների իրականացում: Տեսչական խումբը իրավունք ունի
ուղեկցությամբ հաճախել պարագծի ցանկացած այլ մաս ելքի այլ գործունեության
բացակայության ստուգման համար:

27. Ելքի նկատմամբ հսկողության գործունեության համար լրացուցիչ
ընթացակարգերը, որոնք համաձայնեցվում են տեսչական խմբի եւ տեսչական
ստուգման
ենթարկվող մասնակից պետության կողմից, կարող են ներառել, ի թիվս այլոց,
հետեւյալը.

- ա) դատչիկների օգտագործումը,
- բ) ինքնակամորեն-սելեկցիոն մատչելիությունը,
- գ) նմուշների հետազոտումը:

28. Տեղի պաշարման ողջ գործունեությունը եւ ելքի նկատմամբ հսկողությունը
իրականացվում են պարագծի արտաքին կողմի երկայնությամբ՝ մինչեւ 50 մետր
լայնքով
գոտու սահմաններում, որը չափվում է արտաքին կողմից:

29. Տեսչական խումբը իրավունք ունի կանոնակարգվող մուտքի հիման վրա
տեսչական ստուգման ենթարկել վայրի տարածքից դուրս եկող տրանսպորտային
միջոցները: Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը
ձեռնարկում է

բոլոր բանական ջանքերը, որպեսզի տեսչական խմբին ցուցադրվի, որ տեսչական
ստուգման ենթակա ցանկացած տրանսպորտային միջոց, որը տեսչական խմբին
չի

թույլատրվում ամբողջապես ստուգել, չի օգտագործվում տեսչական ստուգման
անցկացման հարցումում նշված հնարավոր չպահպանման վերաբերյալ
մտահոգությունների

հետ կապված նպատակներով:

30. Վայրի տարածք ժամանող անձնակազմը եւ տրանսպորտային միջոցները, ինչպէս

նաեւ վայրի տարածքից դուրս եկող անձնակազմը եւ անհատական ուղեւորատար տրանսպորտային միջոցները ենթակա չեն տեսչական ստուգման:

31. Վերոնշյալ ընթացակարգերի կիրառումը կարող է շարունակվել տեսչական ստուգման ընթացքում, սակայն այն չի կարող ոչ հիմնավորված ձեւով խոչընդոտել կամ

ուշացնել օբյեկտի նորմալ գործունեությանը:

Նախատեսչական հրահանգավորում եւ տեսչական ստուգման պլան

32. Տեսչական ստուգման պլանի մշակումը դյուրացնելու համար տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը նախքան մուտք տրամադրելը իրականացնում է անվտանգության տեխնիկայի եւ նյութատեխնիկական ապահովման գծով

տեսչական խմբի հրահանգավորում:

33. Նախատեսչական հրահանգավորումը անցկացվում է սույն Հավելվածի 2-րդ մասի

37-րդ կետին համապատասխան: Նախատեսչական հրահանգավորման ընթացքում մասնակից

պետությունը տեսչական խմբին կարող է մատնանշել այն սարքավորումները, փաստաթղթերը եւ տեղամասերը, որոնք ինքը զգայուն եւ հարցման հիման վրա անցկացվող տեսչության նպատակին առնչություն չունեցող է համարում: Բացի այդ՝

վայրի համար պատասխանատու անձնակազմը հրահանգավորում է խմբին վայրի տարածքային

տեղադրության եւ այլ համապատասխան բնութագրերի մասին: Տեսչական խմբին է

տրամադրվում մասշտաբային քարտեզ կամ սխեմա, որն արտացոլում է վայրի բոլոր

շինությունները եւ կարելուք աշխարհագրական առանձնահատկությունները:

34. Նախատեսչական հրահանգավորումից հետո տեսչական խումբը իր տրամադրության

տակ եղած համապատասխան տեղեկությունների հիման վրա պատրաստում է տեսչական

ստուգման նախնական պլան՝ նշելով տեսչական խմբի կողմից իրականացման ենթակա

գործողությունները, ներառյալ վայրի կոնկրետ մասերը, որտեղ մուտք գործելը ցանկալի է: Տեսչական ստուգման պլանում նաեւ նշվում է՝ տեսչական խումբը

բաժանվելու՞ է ենթախմբերի, թե ոչ: Տեսչական ստուգման պլանը տրամադրվում է տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության եւ տեսչության վայրի

ներկայացուցիչներին: Դրա իրագործումը համապատասխանում է Գ բաժնի դրույթներին,

ներառյալ մուտք գործելուն եւ գործունեությանը վերաբերող դրույթները:

Գործունեություն պարագծի մասով

35. Վերջնական կամ այլընտրանքային պարագծի մոտ տեսչական խմբի ժամանելուն

պես, կախված նրանից, թե որը առաջինը տեղի կունենա, խումբն իրավունք ունի,

սույն բաժնում շարադրված ընթացակարգերին համապատասխան, պարագծի մոտ անհապաղ

գործունեություն սկսել եւ շարունակել այդ գործունեությունը մինչեւ հարցման հիման վրա անցկացվող տեսչության ավարտը:

36. Պարագծով գործունեություն իրականացնելու ընթացքում տեսչական խումբը իրավունք ունի.

ա) սույն Հավելվածի 2-րդ մասի 27-ից 30-րդ կետերին համապատասխան՝ օգտագործել հսկիչ սարքեր,

բ) վերցնել ողողված հողի, օդի, հողի կամ հոսքերի նմուշները, եւ

գ) իրականացնել ցանկացած լրացուցիչ գործունեություն, որը կարող է համաձայնեցվել տեսչական խմբի եւ տեսչության ենթարկվող մասնակից պետության

միջեւ:

37. Պարագծով տեսչական խմբի գործունեությունը կարող է իրականացվել պարագծի

արտաքին կողմի սահմանի երկայնքով՝ մինչեւ 50 մետր լայնությամբ, որը չափվում է

պարագծի արտաքին սահմանից: Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության

համաձայնության առկայության դեպքում տեսչական խումբը կարող է մուտք գործելու

թույլտվություն ստանալ պարագծի գոտու սահմաններում գտնվող ցանկացած շենք կամ

շինություն: Հեռակառավարման հսկողության բոլոր միջոցները ուղղվում են դեպի ներս: Հայտարարվող օբյեկտների նկատմամբ կիրառելի նման գոտին, տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության հայեցողությամբ, կարող է անցնել հայտարարված պարագծի ներսով, դրսով կամ երկու կողմերով:

Գ. Տեսչական ստուգումների անցկացում

Ընդհանուր կանոններ

38. Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը մուտք է տրամադրում

հայցվող պարագծի, ինչպես նաեւ, եթե դրանք տարբերվում են, վերջնական պարագծի

սահմաններ: Կոնկրետ վայր կամ վայրեր մուտք գործելու աստիճանը եւ բնույթը այդ

պարագծերի սահմաններում համաձայնեցվում են տեսչական խմբի եւ տեսչական ստուգման

ենթարկվող մասնակից պետության միջեւ՝ կարգավորվող մուտքի հիման վրա:

39. Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը մուտք է տրամադրում

հարցվող պարագծի սահմաններ որքան հնարավոր է շուտ, սակայն ամեն դեպքում ոչ

ուշ, քան մուտք գործելու կետ տեսչական խմբի ժամանելուց 108 ժամ հետո՝ տեսչական

ստուգման հարցումում նշված Կոնվենցիայի հնարավոր չպահպանման վերաբերյալ

մտահոգության պարզաբանման նպատակով:

40. Տեսչական խմբի խնդրանքով՝ տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը կարող է տեսչական ստուգման վայր հասնելու համար օդային մուտք տրամադրել:

41. 38-րդ կետի համաձայն՝ մատչելիության տրամադրման մասին պահանջի բավարարման ժամանակ տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը

պարտավոր է թույլատրել մատչելիության առավելագույն աստիճան՝ հաշվի առնելով

ցանկացած սահմանադրական պարտավորություն, որն ինքը կարող է կրել սեփականության

կամ խուզարկությունների իրավունքների եւ սեկվեստրների առնչությամբ:

Տեսչական

ստուգման ենթարկվող մասնակից պետությունը չի կարող հղում կատարել սույն կետի

դրույթներին՝ սույն Կոնվենցիայով արգելված գործունեությամբ զբաղվելու իր պարտավորությունների չկատարումը քողարկելու համար:

42. Եթե տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը լիովին չի թույլատրում մուտք գործել դեպի վայրեր, գործունեության նկատմամբ կամ տեղեկատվության մատչելիություն, ապա նա պարտավոր է ձեռնարկել բոլոր խելամիտ

չափերը, որպեսզի ապահովի մտահոգության դրսեւորման այլընտրանքային միջոցները

հնարավոր չպահպանման առնչությամբ, որը հիմք է տվել տեսչական ստուգում հարուցել՝ ըստ հարցման:

43. 4-րդ, 5-րդ եւ 6-րդ հոդվածների համաձայն՝ հայտարարվող օբյեկտների վերջնական պարագիծ ժամանելիս մուտքի թույլտվությունը տրվում է

նախատեսչական

իրահանվողումից եւ տեսչական ստուգման ծրագրի քննարկումից հետո, որոնք բերվում են անհրաժեշտ նվազագույնի եւ ցանկացած դեպքում չեն գերազանցում երեք

ժամը: 3-րդ հոդվածի 1.դ կետի համաձայն՝ հայտարարվող օբյեկտների նկատմամբ անց

են կացվում բանակցություններ, եւ կարգավորվող մատչելիությունը սկսվում է ոչ ուշ, քան վերջնական պարագծին հասնելուց 12 ժամ հետո:

44. Հարցման հիման վրա տեսչական ստուգում անցկացնելիս, տեսչական ստուգման

հարցման համաձայն, տեսչական խումբը օգտագործում է միայն այնպիսի մեթոդներ,

որոնք անհրաժեշտ են բավարար, գործին առնչվող փաստերը պարզելու համար՝ սույն

Կոնվենցիայի դրույթների հնարավոր չպահպանման առնչությամբ մտահոգությունը

պարզելու նպատակով, եւ ձեռնպահ է մնում դրա հետ կապ չունեցող

գործունեությունից: Նա հավաքում եւ փաստաթղթերով հիմնավորում է այնպիսի փաստերը, որոնք վերաբերում են սույն Կոնվենցիայի հնարավոր չպահպանմանը տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության կողմից, բայց չի փնտրում եւ

փաստաթղթերով հիմնավորում այն տեղեկատվությունը, որը ակնհայտորեն կապ չունի

դրա հետ, եթե այդ մասին ուղղակիորեն չի խնդրում տեսչական ստուգման ենթարկվող

մասնակից պետությունը: Ցանկացած հավաքված նյութ, որը հետագայում կհամարվի

գործին չվերաբերող, չի պահպանվում:

45. Տեսչական խումբը ղեկավարվում է հարցման հիման վրա տեսչական ստուգում

իրականացնելու սկզբունքով, հնարավորինս քիչ ինտրուզիվ ձեւով, որը համապատասխանում է նրա խնդրի արդյունավետ եւ ժամանակին կատարմանը: Ամեն անգամ,

երբ դա հնարավոր է, նա սկսում է առավել քիչ ինտրուզիվ ընթացակարգերից, որոնք

ինքը ընդունելի է համարում, եւ անցնում է ավելի ինտրուզիվ ընթացակարգերի միայն

այն դեպքում, եթե համարում է դա անհրաժեշտ:

ԻՐՏԵԿ - շարունակությունը հաջորդ մասում

ԿՈՆՎԵՆՑԻԱ
ՔԻՄԻԱԿԱՆ ՉԵՆՔԻ ՄՇԱԿՈՒՄԸ, ԱՐՏԱԴՐՈՒՄԸ, ԿՈՒՏԱԿՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ԱՐԳԵԼԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(7-րդ մաս)

Կարգավորվող մուտք

46. Տեսչական խումբը հաշվի է առնում տեսչական ստուգման առաջարկվող փոփոխությունները եւ առաջարկությունները, որոնք կարող են տեսչական ստուգման

խմբի կողմից տեսչական ստուգման ցանկացած փուլում առաջարկվել, ներառյալ նախատեսչական հրահանգավորումը՝ քիմիական զենքի հետ առնչություն չունեցող

զգայուն սարքավորումների, տեղեկությունների կամ շրջանների պաշտպանության

ապահովման համար:

47. Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը մատնանշում է պարագծում մուտքի/ելքի կետերը, որոնք ենթակա են օգտագործման մուտք գործելու

նպատակով: Տեսչական խումբը եւ տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը բանակցություններ են անցկացնում հետեւյալի մասին.

վերջնական եւ հարցվող պարագծերի սահմաններում ցանկացած կոնկրետ վայր կամ

վայրեր մուտք գործելու աստիճանը, ինչպես դա նախատեսված է 48-րդ կետում, տեսչական խմբի կողմից անցկացման ենթակա կոնկրետ տեսչական

գործունեությունը, ներառյալ նմուշների ընտրությունը,

տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության կողմից կոնկրետ գործունեության անցկացում, եւ

տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետություններին կոնկրետ տեղեկությունների տրամադրում:

48. Գաղտնիության մասին Հավելվածի համապատասխան դրույթներին համաձայն՝ տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը իրավունք ունի միջոցներ ձեռնարկել զգայուն սարքավորումները պաշտպանելու եւ քիմիական գեներալ առնչություն չունեցող գաղտնի տեղեկությունների եւ տվյալների հրապարակման կանխման համար: Այդպիսի միջոցները, ի թիվս այլոց, կներառեն.

ա) ծառայողական շինություններից զգայուն փաստաթղթերի դուրս հանումը,
բ) զգայուն Էկրանների, գույքի եւ սարքավորման ծածկումը,
գ) սարքավորման զգայուն մասերի ծածկումը՝ որպես համակարգչային կամ էլեկտրոնային համակարգեր,
դ) համակարգչային համակարգերի պաշարում եւ ինդիկատորային սարքերի անջատում,
ե) նմուշների հետազոտության սահմանափակում 1-ին, 2-րդ եւ 3-րդ ցուցակներում թվարկված քիմիկատների կամ քայքայման համապատասխան ապրանքների

առկայությունը կամ բացակայությունը պարզելու համար,

զ) ինքնակամ-սելեկտիվ մատչելիության մեթոդների օգտագործումը, որի ժամանակ

տեսուչներին առաջարկվում է, ըստ իրենց հայեցողության, ընտրել տեսչական ստուգման առարկայի համար որոշակի տոկոսային մաս կամ շենքերի քանակություն. այդ

նույն սկզբունքը կարող է օգտագործվել զգայուն շենքերի ներքին մասի եւ պարունակության առնչությամբ,

է) բացառիկ դեպքերում մատչելիության տրամադրում տեսչական ստուգման վայրերի

որոշակի մասերի նկատմամբ միայն առանձին տեսուչներին:

49. Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը ձեռնարկում է բոլոր

խելամիտ ջանքերը՝ ցուցադրելու համար տեսչական խմբին, որ ցանկացած առարկա,

շենք, շինություն, բեռնարկ կամ տրանսպորտային միջոց, դեպի որոնց տեսչական

խումբը լիովին մուտք չի ունեցել, կամ որոնք պաշտպանված են եղել՝ 48-րդ կետի համաձայն, չեն օգտագործվում այն նպատակների համար, որոնք կապված են տեսչական

ստուգման հարցման մեջ շարադրված մտահոգությունների հետ հնարավոր չպահպանման

կապակցությամբ:

50. Դա կարող է արվել, ի թիվս այլոց, ծածկոցը մասամբ հանելու միջոցով կամ պաշտպանության նպատակներով ծածկելու համար մթնոլորտային երեւոյթների ներգործությունից, ըստ տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության հայեցողության, փակ տարածության ներքին մասի տեսողական դիտարկման միջոցով դրա

մուտքից դեպի այդ տեղը կամ այլ միջոցներով:

51. 4-րդ, 5-րդ եւ 6-րդ հոդվածների համաձայն՝ հայտարարվող օբյեկտների դեպքում կիրառվում է հետեւյալը.

ա) կիրառելի է այն օբյեկտների նկատմամբ, որոնց վերաբերյալ կան համաձայնագրեր. մատչելիությունը եւ գործունեությունը վերջնական պարագծի շրջանակներում իրականացվում են անխոչընդոտ սահմանների շրջանակներում, որոնք

որոշված են համաձայնագրերում,

բ) օբյեկտների առնչությամբ, որոնք վերաբերյալ օբյեկտների համաձայնագիր չկա, բանակցությունները մատչելիության եւ գործունեության առնչությամբ կարգավորվում են կիրառելի ընդհանուր հիմնական սկզբունքներով տեսչական ստուգումների առնչությամբ, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայով,

գ) մատչելիություն, որը անցնում է մատչելիության սահմանները, տրամադրվող տեսչական ստուգումների առնչությամբ, համաձայն 4-րդ, 5-րդ եւ 6-րդ հոդվածների,

կարգավորվում է՝ համաձայն սույն բաժնում շարադրված ընթացակարգերի:

52. 3-րդ հոդվածի 1.դ կետի համաձայն՝ հայտարարվող օբյեկտների դեպքում կիրառվում է հետեւյալը. եթե տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը, օգտագործելով 47-րդ եւ 48-րդ կետերում շարադրված

ընթացակարգերը,

չի տրամադրում լրիվ մատչելիություն տարածքների կամ շինությունների նկատմամբ,

որոնք կապված չեն քիմիական զենքի հետ, ապա նախաձեռնում է բոլոր հնարավոր

խելամիտ միջոցները՝ ցուցադրելու տեսչական խմբին, որ այդպիսի տարածքները կամ

շինությունները չեն օգտագործվում տեսչական ստուգման հարցման մեջ հնարավոր

չպահպանման վերաբերյալ նշված մտահոգությունների հետ:

Դիտորդ

53. 9-րդ հոդվածի 12-րդ կետի դրույթներին համապատասխան՝ հարցման հիման վրա

անցկացվող տեսչական ստուգման ժամանակ դիտորդի մասնակցության առնչությամբ

հարցնող մասնակից պետությունը կապվում է Տեխնիկական քարտուղարության հետ այն

Նույն մուտք գործելու կետ դիտորդի ժամանելու համակարգման համար, ինչ տեսչական

խմբի՝ տեսչական խմբի ժամանման բանական ժամանակահատվածի սահմաններում:

54. Դիտորդը իրավունք ունի տեսչական ստուգման ողջ ընթացքում կապ պահպանել

տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունում կամ ընդունող պետությունում գտնվող հարցնող մասնակից պետության դեսպանության հետ, կամ,

դեսպանության բացակայության դեպքում, հարցնող մասնակից պետության հետ:

Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը դիտորդին տրամադրում է կապի

միջոցներ:

55. Դիտորդը իրավունք ունի ժամանել տեսչական ստուգման վայրի այլընտրանքային կամ վերջնական պարագծի մոտ, կախված նրանից, թե որտեղ տեսչական

խումբը կժամանի առաջին հերթին, եւ տեսչական ստուգման ենթարկվող մասնակից

պետության կողմից տրամադրվող՝ մուտք գործելու թույլտվություն ստանալ տեսչական

ստուգման վայր: Դիտորդը իրավունք ունի տեսչական խմբին երաշխավորություններ տալ, որոնք խումբը հաշվի է առնում այնքանով, որքանով դրանք նպատակահարմար է համարում: Ամբողջ տեսչական ստուգման ընթացքում տեսչական խումբը տեղեկացնում է դիտորդին տեսչական ստուգման անցկացման եւ նրա եզրակացությունների մասին:

56. Երկրում մնալու ամբողջ ժամանակահատվածի ընթացքում տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը տրամադրում է ապահովում է դիտորդին անհրաժեշտ ծառայություններով. այնպիսիք, ինչպիսիք են կապի միջոցները, բանավոր թարգմանությունը, տրանսպորտը, աշխատանքային եւ բնակարանային շինությունները, սնունդը եւ բժշկական սպասարկումը: Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության կամ ընդունող պետության տարածքներում դիտորդի կեցության հետ կապված բոլոր ծախսերը կրում է հարցնող մասնակից պետությունը:

Տեսչական ստուգման տեւողությունը

57. Տեսչական ստուգման տեւողությունը չի գերազանցում 84 ժամը, եթե այն չի երկարաձգվում տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության հետ պայմանավորվածությամբ:

Դ. Հետտեսչական գործունեություն

Մեկնում

58. Տեսչական ստուգման վայրում հետտեսչական ընթացակարգերը ավարտելուց հետո տեսչական խումբը եւ հարցնող մասնակից պետության դիտորդը անհապաղ ուղեւորվում են դեպի մուտք գործելու կետ, իսկ այնուհետեւ մեկնում են հնարավորինս սեղմ ժամկետներում տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության տարածքից:

Չեկույցներ

59. Տեսչական ստուգման մասին զեկույցը ընդհանուր առումով ամփոփում է տեսչական խմբի անցկացրած գործունեությունը եւ տեսչական խմբի փաստաթանկան հետեւությունները հատկապես սույն Կոնվենցիայի հնարավոր չպահպանման վերաբերյալ մտահոգությունների առնչությամբ, որոնք նշված են հարցման հիման վրա անցկացվող տեսչական ստուգման հարցումում, եւ սահմանափակվում է սույն Կոնվենցիային ուղղակիորեն առնչություն ունեցող տեղեկություններով: Այն նաեւ ներառում է

տեսչական խմբի կողմից տեսուչներին տրամադրված մատչելիության եւ օժանդակության աստիճանին եւ բնույթին, ինչպես նաեւ այն աստիճանին, որը նրան թույլ է տվել իրականացնել իր մանդատը, տրված գնահատականը: Սույն Կոնվենցիայի հնարավոր չպահպանման վերաբերյալ մտահոգություններին առնչվող մանրամասն տեղեկությունները, որոնք նշված են հարցման հիման վրա անցկացվող հարցումում, ներկայացվում են վերջնական զեկույցին որպես հավելում եւ պահպանվում են Տեխնիկական քարտուղարությունում՝ զգայուն տեղեկատվության պաշտպանության անհրաժեշտ միջոցների պահպանմամբ:

60. Ոչ ուշ, քան իր աշխատանքի հիմնական վայր վերադարձից 72 ժամ հետո տեսչական խումբը Գլխավոր տնօրենին է ներկայացնում տեսչական ստուգման մասին նախնական զեկույց՝ ուշադրության առնելով, ի թիվս այլոց, գաղտնիության մասին Զավելվածի 17-րդ կետը: Գլխավոր տնօրենը անհապաղ ուղարկում է տեսչական ստուգման նախնական զեկույցը հարցում կատարած մասնակից պետությանը, տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությանը եւ Գործադիր խորհրդին:

61. Վերջնական զեկույցի նախագիծը տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությանը ներկայացվում է ըստ հարցման՝ տեսչական ստուգման ավարտից ոչ ուշ, քան 20 օր հետո: Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը իրավունք ունի հայտնաբերելու ցանկացած տեղեկատվություն եւ տվյալ, որոնք առնչություն չունեն քիմիական զենքի հետ, որոնք իրենց գաղտնիությամբ չպետք է, ըստ իրենց կարծիքի, շրջանառվեն Տեխնիկական քարտուղարության սահմաններից դուրս: Տեխնիկական քարտուղարությունը ուսումնասիրում է տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության առաջարկությունները տեսչական ստուգման վերջնական զեկույցի նախագծում փոփոխություններ մտցնելու մասին եւ, ըստ իր հայեցողության, ամեն անգամ, երբ դա հնարավոր է, ընդունում է դրանք: Այնուհետեւ վերջնական զեկույցը ոչ ուշ, քան հարցման հիման վրա տեսչական ստուգման ավարտից 30 օր հետո Գլխավոր տնօրենին է ներկայացվում հետագա տարածման եւ ուսումնասիրման համար՝ 9-րդ հոդվածի 21-ից 25-րդ կետերի համաձայն:

Մաս 11

Յետաքննություն քիմիական զենքի ենթադրյալ կիրառման դեպքերում

Ա. Ընդհանուր դրույթներ

1. Քիմիական զենքի ենթադրյալ կամ, որպես պատերազմի վարման միջոց,

անկարգությունների դեմ պայքարում քիմիական միջոցների ենթադրյալ կիրառման հետաքննությունները, որոնք հարուցվում են 9-րդ եւ 10-րդ հոդվածներին համապատասխան, իրականացվում են սույն Հավելվածին եւ մանրամասն ընթացակարգերին

համապատասխան, որոնք կսահմանվեն Գլխավոր տնօրենի կողմից:

2. Քիմիական զենքի ենթադրյալ կիրառման դեպքերում անհրաժեշտ կոնկրետ ընթացակարգերը կանոնակարգվում են հետեւյալ լրացուցիչ դրույթներով:

Բ. Նախահետաքննական գործունեություն

Հարցում հետաքննության համար

3. Քիմիական զենքի ենթադրյալ կիրառման հետաքննության համար հարցումը, որը

ներկայացվում է Գլխավոր տնօրենին, պետք է, ըստ հնարավորության, ներառի հետեւյալ տեղեկությունները.

ա) մասնակից պետությունը, որի տարածքում ենթադրաբար տեղի է ունեցել քիմիական զենքի կիրառում,

բ) մուտք գործելու կետը կամ մուտք գործելու համար առաջարկվող այլ անվտանգ

ճանապարհները,

գ) այն շրջանների գտնվելու վայրը եւ բնութագրերը, որտեղ ենթադրաբար տեղի է

ունեցել քիմիական զենքի կիրառում,

դ) քիմիական զենքի ենթադրյալ կիրառման ժամանակը,

ե) ենթադրաբար կիրառված քիմիական զենքի տեսակները,

զ) ենթադրվող կիրառման մասշտաբները,

է) հնարավոր թունավոր քիմիկատների բնութագրերը,

ը) մարդկանց, կենդանիների եւ բուսականության համար հետեւանքները,

թ) կոնկրետ օգնության համար հարցումը, եթե դա կիրառելի է:

4. Հետաքննության մասին միջնորդող մասնակից պետությունը կարող է ցանկացած

ժամանակ ներկայացնել ցանկացած լրացուցիչ տեղեկություն, որն ինքը անհրաժեշտ

կհամարի:

Ծանուցում

5. Գլխավոր տնօրենը անհապաղ հայտնում է մասնակից պետությանը նրա հարցումը

ստանալու մասին եւ տեղեկացնում է Գործադիր խորհրդին ու բոլոր մասնակից պետություններին:

6. Համապատասխան դեպքերում Գլխավոր տնօրենը տեղեկացնում է մասնակից

պետություններին այն տարածքների մասին, որոնց վերաբերյալ հետաքննություն անցկացնելու հարցում է ներկայացվել:

Տեսչական խմբի նշանակումը

7. Գլխավոր տնօրենը պատրաստում է այն որակյալ փորձագետների ցուցակը, որոնց

հատուկ որակավորումը կոնկրետ ոլորտում կարող է պահանջվել քիմիական զենքի

ենթադրյալ կիրառման հետաքննության անցկացման դեպքում, եւ մշտապես նորացնում է

այդ ցուցակը: Այդ ցուցակը գրավոր ներկայացվում է յուրաքանչյուր մասնակից պետության սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց եւ այդ ցուցակի յուրաքանչյուր փոփոխությունից ոչ ուշ, քան 30 օր հետո: Այդ ցուցակում ընդգրկված ցանկացած որակյալ փորձագետ համարվում է նշանակված, եթե այդ ցուցակը ստանալուց ոչ ուշ,

քան 30 օր հետո մասնակից պետությունը գրավոր չի հայտնում իր

անհամաձայնության

մասին:

8. Գլխավոր տնօրենը հարցման հիման վրա տեսչական ստուգում անցկացնելու համար արդեն նշանակված տեսուչների եւ տեսուչների օգնականների կազմից ընտրում է

տեսչական խմբի ղեկավարին եւ անդամներին՝ հաշվի առնելով կոնկրետ հարցման

հանգամանքները եւ առանձնահատկությունը: Բացի այդ՝ տեսչական խմբի անդամները

կարող են ընտրվել որակյալ փորձագետների ցուցակից, երբ, Գլխավոր տնօրենի կարծիքով, կոնկրետ հետաքննություն պատշաճ անցկացնելու համար պահանջվում է

այնպիսի որակավորում, որը չունեն արդեն նշանակված տեսուչները:

9. Տեսչական խմբի հրահանգավորում անցկացնելու ժամանակ Գլխավոր տնօրենը

օգտագործում է հարցնող մասնակից պետության կամ ցանկացած այլ աղբյուրի կողմից

ներկայացված ցանկացած լրացուցիչ տեղեկություն՝ տեսչական ստուգման առավել

արդյունավետ եւ արագ անցկացման ապահովման համար:

Տեսչական խմբի ուղարկումը

10. Քիմիական զենքի ենթադրյալ կիրառման հետաքննության համար հարցումը

ստանալուց անմիջապես հետո Գլխավոր տնօրենը համապատասխան մասնակից պետությունների հետ շփումների միջոցով հարցում է եւ հաստատում խմբի անվտանգ

ընդունելության համար միջոցառումները:

11. Գլխավոր տնօրենը խումբը ուղարկում է որքան հնարավոր է արագ՝ նկատի ունենալով խմբի անվտանգությունը:

12. Եթե տեսչական խումբը չի ուղարկվել հարցումը ստանալու պահից 24 ժամվա

ընթացքում, ապա Գլխավոր տնօրենը տեղեկացնում է Գործադիր խորհրդին եւ շահագրգիռ

մասնակից պետություններին ուշացման պատճառների մասին:

Հրահանգավորումներ

13. Տեսչական խումբը ժամանելուն պես եւ տեսչական ստուգման ընթացքում ցանկացած ժամանակ իրավունք ունի հրահանգավորվել տեսչական ստուգման ենթարկվող

մասնակից պետության ներկայացուցիչների կողմից:

14. Նախքան տեսչական ստուգման սկսումը տեսչական խումբը պատրաստում է

տեսչական ստուգման պլանը, որը, ի թիվս այլոց, պետք է ծառայի որպես հիմք նյութատեխնիկական ապահովման կազմակերպման եւ անվտանգության տեխնիկայի

ապահովման համար: Տեսչական ստուգման պլանը նորացվում է՝ ըստ անհրաժեշտության:

Գ. Տեսչական ստուգումների անցկացումը

Մուտք

15. Տեսչական խումբը իրավունք ունի մուտք գործել ցանկացած շրջան, որը կարող է ենթարկված լինել քիմիական զենքի ենթադրյալ կիրառման: Խումբը նաեւ իրավունք ունի մուտք գործել հիվանդանոցներ, փախստականների ճամբարներ եւ այլ

վայրեր, որոնք, ըստ նրա կարծիքի, առնչություն ունեն քիմիական զենքի ենթադրյալ

կիրառման արդյունավետ հետաքննությանը: Նման մուտքի առնչությամբ տեսչական

խումբը խորհրդակցում է տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության հետ:

Նմուշների ընտրումը

16. Տեսչական խումբը իրավունք ունի ընտրել այն տեսակների նմուշները եւ այնպիսի քանակով, որոնք ինքը անհրաժեշտ է համարում: Եթե տեսչական խումբը

համարում է անհրաժեշտ եւ ներկայացնում է համապատասխան հարցում, ապա տեսչական

ստուգման ենթարկվող մասնակից պետությունը օգնություն է ցուցաբերում նմուշների

ընտրության գործում տեսուչների կամ տեսուչների օգնականների դիտման ներքո:

Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությունը նույնպես թույլտվություն է

տալիս համապատասխան ստուգիչ նմուշներ ընտրելուն այն շրջաններից, որոնք կից են

ենթադրյալ կիրառման վայրին, եւ այլ շրջաններից, տեսչական խմբի խնդրանքով, եւ

դրանում նրան օժանդակություն է ցուցաբերում:

17. Ենթադրյալ կիրառման հետաքննության ժամանակ կարելուր նշանակություն ունեցող նմուշների թվին դասվում են թունավոր քիմիկատների, զինամթերքի եւ սարքերի, զինամթերքի եւ սարքերի մնացորդների նմուշները, Էկոլոգիական նմուշները

(օդի, հողի, բուսականության, ջրի, ձյան եւ այլնի նմուշները) եւ կենսաբժշկական նմուշները, որոնց աղբյուր են հանդիսանում մարդիկ կամ կենդանիները (արյան, մեզի, կղկղանքի, հյուսվածքների եւ այլնի նմուշները):

18. Եթե նմուշների կրկնօրինակների ընտրումը անհնար է, եւ հետազոտումը անցկացվում է օբյեկտի սահմաններից դուրս գտնվող լաբորատորիաներում, ապա ցանկացած մնացող նմուշ, համապատասխան խնդրանքով, վերադարձվում է տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետությանը հետազոտման ավարտից հետո:

Տեսչական ստուգման վայրի ընդլայնումը

19. Եթե տեսչական ստուգման ընթացքում տեսչական խումբը անհրաժեշտ կհամարի տարածել հետաքննությունը հարեւան մասնակից պետության վրա, ապա Գլխավոր տնօրենը ծանուցում է այդ մասնակից պետությանը նրա տարածք մուտք գործելու անհրաժեշտության մասին եւ հարցում է ու հաստատում խմբի անվտանգ ընդունելության համար միջոցառումներ:

Տեսչական ստուգման ժամանակի ավելացումը

20. Եթե տեսչական խումբը համարում է, որ հետաքննության համար նշանակություն ունեցող կոնկրետ շրջան անվտանգ մուտք գործելը անհնար է, ապա հարցնող մասնակից պետությունը անհապաղ տեղեկացվում է դրա մասին: Անհրաժեշտության դեպքում տեսչական ստուգման ժամանակահատվածը երկարաձգվում է այնքան ժամանակ, քանի դեռ չի ապահովվել անվտանգ մուտքը, եւ քանի դեռ տեսչական խումբը չի ավարտել իր առաքելությունը:

Հարցումներ

21. Տեսչական խումբը իրավունք ունի հարցաքննել եւ հետազոտել այն անձանց, ովքեր կարող էին տուժել քիմիական զենքի ենթադրյալ կիրառման արդյունքում: Խումբը նաեւ իրավունք ունի հարցաքննել քիմիական զենքի ենթադրյալ կիրառման ականատեսներին, ինչպես նաեւ բժշկական անձնակազմին եւ այլ անձանց, ովքեր բուժօգնություն են ցուցաբերում քիմիական զենքի ենթադրյալ կիրառման արդյունքում տուժածներին կամ նման անձանց հետ շփված անձանց: Տեսչական խումբը հնարավորություն է ստանում ծանոթանալու հիվանդությունների պատմություններին, դրանց առկայության դեպքում, եւ համապատասխան դեպքերում թույլտվություն է ստանում մասնակցելու այն անձանց դիակների հերձմանը, ովքեր կարող էին տուժել քիմիական զենքի ենթադրյալ կիրառման արդյունքում:

Դ. Չեկույցներ

Ընթացակարգեր

22. Տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետության տարածք ժամանելուց ոչ ուշ, քան 24 ժամ հետո տեսչական խումբը Գլխավոր տնօրենին զեկույց է ներկայացնում գործերի վիճակի մասին: Յետագայում՝ ողջ հետաքննության ընթացքում, խումբը, ըստ անհրաժեշտության, զեկույցներ է ուղարկում աշխատանքի ընթացքի մասին:

23. Աշխատանքի հիմնական վայր վերադառնալուց հետո ոչ ուշ, քան 72 ժամ հետո

տեսչական խումբը Գլխավոր տնօրենին ներկայացնում է նախնական զեկույց: Վերջնական

զեկույցը ներկայացվում է Գլխավոր տնօրենին աշխատանքի հիմնական վայր վերադառնալուց հետո ոչ ուշ, քան 30 օր հետո: Գլխավոր տնօրենը անհապաղ փոխանցում է նախնական եւ վերջնական զեկույցները Գործադիր խորհրդին եւ բոլոր

մասնակից պետություններին:

Բովանդակություն

24. Գործերի վիճակի մասին զեկույցում նշվում է օգնության ցանկացած անհետաձգելի անհրաժեշտությունը, եւ բերվում է ցանկացած այլ համապատասխան

տեղեկություն: Աշխատանքների ընթացքի մասին զեկույցներում նշվում է օգնության

ցանկացած հետագա անհրաժեշտությունը, որը կարող է սահմանվել հետաքննության

ընթացքում:

25. Վերջնական զեկույցում ամփոփվում են տեսչական ստուգման փաստաթանական

եզրակացությունները հատկապես հարցման մեջ հիշատակված ենթադրյալ կիրառման

առնչությամբ: Բացի այդ՝ ենթադրյալ կիրառման հետաքննության զեկույցը ներառում է

հետաքննության գործընթացի նկարագրությունը, որը հսկում է նրա տարբեր փուլերը,

հատկապես նշելով.

ա) նմուշների ընտրության վայրերը եւ ժամանակներն ու տեղում հետազոտման անցկացումը, եւ

բ) վկայությունների հաստատումը, ինչպիսիք են հարցաքննությունների գրառումները, բժշկական հետազոտությունների եւ գիտական հետազոտությունների

արդյունքները, ինչպես նաեւ տեսչական խմբի կողմից ուսումնասիրված փաստաթղթերը:

26. Եթե հետաքննության ընթացքում տեսչական խումբը հավաքում է, ի թիվս այլոց, ընտրված նմուշների լաբորատորային հետազոտման ընթացքում ցանկացած

խառնուրդի կամ այլ նյութերի նույնականացման միջոցով ցանկացած տեղեկություն,

որը կարող է նպաստել կիրառված քիմիական զենքի աղբյուրի հայտնաբերմանը, ապա այդ

տեղեկությունը ներառվում է զեկույցում:

Ե. Սույն Կոնվենցիայի մասնակիցներ չհանդիսացող պետությունները

27. Զիմբաբուեի զենքի ենթադրյալ կիրառման դեպքում, որին հաղորդակից է սույն

Կոնվենցիայի մասնակից չհանդիսացող պետությունը, կամ մասնակից պետության կողմից

չվերահսկվող տարածքում, Կազմակերպությունը սերտորեն համագործակցում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի հետ:

Չամապատասխան

խնդրանքի հիման վրա Կազմակերպությունը իր ռեսուրսները տրամադրում է Միավորված

ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին՝ ի տնօրինություն:

ՅԱՎԵԼՎԱԾ

Գաղտնի տեղեկությունների պաշտպանության մասին

Ա. Գաղտնի տեղեկությունների հետ վարվելու ընդհանուր սկզբունքներ

1. Գաղտնի տեղեկությունները պաշտպանելու պարտավորությունը վերաբերում է

ինչպես քաղաքացիական, այնպես էլ ռազմական գործունեության եւ օբյեկտների ստուգմանը: Չամաձայն 8-րդ հոդվածում շարադրված ընդհանուր պարտավորությունների՝

Կազմակերպությունը.

ա) հարցում է անում միայն այն տվյալների եւ տեղեկությունների սկզբագույն ծավալի մասին, որոնք անհրաժեշտ են սույն Կոնվենցիայով իր պարտականությունների՝

ժամանակին եւ արդյունավետ կատարման համար,

բ) անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում այն բանի ապահովման համար, որ տեսուչները եւ Տեխնիկական քարտուղարության այլ աշխատակիցները համապատասխանեն

աշխատունակության, բանիմացության եւ պարտաճանաչության առավելագույն չափանիշներին,

գ) սույն Կոնվենցիայի դրույթների իրականացման համար մշակում է համաձայնագրեր ու կանոններ եւ, որքան հնարավոր է ճիշտ, սահմանում է այն տեղեկատվությունը, որը մասնակից պետությունը տրամադրում է Կազմակերպությանը:

2. Գլխավոր տնօրենը առաջնահերթ պատասխանատվություն է կրում գաղտնի տեղեկատվության պաշտպանությունը ապահովելու համար: Գլխավոր տնօրենը Տեխնիկական

քարտուղարությունում գաղտնի տեղեկատվության հետ վարվելու համար սահմանում է

խիստ ռեժիմ եւ, ըստ այդմ, պահպանում է հետեւյալ հիմնական սկզբունքները.

ա) տեղեկատվությունը գաղտնի է համարվում, եթե.

i) այն սահմանված է որպես այդպիսին այն մասնակից պետության կողմից, որից

ստացվել է եւ որին վերաբերում է այդ տեղեկատվությունը, կամ

ii) Գլխավոր տնօրենի կարծիքով՝ խելամիտ հիմքեր կան՝ ենթադրելու, որ դրա ոչ

սանկցիավորված հրապարակումը կարող է վնաս հասցնել մասնակից պետությանը, որին
այն վերաբերում է, կամ սույն Կոնվենցիայի իրականացման մեխանիզմներին,
բ) բոլոր տվյալները եւ փաստաթղթերը, որոնք ստանում է Տեխնիկական քարտուղարությունը, գնահատվում են Տեխնիկական քարտուղարության համապատասխան ստորաբաժանման կողմից՝ այն բանի համար, որ պարզվի՝ պարունակո՞ւմ են արդյոք դրանք գաղտնի տեղեկություններ: Տվյալները, որոնք մասնակից պետությունների կողմից պահանջվում են այն բանի համար, որ վստահություն ունենան այլ մասնակից պետությունների կողմից սույն Կոնվենցիայի անշեղ պահպանման համար, տրամադրվում են նրանց սովորական կարգով: Նման տվյալները ներառում են.
i) նախնական եւ ամենամյա զեկույցներ եւ հայտարարություններ, որոնք ներկայացվում են մասնակից պետությունների կողմից՝ համաձայն 3-րդ, 4-րդ, 5-րդ եւ 6-րդ հոդվածների, եւ Ստուգման մասին հավելվածում շարադրված դրույթներին համապատասխան,
ii) ստուգման արդյունքների եւ արդյունավետության մասին ընդհանուր զեկույցներ, եւ
iii) սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան՝ բոլոր մասնակից պետություններին տրամադրվող տեղեկություններ,
գ) սույն Կոնվենցիայի իրականացման հետ կապված՝ Կազմակերպության ստացած ոչ մի տեղեկություն չի հրապարակվում եւ չի տարածվում այլ կերպ՝ բացառությամբ.
i) սույն Կոնվենցիայի իրականացման մասին ընդհանուր տեղեկությունները կարող են բանաքաղվել եւ լայնորեն տարածվել Համաժողովի կամ Գործադիր խորհրդի որոշումներին համապատասխան,
ii) ցանկացած տեղեկություն կարող է հրապարակվել այն մասնակից պետության ուղղակի համաձայնությամբ, որին այդ տեղեկությունը վերաբերում է,
iii) տեղեկությունը, որը դասակարգվում է որպես գաղտնի, Կազմակերպությունը հրապարակում է միայն այն ընթացակարգերի հիման վրա, որոնք ապահովում են, որ տեղեկության նման հրապարակումը կատարվի միայն սույն Կոնվենցիայի պահանջներին խիստ համապատասխանությամբ: Նման ընթացակարգեր քննարկվում եւ հավանություն են ստանում Համաժողովի կողմից՝ 8-րդ հոդվածի 21-րդ կետի i ենթակետին համաձայն,
դ) գաղտնի տվյալների կամ փաստաթղթերի զգայականության մակարդակը սահմանվում է միատեսակ կիրառվող չափանիշների հիման վրա՝ այն բանի համար, որ դրանք ապահովվեն համապատասխան ռեժիմով եւ պաշտպանությամբ: Այդ նպատակով գործի է դրվում դասակարգման համակարգ, որը, հաշվի առնելով սույն Կոնվենցիայի պատրաստման համար համապատասխան աշխատանքները, նախատեսում է հստակ չափանիշներ, որոնք ապահովում են գաղտնիության համապատասխան կատեգորիային տեղեկության

դասումը եւ տեղեկության գաղտնիության հիմնավորված ժամկետների սահմանումը:

Ապահովելով անհրաժեշտ ճկունություն դրա կիրառման տեսանկյունից՝ դասակարգման

համակարգը պաշտպանում է գաղտնի տեղեկություններ տրամադրող մասնակից պետությունների իրավունքները: Դասակարգման համակարգը քննարկվում եւ հավանություն է ստանում Համաժողովի կողմից՝ 8-րդ հոդվածի 21-րդ կետի i ենթակետին համապատասխան,

ե) գաղտնի տեղեկատվությունը հուսալիորեն պահվում է Կազմակերպության շինություններում: Որոշ տվյալներ կամ փաստաթղթեր կարող են նաեւ պահվել մասնակից պետության ազգային մարմնում: Չգայական տեղեկատվությունը, ներառյալ, ի

թիվս այլոց, լուսանկարները, պլանները եւ այլ փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են

միայն կոնկրետ օբյեկտի տեսչական ստուգման համար, կարող են պահվել այդ օբյեկտում՝ կողպեքի տակ,

զ) առավելագույն չափով ստուգման մասին սույն Կոնվենցիայի դրույթների արդյունավետ իրականացման համապատասխան՝ Տեխնիկական քարտուղարությունը

տեղեկատվության հետ վարվում եւ պահում է այն այնպես, որ բացառի այն օբյեկտի

անմիջական նույնականացման հնարավորությունը, որին տեղեկատվությունը վերաբերում է,

է) օբյեկտի սահմաններից դուրս եկող գաղտնի տեղեկատվության ծավալը սահմանափակվում է նվազագույն մակարդակով, որն անհրաժեշտ է ստուգման մասին

սույն Կոնվենցիայի դրույթների՝ ժամանակին եւ արդյունավետ կատարման համար, եւ

ը) գաղտնի տեղեկատվության մատչելիությունը կանոնակարգվում է նրա դասակարգմանը համապատասխան: Կազմակերպության ներսում գաղտնի տեղեկությունների

տարածումը իրականացվում է "անհրաժեշտ տեղեկություններ" սկզբունքին համաձայն:

3. Գլխավոր տնօրենը ամեն օր Համաժողովին է ներկայացնում Տեխնիկական քարտուղարության՝ գաղտնի տեղեկությունների հետ վարվելը կանոնակարգող ռեժիմի

իրականացման մասին գեկույց:

4. Յուրաքանչյուր մասնակից պետություն Կազմակերպությունից ստացված տեղեկությունների հետ վարվում է այդ տեղեկությունների համար սահմանված գաղտնիության մակարդակին համապատասխան: Համապատասխան խնդրանքով՝ մասնակից

պետությունը ներկայացնում է մանրամասն տվյալներ Կազմակերպության կողմից իրեն

ներկայացված տեղեկությունների հետ վարվելու մասին:

Բ. Տեխնիկական քարտուղարության անձնակազմի հավաքագրումը եւ վարքը

5. Աշխատակիցների աշխատանքային պայմանները պետք է ապահովեն գաղտնի

տեղեկատվության մատչելիությունը եւ, Ա բաժնին համապատասխան, Գլխավոր տնօրենի

սահմանած ընթացակարգերին համապատասխան՝ դրա հետ վարվելը:

6. Տեխնիկական քարտուղարությունում յուրաքանչյուր հաստիք կարգավորվում է

հաստիքի պաշտոնական նկարագրությամբ, որտեղ նշվում են այդ հաստիքի համար

անհրաժեշտ գաղտնի տեղեկությունների մատչելիության շրջանակները, եթե նման

մատչելիություն նախատեսվում է:

7. Գլխավոր տնօրենը, տեսուչները եւ այլ աշխատակիցները սույնիսկ իրենց գործառնությունների կատարումը դադարեցնելուց հետո չեն հաղորդում լիազորություններ

չունեցող անձանց որեւէ գաղտնի տեղեկություն, որն իրենց հայտնի է դարձել ծառայողական պարտականությունները կատարելիս: Նրանք որեւէ պետության, կազմակերպության կամ անձի, որն ամենապակաս չունի Տեխնիկական քարտուղարության

հետ, չեն հայտնում որեւէ տեղեկություն, որը հասու է իրենց ցանկացած այլ մասնակից պետության ամենապակաս իրենց գործունեությունը անցկացնելու հետ կապված:

8. Իրենց գործառնությունները կատարելիս տեսուչները հարցնում են միայն այնպիսի

տվյալներ եւ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իրենց մանդատի կատարման

համար: Նրանք որեւէ կերպ չեն ֆիքսում պատահական հավաքած տեղեկությունները,

որոնք ամենապակաս չունեն սույն Կոնվենցիայի պահպանման ստուգմանը:

9. Աշխատակիցները Տեխնիկական քարտուղարության հետ կնքում են անհատական

համաձայնագրեր իրենց ծառայության եւ դրա ավարտից հետո՝ հնգամյա ժամանակահատվածի ընթացքում, գաղտնիքի պահպանման մասին:

10. Ոչ հիմնավորված հրապարակումից խուսափելու համար տեսուչները եւ աշխատակիցները ստանում են համապատասխան հրահանգներ եւ հիշեցումներ անվտանգության նկատառումների եւ այն հնարավոր պատիժների մասին, որոնք նրանք

կարող են կրել ոչ հիմնավորված հրապարակման դեպքում:

11. Մասնակից պետության տարածքում կամ նրա իրավազորության կամ հսկողության

ներքո գտնվող ցանկացած այլ վայրում գործունեությանն ամենավաղ գաղտնի տեղեկությունների աշխատակցի մուտքը թույլատրելուց ամենավաղ 30 օր առաջ համապատասխան մասնակից պետությունը ծանուցվում է նախատեսվող մուտքի մասին:

Տեսուչների նկատմամբ կիրառելի սույն պահանջը տարածվում է ենթադրվող նշանակման

մասին ծանուցման վրա:

12. Տեսուչների եւ Տեխնիկական քարտուղարության ցանկացած այլ աշխատակցի

աշխատանքի գնահատման ժամանակ հատուկ ուշադրություն է հատկացվում աշխատակցի

բնութագրին գաղտնի տեղեկությունների պաշտպանության տեսանկյունից:

9. Չգայուն սարքավորումների պաշտպանության եւ տեղում ստուգման գործունեության ընթացքում գաղտնի տեղեկությունների հրապարակման

կանխմանն ուղղված միջոցներ

13. Մասնակից պետությունները կարող են ընդունել այնպիսի միջոցներ, որոնք իրենք անհրաժեշտ են համարում գաղտնիությունը պահպանելու համար՝ համապատասխան

հոդվածների եւ ստուգման Չավելվածի համաձայն՝ պահպանումը ցուցադրելու իրենց

պարտավորությունների պահպանման պայմանով: Մասնակից պետությունը, ընդունելով

տեսչական ստուգում, կարող է նշել տեսչական խմբին այն սարքավորումը, փաստաթղթերը եւ շրջանները, որոնք ինքը համարում է զգայուն եւ տեսչության նպատակին չառնչվող:

14. Տեսչական խմբերը ղեկավարվում են, որքան հնարավոր է, նվազ ինտրուզիվ միջոցով վայրում տեսչական ստուգումների անցկացման սկզբունքով, որը համապատասխանում է իրենց խնդիրների արդյունավետ եւ ժամանակին կատարմանը: Նրանք

հաշվի են առնում այն առաջարկությունները, որոնք տեսչական ստուգման ցանկացած

փուլում կարող է ներկայացնել տեսչական ստուգումը ընդունող մասնակից պետությունը, որպեսզի ապահովի քիմիական գենքի հետ կապ չունեցող զգայուն սարքավորումների եւ տեղեկությունների պաշտպանությունը:

15. Տեսչական խմբերը խստորեն պահպանում են տեսչական ստուգումների անցկացումը կանոնակարգող համապատասխան հոդվածներում եւ հավելվածներում

շարադրված դրույթները: Նրանք լիովին պահպանում են զգայուն սարքավորումների

պաշտպանության եւ գաղտնի տվյալների հրապարակման կանխման համար նախատեսված

ընթացակարգերը:

16. Օբյեկտի վերաբերյալ միջոցառումների եւ համաձայնագրերի մշակման դեպքում

պատշաճ ուշադրություն է հատկացվում գաղտնի տեղեկությունների պաշտպանության

պահանջին: Առանձին օբյեկտների համար տեսչական ընթացակարգերի մասին համաձայնագրերը ներառում են նաեւ օբյեկտի տեսուչներին մատչելի մասերի որոշման,

վայրում գաղտնի տեղեկությունների պահպանման, համաձայնեցված հատվածներում

տեսչական աշխատանքների, նմուշների հավաքման եւ հետազոտման, հաշվառային

փաստաթղթերի մատչելիության եւ անդադար դիտարկման համար սարքերի եւ սարքավորումների օգտագործման հետ կապված կոնկրետ եւ մանրամասն միջոցները:

17. Յուրաքանչյուր տեսչական ստուգումից հետո կազմվող զեկույց պարունակում

է միայն այն փաստերը, որոնք վերաբերում են սույն Կոնվենցիայի պահպանմանը: Չեկույցը օգտագործվում է գաղտնի տեղեկությունների հետ վարվելը կանոնակարգող՝

Կազմակերպության սահմանած կանոններին համապատասխան:

Անհրաժեշտության դեպքում,

զեկույցում պարունակվող տեղեկությունները մարմնավորվում են նվազ զգայուն

ծելով, նախքան այն կփոխանցվի Տեխնիկական քարտուղարության տեսչության ենթարկվող մասնակից պետության սահմաններից դուրս:

Դ. Գաղտնիության խախտումների կամ ենթադրյալ խախտումների դեպքում կիրառվող ընթացակարգեր

18. Գլխավոր տնօրենը սահմանում է այն անհրաժեշտ ընթացակարգերը, որոնք պետք

է կիրառվեն գաղտնիության խախտումների կամ ենթադրյալ խախտումների դեպքում՝

հաշվի առնելով 8-րդ հոդվածի 21 i կետին համաձայն՝ Չամաժողովի քննարկման եւ

հաստատման ենթակա հանձնարարականները:

19. Գլխավոր տնօրենը հսկողություն է իրականացնում գաղտնիքի պահպանման

մասին անհատական համաձայնագրերի կատարման նկատմամբ: Գլխավոր տնօրենը անհապաղ

հարուցում է հետաքննություն, եթե, ըստ իր կարծիքի, կան գաղտնի տեղեկությունների պաշտպանությանն ուղղված պարտավորությունների խախտումների

բավարար հատկանիշներ: Գլխավոր տնօրենը նաեւ անհապաղ հետաքննություն է հարուցում, եթե մասնակից պետությունը հայտարարում է գաղտնիության խախտման

մասին:

20. Գլխավոր տնօրենը գաղտնի տեղեկությունների պաշտպանությանն ուղղված

իրենց պարտավորությունները խախտած աշխատակիցների հանդեպ կիրառում է համապատասխան պատժամիջոցներ եւ կարգապահական միջոցներ:

21. Մասնակից պետությունները, ըստ հնարավորության, Գլխավոր տնօրենին օժանդակություն եւ աջակցություն են ցուցաբերում գաղտնիության ցանկացած խախտման

կամ ենթադրյալ խախտման հետաքննության եւ, խախտման հաստատման դեպքում,

համապատասխան միջոցներ կիրառելու գործում:

22. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում Տեխնիկական քարտուղարության աշխատակիցների կողմից կատարված՝ գաղտնիության ցանկացած

խախտման համար:

23. Ինչպես մասնակից պետությանը, այնպես էլ Կազմակերպությանն առնչվող խախտումների դեպքում այդ հարցը քննարկվում է "Գաղտնիության հետ կապված վեճերի

կարգավորման Չանձնաժողովի" կողմից, որը ստեղծվում է որպես Չամաժողովի օժանդակ

մարմին: Այդ Չանձնաժողովը նշանակվում է Չամաժողովի կողմից: Չանձնաժողովի կազմը

եւ աշխատակարգը կանոնակարգող կանոնները ընդունում է Չամաժողովը՝ իր առաջին

նիստում:

* Կոնվենցիան Չայաստանի Չանրապետության համար ուժի մեջ է մտել 1997

թվականի ապրիլի 29-ից: